

ԲԱՐԵՂԱՇՏՈՒԹՅԱՆ  
ԹԱՆԳԱՐԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

ԾԱՂԿԱԶՈՐ 2004

Училище Благочестия

или

примеры христианских добродетель

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ  
ԹԱՆԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԻՆԱԿՆԵՐ

Թարգմանությունը ուսուերենից՝  
Հրաչ Բեգլարյանի

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

ԾԱՂԿԱԶՈՐ - 2004

**Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ**

**ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**Տ. ԱՌԱՔԵԼԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ՔԱՐԱՄԵԱՆԻ**

**ԱՌԱԶՆՈՐԴԻՆ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ**

**ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՈՍՔ**

Ահա մի նոր գիրք, որ քրիստոնեական հավատի ներկայացման նպատակի իրագործման ճանապարհին ընդառաջ է քայլում մեր ժողովրդի հոգևոր պահանջների բավարարմանը: Այն հատկապես կարևորվում է Քրիստոսի Ավետարանի բարոյական ուսուցումների տարածման այս շրջանում, երբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ամեն ջանք գործադրում է կրոնական, ազգային-եկեղեցական կյանքի աշխուժացման համար:

Այս երկը, որ թարգմանվել է Սևանի Վազգենյան Դպրանոցի դասախոս Հրաչ Բեգլարյանի կողմից, կազմված է Ընդհանրական Եկեղեցու Հայրերի վարքից ու կյանքից վերցված փոքրիկ իրողություններից, ղիպվածներից, որոնք գալիս են՝ մի կաթիլ անարատ ձեթ լցնելու մեր հավատքի կանթեղին, այն է՝ ավելի բոցավառելու:

Հիրավի, նվիրական, աստվածահաճո գործ է արվել, և այն պետք է գնահատվի ըստ արժանվույն:

Այժմ, երբ մեր ժողովուրդը նույնիսկ իր ղեկարին կենցաղի մեջ ուզում է վերագտնել իր ազգային-եկեղեցական դիմագիծը, առավել քան պատեհ ու այժմեական է այս գրքի լույս ընծայումը, որը բարեպաշտության դասեր հրամցնելով՝ մեզ առավել է մոտեցնում քրիստոնեական հավատին ու նրա ճշմարտությանը: Բարեպաշտությունը հոգևոր արժեք է, որը զարդարում է ցանկացած մարդուն և ժողովրդին: Այդ իսկ պատճառով էլ «Բարեպաշտության ուսումնարանը» կարելի է բավական օգտակար դասագիրք համարել մեր հավատավոր ժողովրդի համար: Ինչպես գիրքն է ուսուցանում, նույն կերպ և մենք ենք ղիմում մեր բարեպաշտ և հավատավոր ժողովրդին:

Քրիստոնյանե՛ր, ով ցանկանում է օգուտ քաղել հոգու հա-

մար, նա պարտավոր է քրիստոնեական գրքեր ունենալ: Վա՛յ այն մարդուն, ով երևակայական երազանքները, կրքերը, մտքի կեղծ փայլատակումները այսերկրային խենթությունները գերադասում է հոգևոր ուսուցումներից: Այստեղ խոսքն ու կյանքն օգնում են իրար, այստեղ առաքինությունը ծավալվում, սերտաճում է իմաստություն հետ, այստեղ մարմնավորված փոքրիկ իրական դեպքերը մարդուն տանում են դեպի Աստծուն ճանաչելու ոլորտը՝ հավատը:

Մենք ողջունում ենք այս գրքի լույս ընծայումը և բոլոր նրանց, ովքեր աշխատեցին գրքի հրատարակման համար՝ հատկապես Տեր Մինաս քահանային: Մեր հորդորն է ընթերցողներին. հավատքով և հույսով քայլեք Ընդհանրական Եկեղեցու Հայրերի աստվածահաճո ճանապարհով:

Առաքել եպս. Քարամյան  
Առաջնորդ Կոտայքի թեմի

11.11.2003թ.

Ծաղկաճոր

## ՓՈՒԹԱԶԱՆ ՄԱՐԴԸ ՁԻ ՍՊԱՍՈՒՄ ՀՐԱՄԱՆԻ ԿԱՄ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ

**Ի**մ պատանեկություն տարիներին, -իր մասին պատմում է Իսահակ Ասորին, -ես ապրում էի արքա Կորոնիոսի հետ և այս՝ արդեն դողդոջ ծերունին, ինձ ոչ մի գործ չէր հանձնարարում, այլ ինքն էր վեր կենում ու կամավոր սպասարկում ինձ՝ մատուցելով լվացվելու ջրամանը: Դրանից հետո ես ապրեցի արքա Թեոդորոս Ֆերմինացու հետ և այս հայրն էլ ինձ ոչ մի հրաման չէր տալիս, այլ ինքն էր ուտելիքը սեղանին դնում և ասում էր ինձ. «Եթե ուզում ես, նստիր, կեր»: Սովորաբար ես նրան պատասխանում էի. «Հայր, ես այստեղ նրա համար եմ եկել, որպեսզի քեզ ծառայեմ. ինձ ինչո՞ւ քո կամքը չես հայտնում»: Բայց ծերունին միշտ լռում էր...

Վերջապես այս մասին ես հայտնեցի մյուսներին: Վանականները եկան նրա մոտ և ասացին. «Հայր, եղբայրն այստեղ է եկել քեզ ծառայելու համար: Ինչո՞ւ նրան ոչ մի գործ չես հանձնարարում»:

«Մի՞թե այստեղ ես խցի ավազն եմ, որ հրամայեմ, պատասխանեց սուրբ Թեոդորոսը, - երբ ցանկանում է, թող անի այն, ինչ ես եմ անում, ինչպես որ հրամար է գտնում ինքը»:

Եվ այդպես այդ ժամանակից ես նրան նախապես ասում էի և անում էի այն ամենը, ինչ ուզում էր անել հայրը:

Երեխանե՛ր, աշակերտնե՛ր, ենթականե՛ր, այս պատմությունը թող ձեզ խրատ լինի, թե ինչպես պետք է վարվեք ծնողների, ղեկավարների և ուսուցիչների հետ:

## ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՈՒՅՈՒՆԸ

Սուրբ Հովհաննես Աստվածաբանը, որ հասել էր խոր ծերություն և ուժը կորցրել էր ոչ այնքան ծերությունից, որքան մեծ, մեր բանականության անհաս գործերից, ժողովարան բերվեց իր աշակերտների կողմից: Առաքելական փութաջանությունը

նրան ստիպեց քարոզել Աստծո խոսքը և սովորեցնել քրիստոնյաներին: Բայց ծերունին խոսել չկարողացավ, դրա համար էլ բավարարվեց միայն այս բառերով. «Զավակնե՛րս, սիրեցե՛ք միմյանց»: Զարմանալով, որ նույն խորհուրդը կրկնում է անընդհատ՝ նրանք հարցրեցին դրա պատճառը, և Քրիստոսի սիրելին պատասխանեց. «Դա՛ է Փրկչի պատգամը, որի կատարումը, Աստծուն սիրելուց հետո, ամբողջ Օրենքի համառոտ բովանդակությունն է»:

### ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂԸ ՓՈԽ Է ՏԱԼԻՍ ԱՍՏԾՈՒՆ

Սուրբ Տիխոնը, լինելով Ամաֆոնուտի եպիսկոպոս և ուղղափառության մեծ շատագով, երիտասարդ տարիներին հաց էր վաճառում, քանզի նրա հայրը հացթուխ էր: Ունենալով կարեկից սիրտ՝ բարեպաշտ պատանին հաճախ մի քանի հաց բաժանում էր ձրի, որի համար զայրացկոտ հայրը մի անգամ խիստ պատժեց նրան: Այդ ժամանակ Սուրբ Տիխոնն ասաց նրան. «Իմ ծնող, դու իզուր ես զայրանում, ես քո հացերը փոխ եմ տալիս Աստծուն և նրա կողմից երաշխավորագիր ունեմ Սուրբ գրքերի մեջ, որտեղ ասված է՝ Աստծուն տվողը հարյուրապատիկը կստանա: Եթե չես հավատում, գնանք ամբար: Այնտեղ կտեսնես, թե Աստված ինչպես է վերադարձնում Իրեն փոխ տվողների պարտքերը»: Այս ասելով նա բռնեց հոր ձեռքից և նրան տարավ ամբար, և երբ դուռը բացեցին, տեսան, որ ամբարը լիքն է մաքուր ու լավագույն ցորենով, թեպետ առաջ այն համարյա դատարկ էր: Հայրը զարմացավ և սարսափեց: Նա ընկավ գետին՝ փառք տալով Աստծուն, և այդ ժամանակից սկսած որդու կամքին չէր բռնանում, երբ նա ողորմություն էր բաժանում:

### ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆՆ ՕՐՀՆՎԱԾ Է ԱՍՏԾՈՒՑ

Մի ծեր, թեև դուրս չէր գալիս խցից, բայց որպես ճգնալայց, փառաբանված էր ամեն տեղ և երկյուղածություն աստի-

ճանի հարգված: Մի անգամ Սուրբ Հոգին նրան ազդարարեց. «Այսինչ Սուրբը զրկվում է մարմնից, գնա և մահից առաջ համբույր տուր նրան»:

Ծերը մտածեց. «Եթե դուրս գամ ցերեկով, ժողովուրդը կհավաքվի, գուցե և փառաբանի ինձ, իսկ դա իմ սրտին հաճելի չէ: Ավելի լավ է ճամփա ընկնեմ ուշ երեկոյան, բոլորից գաղտնի»:

Երբ մթնեց, Աստծո մարդը դուրս եկավ խցից...

Բայց հանկարծ հայտնվեցին Տիրոջ երկու հրեշտակներ՝ լամպերով նրա ճանապարհը լուսավորելու համար: Ողջ քաղաքը վազեց, եկավ Սուրբի փառքը տեսնելու: Այդպես, որքան նա փախչում էր փառքից, այնքան փառքը հետապնդում էր նրան և կատարվում էին Սուրբ Գրքի խոսքերը. «Ով ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի, և նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա» /Ղուկաս 14:11/:

### ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Երբ հայր Ամոսը Երուսաղեմում բազմեց պատրիարքություն հասնելու, տարբեր մենաստաններից և անապատներից ճգնավորները, սովորություն համաձայն, եկան խոնարհվելու Աստծո քահանայապետի առաջ:

«Աղոթեցեք ինձ՝ մեղավորիս համար, -ողջագուրվելով նրանց հետ, ասաց պատրիարքը, -անընդհատ աղոթեցեք, հայրեր և եղբայրներ: Մեծ ու ծանր բեռ է դրված ինձ վրա, և ինձ սարսափեցնում են ծերերի սխրանքները: Ես ինչ-որ տեղ կարողացել եմ, որ Հռոմի առաջին քահանայապետ Լևոնը քառասուն օր եկեղեցում մնաց՝ աղոթքի և ծոմի մեջ, արցունքներով խնդրելով Աստծուն, որպեսզի ների իր մեղքերը: Նա վերջապես լսեց մի ձայն. «Տերը քեզ ներեց քո բոլոր մեղքերը բացի նրանցից, որոնք վերաբերում են այն պարտականություններին, որոնք քեզ վրա են դրված ձեռնադրությունից հետո: Կհարչարվես միայն դրանց համար»:

Դուռը, որ պատրաստվում էր Քրիստոսի բանավոր հոտի հո-

վիճակներ և ուսուցիչներ լինելու, իմացեք, թե որքան կարևոր գործ է ձեռնադրվելը: Մի մոռացեք, որ Քրիստոսի ահեղ դատաստանում ձեզնից կպահանջվի պատասխան տալ ձեզ հանձնված յուրաքանչյուր հոգու համար, որպեսզի այն ժամանակ կարողանաք ասել. «Տեր, ահա այն զավակները, որոնք Դու տվեցիր ինձ»:

### ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՍԻ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ սուրբ Թեոդոս Պեչորացին ցանկացավ այցելել իշխան Իգյասլավին, որ գտնվում էր Կիևից շատ հեռու: Ուշ երեկո էր արդեն և Աստծո սպասավորն ուղեց իր սովորովյալ համաձայն ոտքով գնալ վանք, բայց իշխանը հրամայեց նրան կառքով տանել: Ուղեկցողը, որ երիտասարդ մարդ էր, սուրբ Թեոդոսին տեսնելով հասարակ հագուստով, նրան համարեց ողորմություն խնդրող մեկն ու նախանձեց նրան, որ կարող է կառքի մեջ նստած հանգիստ քնել: Վերջապես այնպես սրտնեղեց, որ այլևս չհամբերեց և նրան ասաց. «Վանական, ժամանակն է, որ հիմա էլ ես հանգստանամ քո փոխարեն»:

Սուրբը ոչ մի բառ չասելով, իջավ կառքից և այնտեղ նստեցրեց իշխանի ծառային: Իր վրա վերցնելով ուղեկցողի պարտականությունը՝ սուրբ Թեոդոսը մեկ քայլում էր ձիու կողքից, մեկ հոգնելով նստում էր նրա վրա: Այսպես շարունակվեց մինչև լուսաբաց: Այդ ընթացքում երիտասարդը հանգիստ քնել էր...

Վերջապես սուրբ Թեոդոսին սկսեցին հանդիպել Կիևից Իգյասլավի մոտ գնացող մեծամեծներ: Տեսնելով սուրբին՝ նրանք իջնում էին ձիերից և խոնարհվում նրան: Իշխանի ծառան Թեոդոսի ձայնից արթնանալով զարմացավ տեսնելով, որ նշանավոր մարդիկ այդպիսի մեծ պատիվ են տալիս ձերին, որին ինքը վիրավորել էր: Սարսափելով՝ նա կառքից ցած թռավ: Բայց ավելի մեծ եղավ նրա սարսափը, երբ վանքին մոտենալիս ընդառաջ ելան վանականները և պատկառանքով ընդունեցին նրա օրհնությունը: «Ո՞վ է այս ձերը», - մտածեց իշխանի ծա-

ռան և իրեն մեռած համարեց, եթե Իգյասլավն իմանա իր կոպտություն մասին... Բայց սուրբը շուտով հանգստացրեց նրան:

Նա իրեն վիրավորողին սեղան նստեցրեց ու կարգադրեց նրան խմիչք և խորտիկներ մատուցել, հետո փող նվիրելով, սիրալիր տուն ճանապարհեց:

Ահա իսկական քրիստոնեական խոնարհությունը: Իսկ մենք սիրում ենք ամենուր առաջինը լինել: Ոչ միայն ընկերական հավաքներում ենք ցանկանում բարձր տեղ զբաղել, այլ նույնիսկ Աստծո տաճարում, որտեղ անտեսանելի կերպով ներկա է թագավորների թագավորը, որի առաջ հավասար են իշխանն ու ծառան: Մենք վիրավորվում ենք, երբ աստիճանով ցածր մեկը կանգնում է մեր առջևում, և երբեմն առանց հասկանալու հրում ենք նրան:

### ՀԱՅՐ ԱՐՔԱՆ

Սուրբ Արսեն Մեծը, դեռևս նախքան ճգնավոր դառնալը, որպես խելացի և առաքինի մարդ, Թեոդոս կայսեր կողմից հրավիրվել էր Կոստանդնուպոլիս՝ որպես Արկադիոսի և Հոնորիոսի ուսուցիչ: Լինելով հոգով խոնարհ և հարգելով նրանց՝ որպես թագավորի զավակներ, նա միշտ դասերը վարում էր կանգնած, և դա այն դեպքում, երբ աշակերտները նստում էին փափուկ ու չքեղ բազկաթոռներին:

Մի անգամ անսպասելի նրանց այցելեց Թեոդոսը: Տեսնելով Արկադիոսին և Հոնորիոսին նստած, իսկ Արսենին՝ նրանց առջև կանգնած՝ նա վիրավորվեց և ասաց. «Մի՞թե ես այդպես եմ պատվիրել քեզ: Ամենասկզբից ես քեզ չասացի՞, որ դու՝ որպես երկրորդ հայր, նրանց համարես ոչ թե արքայի, այլ քո երեխաները»:

«Ամեն ինչ իր տեղում պիտի լինի, - հեղուկամբ պատասխանեց Արսենը, - պետք է պատանիներին ուսում տալ, իսկ արքայորդիներին՝ արքայական պատիվ»...

Թեոդոսն ավելի դժգոհ մնաց Արսենի պատասխանից և անմիջապես երեխաների վրայից հանեց իրենց կայսերական

նշանները և նրա կամքին հակառակ, ուսուցչին ստիպեց նստել, իսկ աշակերտներին՝ կանգնել նրա առաջ...

«Եթե սովորեն Աստուծոց վախենալ, - երեսաների մտքից դուրս գալով՝ ասաց նա, - և՛ ժողովրդին կառավարելու արժանի կլինեն, և՛ Երկնային Նախախնամությունը նրանց արքայություն կտա երկրի վրա: Իսկ եթե լինեն հպարտ ու չար, ապա ավելի լավ է չթագավորեն, քան թագավորեն անմտությունով: Աղոթում եմ Աստուծուն, որ ավելի լավ է իմ զավակները մեռնեն երիտասարդ հասակում, քան թե մեծանան իրենց հոգին կործանելու և ժողովրդին դժբախտություն բերելու համար»:

Իր հոգում օրհնելով Թեոդոսին՝ Արսենն սկսեց դասավանդել նստած, իսկ արքայորդիները կանգնում էին նրա դիմաց:

Անկասկած, իր որդիներին երջանկություն չի ցանկանում այն հայրը, ով թեկուզև մի փոքր առիթ է տալիս նրանց՝ հպարտանալու իրենց հարստությունը և նշանավոր լինելով:

#### ԱՐՍԵՆ ՄԵԾԻ ԽՈՆԱՐՀԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Արսեն Մեծն այնքան խոնարհամիտ էր և այնքան չէր վստահում իր խելքին, որ միշտ նույնիսկ անուս մարդկանցից սովորելու առիթ էր փնտրում:

Մի անգամ սուրբը, խոսելով Եգիպտոսից եկած ինչ-որ ծերի հետ, նրանից խորհուրդ հարցրեց, թե ինչպես իր սրտից վանի ոչ աստվածահաճո մտքերը: Ճգնավորներից մեկը, որ լսում էր նրանց զրույցը, զարմացավ այդ տեսնելով և հարցրեց Արսենին. «Ինչո՞ւ դու, որ վարժ գիտես հունարեն և լատիներեն և ծանոթ ես բոլոր գրքերի բովանդակություններին, դաս ես առնում անկիրթից»...

«Ես գիտեմ հունարեն և լատիներեն լեզուները, - պատասխանեց բարեպաշտը, - բայց մինչև հիմա չեմ կարողանում սովորել այն այբուբենը, որ այս հասարակ մարդը գիտե շատ ավելի լավ»:

Այս ասելով՝ սուրբ Արսենն ի նկատի ուներ խոնարհությունը, որը սկիզբն է բոլոր առաքիչությունների, ինչպես որ այբուբենն է սկիզբը բոլոր գրքերի:

#### ԴԱՏԵԼԸ ՄԵՂՔ Է ԴԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ

Մի անգամ սուրբ Արսենը ծանր հիվանդացավ: Վանականները նրան տեղափոխեցին վանքի հիվանդանոցը և դրեցին փափուկ անկողնու մեջ:

Մի այլ վանքից մի ուրիշ ծեր եկավ հիվանդին այցելության և նրան փափուկ անկողնու տեսնելով գայթակղվելով մտածեց. «Մի՞թե սա է հայր Արսենը: Նրան ինչպե՞ս կարելի է այսպես հանգստանալ»:

Բայց հենց որ եկվորն այդպես անզգուշ կերպով զարմացավ, այդտեղ եղած հոգևորականը գուշակեց նրա մտքերը և նրան մի կողմ տանելով հարցրեց, թե նա ո՞վ է եղել աշխարհում և ինչպիսի կյանք է ունեցել:

- Ես հովիվ էի, - ոչինչ չկասկածելով պատասխանեց վանականը, - ես ապրում էի անասելի աղքատության ու տխրության մեջ:

- Իսկ հիմա լա՞վ ես ապրում, - դարձյալ հարցրեց հոգևորականը:

- Շատ ավելի հանգիստ եմ և ունեմ այն ամենը, ինչ հարկավոր է ինձ, - պատասխանեց նա:

- Իմացիր, - ասաց հոգևորականը, - որ ծերը, որին տեսնում ես, կայսեր զավակների երկրորդ հայրն է եղել: Նրա առաջ են կանգնել հազարավոր ստրուկներ, նրա անկողինը փափուկ է եղել, նրա հարստություններն անսահման են եղել: Եվ արդ, իրավացի չէ՞, որ դու աշխարհում տանջվելուց հետո հիմա հանգստանում ես, իսկ հայր Արսենը, աշխարհի հանգստից հետո այժմ տանջվում է:

Ծերը հասկացավ իր մոլորված լինելը և հոգևորականի ոտքերն ընկնելով, ներում խնդրեց, որ իր մտքի մեջ վիրավորեց սրբին:

- Մի դատեք, որ չդատվեք, - ասաց Հիսուս Փրկիչը: Մենք հաճախ ենք դատում մերձավորին, բայց չենք ցանկանում ինքներս մեզ նայել:

**ՃՇՄԱՐԻՏ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ**

Մի հռոմեացի մեծահարուստ, որ սուրբ Արսենի մոտ ազգականն էր, իր մահից առաջ նրան մեծ հարստություն կտակեց: Կտակն ստանալով՝ սուրբը, հազիվ նրա բովանդակությունը ծանոթացած, ցանկացավ պատուել այն: Բայց գրությունը բերող ծառան ընկավ նրա ոտքերը և խնդրեց չանել այդ, քանի որ դրա համար կմեղադրեն իրեն:

Այդժամ սուրբ Արսենը, նրան վերադարձնելով իր հարազատի կտակը, ասաց.

- Ես նրանից առաջ եմ մահացել, զարմանալի է, թե ինչպե՞ս է նա՝ վերջերս մեռածն, ինձ հարստության ժառանգորդ դարձնում: Իմ ընկեր, թող չհանձնիր նրան, ով այն ուղարկել է ինձ:

Ահա իսկական անապատականի օրինակ: Ով իրեն նվիրել է ծառայելու միակ Աստծուն, նա հարստության կարիք չի զգում:

**ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՕՐԻՆԱԿ**

Սուրբ Մելանյան, որ հանուն Քրիստոսի սիրո բաժանել էր իր հարստությունը, հասավ Ալեքսանդրիա և լսելով սուրբ Պամբոյի աստվածահաճո կյանքի մասին՝ եկավ նրա օրհնությունն ստանալու: Նա իր հետ բերել էր 300 լիտր արծաթ և սրբին խնդրեց, որ դրանից վերցնի այնքան, որքան ցանկանում է: Բայց Աստծո մարդը, որ զբաղված էր սովորական ձեռագործով, նույնիսկ չնայեց արծաթին, այլ միայն ասաց. «Թող Աստված քեզ տա քո ջերմեանդության համաձայն»: Երբ աղքատների բարերարը շարունակեց նրան խնդրել, որ նա առաջարկածից վերցնի թեկուզև մի փոքր մաս, սուրբ Պամբոն ծառայակից եղբորն ասաց. «Վերցրու արդարից այն, ինչ տալիս է քեզ և բաժանիր Լիբիայում ու կղզիներում ապրող ծերերին, քանզի նրանց հողն անբերրի է: Բայց Եգիպտոսի ձգնավորներին ոչինչ մի տա, քանի որ ապրում են բերրի հողերի վրա: Նրանք կարող են կուշտ լինել իրենց ձեռքերի աշխատանքով»:

Սուրբ Մելանյան, արծաթը ձգնավորին տալով, ասաց սուրբ

Պամբոյին. «Հայր, նայիր, այստեղ 300 լիտր արծաթ կա»:

- Աստված, Որին զոհաբերեցիր քո գանձը, աղջիկս, կարիք չի զգում քեզ հարցնելու, թե որքան է այն, - պատասխանեց նա, - Նա, ով մատով կշռում է երկիրն ու լեռները, մի՞թե չգիտի քո արծաթի չափը: Եթե դու այն ինձ տայիր, ես կրկին կհաշվեի այն, բայց դու Աստծուն ես տալիս, Ով շարահամարհեց անգամ այրի կնոջ երկու լուծան և այն ընդունեց անհաշիվ գանձերից ավելի: Ուրեմն լռիր և փող մի հնչեցնի:

Իրավամբ, այն, ինչ մարդը տալիս է աղքատին, տալիս է Իրեն՝ Աստծուն: Ահա թե որքան ազնիվ մղում է բարեգործ լինելը:

**ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ**

Մի ճգնավոր, լսելով սուրբ Պիմենի առաքինությունների մասին, հեռավոր երկրներից նրա մոտ եկավ, որպեսզի օգտվի նրա խրատներից: Սուրբը նրան ընդունեց սիրալիրությամբ և սկսվեց հոգևոր զրույցը:

Այցելուն սկսեց դատողություն անել Աստվածաշնչի, խորհրդավոր բաների, հրեշտակների մասին: Նա խոսեց շատ և երկար, իսկ սուրբ Պիմենը լուծմ էր, նայում նրան սառած հայացքով և պատասխան չէր տալիս:

Հետո եկվորը հրաժեշտ տվեց նրան և խցից դուրս գալով՝ սուրբ Պիմենի աշակերտին ասաց.

- Ես իզուր անցա այսքան դժվար և երկար ճանապարհը: Ես ուզում էի գոնե մի բան սովորել, բայց ոչ մի բան չլսեցի: Աշակերտն այդ մասին հայտնեց Պիմենին:

- Նա այնպիսի բաների մասին էր խոսում, որոնք մարդկային բանականությունից վեր են, - ասաց սուրբը, - ես ի՞նչ կարող եմ սովորեցնել այդ մասին: Եթե նա սկսեք խոսել մարդկային թուլությունների մասին, ես հաճույքով կպատասխանեի նրան:

Աշակերտը դուրս եկավ խցից և ամեն ինչ պատմեց եկվորին: Այդ ժամանակ բարձրամիտ ճգնավորն իմացավ իր սխալը: Նա երկրորդ անգամ մտավ ծերունու մոտ և հարցրեց.



- Հայր, ես ի՞նչ պետք է անեմ. կրքերն ամբողջով թյամբ գերել են ինձ:

Սուրբ Պիմենը ուրախ հայացքով նայեց նրան.

- Հիմա բարի և օգտակար գործով ես եկել, ո՛վ Քրիստոսով սիրելի եղբայր, - ասաց նա, - հիմա կբացեմ իմ շուրթերը:

Դարձյալ սկսվեց հոգևոր զրույցը, որ շարունակվեց մինչև երեկո: Պիմենի խելացի խրատներից օգուտ քաղած ծերունին ուրախությունից կորցրել էր իրեն և վերադարձավ իր անապատը՝ փառաբանելով Աստծուն, որ իրեն արժանի համարեց տեսնել այսքան մեծ խրատատուի:

Եվ ինչն՞ քննենք խորհրդավոր բաները, որոնք գերազանցում են մարդու գիտակցությունը: «Մի՛ փորձիր, այլ հավատա՛», - ասաց Ինքը՝ Տերը: Եվ այսպես, ավելի լավ է ընկերական զրույցների ժամանակ զրույցենք առաքինություններից, որն ավելի է վայելում մեր կոչմանը:

### ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆԻ ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ուրիշի մեղքերը ցույց մի՛ տուր: Միանգամից մի՛ հավատա, երբ ուրիշի մասին վատը լսես:

\* \* \*

ԾԵՐԸ - Հայր, ես խռովվում եմ և ուզում եմ այստեղից գնալ:  
ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ- Իսկ ինչն՞ է:

ԾԵՐԸ - Ամոթալի բաներ եմ լսում այստեղ ապրող եղբայրներից մեկի մասին և գայթակղվում եմ:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ - Ճիշտ չեն ասում:

ԾԵՐԸ- Բայց ինձ վստահելի մարդ է ասել:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ - Վստահելի՞, ո՛չ: Եթե նա այդպիսին լիներ, քեզ չէր հայտնի այն, ինչ տեսել էր: Նրան մի՛ հավատա, քանի դեռ ինքդ չես տեսել, քանզի և Աստված Սողոմի աղաղակը լսելով չհավատաց, մինչև Ինքը չտեսավ սեփական աչքերով:

«Այնուհետև Տերն ասաց. «Սողոմացիների ու գոմորացիների աղաղակը ահագնացել, հասել է ինձ. նրանց մեղքերը խիստ

չատացել են: Արդ, իջնեմ, տեսնեմ, թե ինձ հասած նրանց աղաղակը համապատասխանո՞ւմ է նրանց կատարածին, թե՞ ոչ: Այդ եմ ուզում գիտենալ» /Ծննդոց 18:20-21/»:

ԾԵՐԸ - Ախ, ես նույնպես տեսել եմ նրա մեղանչումը իմ աչքերով:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ -/Գետնից վերցնելով չոր ճյուղը/ Սա ի՞նչ է:

ԾԵՐԸ - Չոր ճյուղ է:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ -/Նայելով առաստաղին և գերանը ցույց տալով/ Իսկ սա՞ ինչ է:

ԾԵՐԸ - Դա էլ գերան է:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ -Քո սրտին ասա, որ քո մեղքերը գերանի չափ են, իսկ եղբորդ մեղքերը՝ ընդամենը չոր ճյուղ են:

### ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԾԵՐԸ - Ես ծանր մեղք եմ գործել և ուզում եմ երեք տարի ապաշխարել: Այդքան ժամանակը բավարա՞ր է իմ մեղքերը մաքրելու համար:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ - Շատ է:

ԾԵՐԸ- Ուրեմն օրհնիր, հայր, և տուր ապաշխարություն համար մեկ տարի:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ - Շատ է:

ԾԵՐԸ - Քառասուն օրը բավակա՞ն է ապաշխարության համար:

ՍՈՒՐԲ ՊԻՄԵՆ - Շատ է, ես մտածում եմ այսպես. եթե մարդը զղջում է ամբողջ սրտով և նպատակ է դնում այլևս այդ մեղքին չվերադառնալ, ապա Տերն ընդունում է եռօրյա ապաշխարությունը:

### ՎԱՏ ՄՏՔԵՐԻՅ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՐՑ - Ինչպե՞ս կարելի է պաշտպանվել թշնամական զրպարտանքներից:

ՊԱՏԱՍԽԱՆ - Երբ կրակին դրած կաթսան եռում է, այդ

ժամանակ ճանճերը կամ այլ միջատները չեն համարձակվում մոտենալ, իսկ երբ սառչում է, ե՛լ ճանճերը, ե՛լ այլ միջատներ նստում են նրա վրա: Այդպես էլ իր միտքը հոգևոր գործերին ուղղած մարդուն չի կարողանում մոտենալ մարդկային ցեղի թշնամին: Իսկ ով ապրում է անփութություն ու ծուլություն մեջ, նրան թշնամին մոտենում է առանց դժվարություն:

### ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Մենք նման ենք նրան, ով իր ձախ կողմում կրակ ունի, իսկ աջ կողմում՝ ջուր. եթե վառվում է, վերցնում է ջուրն ու հանգցնում է կրակը. կրակը չար մտքերն են, իսկ ջուրը՝ աղոթքը:

### ԼՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Լուե՞լն է լավ, թե՞ խոսելը:
- Ով Աստծո փառքի մեջ է խոսում, լավ է անում, և ով լռում է Աստծո փառքի մեջ, լավ է անում:

Մի անգամ սուրբ Պիմենը երիտասարդ եղբորը հայր անվանեց: Այստեղ եղած ճգնափորներն ասացին. «Ինչպե՞ս կարելի է հայր անվանել նրան, ով այսքան երիտասարդ է»: «Նրան իր լռություն պահպանող շուրթերը հայր դարձրին», - պատասխանեց սուրբը: Կան մարդիկ, ովքեր չխոսելով խոսում են անընդհատ և կան մարդիկ, ովքեր առավոտից իրիկուն խոսելով, անընդհատ լռում են: Առաջինները նրանք են, ովքեր լռում են լեզվով, բայց իրենց սրտում դատում են մերձավորին: Երկրորդները նրանք են, որոնց լեզուն անընդհատ խոսում է, բայց սիրտը ոչ ոքի մասին վատը չի մտածում:

### ՀՈԳԵԿԱՆ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ծխով հեռացնում են մեղուներին և պահպանում են նրանց աշխատանքով ստեղծված քաղցրությունը: Նույն ձևով Աստծո երկյուղը հոգուց վտարում է արատավոր կրքերը:

### ՀՈԳՈՒՆ ԽՐԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ որևէ մեկը տուն կառուցել է ցանկանում, նա հավաքում է դրա համար անհրաժեշտ բոլոր պիտույքները: Այդպես էլ մարդը ամեն առաքինությունից որոշակի մաս պետք է վերցնի, որպեսզի իր մեջ հոգևոր տուն ստեղծի:

### ԻՍԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

Արդար Մովսեսը ավագակից դառնալով Աստծո սիրասուն ծառան, իր բարեպաշտությունը այնպես փառաբանվեց, որ նրա մոտ անապատական կյանքի կատարելությունը և ճգնակեցություն սխրանքները սովորելու էին գալիս ոչ միայն երիտասարդ, այլև պահեցողության մեջ ծերացած ճգնավորները:

Ընտրելով ամենախստականոն կյանքը՝ այս քաջ ճգնավորը, գիշերը թողնում էր իր անկողինը, այցելում բոլոր եղբայրակիցներին և, եթե նրանց խրճիթների մոտ դատարկ ջրամաններ էր տեսնում, նրանց համար ջուր էր բերում, քանզի մի քանի մենաստաններից գետը հեռու էր, իսկ ճգնավորներից շատերը զառամյալ էին և չէին կարողանում չափազանց ծանր աշխատանք կատարել ու իրենց համար ջուր բերել:

Սուրբ Մովսեսն այդպես աղոթում էր Աստծուն, աշխատանքով իր համար հաց էր հայթայթում և օգնում էր ուրիշներին: Քրիստոնյանե՛ր, օգնեցե՛ք ձեր մերձավորներին, ծայրահեղ դեպքում այնքան, որքան թույլ կտան ձեր կյանքի հանգամանքները:

### ՍՈՐԲ ՊՈՒԼՔԵՐԻԱՆ ՄԵՐԿԱՅՆՈՒՄ Է ԿԱՅՍԵՐ՝ ԻՐ ԵՂԲՈՐ ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ

Թեոդոս երկրորդը առաքինի կայսր էր, բարեհոգի և հեզ, բայց նաև՝ բավական անփուլթ: Նա հիմար սովորություն ուներ՝ ստորագրել թղթերը, նույնիսկ չկարդալով և չհարցնելով, թե ինչ բովանդակություն ունեն իրեն ներկայացրած գեկու-

ցազրերը: Այդ պատճառով կայսեր մերձավոր պալատականներն անուժ էին այն ամենը, ինչ ցանկանում էին: Արքայական գանձարանի թալան, անարժան մարդկանց մեծարանք, անմեղների տառապանք, աքսոր և մահապատիժ: Այս բոլորը սովորական բաներ էին: Չարագործները վնաս էին հասցնում պետությունը և անպատվություն՝ կայսրին: Բայց թեոդոսը ոչնչի մասին չէր մտածում:

Սուրբ Պուլքերիայի սիրտը ցավում էր՝ տեսնելով, որ կայսրը, որ իր եղբայրն էր ու իր դաստիարակածը, տրվել է նման խոր քնի: Շատ անգամներ նա փորձեց հիշեցնել ինքնակալի կոչման կարևորությունը, բայց խորհուրդները միանգամից չէ, որ իրենց ազդեցությունն են ունենում: Պուլքերիան որոշեց նրան խելքի բերել փորձությունք և հասկացնել, թե որքան կործանարար է կայսերական անփութությունը և ուրիշներին վստահելը: Նա կայսրը մի թուղթ հրամայեց, որի մեջ խնդրում էր նրա կնոջը՝ Եվդոկիային տալ իրեն ստրկություն: Կայսրը, չհարցնելով զեկուցագրի բովանդակության մասին, ստորագրեց այն և վերադարձրեց քրոջը:

Դրանից հետո Պուլքերիան իր մոտ հրավիրեց Եվդոկիային, ընդունեց նրան՝ որպես կայսրուհու և քրոջ և զրուցելով զանազան թեմաների շուրջ, նրան իր մոտ պահեց ողջ օրը: Երեկոյան եկան Եվդոկիայի հետևից և նրան կանչեցին կայսեր մոտ: Երբ երկրորդ անգամ եկան Եվդոկիայի հետևից, Պուլքերիան ժպտալով ասաց. «Կայսրն իրավունք չունի իր կնոջ վրա, քանզի նրան ծառայության է տվել ինձ և այս փաստաթուղթն ստորագրել է սեփական ձեռքով»:

Հետո ինքը գնաց Թեոդոսի մոտ և նրան ցույց տալով նրա ստորագրած թուղթը, հեղուկությամբ ասաց. «Հիմա տեսնո՞ւմ ես, թե որքան կործանարար է քեզ ներկայացրած զեկուցագրերն առանց կարդալու ստորագրելը: Ես չեմ կարծում, թե դու այդպես ես վարվում անփութության պատճառով, և դու այնքան անտարբեր ես, որ ուրիշներին՝ քեզ խաբելու և չարություն գործելու ընդունակ չես համարում: Ինչ էլ որ լինի, ուշքի արի, տեր, և զգուշ եղիր... Դու հայրենիքի հայրն ես»:

Թեոդոսն, իր անփութությունը բացահայտող նման զգայա-

կան օրինակից պարտված, ամաչեց և այդ ժամանակից ի վեր սկսեց կարգալ բոլոր այն փաստաթղթերը, որոնք ներկայացվում էին իրեն:

### ՀԱՎԱՏՔԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԵՋ ԿԱՍԿԱԾԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մի տասնամյա պատանի Պատարագի ժամանակ լսեց Աստծո՝ ոսքը քարոզող ծերից, ով ասում էր, որ աղքատին տված ողորմությունը ոչ թե նրան ենք տալիս, այլ Իրեն՝ Քրիստոսին: Երիտասարդը կասկածեց ծերունու ուսմունքի վրա և տուն վերադառնալով մտածեց. «Ես գիտեմ, որ Քրիստոսը երկնքում է, Հոր աջ կողմում: Նա ինչպե՞ս կարող է ընդունել, ասենք, այն մի կտոր հացը, որ տալիս եմ աղքատին»: Այդպես մտածելիս նա պատառոտված հագուստով մի աղքատ տեսավ, որը խնդրում էր հանուն Քրիստոսի ողորմություն տալ, իսկ նրա գլխավերևում տեսավ Փրկիչ Քրիստոսի կերպարանքը... Պատանին վախեցավ...

Հանկարծ մոտիկ տնից մեկը ծերունուն հաց բերեց և հենց որ ծերունին ձեռքը մեկնեց, որ վերցնի այն, Փրկիչը մեկնեց աջը այն վերցնելու համար, իսկ դրանից հետո ողորմացողին օրհնություն տվեց:

Այդ ժամանակ անմիտ պատանին հավատաց Աստծո խոսքին և այդ ժամանակից ի վեր դարձավ Կ.Պոլսի ամենաառաջին աղքատախնամը:

- Մի՛ փորձիր, այլ հավատա՛, - ասաց Փրկիչը:

Ավետարանի յուրաքանչյուր բառն այնքան սուրբ է, որ ավելի շուտ կանցնեն երկինքն ու երկիրը, քան երկնավոր ուսմունքից մի նշանախեց կրնկնի (Մատթ, 24,35):

### ՈՎ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ ՉՈՒՆԻ, ՆՐԱ ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇԻ ԱՐԱԾ ԱՂՈԹՔՆ ԱՆՕԳՈՒՏ Է

Մի վանքի վանահայրը, որ առաքինի էր, աղքատների նկատմամբ ողորմած և բոլոր առաքինություններով պսակված,

գիշեր ու զօր Աստծուն այսպես էր աղոթում. «Տեր, մեղավոր եմ ես, բայց քո առատաձեռնությունն ապավինած հույս ունեմ փրկվել Քո ողորմածությունից: Աղոթում եմ Քեզ, Ամենակալ, ինձ իմ եղբայրներից մի բաժանիր և գալիք կյանքում արժանի արա ինձ նրանց հետ միասին վայելել դրախտի կյանքը»:

Երկար աղոթեց ծերերի որդեսեր հայրը, և Աստված նրան իր կամքը բացեց հետևյալ կերպ: Նրանցից ոչ հեռու գտնվող մեծ նաստանում տոնակատարություն էր: Վանահայրն այնտեղ էր հրավիրված եղբայրների հետ: Նա չէր ցանկանում իր վանքից դուրս գալ, բայց քնի մեջ լսեց երկնային ձայնը. «Գնա՛, բայց առաջ ուղարկիր քո աշակերտներին, իսկ ինքդ հետևիր նրանց»:

Երբ եկավ տոնի օրը, եղբայրները գնացին հրավիրված ճաշին և ճանապարհին տեսան մի աղքատի, որը վիրավոր էր և հազիվ էր շնչում: Նրան հարցրին, թե որտե՞ղն է ցավում, խեղճը հազիվ պատասխանեց. «Ես գնում էի գործով, բայց այստեղ ինձ վրա հարձակվեց գազանը, քրքրեց ինձ և փախավ: Չկա մեկը, որ վերցնի ինձ և գյուղ տանի»:

«Մենք շտապում ենք, - ասացին եղբայրները, - և չենք կարող քեզ համար ոչինչ անել»: Ասացին և շարունակեցին ճանապարհը:

Շուտով այդտեղ հասավ նաև վանահայրն ու տեսավ տառապող վիրավորին: Իմանալով, թե ինչ է կատարվել նրա հետ՝ հարցրեց. «Մի քիչ առաջ քո մոտից վանականներ չանցա՞ն, քեզ չտեսա՞ն»:

«Նրանք կանգնեցին ինձ մոտ, - պատասխանեց ծերունին, - իմացան իմ դժբախտության մասին և գնացին առաջ՝ ասելով, թե չեն կարող ինձ հետները տանել»: Նրանց արարքից վշտացած վանահայրը հարցրեց. «Կարո՞ղ ես դու ինձ հետ կամաց-կամաց գալ»: «Չեմ կարող», - պատասխանեց աղքատը: «Ուրեմն նստիր իմ ուսերին, - ասաց վանահայրը, - Աստծո օգնությամբ ես կտանեմ քեզ...»:

Հիվանդ ծերունին որքան էլ համոզեց, թե ճանապարհը երկար է, իսկ ինքը՝ ծանր, որքան էլ խնդրեց, որ նա գյուղից որևէ մեկին ուղարկի իր հետևից, առաքինի վանահայրը, չնայելով

ոչ մի բանի, նրան շալակեց և գնաց: Սկզբում նա զգում էր մարդու սովորական ծանրությունը, իսկ հետո գնալով թեթևանում էր և, ի վերջո, կարծես ոչինչ չէր շալակել: Վանահայրը չգիտեր՝ ինչ մտածեր, երբ հանկարծ օտարականը չքացավ և վերևից ձայն լսվեց. «Դու միշտ աղոթում ես քո աշակերտների համար, որպեսզի քեզ հետ միասին մտնեն Երկնքի Արքայությունը, բայց նրանց գործերը տարբեր են քոնից: Ստիպիր նրանց, որ քայլեն քո ոտնահետքերով, այլապես չեն արժանանա Աստծո Արքայությունը: Ես արդարամիտ եմ և յուրաքանչյուրին տալիս եմ իր գործերի համաձայն»:

### ՍՈՒՐԲ ՍԵՐԳԻՅԻՆ՝ ՌԱԴՈՆԵԺԻ ՎԱՆԱՀՈՐ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ

Մի գյուղացի, լսելով սուրբ Սերգիյի առաքինությունը և հրաշագործությունների մասին, հեռվից եկավ նրա մենաստանը նրան տեսնելու և նրա օրհնությունն ստանալու համար: Այդ ժամանակ Աստծո մարդը հող էր մշակում իր այգում: Իմանալով եկվորի մասին՝ կարգադրեց նրան ուղեկցել իր մոտ: Գյուղացին, տեսնելով հասարակ հագած և հող փորող մարդուն, չէր կարող երևակայել, թե նա այդքան փառաբանված Սերգիյն է, և մտածեց, որ իրեն ծաղրելով՝ սուրբի տեղակ ցույց են տվել մի աշխատավորի: Նա վանք վերադարձավ և կրկին հարցրեց. «Որտե՞ղ է սուրբ Սերգիյը»: Որքան փորձեցին նրան համոզել, թե այգում աշխատող մարդը նա է, գյուղացին չհամոզվեց:

Այդ ժամանակ աստվածահաճո մարդը դուրս եկավ այգուց: Գյուղացին, նրանից զգվելով, թիկունք դարձրեց, նույնիսկ չցանկացավ նայել նրան. «Ախ, ինչ տանջանք քաջեցի ես և իզուր, - մտածում էր նա, - ես եկա մեծ մարգարեի համար, հույս ունենալով տեսնել նրա փառքը, բայց ինչ եմ տեսնում՝ մի աղքատի»:

Սուրբն իմացավ նրա միտքը և գոհություն հայտնեց Աստծուն, քանզի ինչպես հպարտը հմայվում է գովեստով ու պատվով, այնպես էլ խոնարհամիտն է ուրախանում ստորացմամբ:

Նա բռնեց գյուղացու ձեռքից, տարավ իր խուցը, նրա առաջ ուտելիք ու խմիչք դրեց: «Մի տխրիր, բարի մարդ,- ասաց նա,- դու շուտով կտեսնես Սերգիյին»:

Հազիվ էր սուրբն այդ ասել, երբ նրան ասացին, որ վանք է ժամանել մեծ իշխանը: Սերգիյը դուրս եկավ նրան դիմավորելու:

...Որքան զարմացավ գյուղացին՝ տեսնելով, որ իշխանը իր՝ աղքատ կարծած մարդուն մոտեցավ ակնածանքով և մինչև գետին խոնարհվելով՝ խնդրեց օրհնել իրեն: Որքան զարմացավ նա, երբ այդ ծերունին իշխանի հետ նստեց, և դա այն դեպքում, երբ բոլորը, նույնիսկ մեծամեծները, կանգնած մնացին նրա առջև:

Խեղճ գյուղացուց զզվում էին նույնիսկ նրանց ծառաները... Իր համար հազիվ մի տեղ գտավ սրահում և աչքերը չէր կտրում նրանից, ում առաջ նույնիսկ նայել չէր ցանկանում:

«Բարի եղեք, ասացեք ինձ, - կամացուկ հարցրեց նա, - ո՞վ է իշխանի կողքին նստած ծերունին»: «Դա Սերգիյն է», - պատասխանեցին նրան:

Ինքնախաբ եղած գյուղացին լացեց և հանդիմանեց իրեն անքաղաքավարի լինելու համար: «Իհարկե, կույր եմ ես,- ասաց նա, - որ չկարողացա ճանաչել Աստծո մարդուն և նրան համապատասխան պատիվ չտվեցի... Ավաղ, հիմա ինչպե՞ս պիտի նրա երեսին նայեմ»:

Բայց Սերգիյը շուտով նրան հանգստացրեց: Երբ իշխանը հրաժեշտ տվեց սուրբին, գյուղացին ընկավ նրա ոտքերը և զղջաց իր անմտություն համար:

«Միայն դու ես ճիշտ, - նրան բարձրացնելով ասաց սուրբը,- որ ինձ համարեցիր ոչինչ չիմացող ծերունի: Մյուս բոլորը սխալվում են»:

Վատ հագնված մարդուն հարգիր այնպես, ինչպես լավ հագնվածին, որպեսզի չմտածեն, թե հարգանք ես մատուցում ոչ թե մարդուն, այլ նրա հագուստին: Ավելին, հաճախ ոսկեկար հագուստի տակ անկրթություն ու չար սիրտ է թաքնված լինում, իսկ ցնցոտիների տակ՝ առաքինություն ու խելք:

## ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ՄԵՂՔ Է ՈւՐԻՇՆԵՐԻՆ ԴԱՏԵԼԸ

Մի անգամ Հովհան Սավատտացին նստել էր անապատում և մտածում էր աստվածահաճո գործերի մասին: Հանկարծ մի այլ մենաստանից նրան մի ծեր այցելեց, որպեսզի օրհնություն ստանա:

- Ինչպե՞ս ես ապրում քո եղբայրակիցները, - նրան հարցրեց Հովհանը:

- Լավ, քո աղոթքներով,- պատասխանեց ճգնավորը:

- Իսկ ինչպե՞ս է ապրում այսինչ վանականը, - դարձյալ հարցրեց նրան Աստծո հաճելին մի վանականի մասին, որի մասին վատ բաներ էին տարածվել:

- Նա բնավ չի փոխվել,- ասաց այցելուն:

- Վայ նրան, - բացականչեց Հովհանը և այդ բառերի հետ տարվեց մի հրաշք-քնով:

Նա իրեն տեսավ Գողգոթայի դիմաց կանգնած, տեսավ Հիսուս Քրիստոսին՝ երկու ավազակների միջև: Հովհանը ցանկացավ խոնարհվել աշխարհի Միջնորդի առջև, բայց հազիվ էր մոտեցել, երբ հանկարծ Հիսուսը դարձավ իր առաջ կանգնած հրեշտակներին և ասաց նրանց.

- Նրան դուրս շարտեցեք, նա իր եղբորը դատեց նախքան իմ դատաստանը:

Երբ Հովհանը փորձեց փախչել, այնպես ամուր բռնեցին նրա սքեմը, որ նա ստիպված թողեց այն ու փախավ:

Սրա հետ արթնացավ և դողով բռնված, ահով ասաց այցելուն.

- Ինձ համար սարսափելի է այս օրը:

- Ինչո՞ւ այդպես, - հարցրեց ծերը:

Այդժամ սուրբ Հովհանը նրան պատմեց իր երազը և ավելացրեց.

- Իմ կողմից թողած սքեմը նշանակում է, որ ես եղբորս դատելու համար զրկվել եմ Աստծո հովանավորությունից և օրհնությունից:

Այս ժամանակից սուրբ Հովհանը յոթ տարի անապատում աղոթեց Աստծուն, հաց չկտրեց, խուց չմտավ, մարդկանց հետ

չխոսեց: Դարձյալ հրաշափառ երազի մեջ տեսավ, որ Տերը նրան վերադարձրեց սքեմը և սրանից իմացավ, որ ներվել է իր՝ ուրիշին դատելու ծանր մեղքը:

- Մի՛ դատեք, որ չդատվեք, - ասաց Փրկիչը: Այս բառերը կարևոր են, քանզի ով դատում է մերձավորին, նա կարծես ուզում է վերցնել Երկնային Դատավորի իրավունքը:

### ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի անգամ սուրբ Իսիդորի մոտ եկավ մի մեծ ծերի աշակերտ, որպեսզի նրան հարցնի ճգնավորական կյանքին վերաբերող մի կարևոր գործի մասին: Մինչ նրանք զբաղված էին զրույցով, մուլթն ընկավ և փոթորիկ սկսվեց: Որոտն ու կայծակը սարսափելի էին, բայց, չնայած դրան, աշակերտը պատրաստվեց վերադառնալ իր ծերի մոտ: Սուրբ Իսիդորն ու մյուս վանականները նրան առաջարկեցին գիշերել իրենց մոտ: Բացատրեցին, որ գիշերն անտանելի է, իսկ ինքը պիտի անցնի գետը, որը թեպետև խորը չէ, բայց ահավոր կոհակներ ունի: Բայց եկվորը ոչ մի պատճառաբանություն անառջ կանգ չառավ:

- Իմ ուսուցիչն ինձ պատվիրեց անպայման այսօր վերադառնալ: Ինչպե՞ս կարող եմ չլսել նրան, - ասաց նա ու հրաժեշտ տվեց:

Սուրբ Իսիդորն ու մյուս վանականները գնացին նրան ճանապարհելու: Երբ գետին հասան, աշակերտը հանեց հագուստները, կապեց գլխին և անցավ մյուս ափը: Վանականները սարսափում էին նրա վրա եկող ամեն ալիքի հետ: Բայց աշակերտը կատաղի գետն անցավ հաջողությամբ ու հագավ շորերը, խոնարհություն արեց նրանց և գնաց իր ծերի մոտ:

Սուրբ Իսիդորը և բոլոր մյուս վանականները օրհնեցին նրան՝ զարմանալով, թե որքան մեծ է յուրաքանչյուր առաքինության ուժը:

### ՆԵՋԵՅՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՕԳՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Մի պատանի, որ Կիպրոս կղզուց էր, գերի ընկավ, տարվեց Պարսկաստան և այնտեղ բանտարկվեց: Ծնողներն սկզբում չգիտեին, թե որտեղ է իրենց զավակը, հետո լսեցին, թե մահացել է և սկսեցին նրա հիշատակի համար Սուրբ Ծննդի, Սուրբ Զատիկի և Սուրբ Հոգեգալստի ժամանակ հոգեհաց տալ:

Չորս տարի անց պատանին փախավ գերությունից և վերադարձավ ծնողների մոտ: Զարմացած հայրն ու մայրը առաջին գրկախառնումից հետո հարցրին. «Սիրելի որդի, մենք լսել էինք, որ դու մահացել ես և աղոթում էինք քո հոգու հանգստություն համար»:

- Դուք դա ո՞ր ամսի ո՞ր օրն եք արել, - հարցրեց պատանին, և երբ իմացավ նրանց աղոթելու ժամանակը, զարմացած բացականչեց. «Ախ, սիրասուն ծնողներ, դուք չգիտեք, թե դրանով ինչ լավություն եք արել ինձ: Քանզի այդ օրերին ինձ մոտ էր գալիս սպիտակ շուրջառով մեկը, արձակում էր շղթաները և դուրս թողնում զնդանից այնպես, որ ոչ ոք տեսնել չէր կարողանում, իսկ հաջորդ օրը ես դարձյալ շղթայակապ հայտնվում էի զնդանում»:

Քրիստոնյանե՛ր, աղոթեցե՛ք ձեր հանգուցյալ ազգակիցների համար, աղոթեցեք յուրաքանչյուր մահացած քրիստոնյայի համար, քանզի դրա շնորհիվ նրա հոգին հանգստություն է ստանում:

### ՄԱՀՎԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Հովհաննես Ողորմածն Երկնքի իսկական որդի էր, ուղղափառություն աննկուն գինվոր, բոլոր առաքիլների գործերի հեղինակ: Բայց նա մարդ էր... Վախենալով, որ երբևէ ունայն մտքեր կկաչեն իր սրտին՝ նա միշտ ամուր վահան ուներ՝ մահվան հիշողությունը, որը մարդու համար անվիճելի ապացույց է, որ նա ավելին չէ, քան փոշու հատիկը:

Այդ էր պատճառը, որ սուրբը հրամայեց իր համար դադար

չինել, բայց կիսով չափ, և վարպետներին հրամայեց յուրաքանչյուր տոնի ժամանակ իր մոտ մտնել և հավաքված այցելուների առջև բարձրաձայն ասել. «Տեր, քո դագաղը դեռևս ավարտված չէ, հրամայիր ավարտել այն, քանզի մահն այնքան անսպասելի է, որ չես իմանա՝ որ ժամին կգա»:

Այսպիսով Հովհաննես Ողորմածը և ինքն էր անընդհատ մահն ունենում աչքի առաջ, և ուրիշներին էր պարզ ձևով ցույց տալիս այն:

Օ՛, եթե մենք որքան հնարավոր է հաճախ մտովի պառկեինք մահվան մահճում: Եթե հաճախ մեր երեակայութամբ պատկերացնեինք այն ահավոր վայրկյանը, երբ իսկապես կգա վերջը և կսկսվի ապագան, այնժամ մենք բոլոր իրերին կնայեինք ուրիշ աչքերով: Մենք կսարսափեինք այն գործերից, որոնց համար այժմ մեզ դուլզն-ինչ չենք հանդիմանում: Մենք սարսափելի անդունդներ կգտնեինք այն ճանապարհների վրա, որտեղ հիմա հարթությունից ու ծաղիկներից բացի ոչինչ չենք տեսնում:

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵՑ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԸ ԷՎՏՐՈՊԻԵԻ ՀԵՏ

Հունաստանում քրիստոնեությունն առաջին շրջանում մի հիմնային օրենք կար, որի համաձայն հանցագործը արդարադատության համար անձեռնմխելի էր համարվում, եթե հասցներ եկեղեցում թաքնվել: Սրա օրինականացումը, անկասկած, այն նպատակով էր կատարվել, որպեսզի ժողովրդի առաջ խոստովանեին և, առավել ևս, փառաբանեին Փրկիչ Աստծո շնորհը: Քանի որ չարագործը մահվան ժամին Տիրոջ աթոռի առաջ պաշտպանություն փնտրելով, համարյա միշտ այնտեղից դուրս էր գալիս որպես բարի մարդ՝ մնացած ողջ կյանքի համար: Նրա սրտի մեջ այնքան խորն էր դրոշմվում Աստծո ամենակարող և ողորմած լինելը...

Չնայած դրան, այս աշխարհի հզորներից մի քանիսը նպատակ ունեին վերացնել այս օրենքը: Այդպիսին էր Արկադիոս

կայսեր մեծամեծներից մեկը՝ Էվտրոպիեն: Նա կայսրին համոզեց հրաման արձակել, որպեսզի արդարադատության հետապնդման ժամանակ ոչ ոք իրավունք չունենա ապաստան փնտրել եկեղեցում: Իսկ եթե որևէ մեկը հասցնի թաքնվել այնտեղ, ապա որպես կայսեր կամքին հակառակ գնացող հանցագործ, պիտի խստորեն պատժվի:

Հովհան Ոսկեբերանը, որ այն ժամանակ Կ.Պոլսի պատրիարքն էր, որքան էլ ջանաց վանել Տիրոջ տաճարի հանդեպ այս վիրավորանքը, չստացվեց: Միայն դրանով առաջացրեց Էվտրոպիեի զայրույթն ու չարությունը, և հաճախ էր վիրավորանք կրում նրանից:

«Բայց ինչ չափով որ ուրիշին չափենք, դրանով մեզ կչափվի», - ասաց Հիսուս Փրկիչը:

Ժողովուրդը չկարողացավ տանել Էվտրոպիեի դաժանությունն ու ճնշումները, սկսեց տրտնջալ բարձրաձայն և վճռականորեն խնդրեց պատժել նրան, որպեսզի օրինակ լինի բոլոր անօրեն դատավորների համար:

Դժբախտը փախավ Տիրոջ եկեղեցի և թաքնվեց խորանում... Դա պատահեց հենց այն ժամանակ, երբ սուրբ Ոսկեբերանն այնտեղ Աստծո խոսքն էր քարոզում: Ինչպե՞ս վարվեց Աստծո սուրբը. արդյոք դժբախտին վնդե՞ց եկեղեցուց՝ որպես նրա օրենքներն անտեսողի: Ոչ: Նա միայն Էվտրոպիեի վրա զայրացած ժողովրդին ներկայացրեց, թե որքան անհաստատ է մարդկային երջանկությունը, և նկարագրելով կայսեր սիրելի խղճալի ճակատագիրը, փորձեց ժողովրդի սրտում խղճմտանք առաջացնել:

Ահա ուսանելի օրինակ: Մի ուրիշը նրա փոխարեն կուրախանար՝ տեսնելով այդքան բարձաստիճան թշնամուն ստորացած և ժողովրդի ձայնին կմիացներ իր ձայնը: Բայց սուրբն առաջինը ապաստան տվեց և պաշտպան կանգնեց իրեն դաժանորեն հետապնդողին: Նա տեսավ, որ Էվտրոպիեն բավական պատժվել է նրանով, որ իր կյանքը փրկելու համար ապաստան կարող է գտնել միայն եկեղեցում, որի իրավունքը նա խլեց նույնքան դժբախտ մահապարտների ձեռքից, որոնք նույնքան դժբախտ էին, բայց գուցեև ավելի քիչ մեղավոր:

## ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Հովհաննիս իր՝ երեց եղած ժամանակ մեծաքանակ ժողովրդի առաջ քարոզում էր Աստծո խոսքը: Հանկարծ մի կին, որ չէր հասկանում բարձր մտքերը և խոհախորհուրդ արտահայտությունները, ժողովրդի միջից ձայն տվեց. «Հոգևոր ուսուցիչ, կամ ավելի ճիշտ, Հովհան Ոսկեբերան, քո ուսմունքը խորամիտ է, իսկ մեր միտքն՝ անուժ, և չի կարողանում հասու լինել քո փրկարար բառերին»:

Հսելով այս՝ ժողովուրդը դարձավ այն կողմը, որտեղից լսվեց ձայնը և վերջապես բոլորը բացականչեցին. «Անհայտ կինն արտասանեց այս անունը, բայց, անկասկած, Աստված քեզ Ոսկեբերան անվանեց»:

Այդ ժամանակից սուրբ Հովհանին Ոսկեբերան անվանեցին, որը շարունակվեց մինչև այսօր:

Ի միջի այլոց, ինքը՝ մեծ քարոզիչը, ևս համաձայնեց, որ եթե բարդ խոսքն ազդեցություն է թողնում լուսավորյալ մարդկանց վրա, ապա հասարակ ժողովրդին օգուտ չի բերում: Դրա համար էլ Քրիստոսի մարդկանց սկսեց սովորեցնել հասարակ բառերով ու իմաստություններով:

## ԱՍՏԾՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՆՔՆԵՆԼԻ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մի համեստ, բարեպաշտ, առաքինի անապատական օր ու գիշեր ազդեցում էր Աստծուն, որպեսզի լուսավորի իր միտքը՝ ճանաչելու Երկնավոր Նախախնամությունը, հասկանալու ճակատագրերը: Բայց Տերն ուշադրություն չէր առնում նրա աղոթքը: Անապատական իրեն համարելով մեղավոր և անարժան՝ վերին հայտնությունն ընդունելու, որոշեց գնալ մի հին ճգնավորի մոտ, որ բավական հեռու էր ապրում և նրանից իմանալ իր միտքն զբաղեցնող հարցի պատասխանը: Իր հետ հաց ու ջուր վերցնելով՝ նա ճամփա ընկավ:

Հանկարծ նրան մի սևամորթ հանդիպեց և հարցրեց.

- Ո՞ր ես գնում, Քրիստոսի ծառա:

- Այսինչ ծերի մոտ, - պատասխանեց անապատականը:

- Ես էլ եմ այնտեղ գնում, - ասաց սևամորթը:

Ճանապարհորդներն ուրախացան և իրար հետ գնացին:

Երբ իրիկուն եղավ, ճանապարհորդները հյուրընկալվեցին մի հարուստ մարդու տանը, որը նրանց ընդունեց մեծ ուրախությամբ, ընթրիք տվեց արծաթյա սպասքով... Բայց հենց որ սեղանից վեր կացան, սևամորթը վերցրեց մի ափսե, դուրս եկավ տանից և այն շարտեց մոտիկ հոսող գետի մեջ: Տանտերը ոչինչ չասաց, իսկ անապատականը չգիտեր՝ ինչ մտածել այդ մասին:

Առավոտյան ճանապարհորդները շարունակեցին ճանապարհը, իսկ երեկոյան հյուր եղան մի ուրիշ օտարասեր մարդու տանը, որը նրանց ցույց տվեց հնարավոր բոլոր պատիվները: Ի՞նչ արեց սևամորթը: Առավոտյան, երբ հրաժեշտ էին տալու, տանտերը նրանց մոտ բերեց իր միամորիկ որդուն և խնդրեց օրհնել նրան: Հանկարծ սևամորթը բռնեց տղայի կուկորդը և խեղդեց նրան: Անապատականը սարսափեց, ուզեց գոռալ, բայց նրա ձայնը խզվեց: Իսկ հայրը միայն ասաց. «Թող Տիրոջ կամքը լինի»:

Այսպես ճանապարհորդները շարունակեցին ճանապարհը, բայց երրորդ գիշերը չգտան մեկին, որն օթևան ու հանգիստ տար իրենց: Դրա համար էլ մտան մի հին, դատարկ տուն և այնտեղ անցկացրին գիշերը: Առավոտյան, երբ պատրաստվում էին գնալ, սևամորթն սկսեց ավերել տունը և հիմքից քանդելով սկսեց նորից կառուցել: Անապատականի համբերությունը հատավ, ու նա բացականչեց.

- Ո՞վ ես դու, հրեշտա՞կ, թե՞ դև: Քո գործերն անհասկանալի են ինձ համար:

- Իսկ ես ի՞նչ արեցի որ..., - առարկեց սևամորթը:

- Երեք օր առաջ դու ջուրը նետեցիր օտարասեր մարդու արծաթե ափսեն, երեկ խեղդեցիր նրա որդուն, որն այնքան սիրալիր կերպով հյուրասիրեց մեզ, իսկ այսօր առանց պատճառի քանդեցիր տունն ու սկսեցիր նորը կառուցել, ինքդ էլ չիմանալով, թե ում համար ես կառուցում:

- Մի՛ զարմացիր դրանից, բարեհոգի ծեր, - ասաց նրան



սևամորթը, - և մի՛ գայթակղվիր իմ արարքները դատելով, այլ լսիր, թե ինչ կասեմ քեզ...

Առաջին օտարականը լիովին աստվածաճանաչ էր, բայց ափսեհ, որ ես ջուրը գցեցի, նա ձեռք էր բերել ոչ ուղիղ ճանապարհով. իմացիր, որ ես նրա սիրալիրությունը չնայելով, որպես շնորհակալություն նրա հյուրասիրության դիմաց, ոչնչացրի այն, որպեսզի այդ հասարակ իրի պատճառով բարի մարդը չկորցնի երկնային պարգևը:

Երկրորդ օտարասեր մարդը նույնպես աստվածավախ է, բայց նրա անչափահաս որդին չափահաս դառնալով չարագործ էր դառնալու և մարդկության արատ, և իր հորն ամոթ ու մահացու վիշտ էր բերելու, դրան գոմարած այն, որ դժբախտ հայրը ահեղ դատաստանի ժամանակ պատասխան պիտի տար իր որդու համար: Եվ ուրեմն իմացիր, որ ես հոր առաքինություն համար սպանեցի որդուն:

- Բայց ո՞րն է պատճառը, որ այստեղ, այս ամայի վայրում քանդում ես տունը և կառուցում նորը:

- Մի գայթակղվիր և այս դեպքում, պատասխանեց ուղեկիցը, - այս տան տերը հափշտակող և մարդասպան էր, բայց նա աղքատացավ և թողեց իր տունը: Նրա պապը, որ կառուցել է այս տունը, պատի մեջ ոսկի է պահել: Իմացիր, որ տունը քանդեցի նրա համար, որ որևէ մեկն այդ գանձը փնտրելով իր հոգին չկորցնի:

- Եվ այսպես, բարի ծեր, վերադարձիր քո խուցը, - ամփոփեց նա, - և սրանից հետո քեզ վրա մի վերցրու Աստծո կողմից հաստատած ճակատագրերը քննելու գործը: Ինքը՝ Սուրբ Հոգին է ասում, որ ինքն անհատակ խորություն է և անհասկանալի մարդու համար: Իզուր մի փորձիր ճանաչել ճակատագրերը, քանզի դրանից ոչ մի օգուտ չկա:

Այս ասելով՝ սևամորթը վայրկենապես անհետացավ: Ծերը սարսափեց: Նա հասկացավ, որ այդ անապատականը Աստծո կողմից իր մոտ ուղարկված Հրեշտակն էր, որպեսզի իրեն փրկարար դաս տար: Ծերը զղջաց իր անգիտություն համար և ուխտ արեց Աստծուն՝ երբեք չփորձել նրա կողմից կանխորոշած ճակատագրերը:

## ԻԿՈՆԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄՖԻԼՈՒՔԻ ԱՐԱՐՔԸ ԿԱՅՄԻ ԹԵՈՂՈՍԻ ԴԵՄ

Սուրբ Ամֆիլոքոսն, որ քաջություն էր և արթնություն պայքարում էր աստվածանարգ Եփեսոսի և հոգեմարտ Մակեդոնի դեմ, ոչ մի կերպ չէր կարողանում դիմադրել արիոսական հերձվածին: Հերձված, որ սրբնթաց հեղեղի նման ողողել էր ողջ Հունաստանը: Քրիստոսի բարի ու հաղթանակած զինվորը օգնություն համար դիմեց կայսերը և խնդրեց, որ նա կայսերական իշխանությունը Հունաստանի բոլոր քաղաքներից վտարի արիոսական խառնամբոխը: Բայց կայսրը, ամենուր տեսնելով հերետիկոսների բազմությունները, գուցեև նրանց խռովություններից վախենալով, սրբի խնդրանքն անհետևանք թողեց:

Որոշ ժամանակ անց Ամֆիլոքոսն առիթ ունեցավ կայսեր մոտ լինելու: Նա խոնարհվեց գահին նստած Թեոդոսին և որպես հավատարիմ հպատակ՝ նրան ողջունեց խոր ակնածանքով: Բայց նա ցույց տվեց, թե իբր չի տեսնում հոր գահի մոտ նստած որդուն՝ Արկադիոսին, որը վերջերս էր ստացել «Օգոստոս» տիտղոսը: Նկատելով նման անուշադրությունը իր աթոռակցի և որդու նկատմամբ՝ Թեոդոսը զայրացավ և չկարողալով տանել նման անպատվությունը, հրամայեց սուրբ Ամֆիլոքոսն վտարել՝ որպես անքաղաքավարի մեկին:

- Օ՛, Տիրակալ, - բացականչեց այնժամ արդարը, - այժմ դու սեփական փորձով գիտես, թե որքան դժվար է տանել զավակի նկատմամբ ցուցաբերած անպատվությունը: Դու զայրանում ես ինձ վրա, ուրեմն որքան առավել Հայր Աստվածը չի կարող տանել իր Որդու հանդեպ ցուցաբերած անպատվությունը: Նա երես է դարձնում, արհամարհում է Իրեն անարգողներին և դաժան պատիժ է պատրաստում նրանց համար, ովքեր հաղորդակցվում են արիոսական անիծյալ հերձվածի հետ:

Այնժամ կայսրն իմացավ, որ Ամֆիլոքոսի՝ իր որդու հանդեպ ցուցաբերած անարգանքը բարի նպատակ է հետապնդում և ապացույցն է այն բանի, որ Աստծո Որդուն պետք է Հայր Աստծուն հավասար պատվի արժանացնել: Հիանալով այս

արարքի իմաստունությամբ, այսքան առաքինի դասով, նա բարձրացավ գահից, խոնարհվեց սուրբ Ամֆիլոքոսի առաջ և ներում խնդրեց վիրավորելու համար:

Անհապաղ ամենուր առաքվեցին կայսերական հրովարտակներ, պահանջելով, որ քաղաքացիական իշխանությունն ամենուրեք աջակցի եկեղեցուն արիոսական հերձվածի դեմ պայքարում: Այդպիսով սուրբ Ամֆիլոքոսի միջնորդությունով Բրիստոսի եկեղեցին հանգիստ և բարեկեցություն ստացավ:

### ՍՈՒՐԲ ԲԱՂՐԱՄԻ ԱՌԱԿԸ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հռոմեական կայսրերից մեկն անցնում էր ոսկեզօծ մարտակառքով՝ շրջապատված մեծամեծներով և զինվորներով: Նա հանդիպեց քրքրված ու կեղտոտ հագուստներով երկու ծեր: Իմանալով, որ նրանք բարեպաշտ ծոմապահներ են՝ կայսրն իջավ մարտակառքից, խոնարհվեց, գրկեց ու համբուրեց նրանց: Զարմացած մեծամեծները վրդովվեցին և իրար ականջի շնչացին. «Ինչ ստորացման հասավ մեր կայսրը»:

Բայց չհամարձակվեցին բարձրաձայն արտահայտվել և կայսեր եղբորը խնդրեցին նրան հայտնել, որ հարմար չէ այդպես անպատվել կայսերական պսակը: Կայսեր եղբայրը համաձայն էր մեծամեծների մտքին և բացատրվեց եղբոր առջև: Կայսրը նրան պատասխանեց, բայց եղբայրը որքան էլ ջանաց, չկարողացավ հասկանալ:

Կայսրը սովորություն ուներ. երբ ցանկանում էր որևէ մեկին մահվան դատապարտել, ուղարկում էր մոլորեցնող, որը հանցագործի տան դարպասների մոտ շեփորի ձայնով ազդարարում էր նրա վախճանը: Այս սովորության համաձայն հաջորդ գիշեր նա մահվան շեփոր ուղարկեց իր եղբոր տան մոտ: Դժբախտ արքայազնը դողդողաց՝ լսելով մահվան ձայնը և ողջ գիշեր նա անցկացրեց մահվանը նախապատրաստվելով:

Առավոտյան նա հագավ սգո շորեր, կնոջ և երեխաների հետ գնաց կայսեր պալատ և կանգնելով դռների մոտ լացեց ու հե-

կեկաց: Լսելով այս՝ կայսրը նրան կանչեց իր մոտ և տեսնելով մահվան գույժի բերած հուսահատությունը՝ ասաց նրան. «Անմիտ մարդ, դու վախեցար կանխագուշակից, որ քեզ մոտ էր ուղարկել եղբայրդ, քեզ հետ մի մորից ծնված և քեզնից ոչ մի վիրավորանք չտեսած եղբայրդ: Դու ինչպե՞ս կարողացար քննադատել ինձ, երբ ես սրտի խոնարհությունից համբուրեցի Աստծո մարգարեներին, որոնք իմ մահն են գուժում շեփորի ձայնից ավելի բարձր ձայնով: Ես քեզ հետ այդպես վարվեցի միայն նրա համար, որպեսզի սովորեցնեմ քեզ: Հանգիստ քո տունը գնա, իսկ նրանց, ովքեր իմ՝ աղքատի առջև խոնարհվելու հարցում համամիտ էին քեզ հետ, ես կսովորեցնեմ այլ ձևով»:

Դրանից հետո կայսրը հրամայեց չորս արկղ սարքել: Նրանցից երկուսը պատել տվեց ոսկով, իսկ մյուս երկուսը՝ մոխրով ու խեժով: Երբ այս ամենը պատրաստ էր, նա իր մոտ հրավիրեց այն պալատականներին, որոնք իր՝ աղքատների առաջ խոնարհվելն անպատվություն էին համարում: Նա նրանց առաջ դրեց չորս արկղերն ու հարցրեց, թե ի՞նչ արժեք ունեն երկու ոսկեզօծներն ու ի՞նչ՝ երկու խեժապատները:

Պալատականները, ինչպես բոլոր միայն արտաքինից դատող մարդիկ, մտածելով, թե ոսկեզօծ արկղերի մեջ արքայավայել ապրանք է դրված, դրանց ամենաբարձր գինը տվեցին, իսկ խեժապատ և մոխրապատ արկղերը նույնիսկ գնահատականի արժանի չհամարեցին:

- Ես վստահ էի, որ դուք կգնահատեք արտաքինից դատելով, - ասաց կայսրը, - բայց տեսնե՞ք՝ արդյոք չե՞ք խաբվել դուք:

Երբ հրամայեց բացել ոսկեզօծ արկղերը, նրանցից տհաճ հոտ տարածվեց:

- Նայեցե՞ք՝ ի՞նչ կա դրանց մեջ, - ասաց նա:

Պալատականները նայեցին և արկղի մեջ մարդկային ոսկորներ տեսնելով՝ սարսափահար ընկրկեցին:

- Ահա՛ նրանց արտացոլումը, - ասաց կայսրը, - ովքեր իրենց թանկարժեք, փայլուն շորերով հպարտանում են փառքով, իսկ իրենց հոգիները լիքն են գարշահոտ արարքներով, անօրենություններով:

Հետո հրամայեց բացել մյուս երկու արկղերը, որոնք պատած էին խեժով ու մոխրով: Այնպիսի անուշահոտութիւն տարածվեց, որ այլևս չէր զգացվում մեռյալի ոսկորների հոտը:

- Նայեցեք, թե այս արկղերի մեջ ինչ կա, - դարձյալ նրանց կարգադրեց կայսրը:

Պալատականները տեսան թանկարժեք քարեր, օծված բուրավետ նյութերով:

- Ահա՛ նրանց պատկերը, -ասաց կայսրը, -որոնց ես խոնարհվեցի, որոնց համբուրեցի և դուք ինձ հայհոյեցիք միայն այն պատճառով, որ նրանք հին շորերով էին: Բայց դուք չգիտեիք, որ նրանց հոգիները ոչ մի գիծ չէին կորցրել Աստծո պատկերից: Իր պալատականներին նման խելացի դաս տալով՝ կայսրն արձակեց նրանց:

Թանկագին հագուստի տակ հաճախ արատավոր սիրտ է թաքնվում և ցնցոտիների տակ՝ մաքուր ու բարի սիրտ:

#### ՍՈՒՐԲ ԴԱՆԻԵԼԻ ԱՌԱԿԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի ճգնաժամ, որ նստած էր խցում, ձայն լսեց վերևից. «Արի և ես քեզ ցույց կտամ մարդկային գործերը»:

Ճգնաժամը դուրս եկավ և հայտնված հրեշտակը նրան ցույց տվեց մեկին, որ ծառ էր կտրում և կապելով փորձում էր դնել ուսին, բայց չէր կարողանում: Եվ փոխանակ փայտը պակասեցնելու, ավելի էր մեծացնում բեռը և դարձյալ փորձում էր բարձրացնել, բայց դարձյալ չէր կարողանում: Եվ այսպես կրկնում էր անընդհատ:

Գնացին մի քանի ասպարեզ, և Հրեշտակը մի այլ մարդու ցույց տվեց, որը կանգնել էր ջրհորի մոտ, քաշում էր ջուրը և լցնում խարխուլ տակառի մեջ, որի միջից այն դարձյալ հոսում և լցվում էր ջրհորի մեջ:

Սրանից զարմանալով՝ ճգնաժամը շարունակեց ճանապարհը: Հանկարծ նա մի եկեղեցի տեսավ և երկու հոգու, որոնք ձիերին նստած և գերանը թեք բռնած, փորձում էին մտցնել եկեղեցու դռնից ներս, բայց որքան էլ չարչարվում էին, բան

դուրս չէր գալիս, քանզի գերանն ավելի երկար էր, քան դռան լայնությունը, իսկ նրանք գերանը թեքել չէին կամենում:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ծառահատը մեղքերի մեջ ապրող մարդն է, որը ապաշխարելու փոխարեն, անընդհատ ավելացնում է դրանք: Ջուր քաշողը նա է, որ թեպետ շատ բարեքներ է գործում, բայց իր մեղքերից չի հրաժարվում և դրա համար էլ Աստծո ընտրյալների կարգում տեղ չի գտնում:

Իսկ գերան տանող երկուսը նրանք են, որ առաքինի են, բայց՝ հպարտ:

#### ԲԱՐՍԵՂ ՄԵԾԻ ՄԱՀԸ

Մի հրեա կար՝ Հովսեփ անուկով. այնքան նշանավոր բժիշկ էր, որ զարկերակը շոշափելով 5 օր առաջ գուշակում էր մարդու մահը: Աստվածը նախ Ռարսեղը Հոգով տեսավ, որ Հովսեփն ինչ-որ ժամանակ կգիմի Աշխարհի Փրկչին, սիրեց նրան և հաճախ կանչելով իր մոտ խորհուրդ էր տալիս մկրտվել: Բայց հրեան մշտապես հրաժարվում էր՝ ասելով, թե ինչ հավատի մեջ որ ծնվել է, նրա մեջ էլ ցանկանում է մեռնել:

Աստվածահաճո մարդը նրան ասաց. «Հավատա ինձ, որ չենք մեռնի ոչ ես, ոչ դու, մինչև որ դու չծնվես Ջրից և Հոգուց: Առանց այս առաքինություն անհնար է մտնել Երկնքի արքայություն: Քո նախահայրերը չմկրտվեցի՞ն ամպի և ծովի մեջ, չխմեցի՞ն արդյոք վեմից, որ հոգևոր վեմի՝ Հիսուս Քրիստոսի այլափոխումն էր»:

Վերջապես եկավ նրա՝ Աստծո մոտ գնալու ժամանակը: Սուրբը հիվանդացավ և Հովսեփին կանչելով իբրև թե իրեն բժշկելու համար, հարցրեց. «Ի՞նչ ես մտածում իմ մասին»: Հրեան, շոշափելով սրտի զարկերակը, ծառայողներին ասաց. «Պատրաստեցեք ամեն ինչ թաղման համար, շուտով սուրբը կմահանա»: «Ինքզ էլ չգիտես, թե ինչ ես խոսում», - ասաց Բարսեղ Մեծը: Բայց Հովսեփը վստահորեն պատասխանեց. «Ճիշտ եմ ասում, Տեր, դու կմեռնես նախքան արևը մայր կմտնի»: «Իսկ ի՞նչ կանես, եթե մինչև առավոտյան վեցերորդ ժա-

մը չմահանամ», - հարցրեց Բարսեղը: «Թող ինքս մեռնեմ», - պատասխանեց Հովսեփը: «Երդվեցնում եմ քեզ մահանալ մեղքի համար, որպեսզի ապրես Աստծու համար», - ասաց սուրբը:

«Գիտեմ, ինչի մասին ես խոսում, տեր, - պատասխանեց հրեան, - վկա է Աստված, որ կկատարեմ»:

Սուրբ Բարսեղն ազատ արձակեց հրեային և խնդրեց Աստծուն, որ մոլորյալին փրկելու համար շարունակվի իր կյանքը:

Հաջորդ առավոտյան սուրբը մարդ ուղարկեց նրա հետևից: Բժիշկն այնքան վստահ էր իր վրա, որ ծառային չհավատաց, թե Բարսեղը կենդանի է, բայց ցանկանալով մահացածին հրաժեշտ տալ, գնաց ծառայի հետ: Բայց մեծ եղավ զարմանքը, երբ տեսավ աստվածահաճո մարդուն: Հովսեփն ընկավ նրա ոտքերն ու մաքուր սրտով բացականչեց. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը, և Նրանից բացի չկա ուրիշ Աստված: Կարգադրիր, հայր սուրբ, որ և ինձ, և ընտանիքիս անդամներին անհապաղ մկրտեն»:

«Ես իմ ձեռքով կմկրտեմ քեզ», - պատասխանեց Քրիստոսի սուրբը և ի զարմանս բոլորի վեր կացավ մահճից, գնաց եկեղեցի: Այնտեղ ամբողջ ժողովրդի ներկայությամբ մկրտեց Հովսեփին և նրա ընտանիքի անդամներին, պատարագ մատուցեց և նորադարձներին սուրբ հաղորդություն տվեց: Նրանց սովորեցնելով՝ նա եկեղեցում մնաց մինչև իններորդ ժամը: Վերջապես, փառք տալով Աստծուն, ժողովրդի աչքի առաջ հոգին հանձնեց Աստծո ձեռքը:

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍԻ ԱՆՎԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի ծեր հաստատվեց մի դատարկ կռատան մեջ: Որոշ ժամանակ անց նրա մոտ եկան պիղծ ոգիները և ասացին. «Հեռացիր մեր տեղից»: «Դուք տեղ չունեք», - պատասխանեց ծերը: Այդ ժամանակ նրանք սկսեցին ամենուր շաղ տալ արմավենու տերևները, որ նա պատրաստել էր զամբյուղ գործելու համար: Ծերը, առանց հոգնելու սկսեց հավաքել:

Դրանից հետո մարդկային ցեղի թշնամիները նրա հագուստից բռնելով, քարշ տվեցին դուրս, բայց ծերը կառչեց դռնից և ձայն տվեց. «Տեր Հիսուս, օգնի՛ր ինձ», և անմարմին չարագործներն անմիջապես փախան:

«Ինչո՞ւ ես լալիս», - այն ժամանակ նրան հարցրեց անտես ձայնը:

«Նրա համար, որ հավատի և առաքինություն թշնամիները ձգտում են հաղթել Աստծո ծառային», - պատասխանեց ծերը: «Դու ինքդ ես մեղավոր, - առարկեց երկնային ձայնը, - քանի որ մոռացել ես իմ մասին: Ինքդ տեսար. հենց կանչեցիր, ես չզլացա քեզ օգնել»: Ծերը զգալով Աստծու ներկայությունը, ընկավ ծնկներին և դեմքով հպվեց գետնին:

Յուրաքանչյուր մարդու համար որպիսի ապացուցիչ խրատ է սա... Մենք աղաղակում ենք առ Աստված, աղոթում ենք, երբեմն այնքան լալիր է ենք լինում, որ որևէ անհաջողության հանդիպելիս փնթփնթում ենք Նրա վրա: Բայց ինչո՞ւ Նրանից օգնություն չենք խնդրում, երբ կրքերը, այսպես ասած, օդի մեջ ցրում են մեր խելքը, մեր հավատը, մեր բարի գործերը: Երևում է՝ այդ ժամանակ մենք հույսներս դնում ենք մեզ վրա: Բայց որքան հիմարություն է կարծել, թե մենք ինքնուրույն կարող ենք վռնդել մեր հոգիների հետ մարտնչող թշնամիներին:

### ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵՂԻՍԵՆ

Սուրբ Հակոբ Նյուսացին մի անգամ տեսավ պարսիկ քաղաքագլխին, որ անմեղի նկատմամբ անարդար դատ էր արել և զայրացավ: Սուրբը ունեւր առաքյալների ու մարգարեների վերևից տրված զորությունը և կարող էր դաժանորեն պատժել նեղողին, բայց վարվում էր Նոր Կտակարանի համաձայն և Քրիստոսի ներողամտության երանությունը նրա բոլոր գործերի կանոնն էր: Սուրբ հայրը նայեց երկնքին և դատավորի կողքին ընկած քարը վայրկենապես փշրվեց, վերածվեց փոշու և ծածկեց անարդար դատարանը, դրանով ցույց տալով, որ այդպես Աստծո բարկության օրը կոչնչանան անարդարները: Բո-

լորը սարսափեցին, քաղաքապետը դողաց և ընդունելով իր մեղքը՝ չեղյալ հայտարարեց անարդար վճիռը:

Որպիսի՛ դաս նրանց համար, ովքեր իշխանություն և զորություն ունեն ուրիշներին պատժելու:

### ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՂՈԹՔ

Մի անգամ Անտոն Մեծը հոսսահատության և ինչ-որ մուսուլմանների տրվեց, բայց շուտով ինքն իրենից վախենալով, աղաղակեց առ Աստված. «Տեր, ես ցանկանում եմ փրկվել, բայց չգիտեմ, թե ինչով զբաղվեմ: Ինձ ցույց տուր պիղծ մտքերից ազատվելու միջոցը: Ինձ փրկվել սովորեցրու»:

Որոշ ժամանակ անց Անտոն Մեծը դուրս եկավ խցից և մի անծանոթ մարդու տեսավ, որը սկզբում նստած գործում էր, իսկ հետո կանգնեց և աղոթեց, հետո նորից նստեց և սկսեց զամբյուղ գործել, որից հետո դարձյալ աղոթքի կանգնեց...

Դա ճգնափորի տեսքով Աստծո կողմից ուղարկված հրեշտակն էր, որպեսզի ուղղեր և նախազգուշացներ Անտոնին: Եվ երբ սուրբ Անապատականը նայեց նրան, անմարմին պահապանն ասաց նրան. «Այսպես վարվիր և փրկված կլինես»: Լսելով այս՝ սուրբ Անտոնն ուրախությամբ և հույսով լցվեց և այդ ժամանակից այլևս չէր խախտում հրեշտակային կանոնը:

Ինչպիսի կոչում էլ որ քեզ տված լինի Աստված, ինչպիսի հանգամանքներ էլ որ շրջապատելու լինեն քեզ, աղոթիր քո հոգու փրկության համար և աշխատիր հասարակության օգուտի համար: Աղոթքն ու աշխատանքը փոխադարձաբար ամրացնում են մեկը մյուսին: Աղոթքն աշխատելու ուժ է տալիս, որի համար ծնվել է յուրաքանչյուր մարդ, իսկ աշխատանքը, ցրելով չարաբարո մտքերը (պարապության զավակներին), սիրտն ու ուղեղը նախապատրաստում է երկյուղած հանգստության և խոր ուշադրության աղոթքի ժամերի հանդեպ: Նրանք իրար համար կարծես ծառայում են որպես հանգիստ, և երջանիկ է այն մարդը, որի սիրտը այս հերթականությունը չի խախտում:

### ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ ԵՎ ՀԵԹԱՆՈՍ ԻՄԱՍՏՈՆԵՆԵՐԸ

Լեոնային մի քարանձավում իրեն լուսթյան տված Սուրբ Անտոնին այցելության եկան երկու հեթանոս փրկիստիաներ, մտադրություն ունենալով նրա հետ խոսել քրիստոնեական հավատքի գաղտնիքների մասին և ծաղրել անապատականի կենցաղն ու կյանքը: Իմաստուն ծերունին առաջին իսկ հայացքից հասկացավ՝ նրանք ովքեր են և թարգմանչի միջոցով ասաց. «Դուք՝ իմաստուն մարդիկդ, ինչո՞ւ այսքան երկար ու դժվար ճանապարհ անցաք անմիտ մի մարդու տեսնելու համար»: «Դու ոչ թե անմիտ ես, - պատասխանեցին նրանք, - այլ կատարյալ իմաստուն»: «Եթե այդպես է, - ասաց ծերը, - ապա ձեր պարտականությունն ու օգուտը պահանջում են ինձնից՝ որպես իմաստունից, խրատ ստանալ, և ես այն տալիս եմ ձեզ՝ Քրիստոնյա դարձեք»: Նման անակնկալ ողջունից զարմացած, փրկիստիաները ետ դարձան՝ առավել զարմացած մնալով անապատականի մտքի սրությունը:

### ԽՈՆԱՐՀՈՒՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Անտոն Մեծը՝ որպես Քրիստոսի իսկական ծառա, մշտապես պատրաստ էր ստորացումներ կրելու: Բայց երբ զրպարտությունը վերաբերում էր նրա հավատի մաքրությանը, այդժամ ուղղափառության մարտիկը խոնարհության սահմաններից դուրս էր գալիս: Դա կարելի է դատել հետևյալ արարքից: Մի անգամ արիոսականները զրպարտեցին նրան, իբրև թե իրենց հետ բարեկամաբար է վարվում: Նրանց հանդուժողականից զարմացած՝ սուրբ Անտոնը բռնվեց սրբազան գայրույթով և գնալով Ալեքսանդրիայի եպիսկոպոսի ու ողջ ժողովրդի առաջ անիծեց նրանց՝ կոչելով հակաքրիստոսի նախակարապետներ: Ահա ճշմարտության և սրբության ինչպիսի՛ ուժ: Թեպետ և արիոսական պետերը և ուսուցիչներն ատամ էին կրճտացնում Անտոն Մեծի վրա, բայց ժողովուրդը /ոչ միայն հերետիկոսները, այլև կռապաշտները/, ամենուրեք խոնվում էր նրա շուրջը՝

աշխատելով ընդունել նրա օրհնությունը կամ գոնե կպչել նրա հագուստին:

Քրիստոնյանե՛ր, մի կարծեք, թե Անտոնն այս արարքով խախտեց քրիստոնեական համբերության դասը: Եթե նա չմերկացներ չար զրպարտությունը, առիթ կտար այլ գայթակղություն: Սարսափելին այն է, որ անգետները, որոնք չեն կարող ըմբռնել մեծ մարդու մտադրությունները, այդ ժամանակ կարող են մեծ պառակտում առաջ բերել: Թեպետև լուսությունը, իրավամբ, առաքինություն է համարվում, բայց աշխարհում այն հաճախ համարվում է զրպարտիչների հետ համաձայնության նշան:

### ԿԱՐԵԿՅԱՆՔ ՄՈՂՈՐՎԱԾՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Մի ճգնափոր հրապուրվել էր գայթակղության դեմ: Մեռնաստանից վճռվելով՝ դժբախտը եկավ սուրբ Անտոնի մոտ և նրա հետ մնաց որոշ ժամանակ: Բայց երբ սուրբ հոր հրամանով վերադարձավ նախկին տեղը, վանականները չցանկացան ետ ընդունել: Վտարվածը երկրորդ անգամ փախավ Անտոնի մոտ: Սուրբ հայրը նրան նորից ուղարկեց եղբայրների մոտ, նրանց պատվիրելով հետևյալը. «Նավը երեբացել է փոթորկից, կորցրել է ապրանքը և հազիվ ափին է հասել, մի՞թե ցանկանում եք ալիքներին հանձնել և այն, ինչը չի կործանվել»:

Այս լսելով՝ ճգնափորները վտարվածին անհապաղ ընդունեցին եղբայրության մեջ:

Ենթակային պատժելիս պետք է չափը պահպանել նրան հուսահատության չհասցնելու համար:

### ԱՍՏՎԱԾԱՀԱՃ ԹՈՂՏՎՈԼԹՅՈՒՆ

Մի որսորդ, որ անապատ էր գնացել քարայծ որսալու, տեսավ, որ վանահայր Անտոնը եղբայրների հետ վերաբերվում է ոչ թե պետի պես, այլ՝ քաղցրությամբ: Ծերը հասկացավ

որսորդի վատ մտքերը մենակյացների մասին, և ցանկանալով նրա մոլորությունը ցրել, նրան ասաց. «Նետը դիր և լարիր աղեղը»: Որսորդը կատարեց հրահանգը: «Էլի ձգիր», - շարունակեց ծերը: Եվ որսորդը դարձյալ մկանները լարելով ձգեց: «Ավելի ձգիր», - ասաց ծերը երրորդ անգամ: Բայց որսորդը առարկեց. «Եթե ձգեմ չափից ավելի, աղեղը կկտրվի»: Այնժամ սուրբ Անտոնն ասաց նրան. «Այդ բանից պետք է վախենալ և հավատքի գործերում: Եթե եղբայրների հետ չափազանց խիստ վարվենք, նրանք կկտրվեն: Ամենուր պետք է հանդես բերել ներողամտություն և որոշակի չափով թուլացնել կապերը: Չէ՞ որ մենակյացները նույնպես մարդիկ են»:

Այդ ժամանակ որսորդը զղջաց ու սուրբ Անտոնից հեռացավ իր հոգու համար օգուտ քաղած, իսկ եղբայրները այդ դեպքի միջոցով ամրացան նոր սխրանքների համար:

### ՈՂՈՐՄՈԼԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՓԱՌՔԸ

Կոստանդնուպոլսի մեծ եկեղեցու երեց սուրբ Մարկիանոսը, որ գնում էր Աստծուն ծառայություն մատուցելու, տեսնելով ցրտից դողացող մերկ ու բոբիկ մի մարդու, հանեց իր հագուստը և ծածկեց նրա մերկությունը՝ ինքը մնալով ներքնաշապիկով: Բայց դուք տեսեք, թե Տերը սրա համար ինչպես փառավորեց նրան: Երբ սուրբ Մարկիանոսը սկսեց հոգևոր ծառայություն մատուցել, ողջ ժողովուրդը, այդ թվում և պատրիարքը, եկեղեցական շուրջառի տակ արքայական ծիրանի տեսան:

Սրանից չի՞ երևում, արդյոք, որ մենք, մեր անունից մերկերին հագցնելով, չենք կորցնում, այլ թանկարժեք քարերի հետ փոխ ենք տալիս նրան, ով նույնիսկ մի բաժակ սառը ջրի փոխարեն մեզ խոստացավ հավերժական երջանկություն պարգևել: Սուրբ Մարկիանոսին տրված արքայական հագուստը արդյոք ապացույց չէ՞, որ ողորմություն տվողն աստվածահաճո գործ է կատարում:

ՇՆՈՐՀԸ ՊԵՏՔ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ  
ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՈՒՏԻ ՀԱՄԱՐ

Սուրբ Մակար Եգիպտացին Տիրոջից այնքան շնորհ էր ստացել, որ նրա ձայնին նույնիսկ մեռածներն էին պատասխանում, եթե դա օգուտ էր հավատքի համար, կամ էլ երջանկություն՝ անմեղ տառապյալների համար: Ահա մի օրինակ:

Մի գյուղում մի սպանություն կատարվեց, որի մեղքը կեղծ կասկածանքով դրեցին բոլորովին անմեղ մարդու վրա: Խեղճը հալածանքից սարսափահար վազեց սուրբ Մակարի խցի մոտ և հենց այնտեղ էլ բռնվեց: Ոչ արցունքները, ոչ երզումները չկարողացան ապացուցել նրա անմեղությունը: Խռնված ամբոխը միաձայն նրան «սպանող» էր կոչում: Սուրբ Մակարը աղմուկի վրա դուրս եկավ և հասու լինելով գործին, հարցրեց. «Որտե՞ղ է թաղված մեռածը»: Եվ երբ ասացին տեղը, նա ժողովրդի հետ գնաց նրա դամբարանը: Այնտեղ ծունկը ծալելով և ջերմ աղոթք հղելով երկինք՝ սուրբը ներկաներին ասաց. «Հիմա Տերը հայտնի կդարձնի. արդյոք այս մա՞րդն է սպանել»: Հետո բարձր ձայնով տվեց մեռածի անունը և մեռածը գերեզմանից պատասխան տվեց: Մակարը նրան հարցրեց. «Հիսուս Քրիստոսի հավատքով հրամայում եմ քեզ, ասա, արդյոք ժողովրդի կողմից մեղադրվող այս մա՞րդն է սպանել քեզ»: «Դա չէ ինձ սպանողը, հողի տակից բարձր ձայնով պատասխանեց մեռյալը, նա չէ, որին մեղադրում են»: Զարմացած ժողովուրդը սարսափահար ծնկի իջավ: Հետո ընկնելով սրբի ոտքերը, բոլորն սկսեցին խնդրել, որ մեռյալին հարցնի սպանողի անունը, բայց սուրբ Մակարը պատասխանեց. «Դա անել չեմ կարող, ինձ համար բավական էր անմեղին հետապնդումից փրկելը, իսկ մեղավորին դատարանին հանձնելն իմ գործը չէ»:

Քրիստոնյաներ, մենք նույնպես զանազան շնորհներ ունենք, որոնցից մեր մերձավորները կարող են և օգուտ քաղել, և վնաս, նայած, թե ինչ նպատակի կծառայեցվեն դրանք: Օրինակ վերջրեք սուրբ Մակարից, որն Աստծո շնորհը ծառայեցրեց անմեղ մարդուն մահից ազատելու համար, բայց չցանկացավ այն օգտագործել նույնիսկ հանցագործին կործանելու համար:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԱՍՏԾՈՒՆ ՈՐՔԱՆ ՍԻՐԵԼԻ ԵՆ  
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի անգամ սուրբ Մակարը ողջ սրտով խորացած էր աղոթքի մեջ, երբ երկնքից ձայն լսեց. «Մակար, դու մինչև հիմա չես նմանվել այն երկու կանանց, որոնք ապրում են մոտակա քաղաքում»:

Ծերունին վերցրեց ցուպը և գնաց քաղաք, գտավ տունը և թակեց դուռը: Դուրս եկավ մի կին: Նա մեծ ուրախությամբ ընդունեց սուրբին և առաջնորդեց սենյակ, որտեղ նրան մի այլ կին դիմավորեց: Այնժամ հայր սուրբն ասաց նրանց. «Միայն ձեզ համար եմ մեծ չարչարանք կրել: Ես եկել եմ հեռավոր անապատից, որպեսզի ծանոթանամ ձեր գործերին: Առանց որևէ բան թաքցնելու ամեն բան պատմեցեք ինձ»:

«Մարդ Աստծո, համեստորեն պատասխանեցին կանայք, մի՞թե կարելի է որևէ աստվածահաճո բան պահանջել նրանցից, ովքեր անընդհատ զբաղված են տնային հոգսերով և պարտավոր են ամուսնական պարտականությունները կատարել»:

Բայց սուրբ Մակարը համառեց, որպեսզի իրեն պատմեն, թե իրենք ինչպես են անցկացնում իրենց օրը: Այնժամ առաքինի տանտիրուհիները ասացին նրան. «Մենք երկու հարազատ եղբայրների կանայք ենք: Տասնհինգ տարի ապրում ենք միասին և այդ ընթացքում իրարից որևէ վիրավորական խոսք չենք լսել: Երեխաներ չունենք, իսկ եթե Աստված երեխա տա, մեր առաջին հոգսը կլինի աղոթել, որպեսզի Նա մեզ օգնի նրան դաստիարակել հավատքով և առաքինությամբ: Ծառաների հետ սիրալիք ենք վարվում: Բազմիցս իրար հետ մտածել ենք մտնել սուրբ կույսերի մենաստան, բայց չենք համարձակվել մեր ամուսիններից թույլտվություն խնդրել: Զգալով նրանց սերը մեր հանդեպ՝ մենք որոշեցինք մնալ նրանց հետ և որոշեցինք նրանց մխիթարություն լինել: Եվ որպեսզի մեր կյանքն ինչ-որ չափով նման լինի սուրբ անապատականների կյանքին, մեր սրտերի մեջ դրեցինք հեռու փախչել աղմկալի գրույցներից, ավելի շատ լինել տանը և տնտեսությամբ զբաղվել»: Այս լսելով՝ սուրբ Մակարն ասաց. «Ճշմարիտ որ Աստված չի նա-

յում՝ մարդը կու՞յս է, թե՞ ամուսնացած, վանակա՞ն է, թե՞ աշխարհական, այլ փնտրում է միայն սրտալի ձգտում դեպի բարի գործերը: Աստված ընդունում է այդ ինքնահավատ ձգտումը և նայելով դրան՝ բոլորին տալիս է Սուրբ Հոգին, որ գործում է ամեն փրկվել ցանկացողի կյանքում ու ղեկավարում այն»:

Ամուսիննե՛ր, ընտանիքի մայրե՛ր, երկու առաքիլնի կանանցից օրինակ վերցրե՛ք, և այնժամ ձեզ կվիճակվի բախտավոր ապրել և երանելի լինել այն կյանքում:

### ՍԵՐ՝ ԱՏԵԼԻ ԲԱՆԵՐԻ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՍԻՐԵԼԻ ԲԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Մի անգամ, երբ սուրբ Մակարը գնում էր եղբայրների հետ, լսեց, թե ինչպես մի պատանի ասում էր մորը.

- Ինձ մի հարուստ մարդ սիրում է, բայց ես, չգիտես ինչու, ատում եմ նրան: Իսկ մի աղքատ մարդ ինձ ատում է, բայց ես սիրում եմ նրան:

Լսելով այս՝ Մակարը զարմացավ, հետո մտքի մեջ ընկավ:

«Քեզ ի՞նչ պատահեց, արբա», - հարցրեցին եղբայրները: «Մեր Տերն իսկապես հարուստ է, - պատասխանեց Մակարը, - և սիրում է մեզ, իսկ մենք՝ անմիտ մարդիկս, չենք ցանկանում նրան սիրել: Դրան հակառակ, մեր թշնամին՝ գայթակղության ոգին, և աղքատ է, և ատում է մեզ, իսկ մենք, ի դժբախտությու՛ն մեզ, սիրում ենք նրան»:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ՄԵԾ ՄԵՂՔ Է ԱՍՏԾՈ ԽՈՍՔԼ ԹԵԹԵՒԱՄՏՈՐԵՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Երկու միաբաններ՝ Մարոն ու Կղեմոսը, վանական կյանքի խստությունից ձանձրանալով, պայմանավորվեցին առաջիկա գիշերը փախչել, բայց Աստուծոն ոչ հաճելի այդ մտադրությունը հայտնի դարձավ: Սուրբ Եթիմոսը, նրանց կանչելով, խորհուրդ տվեց հրաժարվել կործանարար մտքից:

- Մարդն ամենուր պետք է իրեն պահպանի գայթակղություն-

նից, - ասաց նա, - Ադամն Աստծո պատվիրանը դրժեց դրախտում, Հոբը նույնիսկ աղբակույտի վրա նստած պահպանեց այն: Բանն այն է միայն, որ սրտում չար մտքեր չընդունես. նրանք հուսահատություն ու թախիժ են ծնում ապրածդ տեղի և նրա բնակիչների հանդեպ: Ուրեմն սթափ եղեք և հեռու մնացեք այն գայթակղությունից, որ ձեզ ներշնչում է ուրիշ տեղ տեղափոխվել: Հաճախակի վերատնկվող ծառը պտուղ չի տալիս: Այդպես է և մարդը, եթե հաճախակի փոխում է բնակավայրը կամ կենցաղը, անօգուտ է դառնում և իր, և հասարակության համար: Եթե որևէ մեկը ցանկանում է առաքիլնի լինել, բայց այդ անելու համար իր մեջ ուժ չի գտնում, թող չմտածի, թե ուրիշ տեղում այդ անելու ընդունակ կլինի: Առաքիլությունը կայանում է ոչ թե տեղի պատճառով, այլ բարիք գործելու կամեցողությամբ: Սա հաստատվում է փորձով: Մի եզրիպտացի վանական, որ կովարար բնավորություն ուներ, ապրել չէր կարողանում մի տեղում, թեպետև մեղավորն ինքն էր, բայց ինչպես ընդունված է սովորաբար, միշտ մեղադրում էր ուրիշներին: Վերջապես նա հեռացավ վանքից և մենակ առանձնացավ մի անապատում՝ հույս ունենալով, թե ոչ ոք չի կարող զայրացնել իրեն: Ի՞նչ դուրս եկավ: Մի անգամ շրջվեց նրա ջրի կուժը: Ծերունին զայրացավ և դարձյալ ջուր լցրեց կժի մեջ, բայց, կարծես դիտմամբ, կուժը շրջվեց երկրորդ անգամ: Վանականը զայրացավ, կուժը վերցրեց և խփեց գետնին: Լսելով այս պատմությունը՝ Կղեմոսը ծիծաղեց: Այնժամ սուրբ Եթիմոսը նրա վրա նշանակալի հայացք գցելով ասաց. «Որդյակս, քո ծիծաղն ապացուցում է, որ գայթակղության ոգին ամբողջովին տիրել է քեզ: Մի՞թե չես լսել, որ Տերն անմիտ ծիծաղողներին նզովյալ է համարում, իսկ լացողներին մխիթարում է», - և Կղեմոսին թողնելով առանձնացավ մյուս խցում: Այնժամ սրբապիղծ վանականի սիրտը ահավոր սարսափ ընկավ: Միայն սուրբ Եթիմոսի աղոթքը և խաչակնքումը բուժեցին նրան:

«Այսուհետև զգուշ եղիր, - ասաց Սուրբ Հայրը, - և ուշադիր՝ հայրերի խոսքերի, իսկ ավելի շատ՝ Տիրոջ խոսքի հանդեպ: Ինչպես քերովբեներն են նկարագրում, քայլում ես



ցանցերի միջով, ուրեմն աչք դարձիր ամբողջովին»:

Էլ ինչպե՞ս կարող էին Մարոն ու Կղեմոսն Աստծո՞ւ այդքան տեսանելի պատօհից հետո չուղղվել: Քրիստոնյանե՛ր, մենք ամեն օր եկեղեցիներում լսում ենք Աստծո խոսքը և, ավագ, ինչպե՞ս ենք ընդունում այն: Երբեմն գովում ենք ճարտարախոս քարոզչին, ավելի հաճախ ցանկանում ենք, որ որքան հնարավոր է շուտ ավարտվի քարոզը, իսկ երբեմն էլ սրբապիղծ մտածումներ ենք ունենում Աստվածաշնչի մտքերի վերաբերյալ: Երկյուղեք, քանզի Տիրոջ երկյուղի սուրբ պատրաստ է: Մենք հաճախ լսում ենք փորձառու և առաքինի ծերերին, որոնք իրար հետ զրուցում են հավատքի և ընդհանուր կենցաղի հարցերի մասին, որոնք երիտասարդների մեջ սեր են արթնացնում հայրենիքի հանդեպ, կապվածություն՝ նախնյաց առաքինի սովորություններին և ձանձրույթից հորանջում ենք կամ ծիծաղելով հեռանում ենք ծերերից: Զգուշանա՛նք, որ չլի՛նի թե երբևէ զղջանք, որ ախանջներ ունենալով՝ չլսեցինք:

### ՀԱՅՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Եթիմոսն, իմանալով, որ շուտով գնալու է Տիրոջ մոտ, իր մոտ կանչեց բոլոր վանականներին և որպես ժառանգություն՝ նրանց հետևյալ պատգամը տվեց.

- Հայրեր, եղբայրներ, և իմ զավակներ ի Տեր, ես հեռանում եմ ձեզնից և գնում եմ դեպի հավերժական կյանք: Աղերսում եմ ձեզ, պահպանեցեք իմ պատգամները, և հատկապես սերը, քանզի, ինչպես որ աղը համ է տալիս բոլոր կերակուրներին, այնպես էլ սերը՝ բոլոր առաքինություններին: Նույնիսկ խոնարհությունը՝ որքան էլ սուրբ և աստվածահաճո, առանց սիրո լինել չի կարող: Դուք ինքներդ գիտեք, որ ինքը՝ Տերը, միայն մեր հանդեպ ունեցած սիրո պատճառով մարդ եղավ և խոնարհվեց: Խոնարհությունը մեզ բարձրացնում է բոլոր առաքինությունների գագաթը, իսկ սերը պահպանում է և չի թողնում, որ ընկնենք այնտեղից: Մաքուր պահեք ոչ միայն հոգին, այլև մարմինը, քանզի ինչպես որ մարդ չի կարող հանգիստ

ապրել դարչահոտ և մուժ տան մեջ, այնպես էլ ապականված մարմնի մեջ չի կարող մաքուր հոգի լինել:

Պահպանեցեք մենաստանի բոլոր կանոնները և օրենքները, դրանից է կախված թե հոգևոր, թե քաղաքացիական յուրաքանչյուր հասարակություն բարեկեցությունը: Ձեր ուժերի ներածի չափով օգնեցեք դժբախտներին: Եթե եղբայրներից որևէ մեկը կովում է բղջախոհություն դեմ, նրան սատարեցեք, մխիթարեցեք, ամրապնդեք:

Ահա և Աստծո համար ամենահաճելի առաքինությունը. վանքի դռները երբեք մի փակեք օտարականների համար: Թող նրանք բաց լինեն յուրաքանչյուր եկվորի առջև: Նրանց հետ ձեր ամեն ինչը թող ընդհանուր լինի, այդ ժամանակ ձեզ վրա կթափվի Աստծո օրհնությունը: Եվ եթե ես արժանանամ իմ Փրկչի տեսությունը, ապա նրանից պիտի խնդրեմ, որ շնորհի ինձ հոգով միշտ ձեզ հետ լինել»:

Սրանից հետո երեք օր եկեղեցում հսկման և աղոթքի մեջ անցկացնելով, Աստծո մարդը փոխվեց երկինք:

Ծնողնե՛ր, ապրեցեք միայն նրա համար, որպեսզի ձեր երիտասարդ զավակների հոգիները հարստացնեք բազում առաքինի օրինակներով, իսկ եթե Աստված ձեզ կկանչի իր մոտ, ապա թող սուրբ Եթիմոսի կտակը լինի ձեր կտակը: Մշտապես այնպես ապրեք, որ ձեր երեխաները, թե երիտասարդ տարիներին, թե ալեհեր ծերություն ժամանակ, ամեն բարի գործ կատարելիս կարողանան ասել. «Իմ հայրը և մայրը այսպես էին վարվում: Նրանց հոգին իմ վրա է և ինձ ներշնչում է այս անել այսպես»:

### ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ՏԵՍԻԼԷԸ, ԵՐԲ ՆԱ ԴԵՌԵՎՍ ՊԱՏԱՆԻ ԷՐ

Սուրբ Գրիգորը, որին աստվածաբանական խոր գիտելիքների համար անվանել են Աստվածաբան, բարեպաշտ ծնողներ ունեն և մանուկ օրերից առաջադիմում էր առաքինությունների մեջ: Բայց Գրիգորի հոգու վրա միայն օրինակը չէ, որ ազ-

դեցողություն ունեն: Հետևյալ հրաշագործ երազը նրան առավելապես ամրապնդեց հավատքի սխրանքներ կատարելու մեջ:

Մի անգամ բարեպաշտ պատանին ննջելիս իր կողքին երկու կույսեր տեսավ, որոնք գեղեցկադեմ էին, սպիտակ սավաննների մեջ փաթաթված, հասակով ու տարիքով իրար հավասար: Նրանց վրա փայլող ոչ ոսկի էր, ոչ մարգարիտ, ոչ էլ մետաքս: Ոչ էլ նրանց հմայք տվող թափած մազերն ու աչքերի արտակարգ փայլն էր: Նրանց հագուստը կտավ էր: Բարակ ծածկոցի տակից երևում էին խոնարհած աչքերը, այտերը, որ կարմրել էին օրիորդական ամոթխածությունից, շուրթերը վարդագույն էին, որոնց լուսությունը ինչ-որ սրբազան երանգ էր հաղորդում: Գրիգորն իր սրտում հրեշտակային ուրախություն գգաց: Կույսերը նույնպես սիրեցին նրան և երբ նա հարցրեց, թե իրենք ովքեր են և որտեղից են եկել, առաջինն իրեն ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆ անվանեց, իսկ երկրորդը՝ ԽՈՆԱՐՀՈՒՅՈՒՆ:

- Մենք կանգնում ենք Փառքի թագավորի՝ Հիսուս Քրիստոսի գահի առջև, - շարունակեցին նրանք, - մեզ հետ համամիտ եղիր, քո միտքը մեր մտքին նմանեցրու, քո աչքերը՝ մեր աչքերին, այնժամ քեզ կտանենք երկինք և կկանգնեցնենք Եռյակ Լույսի առջև:

Այս ասելով՝ նրանք օդի միջով երկինք բարձրացան: Սուրբ պատանին հայացքով նրանց ուղեկցեց այնքան, մինչև որ նրանք ծածկվեցին իրենից: Իսկ երբ արթնացավ, սրտի մեջ աննկարագրելի ուրախություն ու զվարթություն գգաց: Այդ ժամանակից ի վեր սուրբ Գրիգորը մահից ավելի վախենում էր առաքինությունները և պատվիրանները խախտելուց:

**ԱՆՏԵՍ ԶԵՌ-ՔԸ, ՈՐ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻՑ  
ՀԵՌԱՑՐԵՑ ՄԱՀԱՑՈՒ ՀԱՐՎԱԾԸ**

Արիոսականները, որոնց հերձվածն Արևելքում և Արևմուտքում իշխում էր համարյա 80 տարի, Թեոդոս Մեծի կառավարման տարիներին ոչ միայն զրկվեցին բոլոր առավել-

լուծյուններից, այլև կոչվեցին «վարակ պետություն համար»: Ստիպված լինելով թողնել Կ.Պոլսի եկեղեցիները՝ նրանք կորցրին կենտրոնացումը, որի միջոցով այդքան հաջողությամբ տարածում էին մոլորությունը: Նրանց կեղծ եպիսկոպոսն ապրում էր քաղաքից հեռու: Արիոսական քարոզչությունը լուեց, նրանք նույնիսկ եկեղեցու նմանվող որևէ շենք կառուցելու իրավունք չուներին: Սրանք էին պատճառները, որ արիոսականներից մի քանիսը իրենց բոլոր դժբախտությունների պատճառը Կ.Պոլսի եպիսկոպոս Գրիգորին համարելով (որն ուղղափառության համար առաջին մարտնչոյն էր), մտածեցին սպանել նրան:

Նրանք վարձեցին մի խռովարար և հանդուգն երիտասարդ, որը համաձայնեց Աստծո եպիսկոպոսին սպանել հենց եպիսկոպոսական տան մեջ: Նրան մոտենալը դժվար չէր, քանի որ շատ մարդիկ էին նրան շնորհավորելու գնում՝ հավատի հարցերում ունեցած հաջողությունների համար: Չարագործն այլ այցելուների հետ միասին մտավ արքեպիսկոպոսի սենյակը: Գրիգորն այդ ժամանակ հիվանդ լինելով նստել էր անկողնում: Մյուսներն իրենց հարգանքը հայտնելով դուրս եկան և չարագործը եպիսկոպոսի հետ մնաց մենակ: Դժվար թե չարագործը հանկարծ դողդողալով ընկավ սուրբ Գրիգորի ոտքերի մոտ և սկսեց հեկեկալ, կարծես ողորմություն էր խնդրում նրանից: Այնպիսի վախ տիրեց նրան, որ նա այդ դրություն մեջ մնաց մի քանի րոպե՝ ուժ չունենալով որևէ բառ արտասանելու: Սուրբը, վախենալով նման անսպասելի երևույթից, կռացավ նրան բարձրացնելու համար և երկար ժամանակ հարցաքննում էր, թե նա ո՞վ էր և ի՞նչ էր ուզում: Բայց միայն հեծեծանքներով և հառաչանքներով ընդհատվող անկանոն բառեր լսելով խղճաց նրան և ինքը նույնպես սկսեց լաց լինել: Աղմուկի վրա ներս մտան մարդիկ և չկարողանալով երիտասարդին համոզել, որ դուրս գա, նրան ուժով միջանցք տարան: Այնտեղ մի քիչ ուշքի գալով նա ձեռքերը երկինք պարզեց և խոստովանելով իր չար մտքերը մեծապես զղջաց: Դրանից հետո նրան դարձյալ եպիսկոպոսի մոտ ուղեկցեցին, և փոքրա-

վորներից մեկը սարսափած ու վախեցած ասաց. «Այս անձան-  
թը մարդասպան է, որն ուզում էր սպանել քեզ, Հայր Սուրբ,  
միայն Տերը կարող էր նրան զղջման մղել»:

Գրիգորը հրամայեց մոտ գալ և գրկելով նրան խոնարհու-  
թյամբ ասաց. «Աստված թող ողորմի քեզ, որդեյակ իմ, և ինչ-  
պես որ այսօր Նա իմ կյանքը փրկեց, այնպես էլ ես պիտի քո  
կյանքը փրկեմ: Միակ հատուցումը, որ պահանջում եմ քեզա-  
նից, այն է, որ թողնես հերետիկոսությունը և հոգաս քո փր-  
կության մասին»:

Այս արարքով, որ խոնարհություն և ողորմածություն օրի-  
նակ է, նա զարմանք պատճառեց նույնիսկ թշնամիներին:

### ՓՈՐՁԵՑ ԻՆՔՆ ԻՐԵՆ

Սուրբ Զենոնը, որ ճանապարհորդում էր Պաղեստինում,  
Հոգնեց և նստեց մի բանջարանոցի մոտ, որպեսզի մի կտոր հաց  
ուտի: Հանկարծ մտքովն անցավ մի հատիկ վարունգ քաղել:

- Դա մեծ հանցանք է, - մտածեց նա, բայց հաջորդ  
վայրկյանին վախենալով ասաց, - կողոպտիչներն արժանի են  
պատժի: Ուրեմն, Զենոն, փորձիր ինքդ քեզ, արդյոք կարո՞ղ ես  
դիմանալ տանջանքներին:

Եվ ծերունին կանգնեց արևի ճառագայթների տակ և  
այդպես մնաց 5 օր: Եվ վերջապես, երբ զգաց, որ շոգից  
սպառվել են ուժերը, ինքն իրեն դատավճիռ կարգաց.

- Զենոնը չի կարողանում պատիժ կրել, ուստի սեփական  
կշտուկի համար չպետք է կողոպտի ուրիշի ունեցածը:

### ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտացի մի վանական տեսուկից եկավ սուրբ Զենոնին,  
որ ճգնում էր Ասորիքում: Նա Զենոնի առջև դատապարտեց  
իր մտքերը: Մերը զարմացավ և ասաց. «Եգիպտացիները  
թաքցնում են իրենց ունեցած առաքինությունները և անընդ-

հատ բացահայտում են թերությունները, որոնք չունեն, իսկ  
ասորիներն ու հույները ցուցադրում են առաքինությունները,  
որոնք չունեն և թաքցնում են իրենց ունեցած արատները»:

### ԹԵ ԻՆՁ ՊԱՏԱՀԵՑ ՍՈՒՐԲ ԱԳԱԹԻՆ ԶՆԴԱՆՈՒՄ

Երբ սուրբ Ագաթին դիմացավ այն բոլոր տանջանքներին,  
որոնք կարող էին քրիստոնյաների նկատմամբ կիրառել  
բռնությունն ու ատելությունը, նետվեց մի խոր ու գարշահոտ  
զնդան: Կեսգիշերին հանկարծ իրենք իրենց բացվեցին դռները,  
փայլեց աննկարագրելի մի լույս և նրա առջև մի ծերունի  
հայտնվեց, որը նրան բուժիչ խոտեր տվեց: Սուրբ կույսը,  
մտածելով, թե նա բժիշկ է, վճռականորեն ասաց.

- Ամբողջ սրտով քո բարություն համար երախտապարտ եմ,  
բարի մարդ, բայց չեմ կարող օգտվել քո բարեգործությունից,  
ես հույսս դրել եմ իմ միակ Աստծու՝ Հիսուս Քրիստոսի վրա,  
որը, եթե ուզենա, մի վայրկյանում կարող է բժշկել ինձ:

Նման մեծ հավատ տեսնելով՝ ծերունին ուրախացավ և  
ժպտալով ասաց նրան. «Ես Պետրոս առաքյալն եմ, որ եկել եմ  
քեզ բժշկելու»: Նա դրանից հետո անտեսանելի եղավ:

Սուրբ մարտիրոսուհին ընկավ ծնկներին: «Շնորհակալ եմ  
Քեզնից, իմ Տեր Աստված, - բացականչեց նա, - որ հիշեցիր ինձ՝  
Քո աղախնուն», - և նայելով իր մարմնին, իրեն միանգամայն  
առողջ գտավ: Իդեպ, երկնային լույսը Պետրոսի հեռանալուց  
հետո էլ ողջ գիշեր լուսավորում էր բանտը: Վախեցած  
պահակները փախել էին, իսկ բանտի դռները մնացել էին բաց:  
Այդժամ մյուս բանտարկյալները, ուրախանալով նման  
անսպասելի դեպքից, մեկառմեկ սկսեցին դուրս գալ բանտից  
և սուրբ Ագաթինին էլ ասացին. «Դռները բաց են, հսկող չկա,  
փախիր տանջանքներից»:

«Աստված թող չկամենա, որ այդպիսի բան անեմ, - նրանց  
պատասխանեց մարտիրոսուհին, - Աստված չանի՝ իմ  
պատճառով տուժեն բանտի պահակները: Քանի որ իմ Տերն է  
իմ օգնականը և բժիշկը, մինչև վերջ հավատարիմ կլինեմ Նրա

դավանութեանը»:

Այս ամենից հետո նա հրեշտակային հանդարտութեամբ մնաց զնդանում՝ չվախենալով հաջորդ առավոտյան իրեն սպասող տառապանքներից ու մահից:

### ԱՆՆԿՈՒՆ ՊԱՇՏՊԱՆԸ

Սուրբ Պալլադիոս Ալեքսանդրացին մի անգամ իր այցելուներին հետևյալ պատմությունը պատմեց: Մի առաքինի, օտարասեր մարդ կար, մի համեստ, աստվածավախ կին ուներ և մի վեցամյա աղջիկ, որին դաստիարակում էր առաքինութեամբ և Աստծո երկյուղով: Մի անգամ նա պետք է առևտրական գործերով Ալեքսանդրիայից Կ.Պոլիս գնար: Նրան դեպի նավն ուղեկցող կինը հարցրեց.

- Դու ո՞ւմ հույսին ես թողնում ինձ ու աղջկադ:
- Մեր Տիրուհի Տիրամոր, - պատասխանեց ամուսինը և նավ բարձրացավ:

Մի անգամ, երբ առաքինի մայրը աղջկա հետ ձեռագործ էր անում, մարդկային ցեղի թշնամին նրանց ծառային սովորեցրեց տիրուհուն սպանել և, արժեքավոր իրերը հափշտակելով, փախչել: Չարագործը խոհանոցից վերցրեց դանակն ու գնաց վերնասենյակը, բայց հազիվ էր հասել սենյակի շեմին, երբ բռնվեց կուրուսթեամբ և այնպես միջնեց բանականությունը, որ չէր կարողանում ոչ առաջ շարժվել, ոչ էլ՝ հետ: Ինքն իր դեմ երկար պայքարեց և փորձեց ներս մտնել, բայց ապարդյուն: Այն ժամանակ նա սկսեց տիրուհուն կանչել: Բայց տիրուհին զարմացավ նման տարօրինակ պահվածքից և ոչ մի վատ բան չկասկածելով՝ կարգադրեց, որ ինքը՝ ծառան գա: Ծառան աղերսագին խնդրում էր, որ տիրուհին մոտենա իրեն կամ գոնե դատերն ուղարկի, բայց տիրուհին նրան հիմար անվանելով, բանի տեղ չդրեց և լռեց: Այնժամ չարագործը, ուժ չունենալով դեհին ծառայելու, ծոցից հանեց դանակն ու հուսահատված խոցեց ինքն իրեն:

Տիրուհու ճիչերի վրա անմիջապես վազեցին հարևանները,

ներս եկավ պահակախումբը, և չարագործը, որ դեռևս ողջ էր, պատմեց, թե դեպքն ինչպես է պատահել: Բոլորը փառաբանեցին Տիրոջը և արդարների բարեխոս սուրբ Տիրամորը, որ անըմբռնելի հրաշքներ է գործում:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՉՀԱՎԱՏԱԼԸ

Սուրբ Մարկոս Եգիպտացին, որ ճգնում էր աղոթքով և ծոմով, երեսուն տարի դուրս չէր եկել խցից: Եղբայրները հարգում էին նրան, իսկ երեցը հայտնի օրերին նրան հաղորդություն էր տալիս խցում: Բայց դեռ, ծերի առաքինություններին նախանձելով, ի գործ դրեց ամեն հնար, որպեսզի նրան գայթակղի և գցի դատելու մեղքի մեջ: Նա բույն դրեց մի մեղավորի մեջ և նրան ծերի մոտ բերեց իբրև թե օրհնություն խնդրելու համար:

Ախտահարվածը հազիվ էր ոտքը խցի շեմից ներս դրել, երբ սկսեց գոչել. «Քո երեցը մեծ մեղավոր է, նրան թույլ մի տուր, որ քեզ մոտ գա»: Բայց Տիրոջ Հոգով լցված ծերը դրան պատասխանեց. «Որդյակ, մի դատիր, որ չդատվես» /Մատթ. 7:1/, եթե նույնիսկ նա մեղավոր է, Տերը կբուժի նրան: Գրված է. «Աղոթեցեք միմյանց համար, որպեսզի բժշկվեք» /Հակ. 5:16/:

Դրանից հետո ծերը աղոթեց, պիղծ ոգուն դուրս քշեց և եկվորին առողջություն պարգևեց: Հաջորդ օրը նրան այցելեց երեցը և ծերը նրան ուրախությամբ ընդունեց, այնժամ ողորմած Աստված, օրհնելով նրա անարատությունը, նշան ցույց տվեց: Երբ հոգևորականը նրան Սուրբ Հաղորդություն տվեց, սուրբ Մարկոսը տեսավ Հրեշտակին, որ Երկնքից իջնելով՝ իր աջը հովանի էր դարձնում Երեցի գլխին: Մարկոսը սարսափահար եղավ, իսկ Տիրոջ Հրեշտակն ասաց նրան. «Երկրային թագավորն էլ չի ների, եթե պալատականները նրա առջև կանգնեն անմաքուր, էլ ուր մնաց, թե Երկնավոր Տերը»: Այս օրինակով Քրիստոսի մեծ ճգնավորը՝ Մարկոսը արժանացավ Աստծո շնորհին նրա համար, որ ականջ չդրեց զրպարտությունը և չգատեց հոգևորականին:

Մի անգամ Քրիստոսի սուրբերից մեկը՝ Պարթենիոսն այցելեց Իրակլիի արքեպիսկոպոս Իպատիոսին, որը ծանր հիվանդ էր: Երբ Աստծո ծառան երեկոյան հիվանդությունն պատճառների և այն բուժելու մասին զրույցից հետո պառկեց քնելու, Աստված երազում նրան ցույց տվեց, որ Իպատիոսը պատժվել է արծաթասիրությունից և աղքատների հանդեպ բռնություն համար:

Զարմացած Պարթենիոսն առավոտյան դարձյալ եկավ արքեպիսկոպոսի մոտ և նրան ասաց. «Տեր, դու տառապում ես հոգևոր հիվանդությունից, թոթափիր այն և առողջ կլինես»: Իպատիոսը սարսափեց և Պարթենիոսին համարելով Աստծո մարգարե, արցունքների միջից պատասխանեց. « ուստովանում եմ մեղքերս, աղոթեք ինձ համար, Աստծո առաջ միջնորդ մարդ, թող Տերն ինձ օգնի իմ անօրինություններից ազատվել»:

Այդժամ սուրբ Պարթենիոսը նրան ասաց. «Մեղքեր կան, որոնք կարելի է մաքրել միայն աղոթքով, բայց քո մեղքերն այլ կարգի են. դու հանձինս աղքատների՝ Տիրոջ ունեցվածքն ես վերցրել: Վերադարձրու Նրա ունեցվածքն աղքատներին և առողջ կլինես հոգով ու մարմնով»:

Այդ ժամանակ արքեպիսկոպոսը լիովին սթափվեց. «Տեր, մեղք գործեցի Քո առաջ, բացականչեց նա, բայց Դու որքան ուշադիր, նույնքան էլ ողորմած ես»:

Ապա տան կառավարչին իր մոտ կանչելով կարգադրեց իր մոտ բերել անարդարացի հավաքած ամեն ինչ և սուրբ Պարթենիոսին սրտանց խնդրեց, որ նեղություն կրի և այն բաժանի հատկապես աղքատներին: Բայց Աստծո մարդը հրաժարվեց, ասելով. «Դու ինքդ պիտի բաժանես: Եթե հիշում ես՝ ումից ես վերցրել, նրան էլ վերադարձրու ավելիով, իսկ եթե չես հիշում, տուր նրան, ով ավելի կարիքավոր է»:

Իպատիոսը հետևեց սրբի խորհրդին և շուտով առողջացավ, և այդ ժամանակից իր սրտում երկրավոր գանձերին տեղ չտվեց:

Մի անգամ սուրբ Աղաֆոնի մոտ եկան վանականները՝ իմանալու նրա կարծիքը հավատքի գործերի մասին և հավաստիանալու նրա սրտի անչար լինելու մեջ:

- Դո՞ւ ես հայր Աղաֆոնը, -հարցրեցին նրանք հեռվից եկած անծանոթների պես:

- Ձեր առաջ տեսնում եք Աստծո մեղավոր ծառային, - պատասխանեց ծերը:

- Ասում են, թե դու հպարտ և անժուժկալ մարդ ես, - ասացին վանականները:

- Բացարձակ ճշմարտություն է, - պատասխանեց սուրբը:

- Մենք լսել ենք նաև, - շարունակեցին նրանք, - իբր դու ստախոս ես և սիրում ես ուրիշներին դատել:

-Դա էլ է ճիշտ, - ասաց սուրբ Աղաֆոնը:

- Բացի դրանից ասում են, թե դու հերետիկոս ես, - ավելացրին վանականները:

- Իզուր, ես հերետիկոս չեմ, - ժխտեց ծերը:

Այնժամ եկվորները նրան հարցրին.

- Ինչո՞ւ ես նախորդ արատներն ընդունում, իսկ վերջինից հրաժարվում ես:

- Այն արատները նույնիսկ անհնար է ինձ վրա չընդունել, - պատասխանեց ծերը, - քանի որ դրանք բնորոշ են մարդուն, իսկ հերետիկոսությունը նշանակում է աստվածամերժություն, որը ես, որքան էլ մեղավոր մարդ եմ, չեմ կարող և չեմ ուզում ընդունել: Վանականներին հիացրին սուրբ Աղաֆոնի խելքն ու ազնվությունը և նրան՝ ուսուցիչ, իսկ իրենց աշակերտ համարելով՝ վերադարձան:

Քրիստոսյանն՝ յուրաքանչյուր մարդ մեղավոր է, ամեն ոք կարող է ենթարկվել կրքերի հորձանքին, որոնք կռվում են մեր դեմ: Բայց Աստված թող ազատի սուրբ հավատի մասին կեղծ իմաստակություն անելուց: Սրտի թուլությունը բուժվում է խոստովանությունով, իսկ սնոտի իմաստակությունը՝ որպես հպարտության դուստր, մարդուն սպանում է՝ թույլ չտալով ուշքի գալ, եւ նետում դժոխք:

## ՄԱՐՄՆԻ ՈՒ ՀՈԳՈՒ ԳՈՐԾԵՐԸ

Սուրբ Աղափոնի մոտ հավաքվելով՝ եղբայրները հարցրին. «Ո՞րն է ավելի կարևոր. մարմնակա՞ն, թե՞ հոգևոր սխրանքները»:

«Մարդը նման է ծառի, - պատասխանեց ծերը, - մարմնավոր զբաղմունքները աճեցնում են տերևները, իսկ հոգևորները՝ աճեցնում են պտուղներ և քանի որ Սուրբ Գիրքը հավաստում է. «Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում»/Մատթ. 3, 10/, ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել պտուղներին, այսինքն հոգու գործերին:

Բայց ծառը նաև տերևների կարիքն է զգում, որպեսզի նրանց ստվերով պահպանի իր պտուղները չափից դուրս շոգից: Ավելին, տերևները բազմապատկում են ծառի գեղեցկությունը և ճանապարհորդներին զովություն են պարգևում»:

Սուրբ ծերն իսկական ճշմարտությունն էր ասում: Որքան կատարյալ, նույնքան սիրելի է Աստծո ու մարդկանց համար և միաժամանակ հանգիստ է և ինքն իրենից գոհ այն մարդը, ով հոգևոր զբաղմունքի շնորհիվ ճանաչելով ճշմարտությունը, կարող է փրկարար խորհուրդներ տալ նաև ուրիշներին, իսկ մարմնավոր աշխատանքով կենցաղային հոգսերը հոգալով՝ կարող է բարեգործություն անել տառապյալ մարդկությունը: Դրան գումարած, հազիվ թե արագընթաց և այրող կրքերը կարողանան տիրանալ նրա սրտին, ով սիրում է աշխատել:

## ՄԵՆԱԿՅԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Աղափոնը մի անգամ եկավ քաղաք, որպեսզի վաճառի իր ձեռքով պատրաստած իրերը և տեսավ բոլորի կողմից լքված, հրապարակում պառկած հիվանդ մի ծերունու: Խոր կարեկցանք զգալով նա կանգնեց ծերունու մոտ և հարցնելով, թե ինչ է պատահել, նրա համար խրճիթ վարձեց, հետո իր ապրանքը վաճառելով, վճարեց տան վարձը, իսկ մնացածն օգտագործեց սննդի և բուժման համար: Այնտեղ ապրեց երեք ամիս,

մինչև որ անձանոթն ապաքինվեց: Հետո ուրախանալով իր գործած բարիքի համար՝ վերադարձավ անապատ:

Դժբախտների նկատմամբ կարեկցանքը մարդուն նմանեցնում է պահապան հրեշտակի:

## ՄԱՀԱՅՈՂ ՍՈՒՐԲԸ

Սուրբ Աղափոնը զգալով, որ մահը մոտ է, երեք օր անթարթ հայացքով նայում էր երկնքին: Նրա մահճի կողքերին նստած եղբայրները, այս երևույթից զարմանալով, նրան հարցրին. «Ի՞նչ ես այդպես նայում, աբբա»: «Կանգնած եմ Քրիստոսի դատարանի առջև», - պատասխանեց Աղափոնը: «Մի՞թե դու՛ Աստծո մարդը վախենում ես դատաստանից», - դարձյալ հարցրեցին վանականները:

«Ես որքան կարողացել եմ, պահպանել եմ Աստծո պատվիրանները, - նրանց ասաց ծերը, - բայց ես որպես մարդ կարող եմ իմանալ և ասել, որ գոհացրել եմ Աստծուն»:

«Աբբա, - առարկեցին վանականները, - դու պետք է հույսդ քո բարի գործերի վրա դնես»: «Չեմ դնի, մինչև չտեսնեմ իրեն՝ Աստծուն, - հոգոց հանելով նրանց պատասխանեց աբբա Աղափոնը, - քանզի Աստծո դատաստանն այնպիսին չէ, ինչպես մարդկանցը»:

Իրավամբ, մեր կյանքն այնքան փորձությունների է ենթարկվում, հաճախ միտքն այնքան թույլ է, իսկ սիրտն այնքան անհաստատ, որ անգամ սրբերը հազիվ են փրկվում: Ուրեմն մենք՝ մեղավոր մարդիկ, նույնպես պետք է հիշենք Աստծո դատաստանի մասին:

## ԱՇԽԱՏԱՍԵՐ ԾՈՄԱՊԱՀՆԵՐԸ

Սուրբ Գերասիմը Հորդանանի մոտ գտնվող վանքի վանահայրն էր, բայց վանքի կանոնների համաձայն այնտեղ աշխատում էին միայն նրանք, ովքեր նոր էին վանական ձեռնադր-

վել, իսկ սխրանքների մեջ կատարյալ ծերերից յուրաքանչ-յուրն անապատում առանձին խուց ունենր:

Սուրբ Գերասիմի՝ նրանց համար գրած օրենքն օրինակելի էր: Մենակյացները շաբաթվա հինգ օրը մնում էին առանձին, զբաղվում էին ձեռքի գործով, չէին օգտագործում եփած սնունդ, օրական մի քիչ հաց, արմավ և ջուր էին օգտագործում: Խցերում արգելված էր նույնիսկ կրակ ունենալը: Բայց շաբաթ և կիրակի օրերին նրանք վանք էին գալիս՝ Պատարագի, հաղորդվում էին, ճաշակում էին եփած սնունդ և գինի: Հետո յուրաքանչյուր ծեր վանահորը ցույց էր տալիս իր գործը, որով զբաղված էր եղել շաբաթվա հինգ օրը: Երկուշաբթի երեկոյան իրենց հետ որոշ քանակությամբ սնունդ առնելով՝ նրանք դարձյալ վերադառնում էին իրենց խցերը:

#### ԱՍՏԾՈ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՂԲԱՏԵՐԻՆ ՅՈՒՑԱԲԵՐԱԾ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ

Սուրբ Գրիգոր Զրուցասերն այնքան ողորմած էր, որ նույնիսկ վերջին ունեցածը չէր խնայում, միայն թե աղքատի կարիքը հոգար կամ բավարարեր չքավորին: Հետևյալ օրինակը ապացույցն է նրա գլխարտություն և նրա հանդեպ եղած երկնային գլխարտության:

Մի անգամ, երբ Գրիգորն իր սովորության համաձայն խցում նստած զբաղված էր ընթերցանությամբ, նրա մոտ եկավ մի աղքատ մարդ և խղճալի ձայնով ասաց. «Ողորմիր ինձ, բարձրյալ Աստծո ծառա և օգնիր իմ դժբախտությանը: Ես նավատեր էի, բայց իմ մեղքերի պատճառով Աստծուն հաճելի եղավ, որպեսզի ծովը կուլ տա իմ ողջ ունեցվածքը: Մնալով մերկ՝ ես նաև բավականաչափ պարտքեր ունեմ:

Սուրբ Գրիգորը նրա դժբախտության համար լաց եղավ, կանչեց ծառայող եղբորը և կարգադրեց, որ դժբախտին վեց ոսկի տա: Աղքատը խոնարհվեց նրան և գնաց, բայց մեկ ժամ անց վերադարձավ և ասաց. «Ողորմիր ինձ, Տիրոջ ծառա, դու ինձ քիչ տվեցիր, իսկ ես շատ ավելին եմ կորցրել»:

Սուրբ Գրիգորը վանականին կարգադրեց նրան դարձյալ վեց ոսկի տալ: Բայց երեկոյան աղքատը նորից եկավ և արցունք թափելով ասաց. «Աստծո մարդ, ներիր անամոթությանս, որ նորից եկել եմ քեզ մոտ: Ախ, ես ուրիշների շատ հարստություն կործանեցի և այդ հարստության տերերն ինձ սպառնում են բանտով: Ողորմիր դժբախտիս»:

Սուրբ Գրիգորը ձայնեց և կարգադրեց նրան դարձյալ վեց ոսկի տալ, բայց վանականը պատասխանեց, որ այլևս ոչինչ չկա տալու:

«Մի որևէ բան տուր նրան, կամ հագուստ, կամ սպասք», ասաց Գրիգորը:

«Վկա է Աստված, որ մեզ մոտ ոչինչ չի մնացել, բացի արծաթյա ափսեից, որով քո մայրը մեզ ճաշ էր բերել», պատասխանեց վանականը:

«Այդ տուր նրան, ասաց Գրիգորը, որպեսզի խեղճ մարդը մեզանից տխուր չհեռանա»:

Անծանոթը, ափսեն վերցնելով, ուրախությամբ հեռացավ և այլևս չվերադարձավ:

Բայց մի քանի տարի անց, երբ Գրիգորը Հռոմեական եկեղեցու գլխավորն էր, այս աղքատը նրան հայտվեց այլ կերպարանքով: Գրիգորը սովորության համաձայն սեղան էր պատրաստել օտարականների համար, միաժամանակ գանձապետին կարգադրել էր հյուրասիրել 12 հոգու:

Երբ օտարականները նստեցին սեղանի շուրջ, սուրբ պապը նայելով նրանց, տեսավ տասներեք հոգու, դրա համար էլ գանձապետի ականջին շշնջալով հարցրեց. «Ինչո՞ւ իմ հրամանին հակառակ այստեղ ավելի մարդ կա: Երգվում եմ Աստծով, ես սրտի ուրախությամբ ավելի շատ մարդկանց կհյուրասիրեի, բայց քեզ համար մեղք է պետի հրամանին դեմ գնալը»:

Վախեցած գանձապահը խաչակնքեց, երգվելով, որ սեղանի շուրջ տասներկու աղքատ կա: Զարմացած պապը, սևեռուն նայելով ճաշող օտարականներին, և հատկապես տասներեքերորդին, որ նստել էր սեղանի ծայրին, տեսավ, որ նրա դեմքը փոփոխվելով մերթ երիտասարդանում, մերթ ծերանում է: Երբ ճաշն ավարտվեց, սուրբ Գրիգորը բոլորին արձակեց, միայն

ավել աղքատին պահեց իր մոտ և նրա ձեռքը բռնելով տարավ ննջասենյակ: Այնտեղ ուշադիր նայելով նրան ասաց. «Երգվիր Ամենակալ Աստծո զորութեամբ և ասա ինձ՝ ո՞վ ես դու»:

«Ես այն աղքատ ծովագնացն եմ,- պատասխանեց անծանոթը,- որը մի ժամանակ քեզնից տասներկու ոսկի և արծաթյա մի ափսե ստացավ: Իմացիր, որ այդ ժամանակից ի վեր Տերը քեզ ավագ հովիվ կարգեց իր հոտին և Սուրբ Եկեղեցու ավագ աթոռակալ: Ես Տիրոջ հրեշտակն եմ, որ ուղարկված եմ քեզ մոտ, որպեսզի իմանամ. արդյոք դու սնապարծութեան համար չե՞, որ ողորմութիւն ես անում: Սուրբ Գրիգորը սարսափեց և դեմքով գետին ընկավ ու ասաց. «Ներիր ինձ, Հիսուսի ծառա, որ ես՝ մեղավոր մարդս զրուցեցի քեզ հետ՝ ինչպես մի մահկանացուի հետ կզրուցեն»:

«Մի վախեցիր, - պատասխանեց հրեշտակը, - Տերը հրամայեց ինձ, որ միշտ քեզ հետ լինեմ և Նրա մոտ բարձրացնեմ քո աղոթքները: Այն ամենը, ինչ հույսով խնդրես, կստանաս Նրանից»:

Այս ասելով՝ երկնային հյուրը աներևույթ դարձավ, իսկ սուրբ Գրիգորը փառք տալով Աստծուն, բացականչեց. «Տեր, հաստատում եմ, որ Քո ողորմութիւնը ողորմածների հանդեպ աննկարագրելի է, քանի որ փոքրիկ ողորմութեան համար ինձ այնքան սիրեցիր, որ արժանացրիր Պահապան հրեշտակի տեսութեանը»:

### ԽԵԼԱՏԻ ՊԵՏԻ ՀԱՄԱՐ ՈՐՔԱՆ ԴԺՎԱՐ Է ԵՆԹԱԿԱՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼԸ

Սուրբ Բենեդիկտոսը պատանեկութեան տարիներին սովորում էր Հռոմում, մի հասարակական ուսումնարանում, բայց տեսնելով իր ընկերների անառակութիւնը՝ մտածեց, որ ավելի լավ է լինել անհայտ իմաստուն, քան մեղավոր գիտնական, և հեռացավ անապատ: Թե սուրբ Բենեդիկտոսն այնտեղ ինչ ճանութիւններ գործեց Աստծո անունը փառավորելու համար, արժանի է միայն հրեշտակի գրչի նկարագրութեանը:

Բայց չի կարող թաքնվել այն քաղաքը, որ կառուցված է լե-

ռան վրա, և Տերը ցանկացավ այս սրբին օգտագործել ուրիշների փրկութեան համար: Մահացավ վանքերից մեկի վանահայրը: Որբացած վանականները, լսած լինելով սուրբ Բենեդիկտոսի բարեպաշտութեան մասին, միահամուռ կերպով եկան նրա խուցը և աղերսեցին, որ նա դառնա իրենց վանահայրը: Սուրբ Բենեդիկտոսը երկար ժամանակ հրաժարվեց, իրեն համարելով մեղավոր, հովվութեան անարժան, բայց տեսնելով նրանց անզիջում լինելը, վերջապես ասաց. «Եղբայրներս, վստահ եղեք, որ իմ բարքերը չեն համընկնի ձերի հետ», - և իրեն հանձնելով Տիրոջ կամքին՝ համաձայնեց լինել նրանց վանահայրը:

Ինչպես որ ասաց Աստծո հաճելին, այնպես էլ կատարվեց: Խստորեն պահպանելով ծոմապահութեան, առանձնութեան և աղոթքի կանոնները՝ սուրբ Բենեդիկտոսը շուտով արժանացավ եղբայրների ատելութեանը: Անկասկած, վանականներից մի քանիսը սիրաշահում էին իրենց պետին և աշխատում էին նմանվել նրան, բայց մեծամասնութիւնն ուզում էր, որ նույնիսկ Բենեդիկտոսի հետքը չմնա իրենց մենաստանում: Այս չարութիւնը հասավ այն աստիճանի, որ արատավոր վանականները որոշեցին թունավորել նրան: Բայց երբ թույնի բաժակը խաչակնքեց, այն ընկավ և ջարդվեց, ասես քարով խփեին: Այն ժամանակ Աստծո ծառան հասկացավ, թե եղբայրներն ինչ էին պատրաստել իր համար: Նա իր մոտ կանչեց բոլոր վանականներին և բարեկամաբար ժպտալով ասաց նրանց. «Թող ողորմի ձեզ ողորմածն Աստված, զավակներս, և թող ների ձեր մեղքերը: Ես նախապես ասացի ձեզ, որ իմ բարքերը չեն համընկնի ձերոնց հետ: Եվ այսպես, ձեզ համար պետ գտեք, իսկ ես չեմ կարող ձեզ հետ ապրել»:

Որից հետո նրանց օրհնելով՝ վերադարձավ անապատ, և այնտեղ սկսեց Ամենատես Աստծո աչքի առաջ ճգնել:

### ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Սուրբ Բենեդիկտոսը երկար չվայելեց իր առանձնութիւնը: Տերը փոքր հոտի փոխարեն մեծ հոտ վստահեց նրան և մի



վանքի փոխարեն, որից հեռացել էր ինքը, տվեց տասներկուսը: Քանզի նրա հրեշտակային փառքը այնքան անապատականներ էր բերեց նրա մոտ, որ նրանց հարկավոր էր բաժանել մի քանի մենաստաններին: Նրանց թվում այստեղ էին եկել նաև պատանի Մավրը և երիտասարդ Պլակիրդան, որոնք հոռմեական սենատորների որդիներ էին և հոգևոր դաստիարակություն էին տրվել սուրբ Բենեդիկտոսին:

Մի անգամ երիտասարդ Պլակիրդան վերցրեց ջրի ամանը և գնաց գետի ափը, բայց ջուր վերցնելու պահին անսպասելի ընկավ հորձանքի մեջ, քանզի հոգևոր հորը բավականություն պատճառելու համար ցանկանում էր ջուր վերցնել ամենախորը տեղից: Սուրբ Բենեդիկտոսը, նստած լինելով խցում, հոգևոր աչքերով տեսավ, թե ինչ դժբախտություն մեջ է Պլակիրդան և Մավրին ձայն տվեց. «Վազիր, վազիր, Պլակիրդան ջուրն է ընկել»:

Ոչ մի բառ չասելով՝ պատանին վազեց և բռնելով նրա մագերից՝ դուրս բերեց ափ: Ապա ետ նայելով հասկացավ, որ վազել է ոչ թե ցամաքի, այլ ջրի վրայով: Պլակիրդայի հետ խուց գալով՝ Մավրը սուրբ Բենեդիկտոսին պատմեց եղածը և ընկնելով նրա ոտքերը, իր՝ գետի վրայով վազելու հրաշքը վերագրեց նրա աղոթքներին: Բայց Բենեդիկտոսը պատասխանեց. «Մի մոռացիր, սիրելի պատանի, թե ինչ զորություն ունի հնազանդությունը»:

#### ԱՆԱՐԱԺԱՐԱՐ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Եկեղեցու մի սպասավոր մեղքի պատճառով տրվեց անմաքուր ոգու, խենթացավ ու բռնվեց կատաղություն: Ոչ բուժումները, ոչ Աքվիլեի եպիսկոպոս Կոստանցիոսի աղոթքները չկարողացան դժբախտին բուժել: Վերջապես այս մեղավորը բերվեց Աստծո մարդու՝ Բենեդիկտոսի մոտ: Սուրբը, խաչակնքելով նրան, ակնթարթորեն քչեց կործանարար ոգուն և եկեղեցու սպասավորին խստություն պատվիրեց չձգտել, և եթե նույնիսկ շնորհեն, հրաժարվել քահանա ձեռնադրվելուց:

Բուժված եկեղեցականը երկար ժամանակ պահպանեց սուրբ Բենեդիկտոսի պատվիրանը, բայց տեսնելով առաջնորդների մահը, տեսնելով, որ նրանց տեղն զբաղեցնում են այնպիսի մարդիկ, որոնք ավելի երիտասարդ են և ավելի քիչ շնորհներ ունեն՝ վիրավորվեց և, ասես մոռանալով սուրբ Բենեդիկտոսի պատվիրանը, սկսեց քահանայություն պահանջել: Բայց սարսափելի մեղք է անարժան կերպով հովվի աստիճան ընդունելը: Հազիվ էր եկեղեցու սպասավորը ձեռնադրվել, երբ կատաղություն ոգին հարձակվեց նրա վրա և դժբախտը ահավոր տառապանքների մեջ ավանդեց հոգին:

#### ԲԱՅԱՀԱՅՏՎԱԾ ԳՈՂԸ

Մի առաքինի կալվածատեր սուրբ Բենեդիկտոսին երկու տակառիկ գինի ուղարկեց, բայց ծառան ճանապարհին մեկը թաքցրեց, իսկ մյուսը բերեց Բենեդիկտոսին: Պայծառատես ծերունին ամեն ինչ իմացավ և սրտալիրություն չնորհ ստանալով՝ հեռվից գալով սկսեց խոսք բացել ծառաների՝ տերերին հավատարիմ լինելու մասին և բավականաչափ սովորեցնելով նրան, վերջապես ասաց. «Գնա խաղաղությունը, որդյակ, և ասա քո տիրոջը, որ ես իմ մեղքերի համար աղոթելով կաղոթեմ նաև նրա առողջության և մեղքերի թողության համար: Բայց տես, չխմես ճանապարհին թողած տակառից, այլ ողջ գինին թափիր գետին և տես, թե ինչ կա տակառի մեջ»:

Բացահայտված ծառան ամոթից ոչինչ պատասխանել չկարողացավ, խոնարհություն արեց և գնաց: Եվ երբ մոտեցավ այն տեղին, որտեղ թաքցրել էր գողացած գինին, չնայած ծիծաղեց Աստծո մարդու հրամանի վրա, բայց հետաքրքրությունից դրված սկսեց տակառիկից թափել գինին: Եվ ի՞նչ. գինու հետ ցած ընկավ մի օձ: Սարսափած ծառան ընկավ ծնկներին և արցունքների միջից շնորհակալություն հայտնեց Աստծուն և Աստծո մարդուն՝ իրեն փորձանքից ազատելու համար:

Երկու առաքիլնի կույսեր Աստծո առաջ երդվեցին ապրել ծոմապահուածութամբ և աղոթքներով: Բայց, աւաղ, որքան մաքուր էր նրանց կենցաղը, այնքան անսանձ էր նրանց լեզուն: Դատելը, ատելը, հանդիմանութիւնը սովորական բաներ էին նրանց համար: Սուրբ Բենեդիկտոսն իմանալով այս մասին, նրանց մոտ ուղարկեց իր աշակերտին և հայրաբար խորհուրդ տվեց լեզուներն իրենց պահել, իսկ չլսելու դեպքում սպառնաց նրանց զրկել Աստվածային հաղորդութիւնից: Բայց անմիտ կույսերը սկսեցին ծաղրել սուրբ Բենեդիկտոսին:

Սրանից որոշ ժամանակ անց նրանք մահացան և որպէս ծոմապահներ թաղվեցին եկեղեցում: Բայց զրպարտչի լեզուն ըստ Առաքյալի «կրակ» է, անիրավութեան մի աշխարհ է այն, թեև պարզ մի անդամն է մարմնի, բայց ապականում է ամբողջ մարդուն և գեհեների կրակով բռնած՝ մեր ամբողջ կյանքը վառում է կրակով: Բայց ոչ ոք չի կարող հնազանդեցնել մարդկային լեզուն, որ չար է, անզսպելի և մահացու թուլնով լեցուն /Հակոբոս 3, 6, 8/2:

Դրա համար էլ զրպարտիչը չի կարող լինել այնտեղ, որտեղ ճշմարտութիւնն ու իրավացիութիւնն անտես կերպով բազմում են իրենց գահերին:

Եվ երբ Պատարագ էր մատուցվում և սարկավագն ասում էր. «Մի ոք յերախայից, մի ոք ի թերահավատից, և մի ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս», քրիստոնյաներից ոմանք տեսնում էին զույգ կույսերին, որոնք դուրս էին գալիս գերեզմանից և հեռանում եկեղեցուց: Այս հրաշքը շարունակվեց որոշ ժամանակ: Վերջապէս այս մասին լսեց և սուրբ Բենեդիկտոսը: Նա նրանց համար սրտի ցավով արցունքներ հեղեց և նշխարք ուղարկելով այդ եկեղեցին, կարգադրեց Սուրբ Պատարագ մատուցել նրանց հոգիների հանգստութեան համար: Այս ժամանակից սկսած այլևս ոչ ոք չէր տեսնում, որ նրանք դուրս գային, և քրիստոնյաները հավատացին, որ չարալեզու ծոմապահները սուրբ Բենեդիկտոսի աղոթքների և անարյուն զոհի շնորհիվ Աստծուց ներում են ստացել:

Սուրբ Անինը, որ վանական էր և հրաշագործ, ճգնում էր մենութեան մեջ՝ Սիրիայի և Պարսկաստանի սահմանի մոտ: Նա սովորութիւն ուներ հաճախ գնալ անապատի խորքը և այնտեղ մի քանի օր լուութեան տրվել: Եվ քանի որ Անինը բացառիկ շնորհ ուներ վշտացյալներին մխիթարելու և հիվանդներին բուժելու, դրա համար էլ տարբեր վայրերից նրա խցի մոտ մշտապէս մեծ թվով ժողովուրդ էր հավաքվում, բայց Աստծո մարդուն տանը չգտնելով՝ զայրանում էին և անհանգստութեամբ սպասում, թե երբ կտեսնեն նրան: Իսկ մի մասն էլ վշտացած վերադառնում էր: Այս տեսնելով՝ սուրբ Անինը, որքան էլ ցանկանում էր վայելել անապատականի խաղաղութիւնը, անմիջապէս փոխեց իր կենսակերպը և այդ ժամանակից ի վեր անընդհատ այցելուների էր սպասում և խցից չէր բացակայում:

Բայց սրբի առաքինութիւնները միայն խորհուրդ տալով ու բուժելով չէին սահմանափակվում: Բնակվելով Եփրատից բավական հեռու, օրը մի քանի անգամ նա ջրի էր գնում, որպէսզի օտարականներին ջուր տա: Այս մասին իմանալով՝ Նոր Կեսարիայի եպիսկոպոսը ջուր կրելու համար մի ավանակ ուղարկեց նրան: Բայց շուտով նրա մոտ մի աղքատ մարդ եկավ և, չիմանալով, թե նրան ինչով օգնի, սուրբ Անինը նրան տվեց իր ջրկիր ավանակը: Եպիսկոպոսը նրան մի այլ ավանակ ուղարկեց, բայց արդեն ոչ թե նվեր, այլ պատվիրելով, որ մինչև սատկելը ջուր կրի: Բայց սուրբ Անինը չկարողացավ այն չնվիրել մի աղքատացած ընտանիքի: Վերջապէս եպիսկոպոսը տեսավ, որ բարեսեր անապատականը չի հրաժարվում ջուր կրելուց, ինքն էլ որոշեց այլ կերպ վարվել: Հրամայեց սուրբ Անինի խցի մոտ հոր փորել և ժամանակ առ ժամանակ այն լցնել թարմ ջրով, որպէսզի և ինքը, և իրեն այցելող աստվածասեր մարդիկ կարողանան միշտ թարմ ջուր խմել:

## ԱՍՏԾՈ ՊԱՏԻԺ՝ ԱՆՄԵՂՆԵՐԻՆ ՀԵՏԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սուրբ Մալխը արաբ ավազակների կողմից ճանապարհին գերվեց և տարվեց Արաբիա: Վիճակահանությամբ նրան տեր դարձավ Սուրին անունով մեկը: Սուրբ հայրը երկար ժամանակ հետևում էր տան մաքրությանը և արածեցնում էր տիրոջ հոտը: Բայց այլևս ուժ չունենալով տանել քրիստոնյա եղբայրներից անջատված լինելը՝ Աստծո ներշնչանքով որոշեց փախչել: Նրան հետևեց ոմն առաքինի պառավ, որ սուրբի մենության ժամանակ մխիթարել էր նրան:

Տոթից խանձված, սովից թուլացած նրանք քայլեցին երեք օր, անընդհատ նայելով, թե իրենց հետապնդող չկա՞: Վերջապես նրանք տեսան ուղտերով իրենց հետապնդող երկու սարակինոսների: Դժբախտներն ահից դողացին: Բայց Աստված ողորմում է արդարներին: Հանկարծ նրանք իրենց կողքին մի խոր անձավ տեսան: Պետք էր ընտրել. կամ դառնալ որևէ օձի կամ գազանի գոհ, որ սովորաբար պատսպարվում է քարանձավներում, կամ անխուսափելի մահ ստանալ բարբարոսների ձեռքից: Մալխը և պառավը խաչակնքեցին և նետվեցին քարանձավի մեջ և մոտքի մոտ պատին հենվելով՝ կանգնեցին մեռելի նման՝ հազիվ շնչալով Քրիստոսի անունը:

Բարբարոսները, որ նկատել էին նրանց, կանգնեցին քարանձավի մոտ և ձայն տվեցին. «Դուրս եկեք, չարագործներ», բայց պատասխան չստանալով՝ սկսեցին սպառնալիքներ և հայհոյանքներ տեղալ: Հետո տերը՝ մերկ սուրը ձեռքին կանգնեց մոտքի մոտ, իսկ ծառան մտավ քարանձավ: Բայց անցավ նրանց մոտով, քանզի արևի լույսից հետո մոլթ քարանձավում բան չէր երևում: Բայց որքան մեծ է Քո ողորմությունը Քո ծառաների հանդեպ, բարեգուրթ Աստված, և որքան շուտ ես հասնում նրանց օգնություն:

Անձավի խորքից անսպասելի կերպով դուրս նետվեց մայր առյուծը և բռնելով ծառայի կոկորդից, խեղդեց նրան ու քաշեց անձավի խորքը: Մալխը և պառավը հազիվ կարողացան խաչակնքել: Տերը, ծառայի ձայնը չլսելով, մտածեց, թե նրան փախստականներն են սպանել և ատամները կրճտացնելով

նետվեց քարանձավ, բայց հազիվ էր մի քանի քայլ արել, արժանացավ ծառայի բախտին: Առյուծը պատառոտեց նրան, հետո ատամներով իր ձագին վերցրեց և հանգիստ դուրս եկավ որջից:

Խոր լռության մեջ երկար դողդողացին Մալխը և պառավը, բայց համոզվելով, որ առյուծը հեռացել է, դուրս եկան: Հոշոտվածների ուղտերը բարձած էին ուտելիքով և ըմպելիքով և կարծես նրանց սպասելիս լինեին, չոքեցին: Արդարները փառավորեցին Աստծուն, նստեցին նրանց վրա և խորտիկները ճաշակելով՝ ճամփա ընկան: Տասն օր հետո անցան անապատը և հանդիպեցին հունական զորքի, որի հրամանատարը սիրալիր կերպով ընդունեց նրանց: Այդ ժամանակ պառավը մտավ մի կուսանոց, իսկ արդար Մալխը վերադարձավ եղբայրություն՝ եղբայրների մոտ, որոնց կարոտն էր քաշում երկար ժամանակ:

Նրանք իրենց հետ պատահած այդ հրաշքով ապացուցում են մեզ, թե Աստված ինչպես է ողորմում բոլոր նրանց, ովքեր հոգևոր Եգիպտոսից փախչում են դեպի Քրիստոսով բնակեցված երկիր:

## ՀՈՎՀԱՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ԽՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ

Մի անգամ արդար Պալադիոսն այցելեց Հովհան անապատականին և մեծ հաճույքով լսում էր նրա խրատները: Այդ ժամանակ նրա մոտ ինչ-որ իշխան եկավ և ընկերասեր Հովհանը ուրախությամբ ընդունեց նրան և թողեց Պալադիոսին: Բայց քանի որ նրանց զրույցը երկար շարունակվեց, Պալադիոսը, մենակ մնալով, սկսեց ձանձրանալ ու Հովհանին մեղադրեց այն բանի համար, որ վանականին անտեսելով՝ հարգում է բարձրաստիճաններին:

«Նրան կպատասխանեմ նույնպիսի արհամարհանքով, մտածեց նա, - և կհեռանամ առանց հրաժեշտ տալու»:

Պայծառատես ծերունին կարգաց Պալադիոսի մտքերը,

ձայն տվեց իր աշակերտին և պատվիրեց Պալադիոսին ասել, որ փոքրագույն չանի: Երբ իշխանավորը գնաց, Հովհաննիս Պալադիոսին դիմելով ասաց. «Դու ինչու՞ զայրացար ինձ վրա, մի՞թե իմ արարքի մեջ քեզ համար վիրավորական որևէ բան կար: Ո՞վ սիրելի եղբայր ի Քրիստոս, դու այն մասին մտածեցիր, ինչ իմ սրտում չկա և ինչը քո սրտին հաճելի չէ: Մի՞թե չգիտես, որ առողջներին բժիշկ պետք չէ, այլ հիվանդներին: Քեզ հետ կարող եմ հանդիպել, երբ ցանկանամ, դու նույնպես կարող ես ցանկացած դեպքում հանդիպել ինձ տեսնել: Իսկ այս իշխանը՝ կապված աշխարհիկ հոգսերի հետ, որ պահանջում է իր պաշտոնը, գուցե և հազիվ էր ժամանակ գտել այստեղ գալու և իր հոգու համար մի քիչ օգուտ քաղելու: Եվ այսպես, արդարացի՞ էր արդյոք նրան թողնելը և քեզ հետ զրուցելը, որ զբաղված ես միայն քո փրկությանը»:

Զարմացած Պալադիոսն իմացավ, որ այս ծերունին ներչնչված է Աստծով և հիացմունքով բոլոր վանականներին պատմում էր նրա արարքի մասին, որպեսզի նրանց սովորեցնի, որ պետք չէ եկվորների համար ժամանակ խնայել:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՉԱՐ ՍԻՐՏ ՈՒՆԵՆԱԼԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՉԴԱՏԵԼԸ

Մի վանական չուներ սուրբ մենաստանների բնակիչներին հատուկ բոլոր առաքինությունները և բավական անփույթ էր իր փրկության հարցում, աղոթքների ու ծոմապահության մեջ: Վերջապես եկավ կյանքին հրաժեշտ տալու ժամանակը, և նրա շուրջը հավաքված վանականները՝ զարմացան տեսնելով, որ այս՝ իրենց կարծիքով անփույթ վանականը աշխարհը թողնում է ոչ միայն առանց տագնապի, այլ նույնիսկ Աստծուն փառաբանելով և ժպտով:

«Ինչպե՞ս է, որ Աստծո ահեղ դատաստանի ժամին դու տխուր չես,՝ հարցրեցին նրանք,՝ մենք գիտենք քո կյանքը և չենք հասկանում քո հանգստությունը: Ամբողջ մեր Աստծո՝ Քրիստոսի սիրով և ասա մեզ, որ փառաբանենք նրա բարեսրտությունը»:

Այնժամ մահացող վանականը, մահճից մի քիչ բարձրանալով ասաց նրանց. «Հայրեր և եղբայրներ, ես անփույթ ապրեցի և այժմ իմ բոլոր գործերը ներկայացված են ինձ և ընթերցված Աստծո հրեշտակների կողմից: Ես տագնապով խոստովանեցի և սպասում էի Տիրոջ դատաստանի ողջ խոստովանը: Բայց հանկարծ հրեշտակներն ասացին ինձ. «Այս ամբողջ անփույթությամբ հանդերձ դու չէիր դատում և անչար էիր», - և այս խոսքերով ոչնչացրին իմ մեղքերի ցուցակը: Ահա իմ ուրախությունն աղբյուրը»:

Այս ասելով վանականը խաղաղությամբ հոգին հանձնեց Աստծուն:

-Մի դատեք, որպեսզի չդատվեք,՝ ասում է Տերը:

«Ով չի կարող կատարյալ ճշմարտությամբ խոսել,՝ ասում է սուրբ Անաստաս Սինայեցին,՝ ով չի կարող թողնել ունայն աշխարհը, թող չդատի մեղավորին: Մի ուրիշը, որ իր աղքատության պատճառով չի կարողանում ողորմություն տալ կամ իր զբաղվածությունը պատճառով հաճախ եկեղեցի գնալ, թող ների մերձավորին և իրեն կներվի: Միայն Քրիստոսն է բոլորի դատավորը, ուստի մենք էլ չլինենք Քրիստոսի հակառակորդների նման: Մենք տեսնում ենք եղբոր մեղքերը, բայց տեսնու՞մ ենք նրա առաքինությունները, նրա զղջումը: Շատերը մեղանչեցին բացահայտորեն, բայց զղջացին գաղտնաբար: Քրիստոսի աջ կողմում խաչված ավազակը մարդասպան էր, իսկ Հուդան՝ առաքյալ, բայց ավազակը դրախտում է, իսկ Քրիստոսի ուղեկիցը՝ գեհեմում: Եվ այսպես, դատել կարող է միայն սրտերը ճեմողը»:

### ԱՆԳՈՒԹԻ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ

Ռուսաստանի միտրոպոլիտ Հովհաննիս Պիմեն անունով մի տնտես ուներ, որը վերականգնվել էր պահեստների վրա և հրաման ուներ ըմպելիք տալ բոլոր եկվորներին: Մի անգամ մի աղքատ ու հիվանդ կին նրանից մի քիչ մեղր խնդրեց, որպեսզի կազդուրվի հիվանդությունից հետո: Բայց Պիմենը զայրացած գոռաց նրա վրա. «Հեռու գնա, դեռևս չի եկել ձեզ հյու-

րասիրելու ժամանակը»:

Թշվառ պառավը վշտացած հեռացավ, բայց միտրոպոլիտն իմացավ այդ մասին: Նա կանչեց տնտեսին և խոնարհուլթյամբ ասաց. «Դու չգիտես, թե ում ես վիրավորել: Քո կողմից մերժված այրին բոլորից ավելի է հաճելի Աստծուն: Ես քեզ խղճում եմ, բայց Աստված քեզ մահ է ուղարկել: Ուրեմն գնա խաղաղուլթյամբ և անհապաղ զղջա մեղքերիդ համար»: Հաջորդ օրը սուրբ Հովհաննես խոստովանահորը պատվիրեց նրան կուսակրոն ձեռնադրել: Եվ Պրմենը հենց այդ օրը մեռավ:

### ՍԵՓԱԿԱՆ ՄԵՂՔԸ ԵՎ ՈՒՐԻՇԻ ՄԵՂՔԸ

Մի վանական մեղք գործեց: Եղբայրները հավաքվեցին նրա գործերը քննելու և մարդ ուղարկեցին Մովսեսի հետևից: Բայց խոնարհ ծերը հրաժարվեց մասնակցել նրանց խորհրդին: Մենաստանի երեցը կարգադրեց երկրորդ անգամ մարդ ուղարկել նրա հետևից և պատվիրեց ասել, որ եղբայրները ողջ խորհրդով սպասում են նրան: Այնժամ Մովսեսը եկավ, բայց ինչպե՞ս: Նա մի հին զամբյուղի մեջ ավազ էր լցրել և բերում էր իր հետ:

- Սա ի՞նչ է նշանակում, աբբա, - նրան դիմավորելով հարցրեցին միաբանները:

- Տեսնու՞մ եք որքան մեղք ունեմ ես, - ցույց տալով թափվող ավազը, պատասխանեց սուրբ Մովսեսը, - ես չեմ տեսնում դրանք և միաժամանակ գնում եմ ուրիշներին դատելու:

Լսելով այս, միաբանները ոչինչ չասացին մեղանչած եղբորը և անխոս ներեցին նրան:

### ՆՇԽԱՐԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Արդար Զոսիմա Սոլովեցկին մի անգամ կղզի եկած վաճառականներին ճաշակելու տվեց սուրբ նշխարը, բայց նրանք եկեղեցուց դուրս գալով անզգուշորեն կորցրին այն:

Մակար վանականը, որ պատահաբար անցնում էր այդտեղով, տեսավ նշխարի մոտ կանգնած մի շան, որն ամեն կերպ ցանկանում էր վերցնել ատամներով, բայց ամեն մի փորձի ժամանակ այրվում էր սուրբ հացից դուրս եկող բոցից: Մակարը մոտեցավ և կրակը չքացավ: Խաչակնքելով նա վերցրեց նշխարը և բերելով այն սուրբ Զոսիմայի մոտ նրան պատմեց իր տեսած հրաշքը: Բոլորը զարմացան Փրկչի տված այդ զարմանալի դասից: Նրա փառքի համար է կատարվում Սրբուլթյուն Սրբոցը:

Քրիստոնյանե՛ր, այս օրինակով ճանաչեցեք Տիրոջ խորանից ձեր ճաշակած հացի սրբուլթյունը և այն ճաշակեցեք մաքուր սրտով, Տիրոջ հանդեպ ունեցած երկյուղով: Հակառակ դեպքում վախեցեք. չլինի թե Աստծո բարկուլթյան կրակը այրի ձեզ:

### ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԱԾ ՍՏՐՈՒԿԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Մի ծեր, որ նախկինում ստրուկ էր եղել, ճգնում էր խցում և ամեն տարի Ալեքսանդրիա էր գնում, որպեսզի վճարեր վարձը մի ուրիշ ստրուկի, որը պետք է ծառայեր իր փոխարեն: Առաքինի տերերն արժանին մատուցելով սուրբ մարդու ճշտապահուլթյանը, միշտ հարգանքով էին դիմավորում նրան և վերջապես նրան խնդրեցին այլևս վարձ չվճարել: Մակայն ծերը այդ ժամանակ չզաղարեց նրանց վճարել, բայց փոխեց վճարման ձևը. ամանով ջուր բերելով, նա լվանում էր նրանց ոտքերը:

- Դու քեզ իզուր ես նեղուլթյուն պատճառում, աբբա, - ասում էին առաքինի տերերը:

Բայց աբբան նրանց պատասխանում էր.

- Ես ձեր ստրուկն եմ և չեմ կարող ինչպես հարկն է շնորհակալուլթյուն հայտնել ձեզ նրա համար, որ ինձ թույլ եք տալիս անմնացորդ ծառայել Աստծուն: Դուք դրամ չեք ընդունում, իսկ ես որպես բահրա միայն այս կարող եմ տալ ձեզ, - ջրով լի սափորը ցույց տալով շարունակում էր նա: Բարի տերերն ընդդիմացան նրան և ապացուցեցին, որ իրենք չեն կա-

րող հանգիստ լինել այնքան ժամանակ, քանի դեռ տեսնում են նրա անհանգստությունը, բայց ծերը վճռականորեն ասաց.

- Եթե չեք ցանկանում այս փոքրիկ զոհողությունն ընդունել, ես առաջվա պես կմնամ ձեզ մոտ և կծառայեմ:

Առաքինի տերերը, վախենալով դրանից, վերջապես թույլ տվեցին անել այն, ինչ ցանկանում է և նրան ճանապարհեցին համապատասխան պատիվներով: Նրան պարզեցին կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ, այն չափով, որ նա նույնիսկ ողորմություն կարող էր տալ: Այս ծերը փառաբանված ու սիրված էր մենաստանում:

### ԱՍՏՄՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂԻՆ

Մի անգամ արդար Թեոդորոս Սկյուլթացու մոտ եկավ Գաղատական Հելիոպոլի վանքի տնտեսը և արտասովելով ասաց. «Ողորմիր ինձ, Աստծո ծառա, և օգնիր դժբախտությունս: Ես ծառայողին պատվիրեցի հավաքել եկեղեցու հարկերը, իսկ այս անպատիվ մարդը փողերը վերցրել ու փախել է: Որքան փնտրեցինք, չգտանք նրան: Աղոթիր Տեր Աստծուն, որպեսզի ինձ ցույց տա, թե որտեղ է թաքնվել նա, այլապես ես կմեռնեմ, քանզի իմ ողջ ունեցվածքը չի հերիքի, եթե տամ եկեղեցուն նրա հափշտակածի դիմաց»: «Իսկ քո ծառային չե՞ս ծեծի, հարցրեց սուրբ Թեոդորը, նրանից չե՞ս պահանջի վերադարձնել ավելիով: Եթե հաստատ խոսք տաս, ապա Տերը քեզ կուրախացնի և փախստականին քո ձեռքը կտա»: Տնտեսը խոստացավ նույնիսկ պարզեատրել նրան: Այնժամ Սկյուլթիայի հրաշագործն ասաց նրան. « աղաղությունը վերադարձիր քո տունը և հույսով սպասիր. հույս ունեմ, որ Աստված շուտով կօգնի քեզ»:

Այդ ժամանակ Աստված սուրբ Թեոդորոսի աղոթքներով կապեց հափշտակողին: Նա կանգ առավ մի գյուղի մոտ և չկարողացավ առաջ գնալ: Մտածեց փախչել և ապաստանել մի տեղ: Այնտեղ նա ճանաչվեց, բռնվեց և բերվեց տնտեսի մոտ: Եկեղեցու ողջ ունեցվածքը վերադարձվեց և հափշտակողը

պատժվեց միայն իր խղճի համաձայն: Այդպիսով արդար Թեոդորոսի պահանջով մեկի երջանկությունը պատճառ չդարձավ մյուսի դժբախտության:

### ԽԱՉԻ ՆՇԱՆԻ ՈՒԺԸ

Երբ սուրբ Հուլիանոսը Բոստրեոնում արժանացավ եպիսկոպոսական գահի, այնժամ քաղաքացիներից ոմանք, որ ատում էին Քրիստոսի անունը, մտադրվեցին նախանձախնդիր եպիսկոպոսին սպանել: Նրանք վարձեցին նրա մատուվակին և այս չարագործը բաժակի մեջ թույն լցրեց: Հազիվ էր սուրբ Հուլիանոսը ձեռքն առել մահացու բաժակը, երբ վերևից իմացավ ոչ միայն չարագործության, այլև բոլոր չարագործների մասին: Նա իր առաջ դրեց գավաթը և հրամայեց իր մոտ կանչել դավադրության մասնակից բոլոր քաղաքացիներին: Երբ նրանք եկան, արդարը նրանց չարագործությունը չցանկանալով բացահայտել, կամաց ասաց. «Եթե ցանկանում եք խոնարհ Հուլիանոսին թույնով սպանել, ապա ձեր աչքի առջև խմում եմ այս գավաթը»: Հետո երեք անգամ խաչակնքեց այն և ասաց. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: Խմեց այն և անվնաս մնաց: Չարագործները՝ սարսափահար եղած, ընկան նրա ոտքերը և աղաչեցին ներել իրենց:

Քրիստոնյաներ, Ռուսաստանի պատմությունն էլ է ապացուցում, թե որքան անպարտելի է Խաչի նշանը: Ինքնակոչների ժամանակներում, երբ չարամիտ բոյարները սուրբ պատրիարք Գերմոգենին ստիպում էին համառուսական գահի վրա ընդունել Լեհաստանի թագավոր Սիգիզմունդին, մի իշխան դաշույնը ձեռքին խոյացավ Աստծո արքեպիսկոպոսի վրա: Գերգոմենը խաչակնքեց նրան և հազիվ արտասանեց. «Թող քեզ վրա գա Խաչի զորությունը», և զենքն ընկավ մարդասպանի ձեռքից, և չարամիտները, թեպետև ատամներն էին կրճտացնում, բայց Աստծո մարդու վրա այդ անգամ ձեռք բարձրացնել չկարողացան:

Մի անգամ Ենատի ծերի՝ Ղուկասի մոտ եկան այսպես կոչված եվբիտ կամ աղոթական կոչված վանականներ:

-Դուք ի՞նչ աշխատանք եք անում,- նրանց հարցրեց Ղուկասը:

-Մենք ձեռքի աշխատանք չենք անում,- պատասխանեցին նրանք,- այլ առաքյալների պատվերի համաձայն անընդհատ աղոթում ենք:

-Իսկ ուտում եք,- դարձյալ հարցրեց ծերը:

-Ուտում ենք,- պատասխանեցին նրանք:

-Իսկ երբ ուտում եք, ձեր փոխարեն ո՞վ է աղոթում,- ասաց Ղուկասը,- բացի այդ, չե՞ք քնում արդյոք:

-Ինչպե՞ս կարելի է չքնել,- հարցրին եվբիտները:

-Եվ արդ. երբ քնում եք, ձեր փոխարեն ո՞վ է աղոթում:

Եկվորները ոչ մի պատասխան չկարողացան տալ: Այդժամ Ղուկասն ասաց նրանց.

-Ներեցեք ինձ, բայց դուք ինքներդ հակասում եք ձեզ: Դրան հակառակ ես կապացուցեմ ձեզ, որ ձեռագործ անելիս ես աղոթում եմ անընդհատ: Օրինակ, եղեգնից զամբյուղ եմ հյուսում և ասում եմ. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո մեծ ողորմությամբ և Քո գթառատությամբ ջնջի՛ր իմ հանցանքները...»: Սա աղո՞թք է, թե՞ ոչ:

-Իհարկե,- պատասխանեցին եվբիտները:

-Այս օրինակով ողջ օրն անց եմ կացնում աշխատանքի և աղոթքների մեջ,- շարունակեց ծերը,- որոշ քանակով դրամ եմ վաստակում: Դրա կեսը տալիս եմ աղքատներին, իսկ մյուսով հոգում եմ իմ ծախսերը: Երբ ուտում կամ քնում եմ, իմ փոխարեն ողորմություն ստացած մարդիկ են աղոթում: Տեսնո՞ւմ եք, որ ես կամօքն Աստծո, կատարում եմ Առաքելական կանոնը և աղոթում եմ անընդհատ:

Մի բարեպաշտ ծերի մոտ եկավ մի մարդ և ասաց. «Ես և եղբայրս կուվեցինք իրար հետ և, ցավոք, նա չի ցանկանում հաշտվել, թեպետև ես ամեն կերպ ցանկանում եմ այդ: Մարդ Աստծո, ողորմություն արա, համոզիր նրան»: Ծերունին ուրախությամբ համաձայնեց և իր մոտ կանչելով նրա եղբորը, սկսեց խոսել սիրո և համաձայնության մասին: Սկզբում թվաց, թե հարացած եղբայրը մեղմացավ, բայց հանկարծ նա ասաց. «Չեմ կարող հաշտվել, քանզի խաչի վրա երգվել եմ հավերժ թշնամանալ նրա հետ»: Այդժամ ծերը ժպտալով ասաց նրան. «Քո երգումն այսպիսի ուժ ունի. Քաղցր Հիսուս, երգվեցնում եմ Քեզ Քո խաչով, որ չեմ կատարելու Քո պատգամները և ցանկանում եմ ենթարկվել Քո թշնամու՜ղ ղևի կամքին: Իմ ընկեր, ոչ միայն պետք է դրժել այն, ինչ որոչել ենք չար ժամին, այլև պիտի զղջանք նրա համար, որ մեր հոգուն հակառակ մեղք ենք գործել: Եթե Հերովդեսը զղջար և չվարվեր իր երդման համաձայն, չէր կատարի աշխարհի ամենամեծ չարագործությունը, չէր սպանի Հովհաննես Մկրտչին: Հիշիր, ինչ պատահեց այն ժամանակ, երբ Հիսուսն ուղեց սուրբ Պետրոսի ոտքերը լվանալ, իսկ նա հրաժարվեց /Հովհ. 13. 8-10/: Հիշիր, որ այս Առաքյալը երգվեց թե՛ Այս մարդուն չեմ ճանաչում /Մատթ. 26.74/: Բայց արդյո՞ք նա պահպանեց իր երդումը, երկա՞ր շարունակեց իր արարքը, թե՞ դուրս ելնելով դառնապես լաց եղավ /Մատթ. 26.75/»:

Լսելով ծերի շուրթերից դուրս եկած ճշմարտությունը, անծանոթը հաշտվեց իր եղբոր հետ: Քրիստոնյանե՛ր, եթե որևէ արատավոր և բարձրագույն կրքի ազդեցություն տակ մեր տված երդումն իր հետ բերում է կործանարար հետևանքներ մեր փրկության համար, կամ սպառնում է մերձավորների երջանկությանը, այն անհապաղ լվացեք ձեր արցունքներով, քանզի կործանարար է այն կատարելը: Բայց վտանգից խուսափելու համար, որի մեջ ընկել է եղբայրդ, պետք չէ խաչի վրա երգվել, իսկ ավելի լավ է չերգվել ընդհանրապես: Եթե դու խղճով, արդարամիտ ու մաքրասեր մարդ ես, ապա քո «այո»-յին և

«ոչ»-ին կհավատա յուրաքանչյուր ոք: Դրան հակառակ, հիմար մարդը որքան էլ երդվի, քրքրվի երդում ուտելով, իզուր կանցնի: Ուրեմն, ինչո՞ւ առանց հասկանալու իզուր տեղը բերանն առնել անունը Նրա, Ում առաջ ահուգողով են կանգնում հրեշտակների դասերը և ահից երեսները ծածկելով կանչում են. «Սուրբ, սուրբ, սուրբ է Զորությունների Տերը, և ամբողջ երկիրը լի է Նրա փառքով /Եսայի 6.3/»:

### ԱՄԵՆ ՄԻ ԳՈՐԾ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ

Մի անգամ Թեոդոս Պեչորացուն այցելեց մեծ իշխան Իգյասլավը և գիշերեց նրա մոտ: Հասարակ սեղանին պարզ ուտելիք էր դրված, որ տոնական օրերին օգտագործում էին վանական ծոմապահները: Եվ այս ուտելիքը մեծ իշխանին չափազանց համեղ թվաց: Տեսնելով ոչ այնքան սպիտակ հացը և սովորական պտուղները՝ Իգյասլավը չէր հասկանում, թե ինչո՞ւ է այսքան ախորժակով ուտում դրանք: Եվ վերջապես զարմացած հարցրեց ծերին.

- Ես ամեն ինչ ունեմ,- ասաց նա,- լավագույն մթերքները, զանազան համեմունքներ, որ բերված են ուրիշ երկրներից: Խոհարարներն իրենց գործը լավ գիտեն, բայց հազիվ եմ մի քիչ ճաշակում:

- Տեր, - պատասխանեց Թեոդոսը,- մեզ մոտ, երբ եղբայրներն ուզում են խորտիկներ պատրաստել կամ հաց թխել, սկզբում գալիս են վանահոր մոտ և օրհնություն ստանում, ապա երեք անգամ խոնարհվում են Սուրբ Խորանի առաջ և Տիրոջ պատկերի առջև վառվող կանթեղից վառելով մոմը, տանում, վառում են խոհանոցի փուխ կրակը: Այդպես նաև, երբ կաթսայի մեջ ջուր են լցնում, ծառայողը դիմում է երեցին. «Օրհնիր, Հայր», իսկ երեցը պատասխանում է. «Աստված օրհնի ձեզ»: Այդպես մեզ մոտ ամեն ինչ արվում է օրհնությամբ. ահա այդ է պատճառը, որ մեր սնունդը համեղ և ախորժաբեր է լինում: Դրան հակառակ ձեր ծառաները ամեն գործ սկսում են քրթմնշոցով և իրար վրա խոսելով: Իսկ որտեղ մեղքերն են, այնտեղ

կարո՞ղ է բավարարվածություն լինել: Ավելին, ձեր պալատականները երբեմն նույնիսկ ամենափոքր անճշտության համար ծեծում են ծառայողներին, նրանց արցունքները նույնպես դառնություն են ավելացնում ձեր թանկարժեք խորտիկներին:

Մեծ իշխանը համաձայնեց, որ սուրբ ծերը ճիշտ է ասում և նրա օրհնությունն ստանալով՝ վերադարձավ իր տուն:

Քրիստոնյանե՛ր, մե՛նք էլ համաձայնենք, որ Թեոդոսի դասը հատկապես մեզ է հարկավոր, քանզի մենք մեր թեթևամտության կամ, որ ավելի ճիշտ է, արտասահմանցի կեղծ ուսուցիչների ուսուցման պատճառով, ոչ միայն առանց օրհնության ենք ձեռնամուխ լինում ցանկացած գործի, այլև երբ սեղան ենք նստում, որպեսզի Աստծո տված բարիքները վայելենք, ոչ միայն մոռանում ենք մեր առաքինի նախնիների՝ Աստծուն աղոթելու սովորությունը, այլև ամոթ ենք համարում նույնիսկ խաչակնքվելը:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ՄԵԾ ՄԵՂՔ Է ԱՍԾՈՆ ԵՎ ԱՄ ՈՒՆՏԸ ԴՐԺԵԼԸ

Սուրբ Թեոդոս Պեչորացու վանահայրություն ժամանակ իշխան Սուղիսլավ Գեդեիչը, մարտի մեկնելով մեծ իշխան Իգյասլավի դեմ, ուխտ արեց Աստծուն. եթե առողջ վերադառնա իր տուն, Պեչորյան վանքին երկու գրիվնա ոսկի կնվիրաբերի և այդ մետաղից պսակ պատրաստել կտա Սուրբ Տիրամոր համար: Ռուսների համար ճակատամարտը հաջող ավարտվեց: Թշնամիները ցրվեցին և փախան, բայց Կլիմենտը (Սուղիսլավի քրիստոնեական անունն է), Կիև վերադառնալով առողջ ու անվնաս՝ իր ջոկատով հանդերձ, մոռացավ խոստումը:

Մի քանի օր անց, երբ ճաշից հետո Սուղիսլավը պառկեց, որ քնի, հանգստանա, հանկարծ որոտաց մի սարսափելի ձայն և տվեց նրա անունը: Կլիմենտը վեր թռավ, իր առջև տեսավ սուրբ Տիրամոր սրբապատկերը և լսեց նրա հանդիմանությունը. «Ինչո՞ւ, Կլիմե՛նտ, քո խոստացածը չտվեցիր: Այժմ ես քեզ ասում եմ. շտապի՛ր կատարել քո խոստումը»:



Այս ասելով՝ սրբապատկերն անհետացավ և իշխանը սարսափահար եղած, այդ ըուպեին իսկ մտավ գանձարան և դողացող ձեռքերով վերցնելով անհրաժեշտ քանակութամբ ոսկի, գնաց Պեչորյան մենաստան:

Մեզնից ամեն մեկը խոստումներ է տալիս Աստծուն, երբ վտանգի է հանդիպում և չի կատարում դրանք, երբ վտանգը անցնում է: Հարուստն Աստծուն ոսկի և արծաթ է խոստանում, աղքատը՝ մոմ, արատավորը խոստանում է դառնալ անարատ: Բայց ու՞ր են ուխտը, երդումը: Ամեն ինչ տանում է քամին: Քրիստոնյանե՛ր, Նա, Ով ստեղծել և կառավարում է ամեն ինչ, Նա, ում համար գահ է երկինքը և երկիրը ոտքերի պատվանդան, մեր նվերի կարիքը չունի: Նա ցանկանում է միայն, որ մենք, որպես իր զավակներ, բարեսիրտ լինենք: Բայց ի՞նչ բարեսրտություն կարող է ունենալ ստախոսը, խաբեբան: «Այլ բան է գողությունը, եւ այլ բան՝ ստությունը. սակայն երկուսից էլ կորուստ են ժառանգում» (Սիրաք 20, 25-26):

Իսկ նա, ով չի կատարում իր ուխտը, նա ե՛լ գող է, ե՛լ ստախոս: Ստախոս է, քանի որ չի պահում իր խոսքը, գող է, քանի որ ուրիշին խոստացած իրն այլևս մերը չէ: Եւ այսպես, եթե մերձավորին խաբելը մեղք է, ապա որքան սարսափելի մեղք է Աստծուն խաբելը:

ԽՈՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆ ԻՐ ՀԵՏ

Արսեն Մեծը, որ ձգնում էր անապատում, հաճախ զրուցում էր ինքն իր հետ. «Արսեն, դու ինչո՞ւ ես այստեղ եկել», - հացնում էր իրեն և հետո պատասխանում էր. «Ոչ թե հանգստանալու, այլ աշխատելու, ոչ թե ծուլություն, այլ սխրանքների համար: Ուրեմն սխրագործի՛ր: Ծուլությունն Արսենին դարձնում է ոչ-Արսեն»:

Օ, եթե յուրաքանչյուրը՝ իշխանից մինչև ստրուկ, հաճախ ինքն իրեն հարց տար, թե ինքն ինչո՞ւ է այդ կոչումը կրում, այնժամ բոլորն այն կլինեին, ինչ որ պիտի լինեին, այնժամ չէին ասի. «Այս մեկը ձեռնտու տեղ ունի, այն մեկը լավ պաշտոն ունի»:

Մի քանի վանականներ գնում էին Թիբախա՝ մանած վուչ գնելու համար և որոշեցին ճանապարհին այցելել հայր Արսենին: Բայց երբ նրան ծառայող աշակերտը գեկուցեց, որ Ալեքսանդրիայից եկած եղբայրները ցանկանում են նրան տեսնել, մեծ ծերը հրամայեց նրանց հարցնել. «Ո՞րն է այսքան երկար ճանապարհ կտրելու պատճառը»:

Իմանալով, թե ինչի համար են նրանք հեռացել մենաստանից, աշակերտն այդ մասին գեկուցեց հայր Արսենին:

«Ուրեմն նրանք իմ երեսը չեն տեսնի,-ասաց ծերը,- քանի որ տանից ինձ համար դուրս չեն եկել, այլ իրենց գործի համար: Ընդունիր նրանց, հյուրասիրիր, և երբ հանգստանան, ճանապարհիւր խաղաղությունը, իսկ իմ մասին ասա, որ չեմ կարող տեսնվել նրանց հետ»:

Արդյոք մենք էլ երբեմն այդպե՞ս չենք գնում Աստծո եկեղեցին: Ահ ունենանք, քանզի Աստված կարող է երես դարձնել մեզնից:

ՀԱՅՅՈՅԱՆՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՅՈՅԻՉՆԵՐԻ ԳԼ ԱՎՈՐԻ ԴԵՄ

Սարակինոսների իշխան Ամիրմուհի մայրաքաղաք Սամարայում, առավել քան մյուս ոչ ուղղափառ երկրներում, ատում էին քրիստոնյաներին: Աստվածանարգ հագարացիք զզվում էին քրիստոնյա մարդկանցից, ինչպես դեերից, դրա համար էլ յուրաքանչյուր քրիստոնյայի դարպասի վրա բարբարոսների կառավարության հրամանով պատկերված էր ստի և չարություն ոգին: Սուրբ Կոստանդին Իմաստասերը, որ հավատքի գործերով գտնվում էր Սամարայում, սրտի կսկիծով ու զարմանքով իմացավ քրիստոնյաների հանդեպ ատելություն մասին, բայց սարակինոսներն ուզեցին նաև քրիստոնյա իմաստասերի վրա ծիծաղել և ցույց տալով դեերի նկարները հարց տվեցին նրան. «Իմաստուն Կոստանդին, կարո՞ղ ես գուշակել,

թե ինչ է նշանակում այդ»: «Ես տեսնում եմ դժոխքի ոգիներ,~ պատասխանեց իմաստունը,~ և մտածում եմ, որ այդտեղ քրիստոնյաներ են ապրում»:

Հագարացիք ուզում էին շարունակել նենգ հարցերը, բայց Կոստանդինը վրա բերեց. «Այդ դեերը չեն կարողանում մտնել ոչ մի քրիստոնյայի տուն, դրա համար էլ մնում են դարպասների վրա, իսկ որտեղ որ նրանք չեն պատկերված, այնտեղ նրանք որպես ընկեր ու հարազատ ապրում են մարդկանց հետ»: Այս ասելով՝ Կոստանդինը նշանակալից հայացք նետեց սարակինոսների իշխանի վրա:

### ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«Քրիստոսը ձեր Աստվածն է,~ ասացին սարակինոսների առաջնորդները սուրբ Կոստանդինին,~ ինչո՞ւ այնպես չեք վարվում, ինչպես նա է պատվիրել ձեզ: Հիսուսը ձեզ պատվիրեց աղոթել ձեր թշնամիների համար, բարիք գործել ձեզ ատողներին և ալ այտին հարվածողներին շրջել նաև ձախը, իսկ դո՞ւք ինչ եք անում: Եթե մեկը ձեզ վիրավորում է, գենք եք սրում նրա դեմ, ելնում եք ճակատամարտի, գնում սպանություն»:

Այս լսելով սուրբ իմաստունը հարցրեց նրանց. «Եթե մի որևէ օրերնսգրքում երկու պատվիրան գրված լինի, ապա ով օրենքը պահպանած կլինի. նա, որ մե՞կն է կատարում, թե՞ նա, որ կատարում է երկու պատվիրանն էլ»: Երբ հագարացիներն ասացին՝ երկրորդը, նա շարունակեց. «Մեր Աստվածը Քրիստոսն է, որ մեզ պատվիրել է աղոթել մեզ նեղացնողների համար, ինչպես նաև պատվիրել է բարեգործություն անել, քանզի մեզնից ոչ ոք ավելի մեծ սեր ցուցաբերել չի կարող, քան իր հոգին դնել իր ընկերոջ համար: Եվ այդպես, մենք մեծասրտությամբ տանում ենք մեզ՝ որպես անհատ մարդկանց հասցրած վիրավորանքները, բայց հասարակության մեջ իրար պաշտպանում ենք մեր կյանքը զոհելով, որպեսզի դուք մեր

համաքաղաքացիներին գերելիս, մարմնի հետ նրանց հոգին չգերեք՝ նրանց ստիպելով անաստված գործեր կատարել:

Մեր քրիստոսասեր զինվորները գենք ձեռքներին պաշտպանում են սուրբ Եկեղեցին, որտեղ անտեսանելի կերպով ներկա է աշխարհի Փրկիչը, պաշտպանում ենք տիրակալին, որի սրբազան անձի մեջ հարգում ենք երկնավոր Թագավորի իշխանությունը և ուժը, պաշտպանում ենք հայրենիքը, որի կործանումով անպայման կկործանվի հայրենական իշխանությունը և կսասանվի Ավետարանի հավատքը: Ահա այն թանկարժեք գրավականները, որոնց համար մինչև արյան վերջին կաթիլը պետք է կռվեն զինվորները, և եթե կռվի դաշտում նրանք դնեն իրենց հոգիները, Եկեղեցին նրանց կգասի սուրբ մարտիրոսների շարքը և աղոթքներով կհիշի նրանց Աստծո առաջ հայրենիքի փրկություն համար ընկած լինելու համար»:

Քրիստոսասեր զինվորներ՝, ձեզ համար ի՛նչ մեծ պատիվ է սխրանքներ կատարել հայրենիքի թշնամիների դեմ: Որպիսի անճառելի պարգև է եկեղեցու, թագավորի և հայրենիքի համար ձեր արյունը հեղելը: Երկնավոր Թագավորություն տանող ամենահեշտ ճանապարհը սերն է, քանզի «ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար»/Հովհ. 15, 13/:

### ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Կոստանդինն անհագ սեր ու ակնածանք ուներ աստվածահաճ Գրիգոր Աստվածաբանի նկատմամբ, անընդհատ կարգում էր նրա գրքերը և առանձին տեղեր անգիր սովորում: 7 տարեկան հասակում նա պատի վրա խաչ պատկերեց և նրա տակ գրեց. «Քրիստոսի սուրբ Գրիգոր, դու մարմնով մարդ էիր, բայց հոգով՝ Հրեշտակ: Քո շուրթերը սերովբեի պես փառաբանում էին Աստծուն և քո ուղղափառ ուսմունքը լուսավորեց տիեզերքը: Աղաչում եմ քեզ, ընդունիր ինձ՝ հավատքով և սիրով քեզ մոտ եկողիս և եղիր իմ ուսուցիչն ու լուսավորիչը»:

Այդպես էին զգում և վարվում բոլոր քրիստոնյաները՝ փորձելով նմանվել հրեշտակային երանության մասնակիցներին:

Արդար Կոսման այնպես էր ակնածում հայրերից, որ մի անգամ ավագ ընկերոջ հետ հոգու փրկության մասին խոսելիս՝ որպես ճշմարտության հավաստիացում բերելով Ալեքսանդրիայի եպիսկոպոս Աթանասին, ասաց. «Եթե որևէ տեղ գտնես սուրբ հայրերի ստեղծագործություններից և թուղթ չունենաս գրի առնելու, ապա գրիր հագուստիդ վրա»: Եթե այս դարի իմաստունները հարց տան, թե այս գրքերի մեջ ի՞նչ կա, որ այդպիսի պատկառանք է ներշնչում, ես կպատասխանեմ սուրբ մարտիրոս Տիմոթեոս Ընթերցասերի շուրթերով. «Երբ կարդում եմ Աստծո մասին գրքերը, իրեն տանջող Արիանոսի նմանատիպ հարցին պատասխանելով ասաց նա, զգում եմ Աստծո հրեշտակների ներկայությունը»:

Այսպես, քրիստոնյաներ, ով ցանկանում է օգուտ քաղել հոգու համար, նա պարտավոր է քրիստոնեական գրքեր ունենալ: «Միայն հայացքն այս անգին սեփականության վրա, ասում է սուրբ Եպիփանը՝ Կիպրոսի եպիսկոպոսը, մեր մեջ ատելություն է առաջացնում արատների հանդեպ և սեր՝ առաքինությունների նկատմամբ: Միայն վերնագիրն արդեն նախագրված չէ, խորհուրդ է տալիս, հանդիմանում, մխիթարում, առույգություն է ներշնչում: Դրան հակառակ, սուրբ գրոց անծանոթ լինելը, այսպես ասած, դավաճանություն է հոգու համար, որ ցանկանում է փրկվել: Սուրբ գրվածքները չհարգելը տանում է խոր անդունդ...»

Վայ այն մարդուն, ով երևակայական երազանքները, կրքերը, զառանցանքը, մտքի կեղծ փայլատակումները, այլերկրային խենթությունները գերադասում է այս հոգևոր ուսուցումներից: Այնտեղ վարդի տակ օձ է թաքցրած, մեղրախորսիի հետ թույն է խառնված: Այստեղ խոսքն ու կյանքն օգնում են իրար, այստեղ առաքինությունը ծավալվում-սերտաճում է իմաստնության հետ, այստեղ մարմնավորված փիլիսոփայությունն է: Աշխարհիկ ստեղծագործություններն իրենց համար որպես սկիզբ ունեցել են տարբեր կրքերը, սուրբ հայրերը գրել են իրենց հովանի և հովանավոր ունենալով Սուրբ Հոգին: Դա

այնպիսի ճշմարտություն է, որը ժխտել կհամարձակվի միայն կատարյալ անաստվածը, քանի որ այն հաստատվում է անհամար պատմական ապացույցներով: Բերենք նրանցից մի քանիսը: Սուրբ Հովսեփ Շարականագիրն իր մենաստանում սուրբ Բարդուղիմեոսի անունով եկեղեցի հիմնադրելով ցանկացավ նրա հիշատակը փառավորել գովաբանական երգերով, բայց կասկածում էր՝ արդյոք առաքյալի համար հաճելի կլինե՞ն իր ջանքերը: Դրա համար նա ջանասիրաբար աղոթում էր սուրբ Բարդուղիմեոսին, որպեսզի հայտնի իր կամքը և Երկնքից աղերսում էր աստվածահաճո երգ հորինելու իմաստնություն: Հովսեփը քառասուն օր անցկացրեց պահքի և արցունքների մեջ: Երբ հասավ առաքյալի հիշատակի օրը, սուրբ Բարդուղիմեոսի տոնի նախատոնակի երեկոյին սպիտակ շորեր հագած մեկն անսպասելիորեն հայտնվեց խորանում և արքայական դռների վարագույրները հետ տանելով՝ ձեռքի շարժումներով իր մոտ կանչեց նրան: Հովսեփը երկյուղածությամբ մոտեցավ, և սուրբ Բարդուղիմեոսը սեղանից վերցրեց Ավետարանը, դրեց կրծքին և ասաց. «Թող օրհնի քեզ ամենակալ Աստծո աջը և թող քո լեզվից երկնային իմաստնության ջրեր հոսեն, քո սիրտը թող լինի Սուրբ Հոգու բնակարան և թող քո երգերը քաղցրություն պատճառեն տիեզերքին»:

Սուրբ Առաքյալն անտեսանելի դարձավ, իսկ արդար Հովսեփը, լցվելով աննկարագրելի ուրախությամբ և իր մեջ զգալով նախախնամության շնորհը, ընկավ գետին և արցունքներով գոհություն հայտնեց Տիրոջը:

Այդ ժամանակից նա սկսեց գրել եկեղեցական օրհներգեր և երգերի «կանոններ», որոնք զարդարում էին ոչ միայն սուրբ Բարդուղիմեոսի տոնը, այլև ուրիշ աստվածահաճո սրբերի: Նա հատկապես փառավորեց սուրբ Տիրամորը և Քրիստոսի սուրբ Նիկողոսին, որի համար էլ ստացավ Շարականագիր անունը:

Երբ սուրբ Հովհան Ոսկեբերանը գրում էր Պողոսի թղթերի մեկնությունը, մի գիշեր քաղաքացիներից մեկը, որ կարիք ուներ սրբի հետ հանդիպելու, խնդրեց զեկուցել իր մասին: Սուրբ Պրոկղը (այն ժամանակ խցի ծառայողն էր, իսկ հետա-

գայում դարձավ Կ.Պոլսի պատրիարքը) փորձեց մտնել պատրիարքի մոտ, բայց նախ և առաջ նայեց դռան ճեղքից, որպեսզի տեսնի, թե Հովհանն ինչ է անում: Եւ ի՞նչ տեսավ: Քրիստոնյանե՛ր, երկյուղածուլթյամբ մոտեցեք Հովհանի ստեղծագործություններին: Ոսկեբերանը նստած էր՝ վառած մոմը առաջը դրած, և գրում էր, իսկ մի բարետես ծերունի նրա հետևի կողմը կանգնած թեքվել էր ականջին և կամաց ինչ-որ բան էր ասում: Պրոկղը սրբազան երկյուղով բռնված չիմացավ ինչ մտածի: Արդյոք ո՞վ էր Հովհանի հետ զրուցողը և ինչպե՞ս էր ներս մտել, երբ բոլոր դռները փակ էին: Բայց նրա զարմանքն ավելի մեծացավ, երբ նկատեց, որ այն ծերունին շատ նման է սուրբ Պողոս առաքյալի նկարին, որ փակցված է Հովհան Ոսկեբերանի դիմացի պատին: Այս տեսիլքը մի անգամ չէր, որ երևաց, այլ շարունակվեց որոշ ժամանակ: Հաճախ Պրոկղը ողջ գիշեր սպասում էր, թե արդյոք դուրս չի՞ գա խորհրդավոր զրուցակիցը, բայց հենց որ խփում էր առավոտյան ժամերգության կոչնակը և Ոսկեբերանը վեր էր կենում սեղանի մոտից, որ եկեղեցի գնա, ծերունին անտեսանելի էր դառնում: Վերջապես Պրոկղը համարձակվեց իրեն՝ Հովհանին հարցնել, թե ո՞վ է գիշերներն այցի եկող խորհրդավոր ծերունին:

«Ինձ մոտ ոչ ոք չի եղել և չէր կարող լինել», - պատասխանեց Հովհանը:

Այդժամ Պրոկղը նրան մանրամասնորեն պատմեց, թե երբ և ինչպես է նայել դռան ճեղքից և տեսել տարօրինակ ու բարետես մի մարդու, որ գրելու ժամանակ նրա ականջին ինչ-որ բան էր շնչում: Հովհանը զարմացավ, իսկ երբ Պրոկղը Պողոսի նկարին նայելով ասաց. «Ծերունին նման էր սրան», Ոսկեբերանն իմացավ, որ իր աշխատանքին ուղղություն է տալիս սուրբ Առաքյալն ինքը: Շնորհակալ եղավ Աստծուն և դրանից հետո մեծ ոգևորությամբ սկսեց մեկնաբանել Աստվածային գրքերը, որի շնորհիվ եկեղեցին անգին գանձ ստացավ:

## ԱՍՏՎԱԾ ՊԱՏԺՈՒՄ Է ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՀԱՄԱՐՀՈՂՆԵՐԻՆ

Եպիփանի եպիսկոպոսության սկզբում Եվգենոսն անունով մի հռոմեացի, որ ազնիվ և բարեկանոն մարդ էր, հանգամանքների բերումով պարտք էր մնացել Սալամինի բնակիչ Դրակոնին, եւ քանի որ երկար ժամանակ պարտապանը Հռոմից չէր ստանում, իսկ պարտատերն այլևս չէր ցանկանում սպասել, և Եվգենոսին բանտարկեցին: Ոչ ոք չէր ցանկանում օտարականի համար երաշխավոր լինել: Միայն Քրիստոսի սուրբ Եպիփանը խղճաց նրան, և սեփական փող չունենալով, պարտքը եկեղեցու գանձարանից վճարեց ու նրան ազատեց բանտից:

Ողջ քաղաքն օրհնեց Եպիփանի ողորմածությունը: Միայն Կարին սարկավազը, որ հպարտ, անհնազանդ, չար և նախանձ մարդ էր, սկսեց փնթփնթալ սրբազանի վրա և բոլոր կղերականներին դրդեց դժգոհության:

«Տեսեք, - անընդհատ կրկնում էր նա, - թե ինչ արեց եպիսկոպոսը: Նա եկվոր է և չի ափսոսում եկեղեցու ունեցվածքը: Վախեցեք, որ հետո մեզ չստիպեն պատասխան տալ նրա վատնումի համար»:

Թեպետև հոգևորականներն սկզբում բանի տեղ չէին դնում խռովարարին և նրան հավաստիացնում էին, որ եպիսկոպոսը լրիվ իրավունք ունի եկեղեցու գումարները տնօրինելու, մանավանդ, երբ դրանք ծախսում է բարեգործական նպատակներով, բայց խորամանկ Կարինը վերջապես հասավ այն բանին, որ բոլորը բարձրաձայն սկսեցին դժգոհել, թե այդպիսի եպիսկոպոս ունեցող եկեղեցին շուտով կաղքատանա:

«Թող վերադարձնի փողերը, - փնթնփնթում էին նրանք, - և կամ թող գնա այնտեղ, որտեղից եկել է»:

Սրբազանը խռովարարների խոսքը լսում էր սառնասրտությամբ և լռում էր, քանի դեռ Եվգենոսնը Հռոմից չէր վերադարձել: Այս բարեկանոն մարդը ոչ միայն ավելիով վերադարձրեց իր պարտքը, այլև իր ամբողջ կյանքը նվիրեց եկեղեցու ծառայությանը: Այդժամ եկեղեցու սպասավորները զղջացին, որ իրենց հիմարության պատճառով այդքան վիրավորել

են Աստծո մարդուն: Բայց Կարինը հպարտությամբ ամենուր հայտարարում էր «եկեղեցու ոսկիները շահարկելու մասին»: Խռովարար ոգին, դրանով չբավարարվելով, իր կատաղությունն ավելի տարածեց: Մի անգամ սրբազանը բոլոր հոգևորականներին ճաշի հրավիրեց և սեղանի շուրջ նստած նրանց սկսեց բացատրել Սուրբ Գրքի որոշ հատվածներ: Այդ ժամանակ խցի լուսամուտին մի ագռավ կանգնեց և սկսեց բարձրաձայն կռուսել: Չարությամբ լցված Կարինը եպիսկոպոսի ուսուցման վրա ծիծաղելով գրուցակիցներին հարցրեց. «Ձեզնից որեւէ մեկը հասկանո՞ւմ է, թե ինչի մասին է խոսում այս ագռավը»:

Բոլորը մեծ ուշադրությամբ լսում էին եպիսկոպոսին և ոչ ոք պատասխան չտվեց Կարինին: Բայց իշխանությունն ու սրբությունն արհամարհողը նույն հարցը տվեց երկրորդ անգամ և երրորդ անգամ: Այդ անխիղճ մարդու փոխարեն ամաչում էին բոլոր գրուցակիցները: Այդ ժամ սուրբ Եպիփանը խղճահարությամբ նայեց նրան և ասաց. «Ես գիտեմ, թե ագռավն ինչ է ասում: Նա ասում է, որ դու, գժբախտ, այլևս չես սարկավազելու»:

Սրբազանի խոսքից անմիջապես հետո Կարինին սարսափը պատեց, ողջ մարմինը բռնվեց հիվանդությամբ, այնպես, որ նա չէր կարողանում նստել: Ծառաները ձեռքերի վրա նրան տուն տարան, իսկ հաջորդ օրը Կարինը մեռավ:

### ԵՐԲ ՏԵՂԻՆ ՁԷ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՔԱՏԻ ՀԱՆԴԵՊ

Սուրբ Եպիփանի մոտ ծառայում էր Սավին անունով խելամիտ, առաքինի, սուրբ գրոց գիտակ մի ավագ սարկավագ, որին հենց այդ պատճառով հոգևոր գործերի դատավոր էր կարգել:

Մի անգամ Սավինի մոտ երկու մարդ եկան, մեկը հարուստ, մյուսն՝ աղքատ: Նրանք վիճելի հարց ունեին, և մեկը մյուսի դեմ բողոքելով, ամեն մեկը բացատրում էր, թե ինչ է ուզում ինքը: Բոլոր հանգամանքներն ապացուցում էին, որ հարուստն արդար է, իսկ աղքատը՝ մեղավոր, բայց Սավինը աղքատներին

հանդեպ ունեցած բնական սիրո պատճառով չէր կարողանում ընկալել ճշմարտությունը և նրան անպաշտպան համարելով՝ փորձում էր արդարացնել աղքատին ու մեղադրել հարուստին:

Այս անգամ ցանկանալով իմանալ, թե Սավինն ինչպես է կատարում իր պարտականությունը՝ Եպիփանը եկավ նրա մոտ և, մի գաղտնի տեղում կանգնելով, զարմանքով տեսավ, որ դատավորն արդար չի դատում: Սրբազանն անմիջապես երևան եկավ և մեղմորեն ասաց Սավինին. «Որդիս, դնա գրքեր գրիր և քո մտքում պահիր Աստվածային խոսքերը, որպեսզի սովորես արդար դատել: Մարգարե և օրենսդիր Մովսեսն ասաց. «Դատ դատաստանի ժամանակ անիրավություն մի՛ արա, աղքատի հանդեպ աչառություն մի՛ արա, հարուստին մի՛ շողոքորթիր: Արդա՛ր դատիր քո ընկերոջը» /Ղևտ. 19:15/:

Իհարկե, հարկ է աղքատներին ողորմություն տալ և պաշտպանել նրանց, քանզի նրանք հաճախ անիրավված են լինում հարուստների կողմից, բայց աղքատներ էլ կան, որ չար բարքեր ունեն, և բարի սրտով հարուստներ կան: Մենք հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ արդարը մեղավոր է երևում, իսկ չար մարդն՝ արդար՝ անկախ նրանց առաքինի կամ արատավոր լինելուց: Ահա թե ինչու դատավորը պիտի լինի ողորմած, բայց ոչ՝ երեսպաշտ»:

Այս ասելով սուրբ Եպիփանն ինքն սկսեց քննել գործերը և այդ ժամանակից ի վեր դատավորի պարտականությունն ուրիշի վրա չէր դնում և առավոտից մինչև երեկո ինքն էր ընդունում դատ պահանջողներին, լսում էր բոլորին՝ որպես հայր, ճանապարհ էր դնում՝ որպես դատավոր:

### ԿԱՏԱՐՅԱԼ ԱՆԱՐԾԱԹԱՍԵՐԸ

Արդար Սերապիոնը երիտասարդ տարիներից սիրում էր անապատական կյանքը, տիպար էր ճգնավորի: Նա այնքան անարծաթասեր էր, որ ոչինչ չուներ: Անապատի մի քարանձավ էր նրա խուցը, մշտական հագուստն էր սքեմը, իսկ միակ գանձը սուրբ Ավետարանն էր:

Մի անգամ Ալեքսանդրիայից գալու ճանապարհին Աստծո մարդը Հանդիպեց մի աղքատի, որը դողում էր ցրտից: Սերապիոնը կանգնեց և միտք արեց. «Ինձ համարում եմ ծոմապահ և Քրիստոսի հետևորդ, բայց արդե՞ս հագուստ ունեմ, իսկ Քրիստոսի այս ծառան մեռնում է ցրտից: Անկասկած, մարդասպան կլինեմ, եթե այս խեղճ մարդը սառչի»:

Եվ հանեց վերարկուն ու տվեց աղքատին:

Սերապիոնը նստեց խաչմերուկում, ծոցի մեջ սուրբ Ավետարանը, որն ամենուր տանում էր իր հետ, և երբ մի անցորդ նրան հարցրեց, թե. «Հայր Սերապիոն, ինչո՞ւ ես առանց վերարկուի», -նա պատասխանեց՝ ցույց տալով սուրբ Ավետարանը. «Այս Աստծո Գիրքը մերկացրեց ինձ»: Հազիվ էր անարժաթասերն այս ասել, երբ տեսավ, որ իր կողքով մի պարտապանի բանտ են տանում: Սերապիոնը երկար չմտածեց, այդ ժամին ծախեց Ավետարանը և փակեց նրա պարտքը: Դժբախտը տուն գնաց՝ օրհնելով հրեշտակատեսք անձանոթին:

Երբ Սերապիոնը մոտեցավ իր խցին, աշակերտը նրան հարցրեց. «Ո՞ւր է քո հագուստը»:

«Ես այն թողեցի այնտեղ, - պատասխանեց անարժաթասերը, - որտեղ կարելի է նրա փոխարեն ավելի լավն ստանալ»:

«Իսկ սուրբ Ավետարանն ուր է», -նորից հարցրեց աշակերտը:

«Զավակս, -ասաց Աստծո մարդը, -նա անընդհատ ինձ ասում էր. «Վաճառիր քո ունեցվածքը և բաժանիր աղքատներին, իսկ դու լավ գիտես, որ իմ ողջ ունեցվածքը միայն այն էր: Ես էլ վաճառեցի ու աղքատներին տվեցի»:

Քրիստոսյանե՛ր, թեկուզև մի քիչ, ընդօրինակեցե՛ք արդար Սերապիոնի առաքինությունները և դուք կփրկվեք:

### ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԶԱՐԱՓԱՌՆԵՐԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ սուրբ Պախոմի մոտ եկան հերետիկոսները, այսպես կոչված «ծոմապահները» և քուրճերի տակ ներքին թուլյունը թաքցնելով՝ կանգնեցին վանքի դարպասների մոտ և հրա-

մայեցին նրան զեկուցել. «Մենք մեր հորից ուղարկված ենք քեզ մոտ, որպեսզի հարցնենք. դու իրո՞ք Աստծո մարդ ես և վստահ ես, որ Աստված լսում է քեզ: Եթե այդպես է, ապա արի մեզ հետ և որպես ցամաքի վրայից, անցիր վանքի մոտ գտնվող գետի վրայից և թող երևա, թե մեզնից ով ավելի շատ խիզախություն ունի՝ մե՞նք, թե՞ դու»:

Նման հպարտ առաջարկության համար Պախոմը մեղք համարեց նույնիսկ այդ գառան հագուստով գայլերի հետ հանդիպելը, բայց աշակերտներից մեկի միջոցով պատասխանեց նրանց. «Աստծո կամեցողությամբ նույնիսկ հերետիկոսները կարող են առանց թրջվելու անցնել գետը, բայց միայն դեի օգնությամբ, որն այդ հրաշքով կարողանում է զարմացնել թուլյունին և հաստատել հերետիկոսության գայթակղության մեջ: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես Աստծուց հրաշք չեմ խնդրում, որպեսզի գետի վրայով քայլեմ: Այդ միտքը ճգնավորական չէ և ոչ էլ քրիստոնեական: Թող նրանք իմանան, որ ես հույսս Աստծո վրա եմ դնում և իմ գործերի վրա հույսս դնել չեմ կարող, ինձ մեղավոր եմ համարում և չեմ ցանկանում դեի նման Տեր Աստծուն փորձել: Թող նրանք իմանան, որ Պախոմը Աստծուց օգնություն է խնդրում, որպեսզի անփորձանք անցնի թշնամու փորձությունները»:

Լսելով նման ուսանելի պատասխան՝ հերետիկոսները ամաչեցին և անխոս հեռացան:

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՅ ԶԼՍԵԼԸ

Սուրբ Պախոմ Մեծը առանձնացել էր Պանոպոլում, այնտեղ ճգնավորական մենաստան հիմնելու համար և հրամայել էր, որ իր բացակայությամբ ոչնչով չխախտեն վանական կանոնակարգը: Բայց երբ նա վերադարձավ, փորձության մեջ ընկած փոքրավորը եկավ նրա մոտ և բողոքեց, որ եղբայրները նրա բացակայությամբ ոչ կանաչեղեն էին եփում, ոչ էլ ճաշ: Սուրբ ծերը ժպտալով ասաց նրան. «Հոգ մի անիր, զավակս, ես կկարգադրեմ, որպեսզի ամեն ինչ լինի առաջվա պես»: Հետո գնաց

խոհանոցում ծառայող վանականի մոտ և հարցրեց, թե իր բացակայությունը ժամանակ ինչն<sup>օ</sup> է խախտել սննդի պատրաստման կարգը: Վանականը սկսեց արդարանալ, որ ծերունիները բավարարվում էին չոր սննդով, իսկ միայն սկսնակ երեխաների համար ինքը չի ցանկացել ձավար ու յուղ պահել:

-Պարապ չնստելու համար ես զամբյուղներ եմ հյուսել, - ասաց նա:

-Դրանք այստեղ բեր, - ասաց Պախոմը:

Վանականը կատարեց կարգադրությունը:

-Դու եղբայրների սննդի մասին արած իմ կարգադրությունը չես կատարել և ես չեմ հարգում քո ձեռքի գործը: Հայրական կարգադրությունը չհարգելն ընդհանուրի օգտին ծառայողի համար մեծ մեղք է: Մի<sup>օ</sup> թե չգիտես, որ Աստուծոց վարձատրություն է ստանում միայն նա, ով իր կամքով է ծոմ պահում, իսկ ով իր կամքին հակառակ է քաղցած մնում, նա չպետք է պարգևի սպասի:

Քո ծուլությունը, համառությունը կամ ժխտությունը հասցրին նրան, որ եղբայրների ժուժկալությունը կորցրեց իր արժեքը: Վանականը, զգալով Պախոմի խրատի ողջ զորությունը, զղջումով ընկավ նրա ոտքերը, եւ իր գործն ինքնակամ նրան տվեց՝ այրելու:

#### ՓՈՐՁԻՉ ՈԳՈՒ ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆԴԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ սուրբ Պախոմը, հեռանալով վանքից, որոշ ժամանակ անցկացրեց անապատական խցում: Գայթակղության ոգին սրբի առանձնանալը հարմար համարեց, որպեսզի փորձի նրան և Աստուծու կերպարանք առած՝ հայտնվեց Պախոմին: «Ուրախացիր, ծե՛ր, - ասաց նա, - ես Քրիստոսն եմ, և քեզ մոտ եմ եկել՝ որպես իմ ընկերոջ»:

Պախոմը զարմացավ և առանց վախենալու նայելով ուրվականին՝ սկսեց մտածել. «Քրիստոսի հայտնվելը մարդուն ուրախություն է պատճառում, սիրտը ոչ մի երկյուղ չի զգում, այդ ժամին անհետանում են բոլոր մտքերը, միտքը վերածվում է

քերովբեի աչքերի և ամբողջովին ուղղվում է Աստծո փառքը դիտելուն, հոգին մոռանում է ժամանակի մասին, այդ ժամ մարդն անմարմին է դառնում: Իսկ ես հիմա տագնապում և վախենում եմ... Ոչ, դա Քրիստոսը չէ»:

Հետո խաչակնքեց և զայրացած ասաց. «Հեռացիր ինձանից, չարություն ոգի, թող անիծյալ լինեն քո բոլոր նենգ գործերը»: Ուրվականն անմիջապես անէացավ, տաճարը լցվեց գարշահոտությամբ և օդի մեջ սուլեց քամին:

Քրիստոսյաններ, այդքան նենգ ու հանդուգն են հոգու մեջ սուլող կրքերը: Մեզնից յուրաքանչյուրը գիտի, թե ինչպիսի պայծառ և սիրալիր կերպար են ընդունում նրանք: Նրանցից ամենանողկալիները մեզ երանություն են խոստանում, և թվում է, թե նպաստում են մեր օգտին ու հանգստին: Բայց երբ մտնում ենք մեր սրտի խորքը, ի՞նչ ենք զգում՝ տագնապ, թախիծ, խղճի խայթ, գաղտնի վախ և դրա հետ ինչ-որ որդ, որ ուտում է մեր սիրտը: Դա՞ է մարդկային երանությունը: Միայն առաքինության առկայությամբ է, որ մարդ ինքն իրենից գոհ է, իսկպես հանգիստ ու երջանիկ: Բուռն կրքերը տագնապ են պատճառում հոգուն, և այն լցնում են անմաքրությամբ: Նրանցից հետո սրտում մնում է միայն դատարկություն և զղջում: Երանելի է այն մարդը, որը Պախոմի նման, զգալով արատի մոտենալը, կասի. «Հեռացիր ինձանից, կործանարար ոգի»:

#### ԱՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱՆԱԼՈՒ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԻ

Մի շոգ կեսօրի, երբ սուրբ Թեոդորոսը քրքրված շորերը հագին նստել էր իր խցի դռանը, մի աշխարհական եկավ նրա օրհնությունն ստանալու: Այդ ժամ աշակերտը այլ հագուստ բերեց, բայց սուրբ Թեոդորոսը, դժգոհելով, նրան հետ ուղարկեց և սկսեց եկվորի հետ խոսել փրկության ուղիների մասին: Երբ աշխարհականը գնաց, աշակերտը սուրբ Թեոդորոսին ասաց. «Աբբա, դու ի՞նչ ես անում, ախր այդ մարդը եկել էր օգուտ ստանալու և ոչ թե գայթակղվելու»:

«Ես իմ գործն արեցի, - պատասխանեց Թեոդորոսը, - իսկ

մնացածը կարևոր է: Ով ուզում է օգուտ քաղել, թող քաղի, իսկ ով գայթակղվել է ուզում, թող գայթակղվի: Ես չեմ ցանկանում փոփոխվել դեպքից ու դեմքից կախված: Ինչպես որ կամ, այնպես էլ կընդունեմ եկվորներին և պատվիրում եմ քեզ բոլորին իմ մասին ասա միայն ճշմարտությունը և մի վարվիր այնպես, ինչպես վարվում են աշխարհում: Երբ ուտում եմ, ասա՝ Թեոդորոսը հաց է ուտում, երբ քնած եմ, ասա՝ Թեոդորոսը քնած է, մի խոսքով, ինչ որ անեմ ես, թող իմ գործերը հայտնի լինեն բոլորին»: Իր հոգում չի կարելի բացարձակապես ազնիվ համարել նրան, ով թաքնվելու պատճառ ունի:

### ՎԱՆԱԿԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Սաբբայի վանքի վանական սուրբ Միքայելը, որ վանքի գործերով զտնվում էր արդեն հազարացիների կողմից գրավված Երուսաղեմում, գրպարտվեց սարակինոսների իշխանի առջև, իբրև թե հայհոյում է մահամեղական հավատը: Իշխանը, համաձայն այն օրենքի, որը պահանջում էր հայհոյողից ընդունել այդ նույն կրոնը և տեսնելով, որ բարետես և պարթևահասակ Միքայելը կարող է քաջ զինվոր լինել, նրան ասաց. « Նղրիր ինձանից, ինչ ցանկանում ես, միայն մոռոտվանություն ընդունիր»: « Նղրում եմ այս երեքից մեկն անես ինձ համար, - պատասխանեց սուրբ վանականը, - կամ ինձ բաց թող, որ զնամ իմ ծերի մոտ, կամ հանուն իմ Աստծո մկրտվիր, կամ էլ քո սրով ինձ ուղարկիր Քրիստոսի մոտ»:

Ձայրացած իշխանը հենց նույն պահին կատարեց սուրբ Միքայելի վերջին պահանջը:

### ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Հայր Սիդվանոսը և նրա աշակերտ Ջաքարիան եկան մի մենաստան եղբայրներին այցելության: Մի ամբողջ օր այնտեղ մնալուց հետո, երբ նրանք պատրաստվեցին տուն գնալ, որպես

հյուրեր՝ ստիպված եղան այնտեղ սնունդ ընդունել: Երբ նրանք ճանապարհին էին, Ջաքարիան, աղբյուրը տեսնելով, ցանկացավ խմել, բայց Սիդվանոսը նրան ասաց. «Այսօր ծոմ է»:

«Իսկ մենք մի՞թե չենք կերել, հայր», - ընդդիմացավ Ջաքարիան: «Դա օտարասիրություն ճաշ էր, - պատասխանեց Սիդվանոսը, - իսկ մենք, զավակս, պետք է պահենք մեր ծոմը: Եթե մենք հյուրասեր եղբոր ջանքը չհարգեինք, ապա միանգամից երկու մեղք կգործեինք. կնեղացնեինք մեր մերձավորին և բոլորի առջև կփողհարեինք, թե Սիդվանոսը և Ջաքարիան ծոմապահներ են: Եւ սրանից հետո, զավակս, ծոմ պահիր գաղտնի»:

### ԱՍՏԾՈՒՑ ՉՊԵՏՔ Է ԽՆԴՐԵԼ ՆՈՒՅՆԻՍԿ ԿԱՏԱՂԻ ԱՆՕՐԵՆՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մի կռապաշտ մի քրիստոնյայի կտրեց եկեղեցուց և նրան դարձրեց չարահավատության: Պողոս առաքյալի աշակերտ Կարապետը, ում հոգևոր հովվության շրջանում տեղի ունեցավ այս դեպքը, նման պայմաններում միշտ համբերատար էր և աշխատեց եկեղեցուց հեռացածին ճշմարտության ճանապարհի դարձնել համոզելով, իսկ գայթակղողին հաղթել իր ողորմածությամբ: Բայց այս անգամ Աստծո մարդը չափազանց վիրավորվեց և աղոթքի կանգնելով սկսեց Տիրոջից անընդհատ խնդրել, որ երկնքից կրակ թափվի և այրի անմաքուրներին:

Կեսգիշերին հանկարծ եկեղեցին ցնցվեց և երկփեղկվեց: Վերև նայելով սուրբ Կարապետը տեսավ երկինքը բացված և Հիսուսին՝ նստած գահին ու հրեշտակների գնդերով շրջապատված: Աստվածային փառքից կուրացած սուրբն աչքերը հառեց ներքև և տեսավ, որ գետինը ճեղքվեց, և բացվեց մուկ ու անհատակ անդունդը: Եվ տեսավ, որ անդունդի եզրին կանգնած են գայթակղողը և հավատքից հրաժարվողը: Նրանք սարսափահար էին եղել, դողում էին և անտեսանելի ուժով բռնված արդեն պատրաստ էին անդունդը գահավիժել, որտեղ կրակի մեջ սողում եւ նրանց վրա ատամներն էր կրճտացնում սարսափելի օձը: Սուրբ Կարապետը բավականություն զգաց և



ոչ այնքան երկնքին, Հիսուսին էր նայում, որքան երկու մեղավորների կորստյանը: Նրանք սպասում էին պատժին և աղոթում էին: Բայց ահա Հիսուսը վեր կացավ իր փառքի գահից և ներքև իջնելով, մտտեցավ անդունդին: Նա կործանվողներին օգնելու համար մեկնեց իր ձեռքը, իսկ հրեշտակները՝ նրանց վերցնելով՝ տարան անդունդից հեռու: Այդժամ Հիսուս սուրբ Կարապետին ասաց. «Ինձ տանջիր, եթե ուզում ես: Ես պատրաստ եմ նորից ձեռքերս խաչին դամել մարդկության փրկության համար եւ հոժարակամ կչարչարվեմ, միայն թե իմ մարդիկ ատեն իրենց մեղքը: Դու ինչո՞ւ ես ցանկանում եղբայրներիդ կործանումը: Ինձ նմանվիր և մի ցանկացիր մեղավորի մահը, այլ նրա դարձը և ապրելը: Մի՞թե չես տեսնում, թե ո՞րտեղ ապրելն է լավ. այս սարսափելի օձի հետ, թե՞ Աստծո և նրա մարդասեր հրեշտակների: Եվ ուրիշներին այն ցանկացիր, ինչ որ քեզ ես ցանկանում»: Այս սուրբ պատմությունը մեզ սովորեցնում է ոչ թե մեղավորներին մահ ու պատիժ ցանկանալ, այլ ապաշխարություն և Աստծուն աղոթել, որ ոչ թե կործանի, այլ իր ողորմածությամբ դարձի բերի նրանց և ողորմի:

### ԲԺՇԿՈՂ ԱԲԵՂԱՆ

Մեզանից դեռևս 700 տարի առաջ Ռուսաստանն ուներ մեծ և սուրբ բժիշկներ, որոնց անունն արժանի է հավերժ հիշատակի: Ազգապիտը, որ Կիևից եկել էր սուրբ Անտոնի քարանձավը և այնտեղ կուսակրոն էր ձեռնադրվել, բժշկում էր բոլոր վանականներին և աղքատ մարդկանց: Նրա կարեկցանքն այնքան հեռու էր տարածվում, որ լսելով որևէ եղբոր հիվանդության մասին, նա անմիջապես թողնում էր իր խուցը և հիվանդի մոտ էր մնում այնքան ժամանակ, մինչև որ իր աղոթքներով և արվեստով վերադարձնում էր նրա առողջությունը: Բացի այդ Պեչորյան վանք էին գալիս բազմաթիվ հիվանդներ, որոնք առողջանում էին և վերադառնում տուն:

Շուտով Ազգապիտի բժշկության համբավն այնքան տարածվեց, որ Չեռնիգովի իշխան Վլադիմիր Վսեվոլոդովիչ Մոնոմա-

խը, անհույս հիվանդ լինելով և պալատական բժիշկներից օգնություն չստանալով, մարդ ուղարկեց, որպեսզի Անտոնին խնդրի Ազգապիտին իր մոտ ուղարկել: Բայց մենակյացը հրաժարվեց Չեռնիգով գնալ՝ ասելով. «Ես չեմ կարող իմ մենաստանը թողնել, մարդկային փառքի արժանանալու համար, որից մինչև վերջին շունչս փախչելու երդում եմ տվել Աստծուն»: Եվ Մոնոմախի ուղարկած պատվիրակի հետ նրան դեղ ուղարկեց, ինչպես նաև նշանակեց հատուկ ծոմապահություն և սննդակարգ, պատվիրեց աղոթել և ողորմություն անել: Շուտով իշխանն առողջացավ, ինքը եկավ Պեչորյան վանք, որպեսզի շուրջը պարզևատրի իրեն բուժողին: Բայց սուրբ Ազգապիտը թաքնվեց և Վլադիմիրն ստիպված եղավ նրա համար բերած նվերները թողնել վանահոր մոտ: Իր շնորհակալությունը հայտնելու համար նա նորից ուղարկեց իր պալատականներից մեկին մեծամեծ նվերներով, բայց աղքատների և հարուստների ճշմարիտ, անշահախնդիր բժիշկն այնժամ դրանք չընդունեց և պատվիրակին ասաց. «Ես երբևէ որևէ մեկից ոչինչ չեմ վերցրել, քանզի հիվանդներին ոչ թե իմ շնորհքով, այլ Քրիստոսի զորությամբ եմ բուժում: Թող քո տերը Քրիստոսի անունով ողորմություն խնդրող աղքատներին ոչ միայն այս նվերները տա, այլև իշխանական գանձի ավելցուկները, որոնցից ոչինչ չենք կարողանա տանել հավերժություն գնալիս»: Այս արդար բժիշկը և աղոթավորը, իր մահից երեք ամիս առաջ իմանալով այդ մասին, չդադարեց հիվանդ եղբայրներին և եկվորներին բուժել մինչև իր կյանքի վերջին ժամը: Նա մահացավ խոր ծերության մեջ և թաղվեց սուրբ Անտոնի քարանձավում:

### ԱՍՏԾՈ ՋԱՅՐՈՒՅԹԸ Ի ՎԵՐՈՒՍՏ ՏՐՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մինա լեռան ճգնավոր արդար Չոսիմոս Կիլիկեցին, որ երիտասարդ տարիներից երազում էր մենություն մասին, հեռացավ Լիբիական անապատը և այնտեղ սկսեց ծառայել Միակ Աստծուն: Մի անգամ այդ անմարդաբնակ վայրում տեսավ մի

ծերունու վուչե շապիկը հագին և նրան մոտենալով՝ ցանկացավ ստանալ նրա օրհնութիւնը, բայց ծերունին, նրանից առաջ ընկնելով ասաց. «Զոսիմոս, դու ինչու՞ ես այստեղ եկել, վերադարձիր Սինա: Աստված քո՝ այստեղ գտնվելը չի ցանկանում»:

Զարմացած Զոսիմոսը հարցրեց, թե նա որտեղի՞ց գիտե իրեն:

– Սրանից երկու օր առաջ, – պատասխանեց անապատականը, – ինձ հայտնվեց հրաշալի կերպարանքով մեկը և ասաց. «Սինայեցի Զոսիմոսը քեզ մոտ է գալիս, նրան ասա, թող այստեղից իր նախկին տեղը գնա, քանզի ուզում եմ նրան հանձնել Եգիպտոսի Բաբելոնյան եկեղեցին»:

Հետո մի քիչ հեռանալով՝ անապատականն աղոթեց Աստծուն, համբուրեց Զոսիմոսին և ասաց. «Խաղաղութիւն քեզ, զավակս, թաղիր իմ մարմինը և աղոթիր իմ հոգու համար»:  
Հետո պառկեց գետնին ու մահացավ: Զոսիմոսը, վերջին հարգանքը մատուցելով հանգուցյալին և հիշելով նրա մարգարեութիւնը, վերադարձավ Սինա, որպեսզի այնտեղ սպասի դրա կատարվելուն:

Բայց սուրբ հայրը որքան ստիպեց ինքն իրեն, որ ապրի վանական հաստատութիւն մեջ, չկարողացավ իր մեջ սպանել ձգտումը դեպի անապատի լուսթիւնը և դարձյալ փորձեց հեռանալ Սինա լեռից: Վերցնելով իր աշակերտ Հովհաննեսին, նա անապատ գնաց՝ ընդօրինակելու համար Պորֆիրոսոսին և այնտեղ երկու անապատականի հանդիպեց՝ Պողոսին և Թեոդորոսին, որոնց հարեանությամբ էլ հաստատվեց ինքը: Բայց Աստված նրան շուտով պատժեց չհնազանդվելու համար: Մի օր նրա աշակերտ Հովհաննեսին կծեց օձը: Թույնից անմիջապես ուռավ ողջ մարմինը և պատանին մեռավ: Ողբացող Զոսիմոսը գնաց Պողոսի և Թեոդորոսի մոտ, որպեսզի նրանց հետ զրուցելով մի քիչ մխիթարվի, բայց սուրբ անապատականները, նրան հանդիպելով առաջին հերթին հարցրին, թե մի՞թե մահացել է նրա աշակերտը: Զոսիմոսը զարմացավ նրանց պայծառատեսութիւն համար և, պատմելով վշտալի դեպքի մասին, նրանց ուղեկցեց հանգուցյալի մոտ: Անապատականները նրան

խորհուրդ տվեցին չվշտանալ և տեսնելով հանգուցյալին՝ ձայն տվեցին. «Վեր կաց, պատանի, ծերը քո կարիքն ունի, քանզի պիտի Սինա գնա, որպեսզի այնտեղ ձեռնադրվի Եգիպտոսի Բաբելոնի եկեղեցու եպիսկոպոս»:

Հովհաննեսն անմիջապես կենդանացավ, իսկ Զոսիմոսը, հիշելով Աստծո կամքը, որ հայտնվել էր իրեն նախորդող անապատականի միջոցով, իր աշակերտի մահը համարեց Աստծո զայրույթի սկիզբ իր անհնազանդութիւն համար: Նա չհամարձակվեց որևէ հարց տալ սուրբ հրաշագործներին և նրանց օրհնութիւնն ստանալով՝ վերադարձավ Սինա:

Շուտով վանահայրը սուրբ Զոսիմոսին Ալեքսանդրիա ուղարկեց վանքի որոշ գործեր կատարելու: Այնտեղ պատրիարք Ապողինարը պահեց նրան և ձեռնադրեց Եգիպտոսի Բաբելոնի եպիսկոպոս:

Ի վերուստ մեզ վրա դրված պարտականութիւններից հրաժարվելը մեծամասամբ ներելի պատճառներ չի ունենում: Վախենանք Աստծո զայրույթից:

ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ  
ԽՍՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՂՔԵՐԻ ԵԿԱՏՄԱՄԲ

Մի եղբայր մեզք գործելու համար մեկուսացվել էր սուրբ հասարակութիւնից: Երբ նրան սկսեցին մենաստանից վտարել, արդար Վիսարիոնը վեր կացավ և նրա հետ գնալով ասաց. «Ես նույնպես նրա պես մեղավոր եմ»:  
Բայց Աստծո մարդը, ինչպես որ իր աշակերտներին սովորեցնում էր զթափրտ լինել մեղավորների հանդեպ, այնպես էլ նրանց խորհուրդ էր տալիս քաջությամբ հակառակ կանգնել մեղքերին:

«Ճգնավորը պետք է ձգտի Սերովբեների և Քերովբեների նման ամբողջովին աչք լինել, – ասում էր նա, – քանզի մեղքը սողոսկում է անտեսանելի կերպով: Ում դեմ կրքերը չեն կոփում, նա թող ձգտի ավելի խոնարհ լինել Աստծո առաջ, որպեսզի հույսը սեփական անձի վրա դնելը նրան ավելի ուժգին չտապալի: Ինքնահավանութիւն պատճառով շատերն են

փորձանքի մատնվել: Դրան հակառակ, Տերը հաճախ մարմնական պատերազմը հեռացնում է թույլերից, որպեսզի նրանք վերջնականապես չկործանվեն»:

Սուրբ Վիսարիոնի օրինակին հետևելով՝ չպետք է դատապարտենք մերձավորին՝ նրա աչքի շյուղը տեսնելով, այլ ավելի լավ է ուշադիր նայենք, թե մենք ավելի մեծ թերույթյունն չունենք արդյոք:

### ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՊՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ

Մի եղբայր հարցրեց սուրբ Վիսարիոնին. «Մարդ ինչպե՞ս պիտի իրեն պահի ուրիշների հետ ապրելիս»:

«Խոսիր միայն այն ժամանակ, երբ պետք է, - պատասխանեց ծերը, - եւ հատկապես մի մրցիլը եղբայրներիդ հետ»:

Այս խորհուրդը շատ օգտակար է ինչպես ցանկացած հոգևոր ու աշխարհիկ իրադրություն մեջ, այնպես էլ ամեն մի ընտանիքում:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ՕԳՏԱԿԱՐ Է ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՐԲԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԵԼԸ

Երբ սուրբ Բասիանոսն ապրում էր Ռավեննայում, սուրբ մարտիրոս Ապոդինարի եկեղեցում, այդ ժամանակ կայսր Վաղենտիանոսից տեղի քաղաքապետը թույլտվություն ստացավ Բիթիմնիոս անունով մի պաշտոնյայի մահապատժի ենթարկելու մասին: Պատճառը չար մարդկանց զրպարտությունն էր:

Դժբախտն անմիջապես շղթայակապ արվեց և առանց դատարանի բերվեց մահապատժի վայրը: Իմանալով, որ անմեղ է՝ Բիթիմնիոսը հիշեց սուրբ Բասիանոսին և ինքն իրեն ասաց. «Աստծո ծառա, Աստծուց քեզ տրված շնորհով այսուհետև պահապան եղիր ինձ», - և խոնարհեց գլուխը: Բայց հազիվ էր դահիճը կացինը բարձրացրել, որ հարվածի Բիթիմնիոսին, երբ

այն պոկվեց նրա ձեռքից և գետին ընկավ: Զարմացած դահիճը կրկին փորձեց, բայց մի անհայտ ուժ դարձյալ հարվածը հեռացրեց և կացինն ընկավ գետին: Նույնը պատահեց և երրորդ անգամ: Քաղաքապետը մտածելով, որ սրա տակ ինչ-որ բան է թաքնված, և դահիճը դիտավորյալ է անում, մահապատժին ի կատար ածել հանձնարարեց ուրիշի, բայց սա նույնպես երեք անգամ բարձրացրեց կացինը, երեք անգամ էլ այն ընկավ ձեռքից: Ժողովուրդը աղաղակելով պահանջեց ազատել կալանավորին, քանի որ նրան այդքան բացահայտ կերպով հովանավորում է Աստված:

Քաղաքապետը չիմացավ ինչին վերագրել այս հրաշքը, և հրամայեց նրան խիստ հսկողություն տակ ուղարկել կայսեր մոտ, որպեսզի պատմի այն հրաշքի մասին, որին վկա է եղել ողջ քաղաքը: Վաղենտիանոսը նույնպես զարմացավ նման հրաշքի մասին լսելով և հավաստիանալով նրա անմեղության և չարակամների զրպարտության մեջ, հրամայեց անհապաղ ազատ արձակել անմեղին և նրան վերադարձնել իր պատրիվներն ու պաշտոնը:

Բիթիմնիոսը ժողովրդի մեջ փառավորեց Աստծո հաճելի Բասիանոսի անունը և բանտից անմիջապես զնաց նրա մոտ, երախտագիտության արցունքներով լվաց նրա ոտքերն ու ձեռքերը: Այս ժամանակից ժողովուրդը Բասիանոսին մեծաբուրում էր՝ որպես պահապան - Հրեշտակի:

### ՀՈԳ ՏԱՆԵԼ ՄԵՐՁԱՎՈՐԻ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Հովհաննես Կոլոզը մի անգամ մի քանի եղբայրների հետ ինչ-որ տեղ էր գնում: Ճանապարհի կեսին վրա հասավ գիշերը և ուղեկցողը կորցրեց ճանապարհը:

- Աբբա, ի՞նչ անենք, - Հովհաննեսին հարցրին ուղեկիցները, - եթե այստեղ գիշերենք, կարող ենք զոհվել:

- Ուղեկցողին ոչինչ մի ասեք, - պատասխանեց ծերը, - առանց այն էլ խեղճը ամաչում է և կարող է թախծել, վշտանալ, գուցե՛ տրտնջալ: Ավելի լավ է ասա թե ինչ անենք. ես

հիվանդ կձևանամ և կասեմ, որ այլևս առաջ գնալ չեմ կարող և կմնամ այստեղ մինչև լույսը բացվի: Այդպես էլ վարվեցին: Մյուսները հայտարարեցին, թե նրա մոտ կմնան: Բոլորն այդտեղ անցկացրին գիշերը և եղբորը նեղութիւնն չպատճառեցին: Ահա իսկական օրինակ այն բանի, թե մեզնից յուրաքանչյուրն ինչպես պետք է թանկ գնահատի մերձավորի հանգստութիւնը:

### ՊԱՏԿԱՌԱՆՔ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Սուրբ Պաիսի Մեծն այնքան էր փառաբանված առաքիլնությամբ և շնորհներով, որ ժամանակակիցները նրան այլ կերպ չէին կոչում, քան «աստվածային» և մեծ երջանկութիւնն էին համարում նրանից սուրբ դասեր առնելն ու օրհնութիւնն ստանալը:

Երանելի Պիմենը, որ այն ժամանակ դեռևս յոթ տարեկան էր, նույնպես անչափ ցանկանում էր տեսնել Պաիսին, բայց երկար ժամանակ չէր կարողանում իր սրտի ցանկութիւնն իրականացնել, քանզի նրա մասին մտածելով որպես հրեշտակի, չէր համարձակվում մտնել մոտը: Վերջապես նա սկսեց սուրբ Պողոսին՝ Պաիսի ընկերոջը խնդրել, որպեսզի իր հետ միասին մտնի Աստծո մարդու մոտ: Բայց ծերը նրան ասաց. «Դու դեռևս երեխա ես, քեզ ինչպե՞ս տանեմ այդպիսի մեծ մարդու մոտ, երբ նույնիսկ մենք՝ ծոմապահությամբ ծերացածներս, նրա մոտ ենք մտնում զգուշությամբ, միայն հայտնի ժամանակ, միայն հոգևոր օգուտի համար և ինչպես հարկն է մեր խիղճը քննելուց հետո: Հավատա զավակս, ես ամաչում եմ քեզ հետ սուրբ Պաիսի մոտ գնալ»: «Գոնե նրա խցի մոտ կանգնեմ, - ասաց պատանի Պիմենը, - դու մենակ մտիր նրա մոտ և հոգեշահ զրույց սկսիր: Ես երջանիկ կլինեմ, եթե նրա իմաստուն ուսուցումները լսեմ: Իսկ եթե դա էլ հնարավոր չէ, հանգիստ կլինեմ, եթե կպչեմ նրա խցին և համբուրեմ նրա ոտնահետքերը: Հայր իմ, ինձ գոնե այդ շնորհից մի զրկիր»:

Սուրբ Պողոսը, տեսնելով երեխայի նման ձգտումը, վերջապես համաձայնեց նրան իր հետ տանել: Հասնելով Պաիսի

խցին, նրան դրսում թողեց, իսկ ինքը ներս մտավ: Բայց մեծ անապատականը նրան դեռ չդիմավորած հարցրեց. «Ու՞ր է քո պատանի ուղեկիցը», - քանզի իր հոգևոր աչքերով հեռվից տեսել էր Պիմենին:

- Նա, վախենալով քեզ խանգարել, մնաց դրսում, - պատասխանեց Պողոսը:

Պաիսն անմիջապես ձայն տվեց պատանուն, ինքը ներս բերեց նրան և օրհնելով ասաց.

- Եվ մեզ՝ ծեր մարդկանց է Տերն ասում՝ չեք մտնի Երկնքի Արքայութիւնը, եթե չլինեք երեխաների նման: Հավատա ինձ, ով Քրիստոսով սիրելի եղբայր, - դառնալով Պողոսին շարունակեց նա, - այս երեխան շատ մարդկանց և ծերերի կփրկի, քանզի նրա հետ է Տիրոջ Աջը, - հետո ձեռքը Պիմենի գլխին դնելով երկրորդ անգամ օրհնեց նրան և փրկութիւն մասին երկարատև զրույցից հետո նրանց խաղաղությամբ արձակեց:

Երեխանե՛ր, այս անչափահաս Պիմենը, որ այդքան մեծ ձգտում ուներ Մեծ Պաիսի ուսուցումը լսելու, ինքը հետագայում անվանվեց Պիմեն Մեծ և քրիստոսասեր մարդիկ նույնպիսի անհամբերությամբ էին ձգտում տեսնել նրան: Միրասուն երեխաներ, եթե ցանկանում եք լինել ձեր ծնողների մխիթարութիւնը, հայրենիքի հույսը, Քրիստոսի հետևորդը, ապա ամենից շատ առիթ փնտրեք առաքիլի մարդկանց հետ զրուցելու:

### ԱՍՏԾՈ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻ ՈՒԺԸ

Բարեկացի մի պաշտոնյայի աղջիկ այնպես էր բռնվել պիղծ ոգու կողմից, որ ոչ մի ջանքով չէին կարողանում նրան դուրս քշել: Բարեբախտաբար մի անգամ նրա մոտ եկավ մի ծանոթ վանական և աղջկա տառապանքների մասին իմանալով՝ ասաց. «Պետք է փորձել վերջին միջոցը՝ օգնութիւն կանչել ինձ ծանոթ առաքիլնասեր անապատականների աղոթքները: Միայն թե այդ մասին եթե խնդրես նրանց, նրանք իրենց խոնարհութիւն պատճառով կհրաժարվեն այդպիսի փառավոր գործից: Ուրեմն այս կերպ կվարվենք. երբ նրանք կգան շուկա, ձևացրու, թե

իրբր ցանկանում ես նրանց ձեռքի աշխատանքը գնել և երբ կմտնեն քո տուն, խնդրիր նրանց, որ օրհնեն աղջկադ: Ես վստահ եմ, որ երբ նրանք ձեռք դնեն աղջկադ վրա, նա կառողջանա»:

Դրանից հետո հիվանդի հայրը և վանականը գնացին հրապարակ և տեսան ծերերից մեկի աշակերտին, որ զամբյուղ էր ծախում: Գնեցին և ըստ պայմանավորվածության վճարելու համար բերեցին տուն: Բայց հազիվ էր անապատականը շեմն անցել, երբ դիվահարը վեր թռավ տեղից և հարվածեց նրա երեսին: Վանականը, Աստծո պատվիրանի համաձայն, երկրորդ այտն էլ դեմ արեց: Հանկարծ պիղծ հոգին տանջանք զգաց և ձայնեց. «Օ, անդիմադրելի այս ուժը, Քրիստոսի պատվիրանը վճարում է ինձ»:

Հենց այդ ժամին աղջիկն առողջացավ: Բոլորը փառաբանեցին Աստծուն և համոզվեցին, որ խոնարհության պատվիրանը խոցում է դիվային հպարտությանը: Եթե որևէ արատավոր կիրք սկսի կրծել մեր սիրտը, տանջի միտքը, գինվենք Քրիստոս Փրկչի պատվիրաններով: Այնժամ անպայման հաղթող կլինենք:

### ԱՂՈԹՔ ՄԱՀՎԱՆ ԺԱՄԸ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սուրբ Եփրաքսիան, վերին հայտնությունը իմանալով, որ մոտեցել է իր մահվան ժամը, այնպես վախեցավ և թուլացավ, որ ընկավ գետնին, ասես՝ անշունչ: Հավատքի զավակներ, որ թաղեցիք Քրիստոսին, սուրբին մի մեղադրեք փոքրոգության մեջ, այլ իմացեք նման մեծ վշտի պատճառը:

Երբ Աստծո ճգնավորն ուշքի եկավ, արցունքով աղոթեց և ասաց հետևյալը. «Ինչո՞ւ է իմ Արքան ու Աստվածը այսքան զզվում ինձանից՝ որբիցս ու մեղավորիցս: Արդ ժամանակն է, երբ ես ավելի շատ պետք է աշխատեմ մերձավորներիս համար և հակառակվեմ հոգուս համար պատերազմող թշնամիներին, Դու ինձ մահ ես ուղարկում: Ողորմիր ինձ, Տեր, և իմ կյանքին մի տարի ավելացրու, որպեսզի կարողանամ զղջալ իմ մեղքերի համար և սովորեմ այն ծառայությունը, որի համար Քո նա-

խախնամությունն ինձ կանչեց այս փոքր, բայց Քեզնից սիրված հասարակություն: Ախ, ես բարի գործեր չունեմ և չեմ կարող ստանալ այն պարգևները, որ պատրաստված են արդարների համար»:

Ահա թե ինչու էր մահից սարսափում սուրբ Եփրաքսիան, որ նշանավոր ծնողների դուստր էր և կայսր Թեոդոս Մեծի սանուհին: Նա տաս տարեկան էր, երբ ընդունեց հրեշտակային կերպարանք և ավելի քան քսան տարի սուրբ մենաստանում առաջադիմեց աղոթքների, ծոմապահության և ուսումնառության մեջ: Քրիստոսյանե՛ր, մենք չենք իմանում, թե երբ կգա մահվան ժամը, բայց յուրաքանչյուրին է հայտնի, որ այն մեր կողքով չի անցնելու: Մենք չենք ցանկանում այդ ժամը տեսնել: Ինչո՞ւ: Դեռևս մեր ծնողները ծերության օրոք մեզանից մխիթարություն չե՞ն ստացել, դեռևս երեսնաներն Աստծո երկյուղով չե՞ն դաստիարակվել, դեռևս մի քանի աղքատներ Փրկչի կողմից իրենց տրված իրավունքով մեզնից օգնություն չե՞ն ստացել, դեռևս հայրենիքը մեզնից օգուտ չի՞ ստացել: Օ, դրանց հետ՝ որպես կողմնակի գործեր, մենք գործ չունենք, իսկ ինչ վերաբերում է մեղքերին, դրանք մենք նույնիսկ հիշել չենք ցանկանում: Մենք չենք ցանկանում մեռնել միայն այն բանի համար, որ ուզում ենք ապրել, եւ ապրել ենք ուզում նրա համար, որպեսզի մեր ճաշակը բթացնենք՝ աշխարհից անհաշիվ բավականություններ ստանալով և Տիրոջ զայրույթի առատագույն հունձքը մեր գլխին հավաքելով: Բայց եթե մեզնից յուրաքանչյուրը ցանկանար իր մահը հետաձգել արդար Եփրաքսիայի մտածումն ունենալով, այդժամ և ընտանիքները, և հասարակական խավերը, և պատմությունները կլինեին հարյուր անգամ ավելի բարեկեցիկ:

### ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՐՁԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ

Մի մենաստանում եղբայրներից մեկը մեղք էր գործել: Վանահայրն այդ մասին հայտնեց մերձակայքում ապրող, առաքինությունը աչքի ընկած մի անապատականի, որն էլ նրան հե-

ուսցման դատապարտեց: Դժբախտը մենաստանից դուրս եկավ և քարանձավում նստելով՝ դառնորեն լաց եղավ: Մի խումբ եղբայրներ պատահաբար գնում էին սուրբ Պիմենի մոտ և հեկեկացող վանականին տեսնելով՝ խղճացին և ուղեցին տանել մեծ ծերի մոտ, բայց մեղավորն սկսեց ավելի սաստիկ լաց լինել և նրանց ասաց.

- Ես պետք է մեռնեմ այստեղ:

Եղբայրներն այս մասին տեղեկացրին սուրբ Պիմենին, որը նրանց կարեկցանքն օրհնելով, նրանց ուղարկեց, որպեսզի իր անունից վշտից ընկճված եղբորը կանչեն իր մոտ: Երբ եղբայրը եկավ, սուրբ Պիմենը գրկեց նրան և նրա հետ մեղմուլթյամբ վերաբերվելով խնդրեց հաց ուտել: Հետո իր աշակերտներից մեկին ուղարկեց անապատականի մոտ, ասելով.

- Արդեն մի քանի տարի է, որ լսում եմ քո մեծ գործերի մասին, ուզում եմ հանդիպել քեզ, բայց երևում է, որ մեր երկուսի ծուլությունն է պատճառը, որ մենք իրար չենք հանդիպել: Այժմ հենց ինքը՝ Աստված է ուղարկել հարմար առիթը: Ուրեմն նեղություն քաշիր, արի և կտեսնվենք:

Թեպետև անապատականը երբևէ իր խցից դուրս չէր եկել, բայց մտածելով, որ Պիմենը իր հետևից մարդ չէր ուղարկի, եթե ինքն՝ Աստված չներշնչեր այդ, անմիջապես ճամփա ընկավ: Երբ նրանք ուրախացած ողջագուրվեցին և նստեցին, աբբա Պիմենն ասաց.

- Մի տեղ ապրում էին երկու հոգի և պատահեց այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը մի մեռել ունեք, բայց նրանցից մեկն, իր մեռելը թողնելով, գնաց օտարի մահը ողբալու:

Անապատականն ապշեց՝ սուրբ Պիմենի առակը լսելով, և իր մեղք գործած ճգնավորի հանդեպ արածը հիշելով՝ ասաց.

- Պիմենը միշտ բարձր ու բարձր է, իսկ ես միշտ ցածր ու ցածր եմ:

## ԲՈԼՈՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԹՈԼԼՈԼԹՅՈՒՆ

Մի քրիստոնյա սուրբ Պիմենին բողոքեց, որ չար մտքերը խռովում են և մեծ վտանգի ենթարկում հոգուն, որ ցանկանում է փրկվել: Ծերը բռնեց նրա ձեռքը և դուրս հանելով կարգադրեց շորը բացելով պահել ծոցի մեջ լցված քամին:

- Ես դա չեմ կարող անել, - ասաց քրիստոնյան:

- Եթե դա անել չես կարող, - առարկեց սուրբ Պիմենը, - ապա չես կարող թույլ չտալ, որ մտքերը քեզ խռովեն, թեպետ մեր պարտքն է նրանց հակառակվել:

## ՍՊԱՆԵԼ ՄԱՐՄԻՆԸ

Մի անգամ աբբա Իսահակը տեսնելով, որ սուրբ Պիմենն իր ոտքերին ջուր է լցնում, ասաց.

- Ուրիշներն իրենց նկատմամբ խիստ են և ճնշում են իրենց մարմինը:

- Մեզ սովորեցրել են ոչ թե մարմինն սպանել, այլ՝ կրքերը, - պատասխանեց սուրբ ծերը:

## ՀՐԱՄԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ՕՐԻՆԱԿ

Մի ծեր սուրբ Պիմենին հարցրեց, թե ինքը պե՞տք է հրամայի իր հետ ապրող եղբայրներին:

- Ոչ, - պատասխանեց Պիմենը, - ավելի լավ է ինքդ անես: Եթե նրանք ցանկանան քեզ հետ ապրել, իրենք կտեսնեն, թե իրենց ինչ է պետք անել:

- Բայց նրանք իրենք են ցանկանում, որ ես որպես ավագ կարգադրեմ իրենց, - առարկեց ծերը:

- Խորհուրդ չեմ տալիս, - ասաց Պիմենը, - նրանց համար օրինակ եղիր, ոչ թե օրենսդիր: Այդ ժամանակ ամեն ինչ կկատարվի ճշգրտորեն և որքան էլ աշխատանքը մեծ լինի, նույնիսկ տրտուկ չի ստվեր չի լինի:

ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԲ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ  
ԴԵՄ ԲՈՂՈՒԲՈՒՄ ԵՆ ՈՒՐԻՇՆԵՐԸ

Միզվանոս անունով մի ծեր Մարկոս անունով մի աշակերտ ունեւր, որը վարպետ էր ձեռագիր գրքեր օրինակելու մեջ, ինչպէս նաև իր խոնարհուած իր համար սիրված էր իր ուսուցչից: Մյուս տասներկու աշակերտները դրան նայում էին մեծ դժգոհութեամբ և վերջապէս ամենուր սկսեցին դժգոհել, թե Միզվանոսը կողմնապահ է: Անապատականներից մի քանիսը հավատացին և մի անգամ նրա մոտ գալով սկսեցին նրան մեղադրել Մարկոսի հետ չափազանց շատ կապված լինելու և մյուսների հանդէպ սառնութեան համար: Ծերը լսեց նրանց, դուրս եկավ և, հերթով խցերի դռներին մոտենալով, թակեց և անունները տալով ձայն տվեց. «Այսինչ եղբայր, դուրս արի, քեզ հետ գործ ունեն»: Բայց նրանցից ոչ մեկը դուրս չեկավ, ոչ ոք չարձագանքեց Միզվանոսի ձայնին: Երբ նա հասավ Մարկոսի խցին և դուռը թակելով ասաց. «Մարկոս», - նա անմիջապէս դուրս թռավ և ծերը նրան հանձնարարութիւն տվեց:

Այդժամ Միզվանոսն ասաց եղբայրներին. «Ինքներդ եք տեսնում, թե մյուս տասներկու աշակերտներն ինչպիսին են: Աստված գիտե, կամ նրանք տանն են և ինձ լսել չեն կամենում, կամ գնացել են՝ ուր խելքներին փչել է»:

Հետո նրանց հետ մտավ Մարկոսի խուցը և նրա տետրերին նայելով տեսավ, որ նա ուսուցչի ձայնը լսելով նույնիսկ չէր ցանկացել ավարտել “ք” տառը և գրիչը վայր դնելով՝ վազել էր նրա մոտ: Այս տեսնելով՝ զարմացած ծերերն ասացին. «Աբբա, Մարկոսին ավելի շատ սիրիր: Աստված ինքն, անկասկած, սիրում է նրան»:

ԱՐԾԱԹԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՁԸ

Մի ծեր, որ աստվածավախ էր և խստակրոն, դժբախտաբար տրվել էր արծաթասիրութեան ոգուն: Նա շուկայի մոտ էր հաստատվել այն պատրվակով, որ իբր ամեն օր այդտեղ

հավաքվող ժողովուրդը մոտակայքում ուսուցիչ և հոգևոր հայր ունենա, բայց իրականում նրա համար էր հաստատվել, որ հաճախորդները, շուկայից վերադառնալով՝ դատարկ ձեռքով չգան իր մոտ:

Սուրբ Անդրեասը՝ Քրիստոսի խենթը, մի անգամ արծաթասերի կողքով անցնելիս Աստծո հայտնութեամբ տեսավ, թե ինչպէս սարսափելի օձը փաթաթվել է նրա վզին: Պայծառատեսը կանգնեց և սկսեց զարմացած նրան նայել, իսկ վանականը, կարծելով, թե նա աղքատներից մեկն է, որ ողորմութեան է սպասում, ասաց. «Աստված կտա»: Սուրբ Անդրեասը մի քանի քայլ հեռացավ և նրա վերևում, օդի մեջ տեսավ հետևյալ գիրը. «Արծաթասիրութեան օձը ամեն անօրինութեան արմատն է»: Յով զգալով եղբոր կործանման համար՝ Անդրեասն ուզում էր հեռանալ, երբ տեսավ իրար հետ վիճող երկու պատանու: Մեկը սև էր, պղտոր և կատաղի աչքերով, իսկ մյուսը երկնային լույսի պէս գեղեցիկ էր: Առաջինը պնդում էր, թե ծերն իրեն է պատկանում, քանզի ոչ թե Աստծուն, այլ իրեն է ծառայում: Իսկ մյուսն ասում էր, թե ծերը խոնարհ է ու հեզ, հարատեւ է ծոմապահութեան ու աղոթքի մեջ և Աստծո ծառան է: Այդպէս վիճում էին նրանք, երբ երկնքից մի ձայն ասաց լուսազգեստ պատանուն. «Դու ծերից մաս չունես: Թող նրան»: Եվ հրեշտակը վայրկենապէս հեռացավ: Զարմացած Անդրեասը խղճահարութիւնից լաց եղավ և զնաց իր ճանապարհով:

Բայց մարդկանց աչքին՝ խենթ, իսկ Աստծո աչքին սուրբ երեւցող Անդրեասի սիրտը հանգիստ լինել չէր կարող: Յանկանալով դժբախտ ծերին ճշմարտութիւնն ասել՝ նա մի որոշ ժամանակ անց դարձյալ անցավ շուկայի մոտով և ծերին տեսնելով՝ բռնեց նրա թևից. «Աստծո ծառա, - սևեռուն նայելով ասաց նա, - առանց չարանալու լսիր ինձ՝ քո ծառային: Ախ, ես շատ եմ վշտանում քեզ համար և չեմ կարողանում առանց սարսափի մտածել, որ դու՝ մի ժամանակվա Աստծո բարեկամդ, հիմա դարձել ես թշնամու ծառան: Քո հոգին թևեր ունեւր՝ ինչպէս Սերովբեն. ինչո՞ւ դրանք կտրել տվեցիր անբարյացակամութեան ոգուն: Դու հրեշտակային կերպարանք ունեիր, ինչո՞ւ

ցանկացար դառնալ խավարակերպ, ինչո՞ւ բարեկամացար արծաթասիրուծյան օձի հետ և նրա մեղքը լցրեցիր քո ծոցը: Ինչո՞ւ ես գանձ կուտակում, մի՞թե այն հետդ տանելու ես գերեզման: Անհազ կերպով հոգևոր զավակներից արծաթադրամներ հավաքելով և նրանցով ուրախանալով՝ դու քո գլխին ես հավաքում նրանց բոլորի հանցանքները: Այդ բեռով ինչպե՞ս ես կանգնելու Քրիստոսի դատաստանի առաջ: Իմացիր, որ քո պահապան Հրեշտակը հեռացել է քեզնից և լալիս է քո կործանման համար, իսկ դու, ուր ցանկանում է, այնտեղ է տանում քեզ: Ես ճիշտ եմ ասում, լսիր ինձ և բաժանիր քո ունեցվածքն աղքատներին, այրիներին, որբերին ու օտարականներին, հակառակ դեպքում քեզ կկործանի չարը: Տեսնո՞ւմ ես սատանային»:

Այդ ժամանակ բացվեցին ծերի հոգևոր աչքերը: Սև, գազանակերպ մի հսկա կանգնել էր հեռվում և ատամներն էր կրճտացնում, բայց սուրբ Անդրեասից սարսափելով՝ չէր համարձակվում մոտենալ նրան: Ծերը դողաց. սարսափից կիսամեռ՝ հազիվ կարողացավ արտասանել Տիրոջ պատվիրաններով ապրելու խոստումը, երբ արևելքում կայծակը փայլատակեց, անմաքուր հոգին անհետացավ, իսկ Տիրոջ Հրեշտակը մոտեցավ վանականին:

- Ոչ ոքի մի պատմիր, թե ինչ եղավ, -ասաց սուրբ Անդրեասը նրա մոտից հեռանալուց առաջ, իսկ ես ամեն օր քեզ կհիշեմ գիշերվա ու ցերեկվա աղոթքներիս մեջ, որպեսզի Տերը քո ճանապարհն ուղղորդի դեպի բարին:

Եվ վանականն իր ոսկին բաժանեց ու սկսեց ապրել Աստծո պատվիրանների համաձայն: Աստծո ծառա Անդրեասը երազում հայտնվեց նրան և բավականությամբ ժպտալով դիմացի դաշտում կանաչ ծառ ցույց տվեց, որ պատած էր գեղեցիկ ծաղիկներով:

- Շնորհակալ եղիր Աստծուն, -ասաց նա, - որ քեզ փրկեց օձի ժանիքներից և Իր շնորհով ցողեց քո հոգին: Այս ծաղկած ծառը նրա պատկերն է: Աշխատիր, որ այս ծաղիկները քաղցր պտուղ տան»:

Ծերը, քնից զարթնելով, ավելի հաստատվեց բարի գործերի մեջ և մշտապես շնորհակալություն էր հայտնում թե՛ Աստծուն, թե՛ Նրա ծառա սուրբ Անդրեասին:

## ԵՐԿՆԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մի անգամ սուրբ Ամոնը գնաց Անտոն Մեծի մոտ և ճանապարհին մոլորվեց: Նստելով մի քարի՝ նա մի քիչ ննջեց, հետո արթնանալով սկսեց աղոթել Աստծուն, որ իր ձեռքերի գործն անտես չառնի և իրեն թույլ չտա կործանվել: Այդ ժամ ամպերի միջից մի ձեռք հայտնվեց, որ նրան ցույց էր տալիս ճանապարհը: Ձեռքը նրան ուղեկցեց այնքան ժամանակ, մինչև որ սուրբ Ամոնը տեսավ Անտոնի քարանձավը:

Քրիստոնյանե՛ր, ահա թե ինչ կարող է անել դժբախտության մեջ մաքուր սրտից Աստծուն առաքած աղոթքը: Բայց մի մոռացե՛ք, որ սուրբ Ամոնն այդ ժամանակ գնում էր հավատի, բարեպաշտության և բոլոր առաքինությունների մեծ ուսուցչի մոտ:

## ՓԱՌՔԸ ԵՎ ԱՆՓԱՌՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աբբա Աբրահամն աբբա Թեոդորոսին հարցրեց, թե ո՞րն է լավ եւ օգտակար՝ փառքի ձգտե՞լը, թե՞ անփառունակություն:

- Ես ավելի շատ փառք, քան անպատվություն եմ ցանկանում, - պատասխանեց ծերը, քանզի եթե ինչ որ բարի բան կատարեմ և փառքի արժանանամ, կարող եմ միայն ինքս ինձ մեղադրել, որ արժանի չեմ դրան: Իսկ անպատվությունն առաջանում է վատ գործերից: Ինչպե՞ս հանգստացնեմ իմ սիրտը, երբ մարդկանց համար՝ որպես գայթակղություն ու խոչընդոտ լինեմ: Եւ այդպես, ավելի լավ է փառքի հասնելը:

- Այդ դեպքում ինչու՞ բոլոր մեծ հայրերը ոչնչից այդքան չէին վախենում, որքան փառքից, - առարկեց Աբրահամը:

- Նրանք կեղծ փառքից էին վախենում, - պատասխանեց Թեոդորոսը, - կամ ավելի լավ է ասել՝ նրանք վախենում էին, որ իրենց սրտերը չվարակվեն փառասիրությանը: Փառքի, որ անպայման հետևում է բարի գործերին, և փառասիրության միջև, որն Աստծո բոլոր պատվիրանները փոխարինում է աշխարհի ունայնությամբ, մեծ տարբերություն կա: Բարիք գործիր միայն Աստծուն հաճելի լինելու համար, այն ժամ Աստված



ոչ միայն չի դատապարտի փառքը, որը մարդը ձեռք է բերել առանց դրան ձգտելու, այլև այս փառքին կգումարի նաև այն փառքը, որը Նա աշխարհի սկզբից պատրաստել է Իրեն սիրողներին համար:

### ՈՐԴՈՒ ՄԱՀԸ ՍԳԱՅՈՂ ՄՈՐ ՏԵՍԻԼՔԸ

Երբ սուրբ մարտիրոս Ուարը, ահավոր տանջանքից հետո իր հոգին տվեց Տիրոջ ձեռքը, նրա մարմինը որպես շների կեր շարտվեց քաղաքից դուրս: (Կուսապաշտները այդ կերպ ցանկանում էին անարգել քրիստոնյաներին): Այդ ժամանակ Կլեոպատրա անունով պաղեստինցի մի այրի իր մանկահասակ որդի Նովհաննեսի և հավատարիմ ծառաների հետ կեսգիշերին Ուարի սուրբ մասունքները իր տուն տարավ, իսկ հետո իր ամուսնու անվան տակ, որ դրանից քիչ առաջ էր մահացել, իշխանությունների թուլլատվությամբ, հայրենիք տեղափոխեց: Այնտեղ իր նախնիների գերեզմանոցում նա եկեղեցի կառուցեց նահատակի անունով և եկեղեցականների հետ, մեծաթիվ ժողովրդի ներկայությամբ, այնտեղ ամփոփեց հրաշագործ մասունքները:

Պատարագի եւ հոգեհանգստյան կարգի ավարտից հետո Կլեոպատրան հյուրասիրություն կազմակերպեց հոգևորականությունում ու ժողովրդի, աղքատների և պանդուխտների համար և թե ինքը, թե որդին սպասարկում էին սեղան նստածներին:

Բայց երեկոյան հանկարծ Նովհաննեսի առողջական վիճակն այնքան վատացավ, որ չէր կարողանում նույնիսկ մոր հարցերին պատասխանել: Ջերմությունը ժամ առ ժամ բարձրանում էր և կեսգիշերին երիտասարդ Նովհաննեսը մահացավ: Մայրը հուսահատություն մեջ վազեց սուրբ Ուարի եկեղեցին և ծունր իջնելով գերեզմանի մոտ, դառնորեն հեծեծաց. «Աստծո սիրելի, վերադարձրու ինձ իմ երեխային: Ո՞վ պիտի մահվանս ժամանակ աչքերս փակի: Ո՞վ դագաղ պիտի դնի մարմինս: Ախ, ավելի լավ էր, որ ես մեռնեի, քան տեսնեի որդուս մահը: Աստծո սիրելի, կամ խղճա ինձ, ինչպես որ մի ժամանակ Նդիսեն

խղճաց Սոմնացի այրուն և կամ հիմա իմ հոգին էլ առ: Չեմ կարող ապրել առանց սիրասուն Նովհաննեսի»:

Այսպես ողբալով ու հեծեծալով սուրբ Ուարի գերեզմանի մոտ, չափից դուրս մեծ վշտից և հոգնածությունից Կլեոպատրան քնեց: Հանկարծ նրան հայտնվեց սուրբ մարտիրոսը՝ Նովհաննեսի ձեռքից բռնած: Նրանք երկուսն էլ ձյան պես սպիտակ հագուստով էին, իսկ գլխներին թանկարժեք պսակներ կային և փայլում էին արևի նման: Ջարմացած Կլեոպատրան ընկավ ծնկներին, բայց Ուարը բարձրացրեց նրան: «Ո՞վ մարտիրոսներին սրտալի հարգանք մատուցող, - ասաց նա, - ես չեմ մոռացել քո կողմից իմ մարմնին ցույց տված բարեգործությունը թե եգիպտոսում, թե այստեղ: Միշտ լսում եմ քո աղոթքները և քեզ համար աղոթում եմ Աստծուն: Սկզբում ես Տիրոջն աղերսեցի իմ շուրջը թաղված քո նախնիների մեղքերը թողնել, հետո ցանկացա քեզ երախտահատույց լինել բոլորանվեր ու Տիրոջը խնդրեցի, որ քո որդուն էլ դասի սրբերի կարգը: Տե՛ս նրա փառքը. նա հիմա Տիրոջ գահի առջև կանգնողներից մեկն է: Ինչո՞ւ ես այդպես դառնորեն ողբում, թե՞ չես ցանկանում, որ Նովհաննեսը վայելի այն օրհնությունը, որ ոչ աչքն է տեսել, ոչ ականջը՝ լսել, ոչ էլ մարդու սիրտը երագել է: Եթե այդպես է, նրան հետ վերցրու»:

Այս բառի վրա պատանի Նովհաննեսը գրկեց Ուարին և նրա պարանոցը բաց չթողնելով ասաց. «Ո՞չ, մի՛ վերադարձրու ինձ մորս: Թեպետև ամբողջ սրտով սիրում եմ նրան, ինձ մի վերադարձրու խռովությունների ու անառակությունների աշխարհ: Ինձ միշտ քեզ մոտ պահիր: Իսկ դու, սիրասուն ծնող, - Կլեոպատրային դիմելով շարունակեց նա, - ինչո՞ւ ես լաց լինում ինձ համար: Եթե ինձ սիրում ես, ուրախացիր իմ երջանկությունս: Ես բոլոր սրբերի ու Երկնավոր Թագավորի զինվորների հետ եմ բնակվում»:

Մինչ այդ համրացած Կլեոպատրան բացականչեց. «Նրանելի հոգիներ, երկնքի բնակիչներ, և ինձ վերցրեք ձեզ հետ, և ինձ հրեշտակային երանություն մասնակից դարձրեք»:

Բայց սուրբ Ուարը նրան պատասխանեց. «Այժմ խաղաղությամբ գնա և քո աստվածահաճո գործերը կատարիր, ապրիր

առաջվա պես: Կգա ժամանակ, երբ Տերը քո հոգին կտանի Երկինք. այնտեղ քեզ համար էլ այդպիսի մի տեղ է պատրաստված»:

Մրանից հետո սուրբ Ուարն ու սուրբ Հովհաննեսը աներևույթ եղան, իսկ Կրեոպատրան արթնացավ: Իրեն անչափ երջանիկ զգալով՝ նա սրբեց արցունքները և իր տեսիլքը եպիսկոպոսին պատմելով՝ Հովհաննեսին հանդիսավոր կերպով թաղեց Ուարի մոտ: Նա դիակառքի հետևից գնում էր ոչ թե ինչպես մեռածի հետևից կգնան, այլ ասես փեսային ուղեկցելիս լինել ամուսնական առաջատար: Հետո իր ունեցվածքը բաժանեց սուրբ մենաստաններին ու աղքատներին, ու ինքն էլ, հեռանալով աշխարհից, մի խուց սարքեց սուրբ Ուարի եկեղեցու մոտ և աղոթքներով ու ծոմապահոթյամբ գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն մինչև իր վախճանը:

Հաճախ երազում կամ աղոթական հափշտակություն մեջ հայտնվում էր նրան Ուարը Երկնային փառքով, իր որդուն ձեռքերի վրա վերցրած: Ծնողներ, եթե ձեզնից որևէ մեկը որդուն կամ դստերը կորցնելու դժբախտություն է ունեցել, լացեք ձեր թանկ կորուստը: Միայն քարսիրտ մարդը կարող է ձեզ մեղադրել դրա համար, բայց մի տրտմեք, ինչպես ուրիշները, ովքեր հույս չունեն: Լսեցեք՝ ինչ է ասում Տերը. «Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև Երկնքի արքայությունը այդպիսիներինն է» /Մատթ. 19:14/:

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՂՈՐՄԱԾԸ

Սուրբ Հովհաննեսը, որ «ողորմած» մականունն էր ստացել, տասնհինգ տարեկան էր, երբ հետևյալ երազը տեսավ: Մի գեղեցիկ, հարուստ հագնված, գլխին ծաղկեպսակ դրած աղջիկ մոտեցավ նրա մահճին և ձեռքից բռնելով արթնացրեց նրան: Նրան արդեն իսկապես տեսնելով՝ զարմացած Հովհաննեսը հարցրեց, թե ո՞վ է նա և ինչպե՞ս համարձակվեց մտնել քնած պատանու մոտ:

- Ես Արքայի ավագ դուստրն եմ եւ ամենասիրալիրը Նրա դուստրերից, - ուրախ դեմքով և մեղմ ժպիտով պատասխանեց աղջիկը:

Իմանալով սա՛ Հովհաննեսը խոնարհություն արեց նրան, իսկ նա շարունակեց.

- Եթե իմ ընկերը լինես, ես թագավորի մոտ կմիջնորդեմ քեզ համար և քեզ կներկայացնեմ Նրա աթոռի առջև, քանզի ոչ ոք Նրա առաջ այնպիսի սեր չունի՝ ինչպես ես: Ինձ համար Նա երկնքից երկիր իջավ և մարդկային մարմին հագավ: Այս ասելով աղջիկն աներևույթ դարձավ:

Այդպիսի հրաշալի տեսիլքից զարմանալով և ինքն իր մեջ խորհելով՝ Հովհաննեսն ասաց. «Կույսի տեսքով իսկական ողորմածությունը հայտնվեց ինձ: Այդ մասին վկայում է նրա գլխի ձիթենու պսակը: Այդ մասին են վկայում և նրա խոսքերը, որ նա է Աստծուն բերել երկիր և ստիպել մարմնանալ: Եվ այսպես, պիտի ողորմած լինել մերձավորի նկատմամբ, հարկավոր է ողորմածություն անել, այլապես և դու Աստծուց ողորմություն չես ստանա»:

Այսպես մտածելով՝ սուրբ Հովհաննեսը լուսադեմին վեր կացավ և եկեղեցի գնաց: Ծանապարհին տեսնելով աղքատ ու բութիկ մեկին, որ դողդողում էր ցրտից՝ Հովհաննեսն անմիջապես հանեց վերնագգեստը և տվեց նրան՝ պատանեկան խելքով մտածելով. «Հիմա կիմանամ աստվածային տեսիլք էր անցած գիշեր տեսածս, թե՞ երևակայությունս արդյունքն էր»:

Բայց նախքան եկեղեցի հասնելը նրան սպիտակ շորերով մի անծանոթ հանդիպեց և մի քսակ տվեց ասելով. «Իմ ընկեր, այս հարյուր ոսկին վերցրու քո կարիքների համար»:

Հովհաննեսն սկզբում ընդունեց ուրախությամբ, բայց նույն պահին էլ զղջաց, որ առանց աղքատ լինելու վերցրեց այդ: Ուզեց փողը վերադարձնել, բայց մարդը չբացել էր և որքան էլ որ փնտրեց այդ պատահական բարեգործին, չկարողացավ գտնել: Այդժամ իմացավ, որ իր տեսիլքն աստվածային հայտնություն էր և ինքն իրեն ասաց. «Իմ հոգի, դադարիր փորձել քո Տեր Աստծուն»:

Այդ ժամանակից սուրբ Հովհաննեսը այնքան ողորմած

դարձավ մերձավորի հանդեպ, որ չէր կարողանում հանգիստ հաց ուտել, առանց որևէ մեկին ողորմություն տալու: Երբ նա նշանակվեց Ալեքսանդրիայի եկեղեցու պատրիարք, իր մոտ կանչելով վանքի տնտեսներին՝ հանձնարարեց շրջել քաղաքով մեկ և անուն առ անուն գրել, ինչպես ինքն էր ասում «Իր տերերի անունները»: Եվ երբ նրան հարցրին, թե ովքեր են իր տերերը, նա պատասխանեց. «Նրանք, ում որ դուք աղքատ ու մերկ եք կոչում, իսկապես իմ տերերն են, քանզի նրանք իսկական տերերն են այն ամենի, ինչ երկնավոր Տերը նվիրել է ինձ և ինչի վրա լիազորել է ինձ: Իսկ ես միայն պահապան եմ»:

Նրա կամքն անմիջապես կատարվեց և Հովհաննեսի սրտին մոտիկ մարդկանց թիվը կազմեց յոթ հազար հինգ հարյուր հոգի, որոնց նա եկեղեցու ունեցվածքից ամենօրյա սնունդ կարգեց:

Բայց քանի որ ծառայողները բոլորի մասին չէին զեկուցել, Հովհաննեսն իր համար օրենք դարձրեց ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրերին առավոտից իրիկուն առաքինի եւ խելացի մարդկանցից մեկի հետ նստել եկեղեցու դռների մոտ, որպեսզի իր հետ գործ ունեցող բոլոր մարդիկ կարողանան անարգել մոտենալ իրեն:

Այստեղ Քրիստոսի եպիսկոպոսը լսում էր բոլորին, օգնում, լուծում էր վեճերն ու կռիվները, փոխադարձ խղճի դատարանով վճռում էր հարցերը, իրենց կոչման պարտականություններն էր սովորեցնում իր մոտ բերված հասարակական կարգը թեթեւակի խախտած մարդկանց, հաշտեցնում էր ամուսիններին, եղբայրներին և ծնողներին ու երեխաներին: Չքավորներին փող էր տալիս, հագուստ և այլ անհրաժեշտ բաներ: Երբ նշանավոր մարդկանցից մեկը զարմանում էր, թե ինչպես կարելի է այդքան համբերություն ունենալ, Հովհաննեսը նրան պատասխանում էր. «Ես միշտ իմ Տեր Հիսուս Քրիստոսի մոտ մուտք ունեմ, աղոթքներով զրուցում եմ նրա հետ և նրանից խնդրում եմ այն ամենը, ինչ ուզում եմ: Ինչպե՞ս կարող եմ իմ մերձավորին թույլ չտալ, որ ինձ մոտենա: Ինչպե՞ս թույլ չտամ, որ ինձ հայտնեն իրենց վիրավորանքներն ու կարիքները և խնդրեն ինձնից՝ ինչ որ ցանկանում են: Պետք է վախենալ Տիրոջ դատաստանից, որովհետև ինչ դատաստանով որ

դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար/Մատթ. 7:2/»:

Մի անգամ, երբ իր մոտ էր Սոֆրոնիոս Իմաստունը, որը հետագայում դարձավ Երուսաղեմի պատրիարք, այնպես եղավ, որ ամբողջ օրը եկեղեցում նստած Հովհաննեսին ոչ ոք չմոտեցավ, ոչ ոք չհայտնեց իր կարիքները: Հովհաննեսն արցունքներով, վշտահար տուն վերադարձավ. «Այսօր խոնարհ Հովհաննեսն իր հոգու համար ոչինչ չարեց, այսօր իր ոչ մի մեղքի համար ոչ մի մաքրագործող գոհ չմատուցեց Տիրոջը»:

Այս լսելով, սուրբ Սոֆրոնիոսը նրան պատասխանեց. «Տեր, այս ժամին դու պետք է ուրախանաս, քանզի քո զավակներն ամեն ինչից գոհ են և ապրում են խաղաղ, ինչպես Աստծո հրեշտակները»:

Միայն այս իմաստուն դիտողությունից հետո սուրբ Հովհաննեսը հանգստացավ:

#### ՊԱՏԻԺ ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մի անգամ, երբ որ Քրիստոսի սուրբ Գրիգոր Նորկեսարացին (Յրդ դար) վերադառնում էր Կոմանից (նա այնտեղ էր գտնվում ընտրվելու և եպիսկոպոս ձեռնադրվելու համար), երեք հրեաներ ուզեցին ծաղրել նրան: Այն ճանապարհի վրա, որտեղով անցնելու էր Աստծո մարդը, պառկեցրին իրենց ընկերներից մեկին, իբրև թե մեռած է, որպեսզի նրանից մի բան պոկեն, իբրև թե մեռածին թաղելու համար:

Սուրբ Գրիգորը հանեց իր վերնագգեստը, ծածկեց պառկածին, նաև խնդրողներին որոշ գումար տվեց ու գնաց իր ճանապարհով: Հրեաները սկսեցին ծիծաղել Աստծո հրաշագործի վրա. «Եթե նրա վրա լիներ Աստծո Հոգին, - ասացին նրանք, - ապա կիմանար, որ պառկածը մեռած մարդ չէ»:

Հետո իրենց ընկերոջը ձայն տվեցին, բայց նա վեր չկացավ: Մտածելով, որ իրենց ուղեկիցը քնել է, սկսեցին ցնցել նրան, բայց նա չպատասխանեց, քանզի քնել էր հավերժական քնով: Աստված այսպես վրեժխնդիր եղավ նրանցից՝ սրբի վրա ծի-

ծաղեղու համար և նրանց ծիծաղը փոխեց լացի:

Սրբապիղծները, որ մի ընդհանուր առաջ մասին չէին մտածում, հիմա ստիպված էին մտածել իրենց ընկերոջը թաղելու մասին:

### ՍՈՒՐԲ ՄԱՐՏԻՐՈՍԸ

Սուրբ մարտիրոս Բաղրամը, խոր ծերության հասակում դատի տրվեց եւ բազում տանջանքներ կրեց Քրիստոսի անունը խոստովանելու համար: Վերջապես անմաքուրները կուռքերին պաշտել ստիպելու նպատակով նրան բերեցին Ապոլլոնի տաճարը և հրամայեցին ձեռքը պարզել բարկ զոհարանի վրա և ափի մեջ դրեցին վառած ածուխներ՝ կնդրուկի եւ զմուռսի հետ՝ հույս ունենալով, որ նա ածուխի տաքությանը չի դիմանա և այս զոհաբերության ընծան թափ կտա զոհարանի մեջ: Եթե նա չդիմանար և դա աներ, նրանք մտադրվել էին ծիծաղել և ասել. «Դու արդեն զոհ մատուցեցիր մեր աստվածներին»:

Բայց չարագործները չկարողացան հաղթել մարտիրոսի հաստատակամությանը: Ծերը մետաղից էլ ամուր ձեռքի մեջ պահեց վառվող ածուխները և տեղից չչարժվեց այնքան ժամանակ, մինչև այրվեցին մատները և ածուխների հետ ընկան կրակարանի մեջ: Նա միայն ցածր ձայնով ասում էր. «Օրհնյալ է Տեր Աստվածն իմ, որ ձեռքս վարժեցրեց պատերազմի և մատներս՝ ճակատամարտի /Սաղմ. 143:1/»:

Նման քաջություն և անպարտելիություն հանդես բերեց արիասիրտ տառապյալ Քրիստոսի զինվոր Բաղրամը:

Ինչպես ասում է սուրբ Բարսեղ Մեծը, իր աջը պահելով Տիրոջ զոհասեղանի փոխարեն՝ նա իրեն ողջակեզ մատուցեց Տիրոջը և Նրա ձեռքերի մեջ ավանդեց իր սուրբ հոգին:

### ԿՅԱՆՔ՝ ԸՍՏ ԿԱՆՈՆՆԵՐԻ

Ծոմապահների մեջ ամենամեծը՝ Դիոսկորոսը, սովորություն ուներ ամեն տարի իր համար մի ինչ-որ դժվար, ճգնավորին

կատարելագործող սխրանք նշանակել: Օրինակ, նա երգվեց Աստծուն. «Ես մի ամբողջ տարի չեմ երևա հանրակացարանում, որպեսզի անարգել զբաղվեմ Աստծո մասին մտածելով: Ես իմ շուրթերին պարտավորեցնում եմ ամբողջ տարին լուել: Ես ամբողջ տարին չեմ ճաշակի մրգեր ու ձիթայուղ և այլն»:

Եվ երբեք չէր խախտում իր երդումը: Այսպես սուրբն ապրում էր իր ողջ կյանքում: Կատարում էր մի սխրանք, անցնում մյուսին:

Քրիստոնյանե՛ր, սուրբ Դիոսկորոսի կյանքը, անկասկած, զարդարված էր բազում գեղեցիկ առաքինություններով, քանզի նա ընտրել էր Քրիստոսի կատարյալ աշակերտ դառնալու լավագույն միջոցը:

Հակառակ դրան, մենք եթե բարիք ենք գործում, ապա մեծամասամբ պատահականորեն, միայն այն ժամանակ, երբ բարեպատեհ քամի է փչում: Արդյո՞ք այն կարող է հաստատուն լինել: Իսկ ինչ վերաբերում է մեր կրքերին հագուրդ տալուն, ապա մենք ոչ թե մեկ, այլ երբեմն տասը տարի առաջ հոգում ենք դրանք բավարարելու համար:

### ՍՈՒՐԲԵՐԻ ԱՐՑՈՒՆՔԸ

Մի անգամ սուրբ Դիոսկորոսը խցում նստած լաց էր լինում: Տեսնելով այս՝ աշակերտը հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես լալիս»: «Իմ մեղքերն եմ լալիս», - պատասխանեց Դիոսկորոսը: «Դու ոչ մի մեղք չունես», - առարկեց աշակերտը: «Ախ, զավակս, - ասաց ծերը, - եթե ես, դժբախտաբար, հասնեի նրան, որ կարողանայի տեսնել իմ մեղքերը, ապա ինձ երեք-չորս օգնականը քիչ կլինեիր, որ դրանց համար արժանավորապես ողբայի»:

Որքան ճիշտ են սուրբ ծերի խոսքերը: Մեր մեղքերը նման են օձերի, որոնք հազվադեպ ճամփաբաժաններին են երևում, այլ գրեթե միշտ թաքնվում են կանաչ խոտերի և բուրավետ ծաղիկների տակ: Դրա համար էլ այս աշխարհում պանդուխտ մարդը պետք է առավել զգույշ լինի:

Սուրբ Պաֆնուտիոսը՝ որպես կատարյալ ծոմապահ, գրեթե երբեք գինի չէր խմում: Բայց մի ճանապարհորդության ժամանակ նա հանդիպեց մի ավազակախմբի, որի բոլոր անդամները գինի էին խմում: Ավազակապետը գիտեր սուրբ Պաֆնուտիոսին և գիտեր նրա ծոմապահության մասին, բայց ուզում էր նրա վրա ծիծաղել, դրա համար էլ նրան մի բաժակ գինի բերեց և սուրբ թափահարելով ասաց. «Կամ խմիր, կամ կմեռնես»:

Սուրբ ծերը մահից չէր վախենում, բայց ցանկանալով փրկել Աստծո մեռած ոչխարին, ենթարկվեց և խմեց: Այն ժամանակ ավազակը խոնարհվեց նրան և ասաց. «Ներիր ինձ, Աստծո ծառա, ես դաժանորեն վիրավորեցի քեզ»: «Երգվում եմ Աստծով, - ասաց Պաֆնուտիոսը, - որ Նա այս բաժակով քեզ վրա է տարածում Իր ողորմածությունն այս և ապագա դարերում»:

«Իսկ ես, -բացականչեց ավազակը, - երգվում եմ Աստծով, որ այս պահից իսկ սկսած ոչ մեկի նկատմամբ չարիք չեմ գործի»: Եվ նա կատարեց իր խոստումը: Այսպիսով սուրբ ծերը փրկության ճանապարհի վրա դրեց ողջ ավազակախմբին:

ՏԵՍԱՆԵԼԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ

Սուրբ Սպիրիդոնը առաջին տիեզերական ժողովում արիտասականներին սուրբ Երրորդության միությունն ապացուցելու համար վերցրեց աղյուսն ու սեղմեց: Վայրկենապես նրանից բոց բարձրացավ դեպի երկինք, ջուրը քամվեց ներքև, իսկ կավը մնաց սուրբի ձեռքերում:

- Երեքն են տարրերը, բայց աղյուսը մեկն է, - ասաց սուրբ Սպիրիդոնը: - Այդպես էլ Ամենասուրբ Երրորդությունը երեք դեմք ունի, բայց մի Աստված է:

Սուրբ Սպիրիդոն Տրիմիֆացու արքեպիսկոպոսության տարիներին մի անգամ Կիպրոս կղզում սաստիկ սով սկսվեց: Բոլոր աղքատները սուրբ Եպիսկոպոսին էին դիմում հաց կամ փող ստանալու հույսով, կամ էլ որպեսզի նա բարեխոսի հարուստների մոտ: Ուրիշների հետ նրա մոտ գնաց նաև վաղուց ծանոթ մի հողագործ, խնդրեց ինչ-որ բան տալ հաց գնելու համար և դառնորեն բողոքեց անգուլթ հարուստից, որ բոլոր տեղերի հացը իր ձեռքն էր վերցրել և վաճառում էր միայն ոսկով ու բավական բարձր գնով:

Սրբազանը հանգստացրեց ու հույս տվեց հողագործին, ուղարկեց տուն, իսկ հաջորդ օրն ինքն այցելեց նրան բերելով ոսկու մի մեծ ձուլակտոր:

- Տար սա, հացի ընչաքաղց վաճառականին տուր՝ որպես գրավ, ու հաց վերցրու՝ որքան հարկավոր է, -ասաց նա, - իսկ երբ Տերն առատ հունձ կտա, ետ կգնես այս ձուլակտորը: Հողագործը զարմացավ, թե անարժաթ եպիսկոպոսը որտեղից է վերցրել այսքան ոսկի և նրա ասածի պես վարվելով, ոչ միայն կուշտ ու գոհ էր ինքը, այլև օգնում էր ուրիշներին: Ժլատ հարուստն այնքան առատաձեռն էր նրա նկատմամբ, որ հաճախ ինքն էր հարցնում, թե արդյոք հացահատիկ պետք չէ՞:

Վերջապես սովն անցավ, առատ և օրհնյալ բերքը հանգստացրեց տագնապած ժողովրդին և հողագործը, ետ գնելով ոսկու ձուլակտորը, այն վերադարձրեց սուրբ Սպիրիդոնին: Հրաշագործը, վերցնելով ոսկին, հողագործին այգի տարավ և ձուլակտորը դնելով ցանկապատի մոտ՝ աչքերը երկինք հառեց ու ասաց.

- Տեր իմ Աստված, որ մի ժամանակ օձը ձեռնափայտ դարձրիր Մովսեսի համար, այս գանձը դարձյալ վերածիր այն գետնաքարչ կենդանուն, որից սարքեցիր այս: Ձուլակտորը վայրկենապես շարժվեց և վերածվեց օձի, որը սողալով մտավ և անհետացավ անցքի մեջ: Զարմացած հողագործը սարսափից դողաց և ընկնելով սուրբ ծերի ոտքերը իրեն անարժան համարեց

նման հրաշալի բարեգործություն: Իսկ սուրբ Սպիրիդոնը նրան բարձրացնելով ասաց. «Աստված համբերատար է ու բազումողորմ, ահա թե ինչու այս ոսկին օձի չվերածվեց այն ժամանակ, երբ հացի խստասիրտ վաճառականը ազահորեն վերցրեց այն և դրեց ծոցը: Բայց վստահ եղիր, որ այդ օձն առաջինը կսկսի կրծել անխիղճ հարուստի սիրտն այնտեղ, որտեղ հավերժական լացը և ատամների կրճատցը կլինի մեղավորների ուղեկիցը»: Եթե, դժբախտաբար, մեր մեջ ևս կան նման ընչաքաղցներ և վաշխառուներ, ապա թող այս պատմությունն ինչքան հնարավոր է ուշադիր կարդան:

### ԱՍՏՎԱԾԱԶԳՅԱՅԸ

Սուրբ մարտիրոս Իգնատիոսը, որ Աստվածազգյաց մականունն էր կրում, Անտիոքի եկեղեցու եպիսկոպոսն էր: Պատմում են, որ Բարձրյալ Աստծո այս արքեպիսկոպոսն այն օրհնված մանուկն է եղել, որին մանուկ ժամանակ իր ձեռքերի վրա է վերցրել Աշխարհի Փրկիչը և ուսուցանել է մարդկանց Երկնքի Արքայություն մասին ասելով. «Ծնարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Արդ ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, Երկնքի Արքայության մեջ նա՝ է մեծ» /Մատթ. 18:2, 3, 5, Մարկ. 9:36,37/:

Բայց այս սուրբ մանուկը պակաս Աստվածակիր չէր և այն պատճառով, որ ինքն էր սրտում և շուրթերին կրում Աստծուն, և Քրիստոսի ընտրած անոթ էր՝ սուրբ Պողոս Առաքյալի նման. մի բան, որ Աստծո հրաշագործ աջը ցույց տվեց և նրա տառապալից վախճանի ժամանակ: Քանզի Տրայանոսի հրամանով գազաններին նետված լինելով որպես կեր, իր շուրթերին անընդհատ Հիսուս Քրիստոսի անունն էր, և երբ նրան հարցրեցին, թե նա ինչու է առանց լուելու այս անունը կանչում, սուրբը պատասխանեց. «Այդ անունն իմ սրտում է գրված, այն ինչպե՞ս չխոստովանեմ իմ շուրթերով»:

Վերջապես երբ որ սուրբը հոշոտվեց գազանների կողմից,

իսկ նրա սիրտն Աստծո ողորմածությունը ողջ մնաց ոսկորների մեջ, այդժամ չարագործները նրա ասածը հիշելով այն կտրեցին և զարմանքով տեսան, որ սրտի մեջ ոսկյա տառերով գրված էր «Հիսուս Քրիստոս»:

Քրիստոսյանե՛ր, եթե մենք էլ սուրբ մարտիրոս Իգնատիոսի պես մեր սրտերում և շուրթերի վրա կրենք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունը, ապա երկրորդ գալստյան ժամանակ կարժանանանք Նրա հայրական գրկին:

### ՈՒՆԵՑՎԱԾՔՆ ԱՂՔԱՏԵՆԵՐԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ ողջ աշխարհը զարմացավ այն մեծ գոհաբերության համար, որ Նոյանի եպիսկոպոս Պավլինն արեց Քրիստոսի սիրուն՝ իր ողջ ունեցվածքը բաժանելով աղքատներին, ապա Աստծո մարդը մտածեց, թե ինքն իր Երկնավոր Հոր և ի Քրիստոս եղբայրների համար ոչինչ չի արել. «Ես նման եմ մարտի պատրաստվող մարտիկի, կամ մի մարդու, որ պատրաստվում է լողալով անցնել գետը, - սովորաբար ասում էր նա, - նրանք երկուսն էլ դեռևս ոչինչ չեն արել բացի իրենց վրայից հագուստները հանելուց»:

### ՆՇԱՆԱՎՈՐ ԾԵՐԻ ԱՆՉԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Եփրեմը, որ սիրում էր առանձնության մեջ խոկալ Աստծո մասին, չէր գնում ընդհանուր ճաշի. իր աշակերտը որոշված ժամին նրան սնունդ էր բերում: Մի անգամ խոհանոցից գալիս նա գցեց-ջարդեց ճաշի ամանը: Վախենալով ծերի գայրույթից՝ նա չգիտեր, թե ինչ աներ:

Բայց անչար Եփրեմն այդ գուշակելով, հեզությունը ասաց նրան. «Մի վշտանա, գավակս, եթե սնունդը չուզեց մեզ մոտ գալ, ուրեմն մենք գնանք նրա մոտ»:

Նա իսկապես գնաց, նստեց ջարդված ամանի մոտ և սկսեց հավաքել թափված կերակուրը:

Սուրբ Եփրեմը գիշերային աղոթքի ժամանակ տեսիլքով հրե սյուն տեսավ, որ երկրից երկինք էր բարձրանում և մի ձայն լսեց.

- Եփրեմ, Եփրեմ, այսպիսին է Բարսեղ Մեծը: Ծերը սրտանց ցանկացավ տեսնել մեծ եպիսկոպոսին և հաջորդ օրը Կապադովկիայից գնաց Կեսարիա: Բարսեղին գտավ եկեղեցում Աստծո խոսքը քարոզելիս և բարձր ձայնով ասաց. «Իրապես մեծ է Բարսեղը, իրավամբ հրե սյուն է Բարսեղը, իսկապես Սուրբ Հոգին է խոսում Բարսեղի շուրթերով»:

Ողջ ժողովուրդն ուշադրությամբ նայեց Եփրեմին, իսկ ոմանք խորամանկ ժպիտով ասացին. «Երևում է՝ այս օտարականն ուզում է շողոքորթել արքեպիսկոպոսին և նրանից խորամանկություններ լավ պաշտոն պոկել»:

Մարդիկ այդպես են. իրենց կրքերն ու արատները սովորաբար ուրիշին են վերագրում: Ժամերգության ավարտից հետո Բարսեղն իր մոտ կանչեց ծերին և զրույցի ընթացքում, կարծես իմիջիայլոց, հարցրեց, թե ինչու եկեղեցում, ժողովրդի ներկայությամբ այդպես փառաբանեց իրեն:

- Ես քո աջ ուսին նստած սպիտակ աղավնի տեսա, - ասաց Եփրեմը, - որ քո ականջին ինչ-որ բան էր ասում, ինչպես նաև քո շուրթերից դուրս եկող կրակ տեսա և դրանից հիացած չկարողացա զսպել իմ լեզուն:

Սուրբ Բարսեղը ծերի պայծառատեսությունից զարմացած նրան քահանա ձեռնադրեց: Սուրբ Եփրեմը, թեկուզ արքեպիսկոպոսին հնազանդվելով ձեռնադրվեց, բայց ողջ կյանքում պատարագ մատուցել չցանկացավ՝ իրեն անարժան համարելով ծառայել Աստվածային ահավոր խորհուրդներին, այլ զբաղվեց միայն Աստծո խոսքը քարոզելով:

Մի նշանավոր ծեր, գտնվելով բարեպաշտական տրամադրություն մեջ, երկնքում չորս աստիճան տեսավ, որ ցույց էր տալիս ճգնակեցություն կատարելու թյունը: Առաջին աստիճանին կանգնած էր արատներով ծանրաբեռնված, բայց Տիրոջ անունն օրհնող մարդ: Երկրորդ աստիճանին՝ անշահախնդիր հյուրընկալը, երրորդ աստիճանին՝ լուսնային մեջ ճգնող անպատականը և, վերջապես, չորրորդ աստիճանին կանգնած էր հոգևոր ուսուցչին հնազանդ և հանուն Տիրոջ ամբողջ սրտով նրան նվիրված աշակերտը: Այդ մարդն ուներ բոսորագույն շուրջառ, որ խորհրդանշում էր Նրան, Ով հնազանդ էր մինչև մահ, և այն էլ մահվան խաչի վրա /Փիլ. 2:8/:

«Ինչո՞ւ է այդ, ըստ երևույթին, գործերով փոքրը ավելի բարձր աստիճանի վրա, քան մյուսները», - մտածեց երկնային տեսիլքի արժանացած ծերը:

- Նրա համար, - հանկարծ նրան պատասխանեց մի խորհրդավոր ձայն, - որ օտարասերը վարժվում է այդ առաքինություն մեջ իր կամքի համաձայն: Նույնիսկ անապատականն է աշխարհից հեռանում իր կամքով և ապրում ազատ: Ինչ վերաբերում է արատներով ծանրաբեռնվածին, նա մեծ ուրախությամբ դրանք կփոխեր առաքինությամբ:

Իսկ նա, ով հանձն է առել հնազանդության դժվար գործը, հրաժարվել է իր բոլոր ցանկություններից և կախված է Աստծուց ու իր ուսուցչից:

### ԹԵ ՈՐՔԱՆ ՍԱՐՍԱՓԵԼԻ Է ԾՆՈՂՆԵՐԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼԸ

Մի անգամ Լամպսակիի եպիսկոպոս Պարթենիոսի մոտ բերեցին մի պատանու, որ սարսափելի տանջվում էր չար ոգուց: Մարդասեր Պարթենիոսը տառապողների վրա նետած հենց առաջին հայացքից, նույնիսկ առանց նրանց խնդրանքի, մշտապես նրանց օգնում էր իր աղոթքներով: Բայց նայելով պատանուն՝ ցուցաբերեց անբավականություն:

Ծնողները, ընկնելով Աստծո մարդու ոտքերը, արցունքներով աղերսում էին նրան, որպեսզի գլխա իրենց զավակին և նրան ազատի կատաղությունից: Բայց Աստծո մարդը նրանց պատասխանեց. «Ձեր որդին բուժվելու արժանի չէ: Տանջող ոգին նրան տրվել է որպես պատիժ այն բանի համար, որ նա համարյա հայրասպան է»:

Ծնողները սարսափեցին: Պարթենիոսը հարցրեց նրանց. «Ձեր որդին հաճախ էր վիրավորում ձեզ»: «Այո», - պատասխանեց հայրը: «Դուք ձեր հոգու դառնություն պահին աղոթե՞լ եք, որ Աստված պատժի նրան», - շարունակեց Պարթենիոսը:

«Մեղք գործեցինք Աստծո առաջ», - հոգոց հանելով պատասխանեցին հայրն ու մայրը:

Այդժամ Աստծո մարդն ասաց. «Թող նա տառապի, քանզի վաստակել է այդ պատիժը»: Բայց որդեսեր ծնողները, որոնց սիրտը ցավում էր իրենց զավակի համար, շարունակեցին արցունք թափել և Քրիստոսի Սրբին աղաչեցին Աստծուց նրա համար ներում խնդրել: Միայն նրանց աղաչանքներից մեղմացած Պարթենիոսը օրհնեց պատանուն և Աստծուն աղերսելով՝ առողջացրեց նրան:

Երեսնանե՛ր, սարսափեցե՛ք ձեր ծնողներին վիրավորելուց, նրանց անեծքը ձեզ վրա կթափի երկնքի անեծքը:

### ՄԵՐՁԱՎՈՐԻՆ ՕԳՆԵԼԸ ԱՍՏՎԱԾ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՈՐՊԵՍ ԻՍԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆ ԱՍՏԾՈՒՆ

Սուրբ Դոսիթեոսը, որ ծանր հիվանդ էր, Բարսոնոթիոս անունով մի նշանավոր ծերի ասաց. «Տեր իմ, այլևս չեմ կարող ապրել»:

Բարսոնոթիոսը պատասխանեց. «Ձավակս, խաղաղությունը գնա Սուրբ Երրորդությունը ներկայացիր և աղոթիր մեզ համար»:

Եղբայրները լսելով մեծ ծերի նման պատասխանը սկսեցին սրտմտել և իրար մեջ խոսել. «Այս երիտասարդ վանականն

ի՞նչ մեծագործություն է արել, որ սուրբ հորից նման պատասխանի արժանացավ: Մենք չենք տեսել, որ նա իրեն ծոմով մաշի կամ ուրիշներից ավելի հսկում կատարի: Դրան հակառակ գիշերային ժամերգություններին նա մեր բոլորից ուշ էր գալիս, իսկ երբեմն էլ մնում էր տանը»:

Երբ այս խոսակցությունը հասավ Բարսոնոթիոսի ականջին, սուրբ հայրը ընդհանուր սեղանի մոտ եղբայրներին հարցրեց. «Երբ զանգը Տիրոջ եկեղեցի է հրավիրում, իսկ իմ ձեռքերի վրա հիվանդ եղբայրն է, ես ի՞նչ պիտի անեմ. եղբորը թողնեմ ու գնամ եկեղեցի՞, թե՞ եկեղեցին թողնեմ և մխիթարեմ եղբորը»:

«Անկասկած, մերձավորին ցուցաբերած օգնությունը Տերը կընդունի՝ որպես ծառայություն Իրեն», - պատասխանեցին վանականները: «Իսկ եթե իմ ուժերը ծոմապահություն հետևանքով այնքան պակասեն, որ ես չկարողանամ հարկ եղած ձևով ծառայել հիվանդ եղբայրներին, արդյո՞ք պետք է, որ ես սնունդ ընդունեմ, որպեսզի տկարներին խնամեմ, թե՞ պետք է շարունակեմ ծոմը, թեկուզ դրանով նեղություն պատճառեմ հիվանդներին, որոնք սովորաբար դյուրագրգիռ են ու պահանջկոտ»:

«Դրա պատճառով պետք չէ խախտել մենաստանի կանոններով սահմանված պահքը, - պատասխանեցին վանականները, - բայց ինքնանպատակ և չափազանց ծոմը, կարծում ենք, այդ դեպքում այդքան էլ հաճելի չի լինի Աստծուն, որքան հիվանդ եղբոր բոլոր հոգսերը հոգալը»:

«Դուք արդար եք դատում, - այդժամ ասաց սուրբ Բարսոնոթիոսն ուսուցչի տոնով, - իսկ ինչո՞ւ եք ձեր լեզվին թույլատրում այլ կերպ խոսել: Աստվածավախ Դոսիթեոսը մեր հիվանդ եղբայրների հոգսը քաշելով այնքան երկար ժամանակ ծոմ չէր պահում, ինչպես ձեզնից ոմանք: Բայց դուք ինքներդ եք վկա եղել, թե նա որքան սրտանց և անձանձիր էր ծառայում հիվանդ եղբայրներին: Մենք չենք տեսել, որ նա երբևէ փնթփնթար, իր հոգնած կամ տանջված լինելը պատճառ բերեր: Դրան հակառակ որքան հաճախ ենք տեսել նրան լաց լինելիս, երբ իր ուժերից վեր է եղել հիվանդի չափից դուրս



խնդրածը կատարելը»:

Այդ ծերը ճշմարտություն էր խոսում:

«Եւ երբ Մարդու Որդին գա իր փառքով ու հրեշտակների ուղեկցութեամբ, բոլորին կասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ համար արեցիք»(Մատթ. 25:31, 40):

ԻՆՉՊԻՍԻՆ ՍԽՐԱՆՔՆ Է,  
ԱՅՆՊԻՍԻՆ ԷԼ ՊԱՐԳԵՎՆ Է

Մի ծեր իր առաքինի սխրանքներով այնքան հաճելի եղավ Աստծուն, որ ամեն օր անտես ձեռքով նրան կերակուր էր տրվում: Երեկոյան մտնելով իր քարանձավներից մեկը՝ նա գտնում էր փափուկ, մաքուր հաց և երբ զգում էր, որ իր մարմինը սնվելու կարիք ունի, խոնարհվելով Աստծուն՝ ուտում էր և դարձյալ իր հոգին հանգստացնում էր սաղմոսերգութեամբ և Աստծուն փառաբանելով: Այդպես անապատականն օրեցօր աճում էր մարդկային կատարելության մեջ՝ Աստծո նմանությունամբ: Հրաշալի ծերն այլևս չէր կասկածում ապագա վարձատրության վրա և կարծում էր, թե այն արդեն իր ձեռքերի մեջ է: Եւ սա էլ նրա անկման պատճառը դարձավ: Նա սկսեց մտածել, թե ինքը բոլոր անապատականներից ավելի է արժանացել Աստծո շնորհներին և, որ ամենից վտանգավոր է, նա մտածում էր, թե բնավ չի կարող սայթաքել և կորցնել առաքինությունը: Սրանից որոշ ժամանակ անց նրա վրա ինչ որ թմրություն իջավ, որը վերածվեց ծուլության: Ծերն սկսեց շուտ պառկել և ուշ վեր կենալ ու սաղմոսերգություն սկսել, իսկ նրա աղոթքներն էլ նախկինից ավելի կարճ էին: Նա հաճախ էր շփոթվում, խառնվում էին մտքերը և իրենից անկախ հիմար բաներ էր մտածում: Չնայած նախկին հմտությունը երբեմն նրան հանում էր ծուլությունից ու ցրվածությունից, բայց նա նորից ընկղմվում էր անտարբերության մեջ:

Մի անգամ արևամուտին, աղոթքից հետո քարանձավ մտնելով սովորականի նման գտավ Աստծո կողմից իրեն առաք-

ված հաց, բայց արդեն ոչ՝ առաջվա նման մաքուր: Եւ թեպետ վախեցավ այս նախանշանից, սակայն ուժերը վերականգնելով, չմերժեց անմաքուր մտքերը, այլ նույնիսկ նրանցից հաճույք ստացավ: Հաջորդ օրը դարձյալ սովորականի նման, թեպետ և մտքերից խանգարված աղոթքից հետո, նա գտավ իր հացը, բայց այս անգամ՝ սև ու չոր: Քաղցած ծերը հացը կերավ ու կշտացավ, բայց փոխանակ փոխված հացին նայելով՝ տեսներ իր փոխված հոգին, նա ավելացրեց կործանարար մտքերը, ասես փորձելով տաքացնել դրանք այնպես, ինչպես օձին են տաքացնում:

Այնուամենայնիվ երրորդ օրն էլ, չնայած դժվարությունամբ, կատարեց «կանոնը» և երեկոյան մտավ անձավ: Բայց ինչպե՞ս սարսափեց, երբ միայն հացի մնացորդները գտավ՝ կտոր-կտոր արված և գետին շարտված՝ փոշու և խոտերի մեջ: Ծերը հոգոց հանեց և լացեց, բայց իր սրտի մեջ այնքան չվշտացավ, որպեսզի կարողանար ճնշել և սանձահարել իր դեմ ծառայած կրքերը: Նա հավաքեց գետին թափած կտորները, մի քիչ կերավ ու պառկեց քնելու: Հանկարծ նրա վրա ծանրացավ չար մտքերի ամպը՝ նրան քշելով անապատից դեպի աշխարհ: Դրանց ծանրությունը նրան ճնշում էր և թույլ չէր տալիս ուշքի գալ: Վերջապես անգիտակից վիճակում նա վեր կացավ և գիշերով գնաց խուլ անապատ՝ ցանկանալով իբրև թե մարդկային բնակավայր գտնել, որպեսզի այնտեղ իր վրայից նետի հրեշտակային հագուստները:

Կզոհվեր նախկինում Աստծուց այսքան սիրված ծերունին, եթե Աստծո ողորմությունը, որ նախկինում լուրջության մեջ վերածվում էր հացի, նրան որոտընդոստ կոչով չազդարարեր. «Ճանաչի՛ր քեզ», և այդ կերպով չվերադարձներ փրկության ճանապարհ:

Այդ փոփոխությունը կատարվեց հետևյալ դեպքից հետո:

Ողջ գիշեր ծերը քայլեց ավազների միջով և հոգնածություն չզգաց, բայց երբ բացվեց առավոտը, և արևն սկսեց այրել, նա հոգնեց և ուժասպառ եղավ: Շուրջը նայեց. մոտակայքում որևէ վանք չկա՞, որպեսզի շեղվի ճանապարհից և հանգստանա: Տիրոջ կամքով շուտով մի վանք երևաց: Նա կամաց-կա-

մաց գնաց դեպի վանքը, որտեղ եղբայրները նրան ընդունեցին սիրով ու պատիվներով: Ինչպես մեծ հոր, նրանք լվացին ծերի ոտքերը, սեղան պատրաստեցին նրա համար: Եւ երբ ծերը ուժերը վերականգնեց, խնդրեցին, որ նա փրկության խոսք ասի իրենց: Կործանման գնացող ճանապարհորդը չհրաժարվեց և հայրաբար սկսեց սովորեցնել նրանց, որ իրենց սխրանքների մեջ քաջ և հարատևող լինեն, քանզի Քրիստոսից հանգստություն ակնկալող աշխատավորներ են: Նա նրանց հետ խոսեց ծոմապահության, աղոթքի, խոնարհության, ինքնաճանաչման մեծ գիտություն... մի խոսքով բոլոր այն առաքիլներին, որոնցից մասին, որոնցից հրաժարվել էր ինքը:

Փրկության մասին գրույցը շարունակվեց մինչև կեսգիշեր և եղբայրները, գնալով քնելու, օրհնեցին նրան, ասես մի հին սուրբ ուսուցիչ էր և Աստծուն երախտագիտություն հայտնեցին իրենց անսպասելիորեն տրված նման նվերի համար:

Երբ մենակ մնալով՝ ճանապարհորդը պառկեց քնելու, հանկարծ սարսափելի վախ զգաց: Նա հասկացավ, որ սովորեցնելով ուրիշներին՝ ինքը չի հետևում իր ուսուցմանը, ուրիշներին դնում է փրկության ճանապարհի վրա, իսկ ինքը չի հետևում դրան և գնում է դեպի կործանում: Այսպես մտածելով՝ նա վերկացավ մահճից և առանց հրաժեշտ տալու հյուրընկալ եղբայրներին, հեռացավ: Նա արդեն ոչ թե քայլում, այլ վազում էր իր հին տեղը, հեկեկալով իր անկման համար: «Եթե Տերն ինձ չօգնի, - հոգնածությունից չնչահեղձ լինելով ասում էր նա, - դժոխքը կուրախանա իմ հոգով»: Ոչ երկար ճանապարհը, ոչ մթնոլորտի մեջ ոռնացող գազանները, ոչ ցերեկվա տոթը, ոչ ուժասպառությունը նրան չկարողացան ստիպել, որ հանգստանա: Նա վերադարձավ իր խուցը, ընկավ գետնին և գլուխը ձեռքերով ծածկելով սկսեց լաց լինել ու հեկեկալ մի քանի օր, մինչև որ երկնավոր ձայնը նրան հայտնեց, որ Տերն ընդունել է նրա զղջումը: Բայց մինչ այդ Աստծո կողմից նրան ուղարկվող հացն արդեն ընդմիջտ ետ էր վերցվել նրանից և ծերն իր սնունդը հայթայթում էր սեփական աշխատանքով:

Քրիստոնյաներ, եթե ողորմած Աստված դժբախտ ծերին սուրբ մենաստան ցույց չտար, ապա աշխարհիկ կյանքը նրան

կգայթակղեր անվերադարձ: Եթե Աստված հյուրասեր եղբայրների սրտում չդնեք նրանից «Փրկության խոսք» պահանջել, նրա հոգին չէր մեղմանա: Հավատանք, ուրեմն, որ մեղավորների հոգու կործանումը չցանկացող Տերն օգտագործում է բոլոր հնարավորություններն ու միջոցները դարձյալ մեզ վերադարձնելու իրեն: Մենք ինքներս ենք մեղավոր, որ չենք գործադրում պահանջվող ուշադրությունը դրանք տեսնելու և դրանցից օգտվելու համար: Ամեն ինչի մեջ, որ մենք չհասկանալով կամ սովորույթի ուժով «առիթ» ենք կոչում, կա նախախնամություն մատր:

### ՄԵԿԻ ԶՂՋՈՒՄԸ, ՄՅՈՒՍԻ ԱՆՉԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հերովդեսն Ավետարանը քարոզելու համար մահվան դատապարտեց Հակոբոս Նախանձահույզ Առաքյալին, այդժամ նրա գրպարտիչներից մեկը՝ հրեա Հոսիան, տեսնելով նրա քաջությունն ու ձգտումը դեպի Տերը, հավատաց նրա ուսմունքի ճշմարտացիությանը, հավատաց Հիսուս Քրիստոսին, ժողովրդի առաջ հայտարարեց իր դարձի մասին և Մեսիայի գալու և հարություն մասին: Դրա համար սուրբ Առաքյալի հետ ինքն էլ դատապարտվեց մահվան: Երբ նրանց բերեցին մահապատժի տեղը, Հոսիան ընկնելով Հակոբոսի ոտքերը նրան աղաչեց, որ ների իր անգիտակցաբար գործած մեղքերը: Ավետարանական մարդասիրության հեզ քարոզիչը գրկեց նրան, համբուրեց ու ասաց. «Թող Տերն օրհնի քեզ»: Որից հետո երկուսն էլ սրի առջև խոնարհեցին իրենց գլուխները:

### ԱՐԱՏԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԻՆ Է ԱՅԼԱՆԴԱԿՈՒՄ, ԱՅԼԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

Մի երիտասարդ ճգնավոր, որ ապրում էր Պաֆնուտիոսի խցում, վանական գործերով քաղաք էր գնացել: Փողոցում քայլելիս նա տեսավ զբոսահանդեսին մասնակցող տարբեր սեռի և

հասարակական դիրքի բազում մարդկանց: Դեռևս աշխարհիկ սովորություններից հետ չվարժված, նա կանգնեց ու սկսեց ուրախանալ իրեն չթույլատրվող գվարճություններով՝ ափսոսանքով հիշելով աշխարհիկ կյանքում անցկացրած օրերը:

Ճգնավորը որոշ ուշացումով վերադարձավ սուրբ հոր մոտ: Տեսավ նրան գրքի վրա հակված և զեկուցեց իր գործի մասին: Բայց Պաֆնուտիոսը հազիվ մի հայացք նետեց նրա վրա, երբ անմիջապես զգաց անմաքուր մտքերը, որոնք տանջում էին նրա հոգին:

- Այս մարդն այն չէ, ինչ որ նախկինում էր, - ասաց նա և նրանից շրջեց երեսը:

Մերկացված ճգնավորը սարսուռաց և տեսնելով, որ ծերն այլևս չի ցանկանում իր հետ խոսել, դուրս եկավ:

Առավոտյան մի ծեր եղբոր խորհրդով նա սուրբ ուսուցչից ներում խնդրեց և ստանալով ողջամտություն ու ժուժկալություն փրկարար դասեր՝ հանգստացավ:

#### ԵՐԿՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Բարեպաշտ իշխան Ալեքսանդր Նևսկին Նովգորոդի գործերով մտավ Ինգերմանլանդիա, որպեսզի այն մաքրի շվեդներից: Նա պատրաստվում էր հաջորդ օրը ճակատամարտ տալ: Նրա իշխաններից մեկը, որի անունը Ֆիլիպ էր, շատ աստվածավախ էր և հրաման էր ստացել գիշերը հետևել թշնամու շարժումներին: Նա լուսաբացին հանկարծ տեսավ Նևայով լողացող նավ, որի մեջ կանգնած էին սուրբ մարտիրոսներ Բորիսը և Գլեբը, իսկ թիավարները նստած էին՝ ասես մշուշ հագած: Եվ ահա սուրբ Բորիսը ասում է սուրբ Գլեբին. «Միրելի եղբայր, արագացնենք ընթացքը, որպեսզի մեր հայրենակից Ալեքսանդրին օգնենք վայրագ շվեդների դեմ»:

Վախեցած և ուրախացած իշխանն անմիջապես իր տեսիլքի մասին պատմեց Նևսկուն: Երկնային օգնությունից ոգեշնչված՝ Ալեքսանդրը ճակատամարտ տվեց, ջարդեց թշնամուն և նրանց իրենց իսկ ղեկների վրայով հետապնդեց մինչև նավերն ու հենց արքային դեմքից վիրավորեց: Սրանից հետո ճա-

կատամարտի տեղը անվանեց «Վիկտորիա»/հաղթանակ/, իսկ ինքը ժամանակակիցների ու հետևորդների կողմից ստացավ «Նևսկի» պատվանունը:

Հենց այստեղ էլ Պետրոս Մեծը Սուրբ Երրորդություն փառքի համար Ալեքսանդր Նևսկու անվամբ մենաստան կառուցեց, որտեղ մինչև այժմ էլ պահպանվում են սուրբ իշխանի հրաշագործ մասունքները:

#### ԿԱՏԱՐՅԱԼ ԼՌՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Արսեն Մեծը ոչինչ այնպես չէր ցանկանում, որքան առանձնությունը և առանց ծայրահեղ անհրաժեշտություն չէր երևում նույնիսկ անապատականների առջև: Դրա համար էլ մի անգամ արբա Մարկոսը նրան հարցրեց. «Հայր, ինչո՞ւ ես մեզից հեռանում»: «Աստծուն է հայտնի, որ սիրում եմ ձեզ, - պատասխանեց Արսենը, - բայց և չեմ կարող մարդկանց հետ հաղորդակցությունը գերադասել Աստծո հետ հաղորդակցությունից, քանզի երկնքում հազար հազարավորներն են բնակվում, բայց բոլորը մի կամք ունեն և բոլորը միասին փառաբանում են Աստծուն: Իսկ երկրի վրա անթիվ է մարդկանց կամքը և տարբեր է նրանց մտածողությունը: Ինչպե՞ս կարող եմ Աստծուն թողնել և ապրել մարդկանց հետ»:

Նման կենսակերպ որդեգրելով՝ Արսեն Մեծը մեծ մասամբ լուռ էր մնում, երբ եղբայրներից կամ աշխարհականներից մեկը այցելում էր նրան: Հետևյալ դեպքը ցույց է տալիս, թե նա երբեմն ինչպես էր վարվում այցելուների հետ, ինչ էին մտածում նրա մասին աշխարհում, և թե մենությունն ու լուրջությունն ինչպես նրան փառավորեցին Աստծո առաջ:

Մի եղբայր հեռուներից մենաստան եկավ միայն նրա համար, որպեսզի Արսենին տեսնի և եկեղեցու ծառայողներից մեկին խնդրեց, որպեսզի իրեն ներկայացնի այդ մեծ ծերին: Երբ նրանք թակեցին նրա խցի դուռը, Արսենը նրանց ներս թողեց, իսկ ինքը լուռ նստեց, հայացքը գետնին հառած: Եկվորները նույնպես նստեցին և լռեցին: Անցավ որոշ ժամանակ և երե-

քից ոչ մեկը ձայն չհանեց: Վերջապես եկեղեցու սպասավորն անհարմար զգաց և դուրս եկավ: Օտարականը նույնպես, լուռթյունից ճնշված, չուզեց Արսենի հետ մենակ մնալ և նրան խոնարհուլթյուն անելով դուրս եկավ:

Ափսոսալով, որ այդքան երկար ժամանակ է կորցրել և չի կարողացել Արսենից նույնիսկ մի բառ լսել՝ ճանապարհորդը եկեղեցու սպասավորին խնդրեց իրեն ուղեկցել սուրբ Մովսեսի մոտ: Ընդունելու թյան որպիսի տարբերություն: Մովսեսը նրանց ուրախությամբ դիմավորեց, մխիթարեց, հյուրասիրեց, նրանց խորհուրդներ տվեց, ինքը խորհուրդ հարցրեց նրանցից և որքան հնարավոր է սեր ցուցաբերելով, օրհնությամբ ճանապարհեց նրանց: Ճանապարհին սպասավորն օտարականին հարց տվեց. «Դու, որ այժմ տեսել ես երկուսին էլ՝ թե՛ Արսենին, թե՛ Մովսեսին, ասա՝ նրանցից ո՞ր մեկը քեզ ավելի լավը թվաց»:

«Անկասկած նա, ով մեզ ընդունեց եղբայրական սիրով», - պատասխանեց օտարականը: Նրանց այս խոսակցությունը լսեց մի ծեր և ցանկանալով իմանալ՝ Աստծո համար արդյոք Արսենի լուռթյունն է հաճելի, թե՞ Մովսեսի գրուցասիրությունը, սկսեց աղոթել և երկնային հայտնություն խնդրել: Որոշ ժամանակ անց նա տեսիլքի մեջ երկու նավ տեսավ, որ լողում էին գետով: Նրանցից մեկի վրա Արսենն էր, և Աստծո Հոգին լուռթյան մեջ ղեկավարում էր նավը: Մյուսի վրա Մովսեսն էր և Աստծո հրեշտակները ղեկավարելով նավը, նրա շուրթերին մեղր էին քսում: Այս հայտնություն մասին ծերը հայտնեց մյուս իմաստուն ծերերին և նրանք բոլորը եկան այն եզրակացություն, որ ընդունելու թյան ժամանակ լուռթյուն պահպանող Արսենն ավելի կատարյալ է, քան Մովսեսը, քանզի Արսենի հետ ինքը՝ Աստված է, իսկ Մովսեսի հետ՝ Աստծո հրեշտակները:

### ՍՈՒՐԲԻ ՎՐԵԺԸ

Մի անգամ սուրբ Եպիփանը, որ հետո դարձավ Կիպրոսի արքեպիսկոպոս, անապատում հանդիպեց արաբ ավազակների: Բարբարոսները, որ ընդհանրապես չէին սիրում ճգնավորներ-

րին, սկսեցին հայհոյել նրան, իսկ նրանցից մեկը, որ միաջանի էր, նրա վրա սուր քաշեց: Բայց հազիվ էր նա սուրը հանել, երբ հանկարծ նրա չտեսնող աչքն սկսեց տեսնել: Բարբարոսը գետին նետեց սուրը և զարմացած իր ընկերներին ցույց տվեց բուժված աչքը: Տեսնելով անսպասելի հրաշքը՝ ավազակներն իրենց հայհոյանքը փոխեցին օրհնանքի: «Մեր պահպանը եղիր, - ասացին նրանք, - արի մեզ հետ և պահպանիր մեզ փորձանքներից»:

Որքան էլ որ Եպիփանը մերժեց, նրանք չլսեցին նրան և բուռնությամբ տարան իրենց հետ: Սուրբը նրանց հետ թափառեց երեք ամիս և այդ ժամանակն էլ օգտագործեց Աստծո փառքի համար և անընդհատ նրանց հիշեցնում էր ապագա պարգևների և պատիժների մասին, այնքան, որ իր ճառերով ձանձրացրեց ավազակներին: Այլևս ուժ չունենալով նրա ազդու խորհուրդները լսել՝ նրանք դարձյալ սկսեցին աղաչել նրան, որ իրենցից հեռանա և զնա իր նախկին տեղը: Բարբարոսները նրան ուղեկցեցին այնտեղ, որտեղից բերել էին և առանց նրա խնդրանքի նրա համար խուց կառուցեցին և երգվեցին այսուհետև ապրել ազնիվ կյանքով:

Իսկ բուժված ավազակը հավատաց Քրիստոսին և մնալով Եպիփանի մոտ, դարձավ նրա աշակերտը: Նա կոչվեց Հովհան: Այս կատարի ավազակը հետո դարձավ Եպիփանի հրաշագործությունների առաջին քարոզողն ու վարքագիրը: Իսկ որ ճշմարիտ ուղու վրա կանգնեցին նաև մյուսները, հաստատվում է նրանով, որ նրանք բազմիցս եկան սուրբ Եպիփանի օրհնությունն ստանալու, և երբ նրա աշակերտների թիվն ավելացավ, նրա համար փոքրիկ եկեղեցի կառուցեցին:

### ԳԹԱՍՐՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ սուրբ մարտիրոս Ալեքսանդրին բերեցին գլխատելու վայրը, անարդար այդ մահապատիժն իրականացնող դահիճը, որի անունը Յեղեստինոս էր, արցունքների միջից ասաց նրան.

«Քրիստոսի նահատակ, աղոթիր քո Աստծուն, որպեսզի քո մահվան համար ինձ չմեղադրի: Ես պետերի հրամանն եմ կատարում»:

Սուրբ Ալեքսանդրը նրան պատասխանեց. «Դու դա քո կամքով չես կատարում, դրա համար էլ ամբողջ մեղքն ընկնում է քեզ կարգադրողների վրա, այնպես որ կատարիր այն, ինչ քո պարտքն է: Ես ուզում եմ շուտ գնալ իմ Տիրոջ մոտ»:

Այնժամ Ցելեստինոսը նրա աչքերը կապեց մաքուր լաթով, բայց հագիվ էր բարձրացրել իր սուրը, երբ տեսավ սուրբ մարտիրոսի մոտ հայտնված սուրբ Հրեշտակներին, որոնք եկել էին նրա հոգին տանելու: Նա սարսափեց և անշարժացավ: Նահատակը, որ երկար ժամանակ սպասում էր հարվածի, բայց չէր ստանում, ասաց. «Կատարիր, եղբայր, ինչ կատարելու ես»:

«Աստծո ծառա, - պատասխանեց դահիճը, - ես քո կողքին կանգնած հրաշալի այրերի եմ տեսնում»:

Այնժամ սուրբ Ալեքսանդրը ձայն տվեց երկինքն ի վեր. «Տեր Հիսուս Քրիստոս, սուր ինձ այս ժամին մահանալ»:

Հրեշտակները մի քիչ հետ գնացին: Ցելեստինոսը մոտենալով կատարեց իր սարսափելի պարտականությունը, և սրբի հոգին, Աստծուն փառաբանելով, Հրեշտակների ձեռքերի վրա համբարձավ երկինք:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ԷԻՆ ԶԳՏՈՒՄ ՍՈՒՐԲԵՐԸ  
ՈՉՆՉԱՑՆԵԼ ԻՐԵՆՑ ՍՐՏՈՒՄ ՀԵՆՑ ՆՈՐ ԾՆՎԱԾ  
ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԿՐՔԵՐԸ

Սուրբ Պախոմը հրեշտակի միջոցով ստացավ Աստծո հրամանը անապատական եղբայրների համար Տավենիսիոտի մենաստանը հիմնելու մասին: Նա սկսեց իր եղբայրներից Հովհաննեսի հետ խցեր կառուցել, բայց շուտով նրանց միջև տարածայնություն առաջացավ: Պախոմն ուզում էր, որ մենաստանն ավելի ընդարձակ տարածք գրավի, իսկ լուսնություն սիրող Հովհաննեսն ուզում էր սահմանափակվել նեղ ցանկապատով և երկարատև վեճերից հետո Պախոմն ասաց. «Բավական է քեզ

մեծարես ու փառաբանես, այդպիսի արարքները հաճելի չեն Տիրոջ աչքին»:

Պախոմն զգալով այս հանդիմանություն մրմուռը /ի դեպ, ոչ այնքան բարեմտություն ասված, եթե հիշենք, որ կառուցելու հրամանը վերևից էր տրված/ չարացավ Հովհաննեսի վրա, բայց իր հեղուկության և ավագ եղբոր նկատմամբ ունեցած հարգանքի պատճառով պատասխան չտվեց նրան: Նա հեռացավ Հովհաննեսից՝ իր սրտում կրելով սրտմտությունը: Բայց հաջորդ գիշեր այս արարքն այնքան սխալ համարեց, որ փակվեց իր խցում և սկսեց լաց լինել և խոստովանել Աստծուն. «Վա՛յ ինձ, որ ես Քո պատգամներին հակառակ, օ, Գառնուկ, իմ եղբոր հանդեպ քեն պահեցի, որն ինձ ճշմարտությունն էր ասում: Իմ սրտում դեռևս տեղ ունի մարմինը, թեև այսքան ժամանակ սովորեցի ապրել հոգով, սակայն դեռևս քրքրվում եմ վիրավորանքից: Ներիր ինձ, Տեր, որպեսզի մինչև վերջ չկորչեմ: Եթե Քո շնորհն ինձ չամրացնի, թշնամին իմ սրտում կաճեցնի մի քանի իր համար հաճելի գործեր և իր կամքը կթելադրի ինձ՝ Քո օրենքները մերժողիս: Վա՛յ ինձ, դեռ ուզում եմ սովորեցնել նրանց, որոնց Դու խոստացար իմ միջոցով բերել ճգնաժամության, երբ ես ինքս չեմ կարողանում սովորել իմ կրքերը հաղթահարել»:

Այդ եղանակով Աստծո առջև ողբալով երանելի Պախոմը աղոթքի մեջ մնաց մինչև հաջորդ օրը: Նա արցունքով ու քրտինքով լվաց այն հողը, որի վրա կանգնած էր ինքը:

ԶԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՇՈՒՌ Է ԳԱԼԻՍ  
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԳԼԽԻՆ

Երբ սուրբ մարտիրոս Թալալեոսը քաջություն քանակացավ բոլոր այն տանջանքներին, որ կարող է հորինել մարդկային միտքը, և նրան տանջող Թեոդորոսը չգիտեր, թե մարտիրոսի կամքն ինչ տանջանքով կոտրի, իրեն մոտ կանգնած քրմերից մեկը՝ Ուրվիկիոս անունով, խորհուրդ տվեց նրան գցել գազանների առաջ: Թեոդորոսը համաձայնեց և հրամայեց գազանանոցի վարիչին պատրաստել դրա համար անհրաժեշտ ամեն

ինչ: Սուրբ Թալալեոսին ուղարկելով սարսափելի մահվան՝ նա ասաց. «Կամ գոհաբանության գոհ մատուցիր աստվածներին, կամ քո մարմինը կհոշոտեն գազանները»:

Բայց սուրբ մարտիրոսը պատասխանեց. «Ինչպես առաքյալները, հայտարարում եմ քեզ. «Չպիտի մեռնեմ, այլ պիտի ապրեմ և Տիրոջ գործերը պիտի պատմեմ» /Սաղմ. 117, 17/, - և հանգիստ գնաց: Նրա վրա բաց թողեցին կատաղի արջ, բայց, ի զարմանս բոլորի, նա պառկեց նրա ոտքերի մոտ և սկսեց լիզել դրանք: Զայրույթից կրճտացնելով ատամները՝ Թեոդորոսը հրամայեց բաց թողնել էգ և արու առյուծներին, բայց նրանք նույնպես սուրբ մարտիրոսի առաջ իրենց պահեցին գառան պես: Այդժամ ժողովուրդը միաձայն սկսեց բացականչել. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը», - և վերցնելով Ուրվիկիոսին շարտեց գազանների մեջ, որոնք անմիջապես հոշոտեցին նրան: Վախեցած Թեոդորոսը լուռ հեռացավ իր տուն, որպեսզի նույն բախտին չարժանանա:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՆ ՈՒՐԻՇԻՆ ՎՍՏԱՀԵԼԸ

Մի աղքատ մարդ սուրբ Թեոդորոսին մի քանի սոխ բերեց, որի փոխարեն նրան խնդրեց ուտելու որևէ բան տալ իրեն: Թեոդորոսն իր աշակերտին կարգադրեց սոխի դիմաց վճարել ալյուրով: Բայց քանի որ ալյուր կար երկու ամանի մեջ, որոնցից մեկը լավն էր, մյուսը՝ թեփախառն, աշակերտը որոշեց վատ ալյուրից տալ: Սուրբ ծերն այս նկատելով՝ նրան նայեց տխուր և հանդիմանական հայացքով, որից երիտասարդ ճգնավորն այնպես վախեցավ, որ ձեռքից գցելով թափեց ալյուրը, հետո ծնկի գալով նրա առաջ խնդրեց թողություն տալ իր մեղքերին:

- Վեր կաց, - ասաց սուրբ Թեոդորը, - դու այնքան մեղավոր չես, որքան ես, որ քեզ հանձնարարեցի այն, ինչ ես ինքս պիտի անեի:

Դրանից հետո իր քղանցքի մեջ լցրեց իր լավագույն ալյուրից և սոխի հետ միասին տվեց աղքատին:

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑԻՑ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ ՍԵՓԱԿԱՆ ՀՈԳՈՒ ՀԱՄԱՐ

Սուրբ Հովհաննես Կոլովը չէր սիրում զրուցել աշխարհում կատարվող բաների մասին: Եղբայրներից ոմանք, ցանկանալով փորձել նրա վճռականությունը, մի անգամ եկան նրա մոտ և ամեն կերպ աշխատեցին նրան խոսակցության մեջ ներքաշել: Բայց ինչի մասին էլ որ խոսում էին, աբբան լուռ էր և իր միտքը չէր կենտրոնացնում իր համար կողմնակի բաների վրա: Վերջապես ճգնավորներն ասացին. «Շնորհակալ լինենք Աստծուն, որ այս տարի բավականաչափ անձրև եկավ, արմավենիները ջրվեցին հարկ եղածի չափ և լավ պտղակալեցին: Աշնանը եղբայրներն անելիք կունենան»:

«Այդպես էլ Սուրբ Հոգին է, - ասաց ծերը, - եթե նրանով սնվի մարդկային սիրտը, կնորոգվի, կմեծանա Աստծո երկյուղի մեջ և իսկական առաքինության պտուղ կտա»:

### ՊԱՀՔ ԵՎ ՕՏԱՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆ

Սուրբ Կասիանը, չափազանց սիրով հյուրընկալվելով մի եգիպտացի ծերի կողմից, հարցրեց նրան. «Ինչո՞ւ դուք հյուրընդունելիս պահքը չեք պահպանում, ինչպես անում են մեզ մոտ՝ Պաղեստինում»: «Պահքը միշտ ինձ հետ է, - պատասխանեց ծերունին, - իսկ դուք միշտ ինձ հետ լինել չեք կարող: Ավելին, թեպետև պահքը օգտակար է և անհրաժեշտ, բայց այն կախված է կամքից, իսկ մերձավորի նկատմամբ սեր ցուցաբերելը մեզ պատվիրված է վերից՝ Աստծո օրենքով և պահանջվում է, որ մենք իրագործենք: Այսպիսով օտարականի մեջ ես Քրիստոսին ընդունելով պետք է սրտալի և հոգատարությամբ վերաբերվեմ նրա հանդեպ: Իսկ երբ նրան ճանապարհեմ, կարող եմ ինձ պարգևատրել ավելի խստացած պահքով»:

Սուրբ Մակար Եգիպտացին ճգնավորների հետ զրույցի ժամանակ հետևյալ կանոնին էր հետևում. «Երբ գինի կա, խմիր

եղբորդ հետ եղբայրության համար և մի բաժակ գինու դիմաց մի ողջ օր ջուր մի խմիր»:

Ծերերը երբեմն Մակարին գինի էին հյուրասիրում, և Մակարը մշտապես խմում էր այն, որպեսզի հետո իրեն պատժի ծարավով: Բայց նրա աշակերտը, որ գիտեր Մակարի սովորությունը, սովորաբար նրանց ասում էր. «Ի սեր Աստծո, իմ ուսուցչին գինի մի մատուցեք, հակառակ դեպքում նա իր խցում իրեն կհասցնի մահվան դուռը»:

Եղբայրներն այդ իմանալով՝ դադարեցին Մակարին հյուրասիրել: Բայց երբ գալիս էին իր մոտ, Մակարը չէր շեղվում իր օրենքից. հյուրասիրում էր եղբայրներին, և որպեսզի հյուրասիրությունը սրտալի լինի և հաճելի, ինքն էլ էր ճաշակում հյուրի հետ:

#### ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ ՀԱՇՏԵՑՆԵԼՈՒ ՄԻՁՈՑ

Սուրբ Կյուրեղ Բելոգրեցու մենաստանում Թեոդոտոս անուհով մի ճգնավոր կար, որն ինքն էլ չիմանալով ինչու, ատում էր սուրբ վանահորը, և այս կործանարար կրքի մեջ այնպես էր դաժանացել, որ չէր կարողանում ոչ միայն սառնասրտորեն տեսնել նրան, այլև նրա ձայնը լսել:

Որքան էլ որ մյուս ճգնավորները նրան խրատում էին և ապացուցում, որ սուրբ Կյուրեղն արժանի է նրանց բոլորի սիրուն և նույնիսկ՝ ակնածանքին, Թեոդոտոսը չէր կարողանում, իսկ ավելի ճիշտ՝ չէր ցանկանում իր հոգին բուժել կատաղի արատից և վերջապես հասավ այն բանին, որ որոշեց հեռանալ վանքից: Սակայն լսելով իր կողմից հարգանքի արժանացած մի ծերի, նախ զնաց Կյուրեղի մոտ, որպեսզի նրան խոստովանի իր մտքերի շփոթվածության մասին:

Վանահոր հասարակ հանդիմանությունը կարող էր հասցնել նրան, որ կուրացած ծերը նրա առաջ բացահայտեր իր ողջ ատելությունը և հեռանար մենաստանից՝ կործանելով իր հոգին: Բայց սուրբ Կյուրեղը նրան ընդունեց հայրական սիրով, նրան բացարձակապես ցույց չտվեց իր անբարեհաճությունը:

Ամաչելով անտեղի վիրավորված և այդչափ հեզ ղեկավարի սպիտակ մազերից, Թեոդոտոսը չգիտեր՝ ինչ անել և ուզում էր հեռանալ: Այդժամ պայծառատես Կյուրեղը բռնեց նրա ձեռքը և ասաց. «Ի Քրիստոս սիրելի եղբայր, բոլորը խաբվեցին և մեղքի մեջ ընկան ինձ բարի մարդ համարելով: Միայն դու ճշմարիտ դատեցիր՝ ճանաչելով իմ մեղքերն ու չարությունը: Բայց ապավինում եմ Տիրոջ ողորմությանը, որ Նա ինձ կօգնի, որ ուղղվեմ, իսկ դու ինձ ներքի վիրավորանքի և նեղության համար և ինձ համար աղոթիր Նրան, Ով չի ցանկանում մեղավորի մահը»:

Ճգնավորը՝ խորապես տպավորված Աստծո մարդու պայծառատեսությամբ և խոնարհությամբ, ընկավ նրա ոտքերը և արցունքներով խոստովանեց, որ ինքն անտեղի է ատել նրան: Այդ ժամանակից սկսած Թեոդոտոսի սիրտը հանգստացավ, և նա սկսեց բոլորից ավելի սիրել ուսուցչին:

#### ԲԱՐԻ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՕԳՆՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ

Սրբերի մեջ մեծի՝ Ամբրոսիոս Մեդիալանացու ընկերը՝ սուրբ Բասիանոսը՝ կուսպաշտի որդի լինելով և դաստիարակված լինելով նույնպիսի հարազատների շրջապատում, կուրքերին պաշտելու պարագաներով լցված տանը, քրիստոնեական հավատն ընդունեց: Կարելի էր կարծել, որ այդ պայմաններում ապրող պատանին նման բան չպետք է աներ: Բասիանոսը մկրտվեց Հռոմում, ուր ուղարկվել էր միմիայն գիտության մեջ հմտանալու և մեծ աշխարհը լավ ճանաչելու համար: Բայց բարի ցանկություններին հենց ինքն Աստված է ուղղություն տալիս: Միայն թե մարդն իր սիրտը տրամադրի դրանց: Այդ ճշմարտությունն ապացուցվում է Բասիանոսի օրինակով, քանզի երբ նա մտավ սուրբ մկրտության ավագանը, տեսավ հրաշալի մի պատանու, որ շողում էր արևի պես: Նա սպիտակ մի հագուստ էր բռնել, որ նախատեսված էր նոր մկրտվածի համար: Երանելի Բասիանոսը սարսափեց, բայց ուժերը հավա-

քելով՝ հարցրեց, թե նա ով է և որտեղից է: «Ես վաղուց երկնքից ուղարկված եմ քեզ մոտ քո սուրբ նպատակն ուղղորդելու և քեզ հակառակ գնացողներին քեզնից հեռացնելու», - պատասխանեց Աստծո հրեշտակն ու անհետացավ:

Անուշահոտությամբ լցվեց մկրտության տաճարն այնպես, որ բոլոր այդտեղ եղողները մտածեցին, որ իրենք ոչ թե երկրի վրա են, այլ դրախտի օթևաններում:

### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Պաֆնուտիոս ծերը ճանապարհորդում էր հեռավոր անապատում՝ նպատակ ունենալով այցելել այնտեղ բնակվող բոլոր մենակյացներին. և վերջապես եկավ սուրբ Ոնոփրիոսի մենաստանը: Հիանալով նրա քարանձավի լավ դիրքով և տարբեր պտուղներով ծանրաբեռնված այգով, որ ոռոգվում էր գուլալ աղբյուրի ջրով, Պաֆնուտիոսը ցանկացավ մնալ հրաշալի անապատականի մոտ, որպեսզի վայելի նրա զրույցները, իսկ հետո դառնա հրաշալի մենակյացի հետևորդը: Բայց իմաստուն ծերը նրան ասաց. «Աստված քեզ նրա համար չի ուղարկել այս մենաստանը, որպեսզի այնտեղ մշտապես լռության տրվես, այլ նրա համար, որպեսզի իր ծառաներին տեսնելով վերադառնաս աշխարհ և նրանց առաքիլի կյանքի մասին պատմես հօգուտ լսողների և մեր Աստծու՝ Հիսուսի փառքի համար: Շարունակիր քո ճանապարհը ոչ թե միայն քեզ համար, այլև մերձավորներին՝ նման այն մեղվին, որ տարբեր ծաղիկներից մեղր է հավաքում, որով ե՛լ ինքն է սնվում, ե՛լ հաճույք է պատճառում ուրիշներին»:

Սուրբ Պաֆնուտիոսը ճշգրտությամբ կատարեց մեծ անապատականի խորհուրդը, և Աստծո հրաշալի մեծությունը հայելով նրա սրբերի մեջ՝ այն ամենն ինչ լսեց ու տեսավ, ձգտեց ամբողջ կյանքում ծառայեցնել ուրիշների փրկությանը:

### ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի առաքիլնասեր իշխան, պատկառանք տածելով Պայիս Մեծի անվան հանդեպ, ցանկացավ նրա նկատմամբ հնարավորին չափ առատաձեռն լինել: Դրա համար ահագին արծաթ և ոսկի վերցրեց և զնաց անապատ, որտեղ այդ մեծ ծերը ձգնում էր: Այդ ժամանակ Պայիսը գնում էր մի այլ ծերի մոտ և հանդիպեց իշխանին: Իշխանը նրան հարցրեց

- Որտե՞ղ է ապրում Պայիսը:

- Իսկ քո ինչի՞ն է հարկավոր Պայիսը, - հարցրեց սուրբ անապատականը:

- Ես արծաթ ու ոսկի եմ տանում նրան, - ասաց իշխանը, - որպեսզի Աստծո մարդն ամեն ինչ ունենա և բաժանի մյուս ճգնավորներին:

Այդժամ Պայիսը ձեռքերը երկինք բարձրացրեց և շնորհակալ եղավ Աստծուն, որ աշխարհում՝ բոլոր հոգսերի մեջ, դեռևս մարդիկ են գտնվում, որ չեն մոռանում Տիրոջ ծառաներին: Հետո դառնալով իշխանին՝ ասաց.

- Ով մարդասեր եւ քրիստոսասեր, Աստծո անունով հավատացնում եմ քեզ, որ անապատականներին ոսկի և արծաթ հարկավոր չէ: Պայիսին շուտ կարող ես գտնել, բայց ոչ նա, ոչ էլ մյուս անապատականները քեզնից ոչինչ չեն ընդունի: Ուրեմն առանց վշտանալու զնա մարդկանց մոտ: Այստեղ Տերը միայն կօրհնի քո նվիրատվությունը, իսկ այնտեղ Տերը կմեկնի իր ձեռքը, որ վերցնի այն: Այնտեղ բազում աղքատներ ու կարոտյալներ, որբեր ու այրիներ կգտնես. հոգա նրանց մասին, տաքացրու, կերակրիր, հագցրու նրանց և Տիրոջից փոխհատուցում կստանաս:

Առատաձեռն իշխանը, չիմանալով, որ դա Պայիսն է, հետևեց նրա խորհրդին. վերադարձավ քաղաք և ամեն ինչ բաժանեց աղքատ համաքաղաքացիներին և այն դժբախտներին, որոնց գտավ քաղաքի շրջակայքում:



**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՉՈՒՄ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ  
ԿՇՌԱԴԱՏՈՐԵՆ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐՈՎ**

Խաղաղ կյանք ցանկանալով՝ սուրբ Պայիսը մտադրվել էր հեռանալ մենաստանի եղբայրակցությունից: Սուրբ Հովհաննես Կոլոզը, որ Պայիսի ընկերն ու ծոմակիցն էր, իմանալով նրա մտադրություն մասին, մեծ և սիրալիր ծերից բաժանվելու ամբողջ ծանրությունն զգալով՝ ցանկացավ բոլոր միջոցներն օգտագործել նրան մենաստանում պահելու համար: Բայց ավելի շատ մտածելով իր ընկերոջ օգուտի, քան իր սրտի ցանկություն մասին, ասաց նրան. «Քրիստոսով սիրելի եղբայր, ես սրտիս մեջ ունեմ՝ ինչ որ դու: Ես նույնպես այնքան սրտանց երազում եմ միայնություն մասին, բայց կասկածում եմ՝ արդյոք Աստծուց է այդ միտքը: Մեզ համար կործանարար կլինի, եթե այն լինի մարդկային ցանկությունից դրոված: Աղոթենք Տիրոջը, որ Իր կամքի համաձայն կարգավորի մեր կյանքը և մեզ հայտնի անի. այստե՞ղ մնանք, գնանք անապատի մենաստան՞ը, թե՞ առանձնանանք իրարից»:

Պայիսը հաճույքով ընդունեց Հովհաննեսի խորհուրդը, և նրանք երկուսով աղոթքի կանգնելով ողջ գիշեր՝ Տիրոջից հայտնություն խնդրեցին: Տերը չմերժեց Իր ծառաների աղերսանքը: Հաջորդ օրվա լուսաբացին նրանց հայտնվեց հրեշտակը և սուրբ ընկերներին օրհնելով ասաց.

- Ձեզնից յուրաքանչյուրի համար Աստված իր կենցաղն է նշանակել: Դո՛ւ Հովհաննես, մնալով այստեղ ուրիշների փրկության համար, դարձիր ուսուցիչ, իսկ դու, Պայիս, այստեղից գնա անապատի արևմտյան մասը, որպեսզի այնտեղ քեզանով փառավորվի Աստծո անունը:

Այս ասելով հրեշտակն անհետացավ: Սուրբ հայրերը շնորհակալություն հայտնեցին մարդասեր Աստծուն և իրար համբուրելով՝ բաժանվեցին:

Քրիստոնյանե՛ր, սուրբ Պայիսն իր տեղը միայն սրտալիր աղոթքից հետո փոխելով, իր ճանապարհի համար ստացավ Աստծո օրհնությունը և դարձավ այնքան մեծ, որ ինքը՝ աշխարհի Փրկիչը հայտնվեց և մխիթարեց նրան: Նույնքան նշա-

նավոր էր և նրա ընկեր Հովհաննեսը: Նրա ճգնավորական դարոցից դուրս եկան այնպիսի մեծագույն հայրեր, ինչպեսին, օրինակ, Արսեն Մեծն է: Դուք, որ երբեմն մի կոչումը փոխարինում եք մյուսով, ընդօրինակեցեք այս ծերերին, և Աստված ձեր մտադրություններին բարի ուղղություն կտա:

**ԴԱՄ՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՓՈՐՁՈՂՆԵՐԻՆ**

Մի անգամ մենաստանում գտնվող ճգնավորները հավաքվեցին, որպեսզի վճռեն հետևյալ հարցը, թե ո՞վ է եղել Մելքիսեդեկը: Յուրաքանչյուրն ասաց՝ ինչ մտածում էր: Երբ հերթը հասավ աբբա Կոպրիոսին, նա երեք անգամ հարվածեց իր շուրթերին և ասաց. «Վայ քեզ, Կոպրիոս, վայ քեզ, Կոպրիոս, վայ քեզ, Կոպրիոս, որ թողած Աստծու կողմից մարդուն հանձնարարած գործերը, քննում ես այն, ինչ Նա քեզնից չի պահանջում»: Այս լսելով եղբայրները արագորեն ցրվեցին իրենց խցերը:

**ԻՍԿԱԿԱՆ ՄԱՐԴԸ ՉՊԻՏԻ ԽՈՒՍԱՓԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ**

Սուրբ Թեոդորոսը իր կամքին հակառակ սուրբ Սաբբայի մենաստանից կանչվեց և նշանակվեց Եղեսիայի եկեղեցու եպիսկոպոս: Իր խաղաղ խցում արցունք թափելով և հրաժեշտ տալով սիրելի եղբայրներին՝ Թեոդորոսը Եղեսիայի մի քանի նշանավոր քաղաքացիների հետ ճանապարհ ընկավ: Բայց երբ հասան Եփրատ գետին և գիշերելու համար վրան խփեցին, սուրբ անապատականը վշտանալով և թախծելով սուրբ մենաստանի ու եղբայրների համար՝ սաղմոս երգեց, հետո արտասովեց ու մտածեց փախչել, բայց հանկարծ հինջ իջավ վրան և անհայտ մի ձայն լսեց. «Վախեցիր անիրավ ծառայի բախտից, որ Տիրոջ տաղանդը հողում էր թաքցրել: Մեծ մեղք է գործում նա, ով, ուժ ունենալով, չի ցանկանում Քրիստոսի լուծը կրել»:

Սուրբ Թեոդորոսը վեր թռավ և մի քիչ մտածելով ասաց. «Թող Տիրոջ կամքը լինի»: Նա դադարեց գանգատվել և հաճույքով շարունակեց ճանապարհը, որ տանում էր դեպի իր սուրբ պարտականությունների կատարումը:

### ՀԵՌՈՒ ՄՆԱ ՈՒՐԻՇԻ ՈՒՆԵՅՎԱԾՔՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ՝ ՆԱԵՎ ԱՆՎՆԱՍ ԴԵՊՔԵՐԻՑ

Երկու հարազատ եղբայրներ՝ Հովհաննեսը և Թեոդորոսը, մի քանի տարի առանձնացել էին մենաստանում, առանձին խցերում ձգտելով ճգնել իրենց հոգիների փրկության համար, և վերջապես այնքան կատարյալ դարձան, որ հաճախ նրանց հայտնվում էր Աստծո հրեշտակը և զորացնում էր Աստծուն հաճելի սխրանքներ գործելու համար: Բայց մարդու մեջ կարող է կատարյալ որևէ բան լինել, երբ մարմինը նրան պահում է աշխարհում:

Մի անգամ Հովհաննեսը և Թեոդոսն իրարից որոշ հեռավորության վրա քայլում էին անապատում և բույսեր էին հավաքում, երբ հանկարծ Հովհաննեսը զարմացած կանգ առավ, բայց հենց նույն րոպեին խաչակնքելով հեռու ցատկեց և արագ վազեց դեպի իր խուցը: Թեոդորոսը, հեռվից տեսնելով այս, զարմացավ և մտածելով, թե երևի եղբայրը օձից վախեցավ՝ հետաքրքրասիրությունը մոտեցավ և տեսավ մի կույտ ոսկի:

Աղոթելով նա հանեց թիկնոցը, նրա մեջ լցրեց գանձը և դժվարությամբ բերեց խուց՝ այն թաքցնելով եղբորից: Հաջորդ օրը նրան ոչինչ չասելով՝ նա գնաց Եդեսիա, գնեց ընդարձակ մի տուն պտղատու այգով ու շատրվաններով և այնտեղ հյուրանոց ու հիվանդանոց բացեց կարոտյալների համար: Հետո մի լավ կառավարիչ գտավ, մնացած հարստությունից հազար ոսկի տվեց բարեգործական հաստատության ծախսերի համար, մնացածը բաժանեց աղքատներին և վերադարձավ անապատ իր եղբոր՝ Հովհաննեսի մոտ:

Նա ճանապարհին մտածում էր. «Իմ եղբայրը կարող էր, բայց չցանկացավ կամ չկարողացավ բարիք գործել, իսկ ես

մեծ և աստվածահաճո գործ կատարեցի»: Իր սիրտն այս հպարտ մտքին տված՝ Թեոդորոսը մոտեցավ այն տեղին, որտեղ որ Հովհաննեսն էր ապրում: Բայց այդտեղ նրան հանդիպեց այն նույն հրեշտակը, որն առաջ այցելում էր նրան: «Ինչո՞ւ ես սնափառություն տրվել ու գոռոզանում ես եղբորդ առաջ: Իմացիր, որ քո ողջ աշխատանքը, քո ամբողջ հյուրընկալ ու հիվանդընկալ գործը չեն կարող հավասարվել Հովհաննեսի՝ ոսկու վրայից ցատկելուն: Այն ոսկու, որն իրեն չէր պատկանում: Անցնելով ուրիշին պատկանող գանձի վրայից, նա թեթև թևերով թռավ-անցավ այն անդունդը, որ հաստատված է մեծահարուստի ու Ղազարոսի միջև, և Աբրահամի գոգն սպասում է նրան: Սրանից հետո մինչև կյանքիդ վերջը չես տեսնի նրա երեսը: Նաև ինձ չես տեսնի այնքան ժամանակ, մինչև որ հաճելի չլինես Աստծուն»:

Այս ասելով՝ հրեշտակն անհետացավ: Վախեցած Թեոդորոսը հագիվ հասավ եղբոր քարանձավը և, նրան չգտնելով՝ հեկեկայով լաց եղավ: Թեոդոսի սուգը շարունակվեց յոթ օր: Դրանից հետո նա գնաց Եդեսիա և այնտեղ սուրբ Գևորգ եկեղեցում ապաշխարեց քառասունները տարի: Բայց այստեղ էլ որոշ մտքեր չէին դադարում այցելել նրան, եւ սև ամպի նման հաճախ անմխիթար վշտով էր լցվում նրա սիրտը:

Այսքան սարսափելի է ընչաքաղցությունը, քանզի նրանից անբաժան է վիրավորանքը, իսկ հաճախ էլ՝ մերձավորի սնանկացումը: Դրա համար էլ արդեն հիսուներորդ տարում Տերը հիշեց Թեոդոսին և պահապան հրեշտակին նորից թույլատրեց այցելել նրան:

### ԱՆՋԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԵԼՈՒ ՄԵՋ, ՈՐ ՄԱՐԴԱՍԻՐԱԲԱՐ ՄԵՐԿԱՅՎԵՑ

Հռոմեացի մի ծեր եկավ մենաստան և հաստատվեց եկեղեցու մոտ գտնվող լավագույն խցերից մեկում: Այստեղ անցկացնելով աստվածահաճո կյանք՝ նա չէր հետևում անապատական կյանքի բոլոր կանոններին: Ծառա ուներ, հագնվում

էր մաքուր, ուստով էր, բայց՝ չափավոր և ոչ թե միայն հաց ու ջուր: Ունեք, թեկուզև ոչ փափուկ, բայց հանգիստ անկողին: Այս օրինակով նա ապրեց 25 տարի ու դարձավ այնքան փառավոր, այնքան առաքինի ու պայծառատես, որ ամեն տեղից հյուրեր էին գալիս, որպեսզի նրանից որևէ բան սովորեն:

Նրանից բոլորը հեռանում էին բավարարված և օգուտ ստացած: Բայց մի եգիպտացի՝ նույնպես մեծ անապատական, նրա կյանքը տեսնելով գայթակղվեց: Պայծառատես ծերն անմիջապես իմացավ եգիպտացու մտքերը, սակայն դա հաշվի չառնելով, իր ծառային հրամայեց պատրաստվել տոնական երեկոյին: Տանտերը և հյուրերը ճաշակեցին մաքուր հաց, մրգեր, ձիթայուղ, գինի և մի քանի սաղմոս կարգալուց հետո գնացին քնելու:

Առավոտյան եգիպտացի անապատականը հրաժեշտ տվեց նրան և գնաց իր ճանապարհով, իր հոգու համար որևէ օգուտ չստացած: Բայց ծերը, տխրելով եղբոր մոլորվածության համար, ծառային հրամայեց նրան վերադարձնել և դարձյալ ընդունելով՝ ուրախությամբ, հարց տվեց.

- Որտե՞ղ է քո հայրենիքը, աբբա:
- Եգիպտոսում:
- Դու ո՞ր քաղաքից ես:
- Ես գյուղացի եմ:
- Ինչո՞վ ես զբաղվել այնտեղ, - շարունակեց հարցուփորձել հյուրընկալը:
- Ոչխար էի արածեցնում, - պատասխանեց հյուրը:
- Տուն ունե՞իր:
- Ոչ, ես օր ու գիշեր անց էի կացնում դաշտում:
- Անկողին ունե՞իր:
- Հովվի սովորական անկողինը կանաչ խոտն է:
- Իսկ ի՞նչ սնունդ էիր օգտագործում, կամ ի՞նչ գինի էիր խմում, - շարունակեց հյուրընկալը:
- Սնունդս չոր հացն էր, երբեմն աղի հետ, իսկ գինի նույնիսկ երազում չէի տեսնում: Գինուն ջուրն էր փոխարինում:
- Բավական անհարմար կյանք ես ունեցել: Իսկ բաղնիք գնո՞ւմ էիր:

- Ինչ բաղնիք: Անհրաժեշտություն դեպքում լողանում էի գետում:

Այս ամենից հետո ծերը հոգոց հանելով ասաց. «Դու ահագին տանջվել ու համբերել ես, Քրիստոսով սիրելի եղբայր: Փառք եմ տալիս Աստծուն, որ Նա քո ծերություն տարիներին կյանքդ լավացրեց: Իսկ ես՝ դժբախտս, իմ պատանեկության օրերն անց եմ կացրել շքեղության ու փայլի մեջ: Իմ հայրենիքն աշխարհի նախկին մայրաքաղաքն էր, ես ծառայում էի կայսեր պալատում և սենատում»:

Այս բառերից հետո եգիպտացին հասկացավ իր մոլորված լինելը և համեմատելով ծերի և իր անցյալն ու ներկան, տեսավ, թե ով է ավելի շատ հրաժարվել աշխարհից և հաճույքը փոխարինել Քրիստոսի խաչով: Իսկ ծերը շարունակեց. «Իսկ հիմա, փառք Աստծո, որ կարգադրում է մեր փրկությունը: Ես թողել եմ մայրաքաղաքը և պալատը և եկել եմ անապատ, թողել եմ շքեղ տներն ու փարթամ այգիները և մտել եմ նեղ խուցը, թողել եմ փղոսկրից ու ոսկուց սարքած մահիճներ՝ ծածկված շքեղ գորգերով ու Աստծուց ընդունել եմ այս անկողինը, իմ վրայից հանել եմ ծիրանին ու բոսորագուլյն շորերը և տես, թե ինչպիսի հագուստ եմ հագնում: Բազում ստրուկների ազատություն չնորհեցի և նրանց փոխարեն Տերն այս ծերին ներշնչեց, որ ինձ առանց օգնության չթողնի: Ավելին, շքեղ բաղնիքների փոխարեն ես մի քիչ ջրով իմ ոտքերն եմ լվանում, սանդալներ կրում թուլությանս պատճառով և խնջույքների երգերի փոխարեն Սաղմոսարան եմ կարդում: Եվ այսպես, աղերսում եմ քեզ, աբբա, ներիք ինձ, եթե մյուսների համեմատությամբ ավելի բաներ եմ անում, իմ հոգին հոժար է, իսկ մարմինս՝ տկար»:

Լսելով այս ամենը՝ եգիպտացի ճգնավորը հազիվ կարողացավ ինքն իրեն հավաքել և բացականչել. «Վայ ինձ, ես աշխարհի աղքատությունից եկել եմ հանգիստ վայր, իսկ դու այդքան հաճույքներից հետո վշտալի պտուղներ ես քաղում, հարստությունից ու փառքից հետո՝ աղքատություն և մոռացվածություն»:

Այս հոգեփրկիչ դասից հետո նա գնաց իր ճանապարհով՝

բոլորին պատմելով իմաստուն և մարդասեր խաչակրի մասին, որ աղքատ է բոլորից: Երբ ինչ-որ վատ միտք էր տանջում նրա հոգին, նա միշտ գնում էր իմաստուն ուսուցչի մոտ, որպեսզի իր աչքով տեսնի այն, թե մեկն ինչ է ձեռք բերել անապատահան կյանքում, իսկ մյուսն ինչից է զրկվել:

**ՈՎ ԴԱՏՈՒՄ Է ՄԵՐՁԱՎՈՐԻՆ,  
ՆԱ ՍՐԲԱՊՂԾՈՐԵՆ ԽԼՈՒՄ Է ՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Մի անգամ աբբա Իսահակ Թեբացին հարևան վանքում գտնվելիս մի ուրիշ հոր դատեց՝ անփուլթ կյանք վարելու համար: Այս միտքը, որ նաև ինքնասիրության արդյունք էր, այնպես տիրեց Իսահակի սրտին, որ նա տուն դառնալով չդադարեց եղբոր արարքները քննադատել և քննարկել: Բայց, երբ նա մոտեցավ իր խցին, խցի դռների մոտ նրա դեմ ելավ Հրեշտակը և խստորեն ասաց. «Փրկիչն ինձ պատվիրել է իմանալ քո միտքը. ինչպե՞ս վարվի ինքն այն աբբայի հետ, որին դատապարտում ես դու»:

Իսահակն զգաց իր մեղավորությունն ու ընկնելով Հրեշտակի առաջ բացականչեց. «Մեղք գործեցի, անօրինացա, անարդար վարվեցի: Ինձ համար աղաչիր աշխարհի Փրկչին»: «Վեր կաց, ~ ասաց Հրեշտակը, ~Տերն այս անգամ ներում է քեզ, բայց հաջորդ անգամ զգուշացիր եղբորդ դատել, նախքան Աստված կդատի նրան, այլապես նույնիսկ այս խուց չի թույլատրվի մտնել քեզ»:

**ՄԵԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է ԼԵԶՎՈՎ ՉՄԵՂԱՆՉԵԼԸ**

Սուրբ Պամբոն, որ հետագայում բավական հիմնավոր գիտեր Սուրբ Գիրքը, իր ճգնակեցություն սկզբում կարգալ չգիտեր, դրա համար էլ գնաց եղբայրներից մեկի մոտ, որպեսզի նրա ղեկավարությունը անգիր անի Դավթի սաղմոսները: Բայց հազիվ լսեց. «Ասացի՜ «Ձգուչանամ իմ ճանապարհին, որպեսզի լեզվովս չմեղանչեմ» /Սաղմ 38: 1/, թողեց հեռացավ և դա-

դարեց ուսուցչի մոտ գալ: Երբ վեց ամիս անց ուսուցիչը տեսավ նրան, հարցրեց, թե ինչու երկար ժամանակ իր մոտ չի գալիս, Սուրբ Պամբոն պատասխանեց. «Ես դեռևս չեմ սովորել ինչպես հարկն է կատարել Դավթի խոսքը. «Ձգուչանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանչեմ»:

Միայն տասնինը տարի անց այս ծերը կարողացավ ասել, որ իսկապես կարողացել է անել այն, ինչ սովորեցնում է սաղմոսի այս տունը: Մեղք չգործելու համար սուրբ Պամբոն այդպես էլ զսպելով իր լեզուն՝ ողջ կյանքի ընթացքում ոչ միայն չդատեց մերձավորին, այլև իր գրույցներում շատ զգուշավոր էր, իսկ պատասխանների մեջ՝ կշռադատված: Իսկ երբ նրան ինչ-որ բան էին հարցնում Սուրբ Գրքից կամ այլ կարևոր գործի մասին, երբեք իր կարծիքը միանգամից չէր արտահայտում, այլ սկզբում լռության մեջ ինքն իրեն մտածում էր, ապա ասում. «Չգիտեմ, այս հարցին ինչպես պատասխանեմ»: Հազվադեպ՝ երբ օր հետո, հաճախ՝ երբ շաբաթ անց, իսկ երբեմն՝ միայն երբ ամիս անց նոր միայն պատասխան էր տալիս: Այդ պատճառով նրա պատասխանը միշտ ճշմարիտ և օգտակար էր՝ որպես պարզև նրա բանականությունը՝ տրված Աստծո շնորհից: Բոլորը լսում էին ծերին և փառք էին տալիս Աստծուն, որ խոսում է նրա միջոցով:

Տեղին լուրուց լավ բան չկա: Լռության մեջ մարդը Աստծո՝ մերձավորին սիրելու պատվիրանը պահպանելով իր լեզուն չի դարձնում կրակ, անիրավություն աշխարհ, անզուսպ չար: Այդպիսով չմերկացնելով իր սրտի չարությունը՝ նա իր տգետ մտքին նույնպես թույլ չի տալիս դատել: Խեղճ և ծիծաղելի են այն մարդիկ, որոնք չեն կարող հասկանալ, կամ չեն հասցնում ըմբռնել բանի էությունը, բայց իրենց լեզվին լրիվ իշխանություն են տալիս դատաստան կարդալու:

**ԳԾԵՐ՝ ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐԻՑ**

1. Սուրբ Սաբբա Օծյալը մի քանի եղբայրների խոովարար հոգու դիմաց տեղի տալով՝ հեռացավ դեպի Սկյուլթապոլի սահմանները: Նա այնտեղ մի քարանձավ գտավ, մտավ այնտեղ, և

քանի որ երեկո էր, աղոթեց ու պառկեց քնելու: Բայց գիշերվա կեսին եկավ առյուծը և իր բնում քնած մարդուն տեսնելով՝ ատամներով բռնեց նրա հագուստից և դուրս քաշեց անձավից: Սուրբ Հայրը արթնանալով չսարսափեց, այլ հանգիստ վեր կացավ և սկսեց կարդալ կեսգիշերային աղոթքը, իսկ առյուծը մի քիչ այն կողմ գնաց, ասես սպասելով, թե Սաբբան երբ կավարտի «կանոնը»: Դրանից հետո ծերը նստեց, իսկ առյուծը դարձյալ սկսեց նրան քարանձավից դուրս քաշել: Այդժամ Աստծո պատկերով մարդն ասաց նրան. «Լսիր, քարանձավն ընդարձակ է: Մենք երկուսով կարող ենք ապրել միասին, քանզի մեզ մի Տեր է ստեղծել: Եթե դու չես ցանկանում ինձ հետ ապրել, ապա ավելի լավ է, որ դու հեռանաս այստեղից, քանզի ես ստեղծված եմ Տիրոջ ձեռքով և նրա պատկերով մեծարված՝ քեզնից անհամեմատ ավելի լավ»:

Այս լսելով՝ ահեղ գազանը դուրս եկավ անձավից և այլևս չվերադարձավ այնտեղ:

2. Սուրբ Հայրեր Հովհաննես Եվիրատը և Սոփրոնիոս Իմաստասերը Լիմոնարում պատմել են հետևյալը: Մի անգամ Հորդանանի անապատում սուրբ Գերասիմին հանդիպեց հիվանդ առյուծը և ցույց տվեց ոտքը, որի մեջ փուշ էր մտել և այնտեղ մնալով՝ ուռուցք առաջացրել: Անխոս գազանը գորովաշարժ աչքերով նայելով ծերին, հեզաբար օգնություն էր խնդրում նրանից: Սուրբ Գերասիմը, խղճալով տանջվող անասունին, նրան հրամայեց պառկել գետնին, ինքը նույնպես նստեց և առանց վախենալու բռնելով նրա ոտքը՝ հանեց փուշը, մաքրեց վերքը և թաշկինակով կապելով՝ նրան նշան արեց, որ հեռանա իր տեղը: Բայց առյուծը չցանկացավ հեռանալ իր ազատարարից, նրա հետևից գնաց մինչև նրա մենաստանը և այլևս անապատ չվերադարձավ, այլ մշտապես քայլում էր նրա հետևից, այնպես որ բոլորը զարմանքով էին նայում գազանի կապածությունը: Սուրբ ծերն իր ձեռքով կերակրում էր նրան հացով, տալիս ուրիշ խորտիկներ, որոնցով ինքն էր սնվում: Նա առյուծին Յորդան էր կոչում և առյուծն արձագանքելով այդ անվանը մշտապես վազում էր նրա մոտ, ասես հրամանի սպասելով: Գազանների թագավորի այս հնազանդությունը հասավ

այնտեղ, որ նա հսկում էր վանքի անասուններին և նույնիսկ այլ աշխատանքներ էր կատարում: Բայց այս օրինակն ավելի խոսուն է: Իր սեփական ցանկություններով կամ Աստծո կամքով այս հրաշալի գազանը որոշ ժամանակ հեռացավ մենաստանից: Այդ ժամանակ սուրբ Գերասիմը մահացավ և թաղվեց: Շուտով հայտնվեց առյուծը և սկսեց փնտրել իր բարերարին:

Բոլոր ծերերը նորից զարմացան, թե ինչպիսի անհամբերություն էր նրան փնտրում գազանը: Իսկ սուրբ Գերասիմի Սաբբատ անունով աշակերտներից մեկը ասաց նրան. «Յորդան, մեր ծերը որք թողեց մեզ, գնաց Տիրոջ մոտ»:

Սրանից հետո առյուծը չորս կողմը նայելով տխուր մոնչում էր: Սաբբատը նրան հաց բերեց, բայց առյուծը չկերավ, այլ սաստկացրեց իր ողբը, ասես պահանջելով, որպեսզի սուրբ Գերասիմը գա իր մոտ: Այդժամ Սաբբատը, չկարողանալով արցունքը զսպել, նրան տարավ ծերի գերեզմանի մոտ: «Մեր ծերի մարմինն այստեղ է թաղված, իսկ այնտեղ նրա հոգին է», - գերեզմանը և երկինքը ցույց տալով ասաց նա, և ծնկելով սկսեց աղոթել: Գազանը, լացող Սաբբատին տեսնելով, գլուխը խփեց գետնին և ահավոր մոնչոց արձակելով՝ իր շունչը փչեց ծերի գերեզմանի վրա:

Բոլորին հայտնի է, որ այս առյուծը գիտակից և բանական հոգի չունեց, բայց այս՝ ժամանակով և հավատքով հաստատված պատմվածքը կարդալով՝ պետք է խոստովանել, որ Աստված սուրբ Գերասիմին կատաղի գազանի վրա իշխանություն տալով, ցանկացավ մեզ ցույց տալ, թե գազաններն ինչպես էին հնազանդվում Ադամին դրախտում՝ նախքան նրա անհնազանդությունն ու դրախտից արտաքսվելը, և թե իսկական հավատացյալին ինչ չափով է վերադարձվում Աստծո պատկերը, որ աղարտվեց նախաստեղծ մարդու հանցանքով՝ իր բոլոր սերունդների համար:

3. Սուրբ Հովհաննիկոս Մեծը ճգնում էր Կոնստանդի լեռներում, որտեղ բազում գազաններ և օձեր կային, և նրանցից որևէ վտանգ չէր տեսնում: Մի անգամ ձմեռնամուտին, բարձր լեռներում նա մի խոր անձավ տեսավ, և քանի որ խուց չուներ, ուր կարող էր պաշտպանվել ցրտից, այդ անձավը հար-

մար համարեց ցրտից պաշտպանվելու համար, անմիջապես ներս մտավ և շատ ուրախացավ՝ ինչ-որ այրվող բան տեսնելով: Հովհաննիկոսը գետնից չոր ձյուղ վերցրեց և գցեց իր կարծիքով մարող կրակի վրա: Բայց հանկարծ այդ «կրակը» ցնցվեց և փայտն ընկավ գետնին: Սուրբ ծերը մոտեցավ և տեսավ, որ դա մի հսկա օձ է, որի աչքերը փայլում են՝ վառվող ածուխների պես: Սակայն Աստուծոց իշխանությունն ունենալով անտեսանելի օձի վրա, չվախեցավ երևացող օձից, այլ տեղափոխվեց քարանձավի աջ կողմը և հրեշի հետ այդտեղ բնակվեց մինչև ձմռան ավարտը:

4. Սուրբ Սերգիյը՝ Ռադոնեժի հրաշագործը, որ հեռացել էր մարդկանցից հեռու մի մենավոր վայր, տարօրինակ մի այցելու ունեւր: Երբ խոհեմությամբ, աղոթքով ու աշխատանքով նա հաղթահարեց բոլոր տեսակի վախերն ու երազանքները, այդժամ նրա մոտ եկավ մի մեծ ու կատաղի արջ: Սուրբ անապատականը սնում էր նրան: Հաճախ գազանին տալով հացի վերջին փշրանքը՝ ինքը մնում էր քաղցած: Սերգիյի հոգին այդքան ողորմած էր: Եվ այդ կատաղի արջին նա դարձրեց իր առջև խաղացող մի գառան նման:

Քրիստոնյաներ, ինչքան չի կարող անել հավատքը: Չգարմանաք, քանի որ Ադամին իր անմեղ ժամանակ ենթարկվում էին բոլոր գազանները և հեղ էին: Կարելի է կարծել, որ մեր խստասրտությունը պատճառով են նրանք կատաղել և այսքան սարսափելի դարձել: Մարդասիրությունն ու առաքինությունը կարող են կատաղությունն ու վայրագությունը փոխել հեզություն և խաղաղության: Դրա համար պետք է, որ մեր միտքն ու կամքը նորանան և սրբանան: Այնժամ և մեր հոգին այն սրբություն վիճակը ձեռք կբերի, որի մեջ առաջին Ադամն էր: Չմտածենք, թե սա հնարավոր չէ: Ինքն Աստված մեզ պատվիրեց նման լինել Իր Որդու պատկերին<sup>4</sup>:

Քրիստոնյաները, որ նոր մարդ են դարձել, ընդունակ են «հաղորդակից լինել աստվածային բնությունը և հեռու մնալ այս աշխարհի ցանկություններից ու ապականություններից» /Բ Պետրոս 1:4/:

Առաքյալը գրում է. «Եւ մենք բոլորս բաց երեսով տեսնե-

լով Տիրոջ փառքը, ինչպես հայելու մեջ, նույն պատկերով ենք նորոգվում փառքից փառք, որպես թե Տիրոջ հոգով» /Բ Կորնթ. 3: 18/:

Այս սրբացումը երկնավոր Հոր կամքն է, քանզի Նա ասում է «Սուրբ եղեք, որովհետև սուրբ եմ ես» /Ա Պետրոս 1: 16/: Լինենք կատարյալ, ինչպես որ Նա է կատարյալ /Մատթ. 5: 48/, լինենք գթասիրտ, ինչպես որ Նա է գթասիրտ /Ղուկ. 6: 36/:

Այս ամենը սրբերն իրականացրին իրենց գործերով, որոնցից մի քանիսը նմանվեցին Աստվածային գործերին: Եվ այսպես, անմիտ է նա, ով չի հավատում հրաշքներին, որ կատարում են ընտրյալ մարդիկ: «Եվ այս բանի համար իսկ ամեն ջանք գործադրելով՝ ձեր հավատով առաքինությունն ձեռք բերեք, առաքինություն՝ գիտություն, գիտություն՝ ժուժկալություն, ժուժկալություն՝ համբերատարություն, համբերատարություն՝ աստվածապաշտություն, աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրություն, եղբայրասիրությամբ էլ՝ սեր» /Բ Պետրոս 1:5-7/: Այդ ժամանակ կտեսնենք, որ մարդու համար էլ հնարավոր է առյուծների բերանը փակել:

### ՍՈՒՐԲ ՍԻՄԵՈՆԻ Ս ԲԱՆՔՆԵՐԸ

1. Սուրբ Սիմեոնը, որ Սյունակյաց էր կոչվում, տասնութ տարեկան էր, որ հեռացավ անապատ: Սրտում նպատակ դնելով միայն Աստծո մասին մտածել, նա մի քարանձավ գտավ և խաչի տեսքով պառկելով գետնին, լացով աղոթեց Աստծուն, որ իրեն ցույց տա փրկության ճանապարհը: Երկրպագություններից հոգնած պատանի Սիմեոնը քնեց և հետևյալ երազը տեսավ: Նրան թվում էր, թե հող է փորում, որպեսզի ինչ-որ ամուր կառույցի հիմք դնի և ձայն լսեց. « որը փորիր»: Մի որոշ ժամանակ աշխատելով և մտածելով, որ այդ խորությունը ամուր հիմքի համար բավական է, Սիմեոնը կանգ առավ, բայց դարձյալ լսեց. « որը փորիր»: Նա դարձյալ սկսեց փորել հողը, բայց հազիվ էր հոգնածությունից ցած դրել բահը, երբ երրորդ անգամ լսեց նույն ձայնը. « որը փորիր»: Այնժամ Սի-

մեծնը հավաքեց իր բոլոր ուժերը և աշխատեց այնքան, մինչև որ անտեսանելի ձայնը նրան ասաց. «Դադարեցրու, հիմքն ամուր կլինի: Հուլիսի Աստծո վրա դնելով կառուցիր»: Քնից արթնանալով՝ Սիմեոնը գոհով խոսեց հայտնեց Աստծուն այսպիսի փրկարար դասի համար, և միշտ հիշում էր, որ առաքինի կյանքի հիմքն աշխատանքն է:

2. Սուրբ Սիմեոնը ցանկացավ իր ձեռով աշխատել: Բարձրացավ մի բարձր ժայռի վրա և ինքն իրեն կապեց քարին, որ չկարողանա հեռանալ հողեոր սխրանքների տեղից, եթե հանկարծ սրտի մեջ նման ցանկություն առաջանա: Այս զարմանալի ինքնահարկադրանքի մեջ գտավ նրան Անտիոքի արքեպիսկոպոս Մելիտոսը, որ այցելել էր նրան՝ որպես Քրիստոսի ճգնափորների մեջ ամենամեծին: Բայց Սիմոնի աշխատանքները գովաբանելով՝ իմաստուն հովիվը չխրախուսեց նյութական կապանքները: «Մարդն առանց շղթաների էլ ընդունակ է ինքն իրեն տիրապետել, - հայրաբար ասաց նա, - և դու, զավակս, որևէ տեղի քեզ կարող ես կապել ոչ թե երկաթով, այլ քո կամքով ու գիտակցությամբ»: Լսելով մեծ ճշմարտությունը՝ Սիմեոնն անմիջապես հանեց շղթաները և չհրաժարվելով մի տեղում ճգնելու մտքից, իր մտածումները այդ ժամանակից սանձահարում էր սեփական կամքով և իր միտքը գերի էր դարձնում Քրիստոսի հնազանդությանը, որպեսզի լինի Նրա խաչի կալանավորը:

3. Սուրբ Սիմեոնը մի քանի տարի ճգնեց այդ բլուրի վրա, բայց նրա մոտ բոլոր կողմերից բազմաթիվ հյուրեր էին գալիս, ուստի նա դրա համար ցանկացավ հեռու մնալ մարդկային ասեկոսներից և դրա համար էլ ընտրեց մենակեցության՝ մինչ այդ չտեսնված ձև: Մի սյուն պատրաստեց, իսկ նրա վրա՝ մի նեղ խուց: Դրա համար էլ կոչվեց Սյունակյաց: Այս նոր և տարօրինակ բնակարանը սկզբում գետնից վեց արմնկաչափ բարձրություն ուներ: Որոշ ժամանակ անց բարեպաշտ այցելուները նրա համար մի սյուն տնկեցին՝ 12, իսկ հետո՝ 22, վերջապես՝ 40 արմնկաչափ բարձրությամբ: Այսպես սուրբ Սիմեոնը տարբեր սյուների միջոցով, ասես աղոթքներով, մտնում էր երկինք՝ Աստծո հայացքի ներքո:

Ողջ աշխարհում ամենախստակրոն անապատականները զարմանում էին սուրբ Սիմոնի անօրինակ կյանքով, իսկ մի քանիսը ցանկանալով փորձել նրա մեջ բնակվող «հոգին»՝ երեք հարգարժան ծերեր ուղարկեցին, որպեսզի նրան հրամայեն ապրել մյուս եղբայրների օրինակով: Հազիվ էին բանագնացները նրան հայտնել սուրբ եղբայրության կամքը, Սիմեոնը ոտքը դրեց աստիճանին, որպեսզի իջնի ներքև: Այդժամ երեք ծերերն ասացին նրան. «Մի իջնիր, սուրբ պատանի, այլ մնա քո սկսած ճգնության մեջ: Հիմա գիտենք, որ քո նպատակը ներշնչված է Աստծուց»:

Եվ քանի որ սուրբ Սիմոնը վախեցավ, որ իր չլսելով կզայրացնի հայրերի հավաքին, ապա ծերունիները հայտնեցին նրան, որ իրենց հանձնարարված էր նրան սյունից ցած իջեցնել բռնությամբ, եթե ընդդիմանա հրամանին, և հակառակը՝ թողնել, որ մնա սյունի վրա, եթե ցանկանա ցած իջնել ինքնակամ: Սրանից հետո հրաշալի Սիմոնը մնաց իր տեղում, իսկ ծերունիները հեռացան նրա մոտից՝ փառաբանելով Աստծուն, որ իր ընտրյալներին ամրացնում է փրկության գործի մեջ:

4. Թեպետ սուրբ Սիմեոնն ամենից շատ ցանկանում էր առանձնություն և լռություն, բայց չի կարող թաքնվել սարի վրա դրված կանթեղը: Նրա մեջ գործող շնորհի փառքն այնքան մեծ էր, որ Արևելքում այնպիսի ժողովուրդ չկար, որ Սյունակյացին չճանաչեր: Վրացիները, հայերը, պարսիկները, իսմայիլացիները հազարներով գալիս էին նրա մոտ և մկրտվում նրա սյունի մոտ:

Զարմանալի էր ոչ միայն նրա խոսքը, այլև՝ հայացքի ուժը, որը վայրկենապես ազդում էր և փափկացնում բարբարոսների դաժան չարությունը և նրանք բարձրաձայն անիծում էին իրենց նախնիների մոլորությունը: Սիմեոնը մի տեղում կանգնած այնքան օգտակար էր եկեղեցուն, որքան՝ եթե մեկը քայլեր աշխարհով մեկ՝ բարեգործություն անելով ու քարոզելով: Այս զարմանալի սխրանքների ու հրաշագործությունների մեջ նա այնքան համեստ ու հեզ էր, որ մշտապես բոլորի առջև երևում էր նույն զվարթությունն աչքերի մեջ և զրույցների ժամանակ բոլորի նկատմամբ նույնպիսի սեր էր ցուցաբերում:

Տիրակալներն ու հողագործները, իշխաններն ու ստրուկները, հարուստներն ու աղքատները, առաքինասերներն ու արատավորները, նույնիսկ հասարակության մեջ ճանաչված չարագործները Սիմոնին ընդունում էին՝ որպես հայր և ուսուցիչ, որ բոլորի փրկության համար է աշխատում: Ոմանք նրա մոտից վերադառնում էին՝ որպես իսկական անապատականներ, մյուսները ուղղափառության մեծ մարտիկներ, և բոլորը՝ որպես օրինակելի քաղաքացիներ: Իսկ ոմանք, որոշելով միշտ վայելել Սիմոնի սուրբ զրույցները, իրենց կացարանը հաստատեցին նրա սյունի տակ: Այնպես որ նրա հրաշալի տունը, կարծես քաղաքի մեջ կանգնած լիներ:

5. Սիմեոնի ապրելու ամենօրյա կարգը նույնպես զարմանքի արժանի էր. ողջ գիշերն ու օրը մինչև ինը ժամը նա աղոթքի էր կանգնում: Դրանից հետո ուսուցանում էր սյունի շուրջը կանգնած ժողովրդին և եկվորներին, քարոզում էր Ավետարանը, խորհուրդներ էր տալիս, աղոթքով բուժում էր հիվանդներին: Նաև լուծում էր բոլոր վեճերն ու տարաձայնությունները՝ բոլորի մեջ խաղաղություն հաստատելով: Արևամուտի հետ դարձյալ սկսում էր աղոթել: Բայց իր հրաշալի կյանքի ժամերը տրամադրելով խոկումին ու մարդասիրությանը՝ նա չէր դադարում եկեղեցու խաղաղության մասին մտածել. բացահայտում էր հեթանոսական անաստվածությունը, հրեական հայհոյությունը՝ ոչնչացնելով հերետիկոսների ուսմունքները: Արքաներին ու երկրի բոլոր հզորներին նա իր իմաստուն ուղերձներով սովորեցնում էր Աստծո երկյուղին և դրդում էր ողորմածության, սիրո և Քրիստոսի եկեղեցու պաշտպանության: Անտիոքի եկեղեցու երեք պատրիարքներն իրենց պարտքը համարեցին Սյունաբնակին այցելել: Սուրբ Մելիտին, որ Սիմեոնի ուսուցիչն էր պատանի ժամանակ, միաժամանակ օրհնեց նրա՝ նմանը չունեցող ճգնությունները:

Երանելի Դոմնը նրա մոտ եկավ միայն նրա համար, որպեսզի նրա ներկայությամբ Պատարագ մատուցի և իրար հետ հաղորդվեն Քրիստոսի կենսատու խորհրդին: Սուրբ Մարտիրին նրան կոչեց Անտիոքի պաշտպանը երևելի և աներևույթ թշնամիներին և Աստծո գայրույթը մեղմացնողը:

6. Այս առաքինությունից և հավատքի հաղթանակի մեջ էլ 103 տարեկանում Սիմեոնը հասավ իր վախճանին: Վախճան, որը նույնքան նշանակալի էր: Մի օր, կամ ավելի ճիշտ Ավագ Ուրբաթ օրը, Սյունակյացը դուրս չեկավ հավաքված ժողովրդի առաջ, ինչպես որ սովորություն ուներ անել: Շաբաթ և կիրակի օրերին նույնպես բոլոր եկվորներն անհամբերությամբ սպասում էին նրանից փրկարար խրատ և օրհնություն ստանալու համար:

«Վերջապես ես՝ սուրբ Սիմեոնի աշակերտս, սարսափեցի և բարձրացա սյունի վրա, - պատմում է Անտոնը, - տեսա, որ սուրբ ծերը կանգնած է՝ գլուխը կուցրած է և ձեռքերը խաչածև տարածած: Մտածեցի, թե Սիմեոնը լուռ աղոթում է և լուռ կանգնեցի, բայց շուտով տեսա, որ սուրբ հոգին թողել է մաքուր մարմինը: Դառը լաց լինելով ես նրան հատակին դրեցի, համբուրեցի աչքերը, շուրթերն ու ձեռքերը, փաթաթեցի նրա նշխարները: Չիմանալով ժողովրդին ինչ ասել, հատկապես հիվանդներին, որ սպասում էին նրա բժշկությանը, ես չհամարձակվեցի ցած իջնել և լաց եղա անշունչ մարմնի վրա այնքան, մինչև քնեցի: Հետո քնի մեջ ինձ հայտնվեց Սիմեոնը, որը մխիթարեց: Հետո ես գաղտնի մի հավատարիմ եղբոր ուղարկեցի Անտիոք՝ սուրբ Մարտիրիի մոտ, հայտնեցի սուրբ ծերի ննջելու մասին: Բայց վատ լուրը փոթորիկի պես մի ժամվա ընթացքում տարածվեց: Լացի ձայնը տարածվել էր յոթ մղոնի չափ: Պատրիարքը եկավ երեք եպիսկոպոսների ուղեկցությամբ և ողջ սուրբ հավաքի հետ: Ինքը՝ Անտիոքի քաղաքապետը գինվորների ուղեկցությամբ եկավ՝ իր հարգանքը մատուցելու սուրբին: Այդպիսի հանդիսավորությամբ սուրբ նշխարները տեղափոխեցին Անտիոք»:

Գևորգ Կեղրինը և մյուս պատմիչները վկայում են, որ կայսր Լևոն Մեծը ցանկացավ Սիմեոնի անփուտ մասունքները բերել իր քաղաքը, բայց անտիոքցիները պատրաստ էին հարձակվել կայսերական պատվիրակների վրա: «Մեր քաղաքը քարե պարիսպներ չունի, - միաձայն գոռում էին նրանք, - որովհետև մեզ մոտ է հանգչում սուրբ Սիմոնի մարմինը: Այն Անտիոքի համար ե՛լ պարիսպ, ե՛լ պաշտպան կլինի»:



ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՔԱՆ Է  
ՕԳՆՈՒՄ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆԸ

Մի աֆրիկացի իշխան Պետրոս անունով մի պալատական ունեեր, որ սննդամթերք էր մատակարարում իշխանի սեղանին և դրա շնորհիվ մեծ հարստություն էր դիզել: Բայց այդքանով հանդերձ այնքան ժլատ էր, որ ինչ իրեն հիշում էր, ոչ մի անգամ ողորմություն չէր տվել որևէ աղքատի: Թվում էր, թե այսպիսի խստասիրտ մարդը վերջնականապես կործանված է: Բայց ողորմածն Աստված Պետրոսին զղջման բերեց հետևյալ ճանապարհով: Մի անգամ, երբ պալատ էր տանում նոր թխած հացերը, նա մի աղքատ տեսավ, որը նրանից ողորմություն էր խնդրում: Պետրոսը հայհոյեց ու գոռաց նրա վրա, բայց աղքատը շարունակեց նրան աղերսել Քրիստոսի անունով: Այնժամ Պետրոսն սկսեց քար փնտրել, որ խփի այդ անամոթ թափառաշրջիկին, և քանի որ քար չգտավ, ապա զայրույթի մեջ մի հաց վերցրեց ու շարտեց աղքատի դեմքին: Աղքատը վերցրեց հացը և նրան օրհնելով հեռացավ: Դրանից երկու օր անց Պետրոսն այնքան ծանր հիվանդացավ, որ հասավ մահվան դուռը: Այս վիճակում նա տեսիլքի մեջ իրեն տեսավ ինչ-որ դատարանում: Նրա առջև կշեռք էր, որի վրա մի կողմից դեերը դնում էին նրա գործերը, իսկ մյուս կողմում կանգնել էին Տիրոջ Հրեշտակները՝ չիմանալով ինչ անել: Առաջինները ծափահարում էին ու քրքջում, տեսնելով մեղքերի ծանրությունը, իսկ երկրորդները տխրություն խոսում էին իրար հետ. «Իսկ մե՞նք ինչ դնենք այս նժարին: Ոչինչ չկա մի հացից բացի, որ Պետրոսը շարտեց աղքատի դեմքին»: Հետո այս ողորմությունը նրանք դրեցին կշեռքին, բայց հացը հազիվ մի քիչ տեղից շարժեց մեղքերով ծանրաբեռնված նժարը: Այդժամ սուրբ Հրեշտակներն ասացին նրան. «Գնա, թշվառ Պետրոս, և այս հացի վրա մի քանի ուրիշ հացեր ևս դիր, որպեսզի քեզ չհասփշտակեն մեր թշնամիները և չտանեն կրակի գեհեն»:

Նույն պահին Պետրոսն սթափվեց և մտածելով տեսիլքի մասին, հասկացավ, որ դա ոչ թե իր հիվանդ երևակայության արդյունքն էր, այլ վերևից տրված դաս, քանզի նա կշեռքի

վրա տեսավ պատանեկությունից գործած իր բոլոր մեղքերը: «Եթե կատաղի զայրույթի մեջ շարտած մեկ հացը այսքան կարող է օգնել, - արցունք թափելով ասաց նա, - ապա որքան առաքինի է դարձնում ողջ կյանքում բարեսրտությամբ տրված ողորմությունը»:- Եվ Աստծո առջև երգվեց այսուհետ ողորմած լինել, իսկ Աստված, նրա անկեղծ զղջումը տեսնելով, նրան ոտքի կանգնեցրեց հիվանդության մահճից:

Եվ իրոք, Պետրոսն այնքան ճշտությամբ էր կատարում Տիրոջը տված երդումը, որ սրտի մեջ նպատակ դրեց անգամ իրեն չխնայել: Մի անգամ նրան մի անծանոթ հանդիպեց, որ աղքատացել էր նավի խորտակվելուց հետո, և ընկնելով ոտքերը՝ խնդրեց ինչ-որ բան տալ մերկությունը ծածկելու համար: Պետրոսն անմիջապես հանեց իր վերնագգեստը և տվեց դժբախտին: Բայց քանի որ անծանոթը նաև ուտելու բան չուներ, ապա Պետրոսի հագուստը վաճառեց: Պատահաբար անցնելով այդտեղով՝ Պետրոսը տեսավ վաճառականի մոտ դրված իր հագուստը, վիրավորվեց ու դառնությունից այդ օրը հաց չկերավ, հետո գնաց տաճար, լաց եղավ ու հեկեկաց. «Տերն իմ ողորմությունը չընդունեց, - մտածեց նա, - երևում է՝ ես արժանի չեմ, որ Նրա առաջ հիշվի իմ՝ թշվառիս անունը՝ որպես նրա սիրելի ծառայի»:

Վշտանալով ու հեկեկալով՝ նա ննջեց, և հանկարծ իր առջև տեսավ բարետես մի մարդու, որ շողում էր արևի նման, իսկ գլխին խաչ ուներ և հագել էր իր նվիրած հագուստը:

«Տեսնո՞ւմ ես այս հագուստը», - ասաց նրան հայտնվածը:

«Օ, Տեր իմ, դա առաջ իմն էր», - ասաց Պետրոսը:

«Ուրեմն մի վշտանա, - շարունակեց մարդը, - քեզնից եմ ընդունել այն: Ես այն կրում եմ և օրհնում եմ քեզ նրա համար, որ դու այն հագցրի ինձ՝ ցրտից մահացողիս»:

Տեսածից զարմացած Պետրոսն ասաց ինքն իրեն. «Երբ որ Քրիստոսն է հովանավորում աղքատներին, չեմ մեռնի և ես, եթե դառնամ աղքատներից մեկը»: Սրանից հետո նա իր ողջ ունեցվածքը բաժանեց աղքատներին, ազատեց իր ստրուկներին և գնաց Երուսաղեմ: Այնտեղ խոնարհվելով կենսատու Գերեզմանի առջև, նա Տիրոջ անունից մի ձերի խնդրեց, որ վաճա-

ուի իրեն՝ որպես ստրուկ, իսկ վարձը բաժանի աղքատներին:

Սուրբ Պետրոսը երկար ժամանակ ծառայեց իր տիրոջը և այնտեղ կմնար մինչև իր մահը, եթե նրան չճանաչեին Երուսաղեմ եկած համերկրացիները: Այնժամ Աստծո ծառան, փախչելով մարդկային փառքից, թաքնվեց մի անհայտ տեղում և այնտեղ մնաց մինչև իր երանելի վախճանը: Միայն Աստված գիտի, թե հիմա որտեղ է հանգստանում նրա տառապյալ մարմինը:

### ՋԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ, ՄԱՆԱՎԱՆԴ, ԱՂՈԹՔԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԻՆՁ

Սուրբ Սերգեյը՝ Ռադոնեժի հրաշագործը, պատանեկան տարիներին կարգալ ու երգել սովորեց իր եղբայրների հետ, որոնցից ավագի անունը Ստեփան էր, իսկ կրտսերինը՝ Պետրոս: Բայց որքան որ եղբայրներն ուշիմ և առաջադեմ էին, նույնքան անհասկացող և հասակակիցներից հետ մնացող էր Սերգեյը: Դրա համար ծնողները նրան հանդիմանում էին, իսկ ուսուցիչը պատժում էր՝ որպես ծուլի: Հաճախ անտանելի դառն էր լինում բարեպաշտ պատանու համար, երբ նա ամբողջ սրտով ու հոգով ձգտում էր լուսավորության, բայց միշտ հանդիպում էր ինչ-որ բնական արգելքի: Սակայն ամեն ինչ կարող են հաղթահարել ջանասիրությունն ու աշխատանքը, և հատկապես Լույսի Հորն ուղղված ջերմեռանդ աղոթքը:

Իսկական իմաստնությունն ստանալու անհամբերությունը բռնված Սերգեյը ճշմարիտ ճանապարհն է ընտրում, աղոթքով դիմելով Նրան, Ով լուսավորում է աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդու, և արցունքներով աղերսում է, որ բացի իր միտքն ու արձակի նրան կապող կապերը:

Աստված միշտ մոտ է կանգնած նրանց, ովքեր կանչում են իրեն: Նա շուտով Սերգեյի համար բարեպատեհ պահ ստեղծեց:

Մի օր հայրը վշտացյալ պատանուն ուղարկեց իրենց կորած ձիերը փնտրելու: Երկար փնտրելով՝ նա մի տեղ հանդիպեց մի ձերի, որը քահանայական կարգ ուներ և շողում էր առաքինությունում և հոգեկան բարությունում: Նա կանգնել էր կաղնու տակ

և աղոթում էր Աստծուն, որ ներկա է ամենուր: Սերգեյը մոտեցավ նրան և սպասեց աղոթքի վերջին՝ չհամարձակվելով խանգարել զրույցն Աստծո հետ: Բայց ձերը, երբ վերջացրեց աղոթքը, ինքը հարցրեց սուրբ պատանուն. «Ի՞նչ ես փնտրում, կամ ի՞նչ ես ցանկանում, զավակս»:

Սերգեյը, թեև ուղարկված էր ձիերը գտնելու, բայց քանի որ ողջ հոգով ձգտում էր ուսման, ձերին պատասխանեց. «Հոգիս ամենից շատ գրագիտություն սովորել է ցանկանում և ես շատ եմ վշտանում, որ չեմ կարողանում ըմբռնել»: Ծերը լսեց պատանու բարի ցանկությունը և նրա երեսին նայելով՝ տեսավ նրա բարի հոգին, աչքերն ու ձեռքերը դեպի երկինք բարձրացրեց և ջերմեռանդորեն աղոթեց՝ պատանի Սերգեյի համար վերևից խնդրելով լուսավորություն: Հետո նրան նշխարք տվեց, պատվիրելով այն ուտել, և ասաց. «Սա քեզ տրվում է, որպեսզի ստանաս Աստծո շնորհը և հասկանաս սուրբ Գրքերը»:

Այդ ժամանակից սկսած Աստծո շնորհն սկսեց գործել պատանի Սերգեյի մեջ, և Աստծո խոսքի լույսով այնքան լուսավորվեց նրա միտքը, որ շուտով նա դարձավ իր ժամանակի առաջին ուսուցիչն ու լուսավորիչը:

### ԽՈՆԱՐՀԱՄՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

Մի անգամ սուրբ Սերգեյը մահվան ու կյանքի Տիրակալին ուղղած իր աղոթքով հարություն տվեց մի մահացած մանկան: Հայրը տեսավ իր զավակին կենդանացած և վախով ու ուրախությամբ ընկավ Աստծո մարդու ոտքերը և նրան Աստծուն վայել շնորհակալություն հայտնեց: Սուրբն այս՝ միայն Աստծուն հատուկ գործը ոչ միայն իրեն չվերագրեց, այլև նույնիսկ երեսայի հոր այդ կարծիքն իր համար անտանելի համարելով ասաց. «Ոչ, զավակս, քո որդին մեռած չէր, այլ ցրտից ուշագնաց էր եղել և թուլացել, միայն քեզ թվում էր, թե նա մահացել է: Վստահ եղիր, որ տաք խուցը մտնելով՝ նա տաքացավ, և երբեք մի մտածիր, թե նա վերակենդանացավ, քանզի ընդհանուր հարությունից առաջ ոչ մեկի հարությունը չպետք է սպասել»:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՍԵՐԳԻՅԻՆ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի անգամ սուրբ Սերգիյն իր սովորութեան համաձայն գիշերային ժամերգութեան ժամանակ աղոթում էր իր աշակերտներին համար, երբ ձայն լսեց. «Սերգի՛յ»:

Զարմացած ծերը խաչակնքեց, բացեց լուսամուտը, որպեսզի տեսնի, թե ով է իրեն կանչողը և մի մեծ լույս տեսավ, որ երկնքից սփռվում էր իր մենաստանի վրա այնպես, որ գիշերն ավելի լուսավոր էր դարձել, քան ցերեկը: Այդժամ նա երկրորդ անգամ լսեց նույն ձայնը. «Սերգի՛յ, դու աղոթում ես քո զավակների համար, և ընդունված է քո խնդրանքը: Նայիր և տես, թե որքան եղբայրներ են Սուրբ Երրորդութեան անունով հավաքվել քո մենաստանում»:

Եվ նույն վայրկյանին սուրբ Սերգիյը տեսավ բազմաթիվ գեղեցիկ թռչուններ ոչ միայն մենաստանում, այլև նրա շրջակայքում, որ նստած ծառերի ճյուղերին երգում էին քաղցրաձայն: Արդար Սերգիյը մոռացավ իր երկրային գոյությունը և կարծեց, թե ինքը գրախտում է՝ Հրեշտակների դասի մեջ: Բայց հանկարծ լսեց երրորդ անգամ. «Սերգի՛յ, որքան թռչուն ես տեսնում այստեղ, այնքան կբազմանան քո աշակերտները: Որքան որ տարբեր է գեղեցկությունն այս փետրավորների, նրանք այդպես զարդարված կլինեն տարբեր առաքինություններով»: Այս ձայնի հետ վերջացավ տեսիլքը: Երկնային խոսքն հաստատվեց իրականում: Սուրբ Սերգիյի մենաստանը մշտապես ծաղկում էր մեծ հավատքի տեր և առաքինի այրերով: Նրա հոգևոր զավակները և հետնորդները դարձան ուսուցիչները ողջ Ռուսաստանի: Նրանք հիմնեցին սուրբ մենաստաններ, զարդարեցին արքեպիսկոպոսական գահերը, հոգևոր կաթով սնեցին պատանիներին: Ավետարանի ձայնով զորքերին կոչեցին հայրենիքի պաշտպանության, սնեցին հազարավոր քաղաքացիների ու մարտիկների, կայսրերին թաքցրեցին թշնամիներից ու չարագործներից, տառապող հայրենիքի կոչով կայծակ թափեցին այն ձեռքերից, որոնք խաղաղ ժամանակ երկինք էին կարկառում աղոթքով և չդադարելով

ծառայել խաղաղութեան Աստծուն՝ մենամարտում էին գողիպիսիների հետ:

ԱՐԴԱՐԻ ԺՊԻՏԸ

Սուրբ մարտիրոս Կարպը, դիմանալով այն դժգոհ տառապանքներին, որպիսիք միայն կարող էր մտածել զազանաբարո մոլեռանդությունը, և լինելով արյունով ողորկված, հանկարծ ժպտաց, և այս երկնային ժպիտը երկար ժամանակ փայլում էր նրա դեմքին: Բոլոր ականատեսները, և հատկապես դժգոհ ու կատաղի Վալերին, որ գլխավորն էր մահապատիժն իրականացնողների, զարմացան, և անընդհատ հարցնում էին, թե որն է նման, նրանց կարծիքով՝ անտեղի ուրախության պատճառը.

- Ես տեսնում եմ իմ Քրիստոսի երանությունը, - պատասխանեց սուրբ Կարպը, - ինչպե՞ս զսպեմ սրտիս հրճվանքը:

Եվ իրոք, կարո՞ղ է արդյոք չժպտալ այս բոլոր տառապանքներն ու տանջանքները հաղթահարողը, երբ իր առջև բացվել է Երկինքը և Տերը նստած է գահին, շրջապատված Հրեշտակներով և կանչում է նրան դեպի երանելի հավերժությունը: Փոքր վիշտը ոչնչանում է մեծ ուրախությունից: Երկրավոր բոլոր վշտերը ապագա կյանքի վայելքների հետ համեմատած այլ բան չեն, քան փոքրիկ միջատի խայթոցից առաջացած ականթարթային ցավ:

ՊԱՐԳԵՎԻ ՊԵՏՔ Է ՍՊԱՍԵԼ ՈՉ ԹԵ ՍԽՐԱՆՔԻ  
ՍԿԶԲՈՒՄ, ԱՅԼ՝ ՎԵՐՋՈՒՄ

Հայր Հովհաննես Թիբեացին 12 տարի ծառայեց ծերությունից տրտմած և հիվանդ մի ծերի և համարյա թե նրա մահճից չէր հեռանում: Չնայած սրան, ծերը չէր հարգում Հովհաննեսի անխոնջ աշխատանքը և նույնիսկ հասարակ շնորհակալության որևէ խոսք չէր ասում:

Բայց երբ մոտեցավ նրա մահվան ժամը, ապա հավաքված

ճգնավորների ներկայությունը բռնելով Հովհաննեսի ձեռքը, ծերը, որքան հնարավոր է բարձրացնելով մահառաջի ձայնը, ասաց. «Շնորհակալություն քեզ, զավակս, գոհ եմ քեզանից, զավակս, շնորհակալություն, զավակս»: Հետո նրան հանձնելով ավագ հայրերի հովանավորությանը՝ շնջաց. «Սա ոչ թե մարդ է, այլ՝ հրեշտակ»:

### ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՈՃԻ ԳԵՂԵՅԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմանի եպիսկոպոս սուրբ Ալեքսանդրը մարդկանց սովորեցնելիս չէր մտածում ոճի գեղեցկության և արտահայտության նրբագեղության մասին, այլ հոգում էր միայն հոգիների փրկության մասին և հասարակ ժողովրդին քարոզում էր թեկուզև ուժեղ, բայց շատ հասարակ ոճով: Մի անգամ Կոմանում էր գտնվում աթենացի մի երիտասարդ իմաստակ: Լսելով Ալեքսանդրի քարոզը՝ նա սկսեց ծիծաղել, որ նրանում չկա աթենական ոճի սրությունն ու պերճախոսությունը: Բայց Աստված նրան դուրս բերեց մոլորությունից հետևյալ կերպ: Մի գիշեր իմաստակը երազում տեսավ սպիտակ աղավախներ, որոնք բարետես էին, սաղմոսերգուի խոսքերով ասած. «Արծաթապատ թևերով և ոսկեգույն թիկնամեջով» և ձայն լսեց. «Սրանք Ալեքսանդրի բառերն են, որոնք դու, թեթևամիտ մարդ, այդքան ծաղրեցիր»:

Իմաստակն, սթափվելով տեսիլքից, այնպես ամաչեց իր հիմարության և ունայնամտության համար, որ անմիջապես գնաց սուրբ Ալեքսանդրի մոտ և սրտանց զղջալով՝ խնդրեց ներել վիճարկողանքը, որ ինքը պատճառել էր Քրիստոսի քարոզչին:

### ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Վանահայր սուրբ Իսիդորի մասին պատմում են, որ նա, տեսնելով թույլ, անփուլթ, փոքրոգի կամ զայրացկոտ եղբորը, որ հալածվում էր ծերերից այս արատի համար, միշտ նրան

կանչում էր իր մոտ և մեկ համբերատարությունով, մեկ բարեկամական դիտողություններով նրան փրկության ճանապարհ էր ցույց տալիս: Որքան հազվադեպ են նման սրտացավությունն ու նման արվեստը:

### ԵՐԿՐԱՅԻՆ ՏՈՒՆԸ ԵՎ ԵՐԿՆԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Երբ պարսից եպիսկոպոս սուրբ Ակեպսիմոսին Քրիստոսի անունը քարոզելու համար բանտարկեցին և տանից տարան, ծանոթներից մեկը, մոտենալով նրան, ասաց ականջին. «Քո տունը կտակիր որևէ մեկին»:

Բայց սուրբ Ակեպսիմոսը պատասխանեց. «Իմ ընկեր, տարօրինակ ու անմիտ գործ է այս աղքատ խրճիթի մասին մտածելը, երբ Երկնային Թագավորը ինձ տեղափոխում է փառքի տունը, որ երկնքում է»:

### ԱՆԿՈՂՄԵԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆԵԼԻՍ

Մի անգամ վանքի տնտեսը Հովհաննես Ողորմածին հայտնեց, որ իր մոտ ողորմության համար եկած մարդկանց մեջ, և կան նաև այնպիսիներ, որոնք լավ են հագնված: Նա հարցրեց, թե արդյոք նրանց էլ նույն կերպ բաշխի, ինչպես աղքատներին: Հովհաննեսը պատասխանեց. «Եթե դու Հիսուսի ծառան ես և խոնարհ Հովհաննեսի աշակերտը, ապա ողորմություն բաժանիր այնպես, ինչպես Քրիստոսն է պատվիրել. մի նայիր քեզանից օգնություն խնդրողի դեմքին:

Քի՞չ են արդյոք արծաթասերները, որ պատառոտված շորեր են հագնում, և քի՞չ են արդյոք աղքատները, որ արժանի են խղճահարության, օգնության, բայց կարգին են հագնված: Պատահում են հազարավոր դեպքեր, որ երեկ որևէ մեկի օգնության կարիքը չգագացողն այսօր ստիպված է լինում օգնություն խնդրել:

Կամ գուցե վախենում ես, որ եկեղեցու ունեցվածքը չի՞

բավականացնի ողորմություն տալու համար: Ես չեմ կիսում քո թերահավատությունը: Ոչ թե մերն ենք տալիս, այլ՝ Քրիստոսինը, իսկ ո՞վ կարող է Նրանից ավելի հարուստ լինել»:

**ԻՆՉՊԻՍԻՆ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅՆՊԻՍԻՆ Է՛Լ՝  
ՓՈՒՀԱՏՈՒՑՈՒՄԸ**

Մի անգամ, երբ սուրբ Հովհաննես Ողորմածը մտավ եկեղեցի, նրան մի քաղաքացի մոտեցավ, որ առաջ հարուստ էր եղել, բայց հանգամանքների բերումով աղքատացել էր, և օգնություն խնդրեց: Պատրիարքը ցավ ապրեց, որ այս պատվավոր ու բարեպաշտ մարդն այսպես սնանկացել է և տնտեսներին կարգադրեց նրան տասնհինգ լիտր ոսկի տալ: Բայց նրանք, վախենալով, որ կդատարկվի եկեղեցու գանձարանը, միայն հինգ լիտր տվեցին: Երբ պատրիարքը վերադարձավ եկեղեցուց, նրան մի հարուստ այրի կանգնեցրեց և մի թուղթ տվեց, որի վրա գրված էր, որ նա վանքին հինգ հարյուր լիտր ոսկի է տալիս: Հովհաննեսը թուղթը կարդալով, Սուրբ Հոգու շնորհով իմացավ, որ նա այն բոլորը չի տալիս, ինչ սկզբում մտադրվել էր: Գալով տուն՝ նա կանչեց վանքի տնտեսներին և հարցրեց, թե նրանք որքա՞ն ոսկի են տվել աղքատացած քաղաքացուն:

- Տասնհինգ լիտր, - պատասխանեցին նրանք:  
- Աստված ձեզնի՛ց կպահանջի այն, ինչ որ իր մոտ պահել է առաքինի այրին, - նրանց սուտը բացահայտելով ասաց սուրբը: Հետո իր մոտ կանչեց այրուն և հարցրեց. «Ճշմարիտն ասա մեզ, Աստծո հանդեպ ունեցած սիրո պատճառով, ինչքա՞ն ոսկի էիր դու մտադրվել եկեղեցի բերել»:

Այրին, տեսնելով, որ իր մտադրությունը հայտնի է սուրբին, պատասխանեց. «Վկա է Աստված, սրբազան հայր, որ մի քանի օր առաջ ես թղթի վրա գրել էի հազար հինգ հարյուր լիտր ոսկի, որ ես ցանկանում էի տալ քո սուրբ ձեռքը: Բայց այսօր ես, դարձյալ կարդալով թուղթը, տեսա, որ հազար լիտրը, չգիտես ինչպես և ում կողմից, ջնջված է: Ես մտածեցի, որ Աստված թույլ չի տալիս ձերդ սրբությանը հինգ հարյուր լիտրից

ավելի ոսկի տալ և այդպես էլ վարվեցի»:  
Տնտեսները, այս լսելով, ամաչեցին և սարսափեցին իրենց սխալի համար, իսկ սուրբը, այրուն օրհնելով, ճանապարհեց և նրանց ասաց. «Դուք ինձ չլսեցիք և խնայեցիք տաս լիտր ոսկի: Դրա համար էլ Տերը մեզնից այս բարեգործուհու ձեռքով պահեց հազար լիտր ոսկի: Ուրեմն հիշեցե՛ք. ինչպիսին ողորմածությունն է, այնպիսին էլ՝ Աստծո կողմից տրված փոխհատուցումը: Հիշեցեք և վախեցեք Աստծո դատաստանից, քանզի բազում աղքատներ ձեր սխալի պատճառով զրկվեցին սննդից»:

**ԼՍԻՐ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ, ԵԹԵ ՈՒՉՈՒՄ ԵՍ,  
ՈՐ ԱՍՏՎԱԾ ՔԵՉ ԼՍԻ**

Մի անգամ, երբ սուրբ Հովհաննես Ողորմածը եկեղեցի էր մտնում, նրան մի աղքատ կին կանգնեցրեց և դառնապես բողոքելով այն վիրավորանքներից, որ իրեն հասցրել է հարազատներից մեկը՝ սուրբ պատրիարքի օգնությունը խնդրեց: Բայց քանի որ ժամերգությունն սկսելու ժամանակն էր, ապա սուրբ Հովհաննեսի ուղեկիցները խորհուրդ տվեցին նրան այրուն լսել այն ժամանակ, երբ տուն կվերադառնա: Բայց Աստծու մարդը պատասխանեց. «Իսկ Աստված ինձ կլսի՞, եթե ես չցանկանամ լսել այրուն», - և չշարժեց տեղից, մինչև չպարզեց գործի հանգամանքները և վիրավորողներին չկարգադրեց բավարարել խեղճ կնոջ պահանջը:

**ՈՐՔԱՆ ԴԺՎԱՐ Է ԱՐԾԱԹԱՍԵՐԻՆ ՈՒՂՂԵԼԸ**

Հովհաննես Ողորմածը, իմանալով, որ Թուրիլուս անունով մի եպիսկոպոս շատ ժլատ ու արծաթասեր է, նրան հրավիրեց հիվանդանոց՝ տեսնելու անդամալույծներին ու հիվանդներին: Այնտեղ նկատելով, որ Թուրիլուսի մոտ փող կա՝ սուրբն ասաց նրան. «Տեր, հարմար ժամանակ է աղքատ եղբայրներին մխի-

Թարեւո՛ւ նրանց ողորմությունն տալով»:

Թուորուսը վախեցավ, որ իրեն կմեղադրեն ժլատության մեջ և սկսեց բաժանել ոսկին, որը կազմեց երեսուն լիտր: Բայց տուն վերադառնալով՝ զղջաց ոսկին բաժանելու համար և այնքան վշտացավ, որ անկողին ընկավ: Որոշ ժամանակ անց Հովհաննեսը նրան ճաշի հրավիրեց, բայց Թուորուսը պատճառաբանեց, թե հիվանդ է: Հովհաննեսը գլխի ընկավ, թե ինչն է նրա հիվանդության պատճառը, և իր հետ 30 լիտր ոսկի վերցնելով՝ գնաց նրան տեսնելու:

«Ես քեզ բերել եմ այն փողը, որ դու իմ խնդրանքով հիվանդանոցում բաժանեցիր: Վերցրու այն և քո ձեռքով գրիր, որ Աստծուց դրա դիմաց ապագայում քեզ հասանելիք պարգևն ինձ տրվի»:

Թուորուսը ոսկին տեսնելով դողաց ուրախությունից և անմիջապես գրեց. «Ողորմած Տեր, փոխհատուցիր իմ տեր Հովհաննեսին՝ Ալեքսանդրիայի պատրիարքին, այն ոսկու փոխարեն, որ ես՝ մեղավոր Թուորուսս բաժանեցի հիվանդանոցում, քանզի նա իմն ինձ վերադարձրեց»:

Փողերն ստանալով Թուորուսն անկողնուց վեր կացավ, կարծես երբեք հիվանդ չէր եղել, և գնաց պատրիարքի մոտ ճաշելու:

Հովհաննեսը նրան հյուրասիրելիս իր սրտի մեջ աղոթում էր Աստծուն, որ նրան բժշկի այդքան սարսափելի արծաթասիրությունից: Եվ Աստված լսեց նրա աղոթքը: Հաջորդ գիշեր Թուորուսը երազում մի հրաշալի տուն տեսավ, աննկարագրելի գեղեցկությամբ, որի դարպասների վրա ոսկյա տառերով գրված էր. «Թուորուս եպիսկոպոսի հավետ հանգստի կացարան»: Նրա սիրտը խլրտաց ուրախությունից, բայց հանկարծ հայտնվեց մի բարետես և ահեղ մարդ և այդտեղ գտնվող ծառաներին ասաց. «Ողջ աշխարհի Տիրակալը ինձ հանձնարարեց ջնջել Թուորուսի անունը և դրա փոխարեն գրել Ալեքսանդրիայի պատրիարք Հովհաննեսի անունը, որը նրանից գնեց այս տունը երեսուն լիտր ոսկով: Ուրեմն փոխեք մակագրությունը»:

Թուորուսը ճչաց ահից ու ափսոսանքից և վեր թռավ քնից: Հասկանալով, թե ինչ անգին տուն է կորցրել Երկնքում՝ նա սկսեց լաց լինել և ինքն իրեն հանդիմանել ոսկեսիրության հա-

մար: Հազիվ էր լույսը բացվել, նա գնաց երանելի Հովհաննեսի մոտ, պատմեց նրան իր երազի մասին, երգվեց ուղղվել, և պահպանեց իր երզումը, քանզի դրանից հետո դարձավ առատաձեռն ու ողորմած բոլորի հանդեպ:

## Ա՛ՅՆ ՏԵՂՆ Է ՍՈՒՐԲ, ՈՒՐ ՄԱՐԴՆ ԱՊՐՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱՀԱՃՈ ԿՅԱՆՔՈՎ

Սուրբ Ալիպին՝ Ադրիանապոլսի եկեղեցու սարկավազը, իր բարեպաշտության համար սիրված էր եպիսկոպոսների և բոլոր քրիստոնյաների կողմից: Հոգևոր ղեկավարությունը նրա վրա էր դնում բոլոր կարևոր և աստվածահաճո հաստատություններին վերաբերող գործերը: Իսկ Ադրիանապոլսի բնակիչները պատկառելու աստիճան հարգում էին նրան:

Բայց այս բոլոր առաքինությունների հետ միասին նա երազում էր բացարձակ առանձնության մասին: Այս սուրբ ցանկությունից մղված՝ Ալիպին շուտով բոլորից գաղտնի, միայն մոր օրհնությունն ստանալով, հեռացավ Ադրիանապոլսից, որպեսզի հաստատվի որևէ հեռավոր անապատում: Բայց եպիսկոպոսն՝ իմանալով այս հեռացման մասին, չափազանց տխրեց. եկեղեցու սպասավորները վշտացան, որ գրկվեցին իրենց եղբայրությունը զարդարող ծառայողից: Բոլոր քաղաքացիները նրա կորուստը համարեցին անվերականգնելի և նրան փնտրելու համար մարդիկ ուղարկեցին: Շուտով Աստված ցույց տվեց սուրբ Ալիպիի թաքստոցը, և նրանք խնդրանքներով ու սպառնալիքներով նրան ստիպեցին վերադառնալ հայրենիք: Ալիպին սրտանց տխրեց, որ չիրականացավ իր երազանքը և մտածեց դարձյալ թաքնվել: Բայց Աստված նրան իր մտադրությունից հետ կանգնեցրեց հետևյալ օրինակով: Մի գիշեր Ալիպին այնքան վշտացավ, որ սկսեց լաց լինել և արցունքն աչքերին քնեց: Հանկարծ նրան հայտնվեց Աստծո Հրեշտակն ու ասաց. «Մի վշտանա, Ալիպի, որ դու քեզ հաճելի վայրից վերադարձվեցիր այստեղ: Աստված սա արեց քո հայրենիքի օգուտի համար, իսկ հայրենիքը սիրելն ու նրան ծառայելը յուրաքանչյուր մարդու

սուրբ պարտականությունն է: Բացի սրանից, թող հայտնի լինի քեզ, որ սուրբ տեղն այնտեղ է, որտեղ Աստծուն սիրող մարդն առաքինի ու աստվածահաճո կյանքով կապրի»:

Այս տեսիլքից մխիթարված՝ Ալիպին դադարեց վշտանալ և ողջ կյանքն անցկացրեց իր հայրենիքում՝ ջանասիրաբար ճգնելով ու աշխատելով Աստծո և մարդկանց համար:

### ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂ՝ ՏԻՐՈՋ ՄԱՐՄԵՆԻ ՈՒ ԱՐՅԱՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Կիպրոսի վանքերից մեկում, որ կոչվում էր «Փիլոկսենի մենաստան», ծնունդով Միտելենից մի ծեր կար՝ Իսիդոր անունով, որն անվերջ լալիս էր, և երբ մյուս ճգնավորները նրան խնդրում էին գոնե մի փոքր դադար տալ, նա լսելով, սովորաբար ասում էր. «Ես այնպիսի սարսափելի մեղսագործ եմ, որ պիտի չի եղել Ադամից մինչև մեր օրերը»:

Մի անգամ այդտեղ եկավ աբբա Հուլիանոսն իր մի քանի սաների հետ և ցանկանալով հեկեկացող ծերունուն մխիթարել՝ ասաց նրան. «Վստահ եղիր, Քրիստոսով սիրելի եղբայր, որ Աստծուց բացի բոլորը մեղավոր են»:

«Ավաղ ինձ, - պատասխանեց ծերը, - ոչ աշխարհի տարագիրները, ոչ էլ բանավոր ավանդությունները չեն նկարագրում այնպիսի մի մեղք, ինչպիսին գործել եմ ես. ուշագիտ լսեք պատմությունս և աղոթեցեք ինձ՝ նզովյալիս համար: Աշխարհում ապրելիս ես կին ունեի և մենք երկուսս էլ հետևորդն էինք Սևերիոսի ուսմունքի: Մի անգամ տուն գալով՝ ես տեսա, որ նա տանը չէ և իմանալով, որ ընկերուհու հետ գնացել է ուղղափառ եկեղեցում Սուրբ և Կենդանարար Խորհրդին հաղորդակից լինելու, ես վազեցի այնտեղ: Տեսնելով, որ կինս հենց նոր է ստացել սուրբ հաղորդությունը, բռնեցի նրա կողորդից և այնքան սեղմեցի, որ սրբությունը բերանից դուրս ընկավ: Կատաղության մեջ ես այն վերցրի և նետեցի ցեխի մեջ: Այդ պահին կայծակ փայլեց և Երկինք հափշտակեց Աստվածային նշխարը: Երկու օր հետո ես մի չար մարդու տեսա,

որն իմ ուսին խփելով ասաց. «Մենք հավիտյան անբաժան ընկերներ ենք»: «Իսկ դու ո՞վ ես», - հարցրի ես: «Ես նա եմ, - պատասխանեց նա, - որը Հիսուս Քրիստոսի տանջանքների ժամանակ ապտակեց նրան»: Կարո՞ղ եմ ես սրանից հետո թեկուզ մի քիչ մխիթարվել», - դառնազին լալով և հեկեկոցից խեղդվելով՝ ասաց անապատականը: Սևերիոսի հետևորդը սարսափելի մեղք էր գործել՝ սրբությունը ցեխի մեջ չարտելով, բայց նույնքան սարսափելի մեղք են գործում և նրանք, ովքեր այն ընդունում են՝ սրտի մեջ բազում պղծություններ ունենալով:

### ԶԳՈՒՇԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԴԱՏԵԼԻՍ

Սուրբ Սաբբա Օծյալի մենաստանում էր ճգնում աստվածավախ Հովհաննեսը, որը եղբայրներին ծառայում էր սկզբում խոհանոցում, հետո իջևանատանը, և վերջապես՝ որպես տնտես: Երբ վանքի քահանան մահացավ, սուրբ Սաբբան որոշեց նրան երեց դարձնել: Այդ մասին Հովհաննեսին ոչինչ չասելով՝ նա նրան իր հետ Երուսաղեմ տարավ և, պատրիարք Եղիային պատմելով նրա առաքինությունների մասին, խնդրեց Հովհաննեսին ձեռնադրել քահանա:

Սուրբ Հովհաննեսն այս մասին իմացավ միայն եկեղեցում, երբ եկավ ձեռնադրության պահը և ի զարմանս բոլորի՝ բռնվեց սարսափով: «Սրբազան հայր, - ասաց նա պատրիարքին, - ես գաղտնիք ունեմ բացելու քեզ և խնդրում եմ ինձ լսես առանց վկաների: Եթե դրանից հետո էլ հնարավոր համարես ինձ համար ձեռնադրությունը, ապա չեմ հրաժարվի ընդունել այն»: Պատրիարքը լսեց նրա խնդրանքը և, ավանդատանն ունեցած կարճատև զրույցից հետո, այնտեղից զարմանքը դեմքին դուրս գալով՝ սուրբ Սաբբային ասաց. «Հովհաննեսն ինձ մի գաղտնիք ասաց, որի պատճառով նա չի կարող քահանա դառնալ: Կարգադրում եմ քեզ սրանից հետո նրան նույնիսկ սարկավագություն չառաջարկել»:

Զայրացած Սաբբան, չիմանալով ինչ մտածի Հովհաննեսին

մասին, Երուսաղեմից ճանապարհ ընկավ և ողջ ճանապարհին ոչ միայն չխոսեց նրա հետ, այլև նույնիսկ չկարողացավ անտարբեր ու հաշտ նայել նրան: Մենաստան գալուց հետո սուրբ Սաբբան անմիջապես հեռացավ՝ գնալով 30 ասպարեզ հեռու գտնվող մի քարանձավ: Այնտեղ ընկնելով գետնին նա արցունքներով կանչեց առ Աստված. «Ինչո՞ւ ինձ՝ Քո ստրուկին աչքից գցեցիր և ինձնից թաքցրիր Հովհաննեսի կյանքը: Ախ, ես դաժանորեն խաբվեցի, նրան համարելով քահանայության արժանի: Ես մտածում էի, թե Հովհաննեսն սուրբ անոթ է, և ընտրված է Սուրբ Հոգու փառավորության համար. այնինչ այս անոթն անպետք համարվեց Քո մեծություն առաջ: Դրա համար էլ իմ հոգին վշտացած է մահու չափ»:

Այս արցունքով, գայրույթով ու վշտով շողախաված աղոթքի ընթացքում հանկարծ նրան հայտնվեց Աստծո Հրեշտակը և ասաց. «Հովհաննեսին մի դատիր և մի վշտանա նրա համար, քանզի եպիսկոպոսը չի կարող քահանա ձեռնադրվել»:

Լսելով այս՝ սուրբ Սաբբան սկսեց հասկանալ, թե ինչ ասաց Հովհաննեսը պատրիարքին և անհամբեր ուրախությամբ գնաց Հովհաննեսի խուցը: Այստեղ ընկնելով նրա ոտքերը՝ բացական հեց. «Քրիստոսի եպիսկոպոս, ներիր քո մեղավոր ծառային, որը՝ որպես տկար արարած, քո հանդեպ վատ բան մտածեց: Բայց շնորհակալ եմ Աստծուն: Նա բացեց ինձ երկնքից քո շնորհի մասին»:

«Սա վիշտ է ինձ համար, - պատասխանեց Հովհաննեսը, - քանզի ես Աստծուց բացի ուրիշ ոչ մեկի առջև գաղտնիքս բացել չէի ցանկանում: Բայց պատրիարքին ասացի անհրաժեշտությունից դրդված, իսկ քեզ ինքն Աստված հայտնի դարձրեց: Հիմա խոստովանում եմ, որ ես՝ մեղավոր Հովհաննեսս, եպիսկոպոս եմ, բայց թողել եմ իմ գահը և առողջ մարմին ունենալով՝ ինձ դատապարտել եմ ծառայել եղբայրներին, որպեսզի նրանց աղոթքներն իմ թույլ հոգուն օգնեն, որովհետև անչափ բազմացել են իմ մեղքերը»:

## ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Սաբբա Օծյալը, ճգնելով անապատում, չորս սարակինոս /արաբ/ տեսավ, որոնք սովից թուլացել էին և թեպետ գիտեի, որ այս բարբարոսները մշտապես վիրավորել են ճգնակյացներին, բայց խղճաց նրանց, մոտեցավ և վերջին սնունդը նրանց տալով՝ կերակրեց եղբոր պես: Արաբները, ի զարմանս Սաբբայի, ուշադիր զննեցին տեղանքը, հաշվեցին աղքատիկ թիվերը և գետնի վրա նշաններ թողնելով՝ հեռացան շնորհակալությամբ: Նրանց այս արարքը շուտով բացատրություն գտավ: Արաբները մի քանի օր հետո վերադարձան և ահագին հաց, պանիր և զանազան մրգեր բերեցին՝ դարձյալ շնորհակալություն հայտնելով Սաբբային նրա բարեգործության համար: Ուրախացավ սուրբը, որ թշնամիներին կարողացավ բարեկամ դարձնել, և նրանց խրատեց այսուհետև այլևս չնեղացնել անպաշտպան անապատականներին: Բայց հանկարծ մտածմունքի մեջ ընկնելով՝ լաց եղավ և ինքն իրեն ասաց. «Ավաղ, իմ հոգի, վայ քեզ: Այս մարդիկ մի անգամ իրենց մի փոքրիկ բարեգործություն անելու համար որքան շնորհակալ են, իսկ մենք ամեն ժամ Աստծուց անասելի պարգևներ ենք ստանում, և ի՞նչ ենք անում որպես շնորհակալություն: Ապրում ենք ծուլության և անզգայության մեջ, նրա սուրբ պատվիրանները չենք պահպանում»:

Այսպիսով սուրբ ծերն առիթը բաց էր թողնում բարիք գործելու համար և թե՛ բնական, թե՛ բարոյական աշխարհում կատարված ցանկացած անցքից իր համար որևէ փրկարար դաս էր քաղում:

ԵՐԲ Է ՊԵՏՔ ԱՍՏԾՈՒՆ ԾԱՌԱՅԵԼ  
ԳԱՂՏՆԻ ԵՎ ԵՐԲ ԲԱՅԱՀԱՅՏ

Քրիստոսի սուրբ Նիկողայոսը մինչև ավագ երեց դառնալն ամեն կերպ աշխատում էր մարդկային փառքից խուսափելով՝ թաքցնել իր բարի գործերը, և եթե ինքն իրեն չդատապարտեց



անապատային լուսնային միակ Աստծո հետ զրուցելու համար, ապա միայն հնազանդվելով երկնքի ձայնին, Որը նրան պատվիրեց դառնալ դեպի մարդիկ և ծառայել նրանց երջանկությանն ու փրկությանը: Սակայն բազմամարդ քաղաքում բնակվելով՝ նա ապրում էր բոլորին աննկատ՝ որպես մի եկվոր, և երևում էր միայն Աստծո տանը՝ ունենալով միակ ապաստան՝ Աստծուն: Նրա անձնական կյանքի բոլոր գործերը ցույց են տալիս, որ սուրբ Նիկողայոսը ցանկանում էր, որ իր ձախ ձեռքը չհիմանա, թե ինչ է անում աջը: Բայց երբ նա նշանակվեց Միրրիկի եկեղեցու ղեկավար, այն ժամանակ ինքն իրեն ասաց. «Նիկողայոս, այս պաշտոնն ու այս տեղը քեզնից պահանջում են ուրիշ սովորություններ. դու սրանից հետո պետք է ոչ թե քեզ համար ապրես, այլ՝ ուրիշներին»:

Այս ժամանակից նախանձախնդրությամբ ձգտելով առաքիլնությունամբ կառավարել իրեն վստահված Քրիստոսի հոտը՝ Տիրոջ եպիսկոպոսն արդեն չէր թաքցնում իր բարեպաշտությունն ու առաքիլությունը: Սկզբում միայն Աստված էր տեսնում նրա կենսակերպը, այժմ նրա լույսը շողում էր մարդկանց առջև, որ նրանք տեսնեն նրա բարի գործերը և փառավորեն Հորը, որ Երկնքում է /Մատթ. 5: 16/:

Նա Աստծուն բացահայտ էր ծառայում, որպեսզի ուրիշներն էլ այդպես ծառայեն Նրան, բարեգործություններ էր անում մերձավորների համար, որպեսզի ուրիշներն էլ այդպիսի առաքիլի գործեր կատարեն: Բազում հրաշքներ գործելով անմեղ հետապնդվողներին, հակառակորդների մեջ մեռնողներին, բույսերի ու ծովի հորձանքի մեջ ընկած կործանվողներին փրկելու համար՝ նա հայտնում էր իր անունը, և այս փառավոր անունը կայսրերին ստիպում էր թագավորել առաքիլությանմբ, հովիվներին՝ եկեղեցին կառավարել աստվածահաճո, ժողովրդին՝ ապրել Աստծո երկյուղով: Սուրբ Նիկողայոսը կանգնած էր աշխարհի առաջ՝ որպես բարի գործերի հայելի և որպես օրինակ՝ խոսքով, վարմունքով, սիրով, հավատքով և մաքուր կենցաղով /Ա Տիմոթեոս 4: 12/:

## ԿՈՒՅՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

Մի անգամ սուրբ Պատապի մոտ եկավ ի ծնե կույր մի պատանի և սրբին աղերսեց, որ Աստծուց խնդրի բացել իր աչքերը. «Բայց քեզ համար ավելի շատ ինչի՞ համար է հարկավոր տեսողությունը», - մոտենալով Հիսուսի խաչելությանը՝ երիտասարդին հարցրեց Պատապին:

«Որպեսզի տեսնեմ արարածներին, - պատասխանեց պատանին, - և դրանց միջոցով մոտենամ Արարչի ավելի կատարյալ ճանաչողությանն ու փառավորեմ Նրան»:

Ծերը, զգացված կույրի խելամտությունից և բարեպաշտությունից, դիմեց Աստծուն. «Հիսուս Քրիստոս, Դու, որ կույրերին տեսողություն և հանգուցյալներին կյանք ես տալիս, բացիր Քո ճանաչողության լույսի ծարավով պապակվողի աչքերը»: Եվ հենց այդ պահին էլ ի ծնե կույրը տեսավ: Այդժամ սուրբ Պատապին ասաց նրան. «Գնա խաղաղությունամբ քո տունը, բայց զգուշացիր, որ մարմնական աչքերիդ բացվելու հետ չմթնեն հոգուդ աչքերը: Ոչ մի զգացումի միջոցով աշխարհի գայթակղություններն այնպես չեն ներգործում, որքան տեսողության: Վայ, եթե կուրանա քո ներքին մարդը: Այնժամ դու նույնիսկ քո այս աչքերով էլ Աստծուն չես տեսնի այնտեղ, որտեղ կույրերը Նրան տեսնում են անգամ ոչ թե հավատով, այլ երես առ երես»:

## ՍՈՒՐԲ ԱՄԲՐՈՍԻՈՍ ՄԵԴԻՈՒԼԱՆՅՈՒ ՎԱ ՃԱՆԸ

Երբ սուրբ Ամբրոսիոս Մեդիոլանցին մոտեցավ իր հրաշալի վախճանին, Հռոմի կայսր Հոնորիոսի խնամակալ և առաջին իշխան Ստիլիքոնը, լսելով այդ մասին, տխուր հառաչանքով ասաց. «Կկործանվի Իտալիան, եթե այս սուրբը մեռնի»: Հետո նրա մոտ նշանավոր մարդկանց ուղարկեց, որոնց Ամբրոսիոսը սիրում էր, և նրանց միջոցով խնդրեց, որ Աստծո սիրելին իր համար ևս մի քանի տարվա կյանք խնդրի Տիրոջից պետու-

թյան օգուտի համար:

Սուրբն աչքերը հառեց երկինք և մեռնող ձայնով ասաց. «Շնորհակալ եմ Քեզնից, Տեր իմ Աստված, որ ես, թեպետև մեղավոր մարդ եմ, բայց այնպես ապրեցի, որ ոչ ապրելուց եմ ամաչում, ոչ էլ վախենում եմ մահվանից»:

**ԻՆՔՆ ԱՍՏՎԱԾ ՁԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ ԱՌԱՆՑ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԵԼ**

Սուրբ Դանիելը, ապրելով Սիմեոն Սյունակյացի սյունի շրջակայքում, մտադրվեց Երուսաղեմ գնալ, որպեսզի խոնարհվի աստվածակոխ վայրերին, իսկ հետո այնտեղից գնա անապատ՝ լուռության տրվելու: Սիմեոնը, որ սիրում էր նրան, խորհուրդ տվեց չհեռանալ, բայց չկարողացավ հաղթել Դանիելի ցանկուլթյանը. նա այրվող հոգով ճանապարհ ընկավ:

Ճանապարհին նա լսեց, որ Պաղեստինում կատաղի երկպառակուլություն է սկսվել, քանզի այդ ժամանակ սամարացիներն ապստամբություն էին բարձրացրել և ոչնչացնում էին քրիստոնյաներին՝ չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ երեխաներին: Սակայն Դանիելն այնքան անհամբեր էր, որ արհամարհելով բոլոր վտանգները և նույնիսկ մահը, շարունակեց ճանապարհը: Բայց որոշ ժամանակ անց մի ծեր վանականի հանդիպեց, որը նրան համբուրելով՝ արաբերեն հարցրեց. «Ո՞ւր ես գնում, եղբայր սիրելի»:

«Եթե Աստված օրհնի իմ ճանապարհը, ապա կուզեի Երուսաղեմում լինել», - պատասխանեց Դանիելը: «Ճշմարիտ ես ասում եմ, եթե Աստված կամենա, - պատասխանեց ծերը, բայց հիմա քո ճանապարհն Աստծուց օրհնված չէ: Մի՞թե չես լսել, որ Պաղեստինում խռովություն և արյունահեղություն է»:

«Ես այդ մասին լսել եմ, - ասաց Դանիելը, - բայց հույս ունեմ, որ նա՝ մեր Օգնականն ու Հովանավորը թույլ չի տա, որ որևէ չարիք ինձ մերձենա: Իսկ եթե մերձենա էլ, չեմ վախենա, որովհետև. «ապրենք, թե մեռնենք, Տիրոջն ենք»/Հոովմ. 14: 8/:

Սրան ծերը պատասխանեց. «Ինձ համար ապավեն և ամուր

վայր եղիր, Աստված, որ ինձ փրկես, քանզի իմ հիմքն ու հենարանը դու ես» /Սաղմ. 70: 3/: Սակայն Դանիելը չդադարեց համառել և վճռականությամբ ասաց, որ ինքն այս ճանապարհին պատրաստ է մեռնել Քրիստոսի համար: Ծերը, տհաճությամբ կնճռոտելով դեմքը, ասաց. «Աստված չի հրամայել իր անձր անժամանակ մահվան ենթարկել, չի հրամայել սպանվելու պատրվակ փնտրել: Նա, դրան հակառակ, ասում է. «Եվ երբ հալածեն ձեզ մի քաղաքում, ուրիշ քաղաք փախեք» /Մատթ. 10: 23/:

Սրանից հետո Դանիելը մտածմունքի մեջ ընկավ, հետո հավանություն տալով ծերի խորհուրդին՝ ասաց. «Եթե քեզ այդպես է հաճելի, ես կվերադառնամ»: Այնժամ ծերը սիրալիկ ասաց. «Զավակս, ես քեզ խորհուրդ չեմ տալիս քո մտադրությունից ընդմիջտ հրաժարվել: Այդ պարագայում ես անմիտ կլինեի: Ես քեզ խորհուրդ եմ տալիս միայն այս չար ժամանակներում չգնալ: Ուրեմն վերադարձիր Կ.Պոլիս, որն իր սրբություններով երկրորդ Երուսաղեմն է: Այստեղ դու կարող ես լիացնել աչքերդ ու սիրտդ հազվագյուտ սրբություններով: Եթե ցանկանում ես լուռության տրվել, Աստված քո հոգուն հաճելի տեղ ցույց կտա կամ վերին Թրակիայում, կամ էլ Պոնտոսի հեռավոր անկյուններում: Ի դեպ, չպետք է կարծել, թե Աստծուն Երուսաղեմում կարելի է դիմել, իսկ Կ.Պոլսում՝ ոչ: Ով սիրելի, Աստված անպարփակելի է»:

Այս զրույցի ընթացքում արևն սկսեց մայր մտնել, և նրանք իրենց ճանապարհն ուղղեցին դեպի մոտակա վանքը: Բայց հանկարծ ծերն անհետացավ: Դանիելը, մտածելով այս տեսիլքի մասին, համոզվեց, որ դա Տիրոջ Հրեշտակն էր կամ ինքը՝ Սիմեոնը: Եվ հաջորդ օրն իսկ ուղևորվեց Կոստանդնուպոլիս:

**ՊԱՏԺՎԱԾ ԱՐԾԱԹԱՍԵՐԸ**

Սպիրիդոն Տրիմիֆոնտացու արքեպիսկոպոսությունից տարիներին սովի ծամանակ մի հարուստ ուրիշ երկրներից նավերով մեծ քանակությամբ հաց բերեց: Բայց չէր ցանկանում այն

գնով վաճառել, որով հասցրել էր Տրիմիֆունտ, և ցորենը լցրեց ամբարներն՝ սպասելով, թե երբ ավելի կբարձրանա գինը: Որքան էլ աղքատները խնդրեցին ազահ հացավաճառին, նա իժի նման խուլ մնաց: Դժբախտները վազեցին սուրբ Սպիրիդոնի մոտ, գանգատվեցին նրա դաժանությունից և իրենց աղքատությունից: Աստծո մարդը, տառապյալներին հույս տալով, ասաց. «Լաց մի եղեք, այլ գնացեք և մխիթարեք ձեր ընտանիքներին Աստծո հույսով: Այսպես է ասում Աստված, քանզի վաղը ձեր հացի պահեստները կլցվեն: Եվ կտեսնեք հարուստին, որ խնդրում և սնունդ է ձեզ տալիս ճրի»:

Հուլիսի խաղաղ շողը լուսավորեց կարոտյալների սրտերը, թեպետ նրանց արցունքները չչորացան: Բայց գիշերվա առաջին կեսին Աստծո հրամանով հանկարծ հորդառատ անձրև սկսվեց: Այնպիսի ուժեղ քամի փչեց, որ քանդվեցին անսիրտ հարուստի պահեստներն, ու ջուրը քչեց, տարավ ամբողջ ցորենը: Հացավաճառն իր ընտանիքի անդամների հետ այս ու այն կողմ վազվզելով էր իմանում անելիքը, հավաքված ժողովրդից օգնություն էր խնդրում: Իսկ աղքատները, տեսնելով անձրևաջրի բերանն ընկած ցորենը, հավաքում էին այն և տուն տանելով՝ նորից վերադառնում նույն գործին: Հիշելով սուրբ Սպիրիդոնի մարգարեությունը՝ այս դեպքում նրանք մեղք չէին համարում վերցնել այն, ինչ ինքը՝ Աստված է նվիրում: Տղամարդիկ, կանայք և երեխաները աշխատում էին լիքը լցնել իրենց հագուստները և ունեցած բոլոր ամանները: Ինքը՝ վաշխառուն զգալով իր վրա ծանրացած բոլորի Հոր ձեռքը՝ սկսեց խրախուսել աղքատներին և խնդրել յուրաքանչյուրին վերցնել այնքան, որքան կարող է, և որքան ցանկանում է:

Իսկ սուրբ Սպիրիդոնը, տեսնելով նրա հոգածությունը, փառաբանում էր Աստծուն, որ սնունդ տվեց սովամահներին, և անակնկալ դժբախտությունը մեղմեց արծաթասերի դաժան սիրտը:

## ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵՑ ՍՈՒՐԲ ՍՊԻՐԻԴՈՆԸ ԿՈՂՈՊՏԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Մի անգամ սուրբ Սպիրիդոնի արքեպիսկոպոսական տունը գողեր մտան և վերցնելով մի քանի ոչխար՝ փորձեցին հեռանալ: Բայց Աստված, որ սիրում է իրեն հաճելի կյանք վարողին և պահպանում է նրա ինչքը, նրանց կապեց անտեսանելի ուժով, այնպես, որ նրանք չէին կարողանում տեղից շարժվել, և այդպես մնացին մինչև լույս: Սուրբ Սպիրիդոնն առավոտյան դուրս գալով խցից և նրանց տեսնելով այս թշվառ դրություն մեջ՝ սկսեց խրատել, որ ուրիշների ունեցվածքը չգողանան, այլ սնվեն իրենց ձեռքերի աշխատանքով: Այնուհետև աղոթքով քանդեց անտեսանելի կապերը և բաց թողեց նրանց՝ մի ոչխար նվիրելով. «Վերցրեք այն, որպեսզի զուր չանցնի ձեր աշխատանքը և գիշերային հսկումը»:

## ԿՈՂՈՊՈՒՏԸ ՉԻ ՀԱՐՍՍԱՑՆՈՒՄ, ԱՅԼ ԴԱՐՉՆՈՒՄ Է ԱՎԵԼԻ ԱՂՔԱՏ

Մի վաճառական առևտրի մեջ ներդրում անելու համար հաճախ էր սուրբ Սպիրիդոնից պարտքով փող վերցնում: Երբ վերադառնում էր առք ու վաճառքից, նրան էր վերադարձնում իր պարտքը: Ծերը սովորաբար նրան կարգադրում էր, որ ինքը դրամը դնի այն արկղի մեջ, որից վերցրել էր: Ունեցվածք չսիրելով՝ նա չէր հետաքրքրվում վաճառականն արդյո՞ք լրիվ է վերադարձրել փողը: Վաճառականը սրբի թույլատրությունը բազմիցս վերցրեց ու տեղը դրեց ոսկին, և Տերն օրհնեց նրա առևտուրը: Բայց մի անգամ գայթակղվելով վաճառականը բերած փողը չդրեց տեղը, և սուրբ Սպիրիդոնին խաբելով՝ այն իր մոտ պահեց: Ի՞նչ կատարվեց: Վաճառականը շուտով աղքատացավ, քանզի պահած ոսկին ոչ մի եկամուտ չբերեց նրան, այլ կրակի նման այրեց նրա ունեցվածքը: Այս աղքատություն մեջ վաճառականը կրկին եկավ սուրբ Սպիրիդոնի մոտ և փոխարինաբար ոսկի խնդրեց: Սուրբն իր սովորության համաձայն նրան ուղարկեց իր ննջարանը, որպեսզի ինքը վերցնի այնտեղից:

Բայց, քանի որ վաճառականը ոչինչ էլ չէր դրել արկղի մեջ, այնտեղ ոչինչ չկար: Դատարկ ձեռքերով վերադառնալով Սպիրիդոնի մոտ՝ նա ասաց, թե արկղի մեջ ոչինչ չկա: «Քեզնից բացի արկղին ուրիշ ոչ ոք ձեռք չի տվել, - հանգիստ պատասխանեց սուրբ ծերը, - եթե դու այն ժամանակ փող դրած լինեիր այնտեղ, ապա այժմ նորից կվերցնեիր: Ոչ ոքի մեղադրել չի կարելի, ինքդ ես մեղավոր»: Ամոթահար եղած վաճառականն ընկավ Սպիրիդոնի ոտքերը: Սուրբն անմիջապես ներեց նրան, բայց փող չտվեց, քանզի չկար, այլ միայն ազդու խրատ տվեց՝ այսուհետև իր խիղճը չկեղտոտել խաբեությամբ:

### ՏՐՏՆՋԱԼՈՒ ԴԱՌԸ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Սուրբ Հերակլը մի աշակերտ ուներ, որ մյուսներից ավելի էր զարդարված հնազանդության շնորհով: Մի անգամ այս աշխատավորն ընկավ ծերի ոտքերն ու խնդրեց, որ իրեն արեղա ձեռնադրի: Հերակլը համաձայնեց, և երբ ձեռնադրությունից առաջ վանականի համար մենախուց պատրաստեցին, որպես ուսուցիչ՝ դիմեց իր աշակերտին. «Զավակս, կատարիր իմ պատվիրանը. երբ քաղցես՝ կեր, երբ ծարավես, խմիր, երբ հոգնես, քնիր: Միայն թե խցից մինչև շաբաթ դուրս մի գա. եւ այդ օրն էլ այցելիր ինձ»:

Երիտասարդ արեղացուն երկու օր կատարեց ծերունու հանձնարարությունը, իսկ երրորդ օրը ձանձրույթ զգաց և սկսեց գանգատվել ուսուցչի խիստ արգելքից: Նա մինչև վերջ երգեց երեկոյան կանոնը՝ թեպետ սրտնեղելով, և արևամուտի հետ պառկեց քնելու: Եվ ի՞նչ տեսավ. իր խշտիի վրա պառկած է ինչ-որ սև ու չար արարած և իր վրա կրճտացնում է ատամները: Սարսափած տղան, իրեն կորցրած, դուրս նետվեց խցից, վազեց ծերի մոտ և բախեց նրա դուռը: « Ղճա ինձ, արբա, - աղերսեց նա, - գթա, հայր»:

Բայց ծերը, հոգով տեսնելով նրա տրտուռը, որն, անշուշտ, պատվիրանը խախտելու առաջին քայլն է, խցի դուռը չբացեց մինչև լույս: Երբ վերջապես նա ներս թողեց արեղացույին, դո-

ղացող աշակերտը բացականչեց. «Հայր, երբ զնացի քնելու, անկողնուս վրա հրեչ տեսա: Մահու չափ վախենում եմ նրանից»:

«Դա քեզ պատահեց այն պատճառով, - ասաց Հերակլը, - որ դու, զավակս, փնթփնթացիր և դրանով իսկ գլորվեցիր մինչև պատվիրանը խախտելը: Այդ սև, չար հրեչը սարսափեցնում է քեզ, բայց դրանից պաշտպանություն կա՝ խաչը և աղոթքը: Վայ քեզ, եթե քո սրտին տիրում են օրինախախտության գործերը. այդժամ ինքդ քո ներսում քո խղճի մեջ ավելի սարսափելի հրեչ ես գտնում, որ ատամ է կրճտացնում քեզ վրա: Նա կուլ կտա քեզ, կխժուի, և դու կմեռնես»:

Այսպիսի օրինակներով սովորեցնելով երիտասարդ ճգնավորին՝ սուրբ Հերակլը որոշ ժամանակ անց ձեռնադրեց նրան, իսկ ձեռնադրվածը շուտով աշակերտից վերածեց ուսուցչի:

### ՅԱՆԿԱՅԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՓՐԿՎԵԼ

Արդար Ինֆոնտին մի քաղաքաբնակ ասաց. «Աշխարհում մնալով՝ հնարավոր չէ փրկվել: Եթե նույնիսկ մարդը ներքուստ բարեբարո լինի, ուրիշները նրան կգայթակղեցնեն: Ավելին, որքա՛ն շատ են բամբասանքները. ոմանց թվում է, թե աստվածասերները չափից ավելի են իմաստակում, մյուսներին դուր չի գալիս ուրիշներից տարբերվող նրանց կենսակերպը, քննադատում են աշխարհի կանոններին չհետևելու համար, ոմանք էլ նրանց կոչում են մարդախուլյաներ: Իսկ այս ամենը անհաստատ սրտի համար շատ վտանգավոր է: Ով ցանկանում է լինել կատարյալ, անպայման պետք է ապրի վանքում կամ անապատում»:

Լսելով այս՝ սուրբ Ինֆոնտը պատասխանեց. «Զավակս, տեղը ո՛չ փրկում, ո՛չ էլ կործանում է մարդուն, միայն գործերն են փրկում ու կործանում: Ոչ սուրբ աստիճանը կօգնի, ոչ էլ սուրբ վայրը նրան, ով չի կատարում Աստծո պատվիրանները: Սավոլըն ապրեց արքայական ճոխության մեջ, բայց մեռավ, Դավիթն ապրեց նույն շքեղության մեջ և պսակն ընդունեց.

Ղովտն ապրեց անօրեն սողոմացիների մեջ ու փրկվեց, Հուզան առաքյալ էր, բայց գեհենի բաժին դարձավ: Ով ասում է, թե աշխարհում, ամուսնու /կնոջ/ կամ երեխաների հետ ապրելով հնարավոր չէ փրկվել, նա սնում է իր անմտությունն ու թուլությունները: Աբրահամը կին և երեխաներ ուներ, ուներ երեք հարյուր ութսուն ստրուկ, այդքան էլ՝ ստրկուհի, մեծաթիվ ոսկի ու արծաթ. բայց այդ ամենը նրան չխանգարեց, որ կոչվի Աստծո բարեկամ: Քանի անապատական ու եկեղեցու սպասավոր է փրկվել, քանի՝ մեծամեծ և զինվորական, քանի՝ արհեստավոր ու հողագործ: Քանիսն էին աղմկոտ մայրաքաղաքներում, քանիսը՝ խաղաղ անապատներում: Կարդա՛ սուրբերի վարքը և կիմանաս Աստծու հաճությունը շահածների անունները: Բայց մյուս կողմից էլ, այդ նույն աստիճանն ունեցող, նույն պայմաններում, նույն վայրերում և հենց այդ ժամանակ ապրողներից քանի-քանիսն են կորստյան մատնվել:

Արքայից մինչև ստրուկ Երկնքի արքայություն որդիներ են դարձել, և արքայից մինչև ստրուկ՝ կործանվել:

Քրիստոսի եկեղեցու որդի՛, մի գայթակղեցրու միտքդ. Աստծուց ամեն տեղ փրկություն կատանաս, եթե կատարես կամքը Նրա: Տերն արդարի հոգին իր գիրկը կառնի, լինի նա գահակալ, թե մաճկալ, խորանում, թե կռվի դաշտում: Եվ այսպես, աշխարհում ապրողը թող չհուսահատվի: Եթե մեղանչի, զղջումով դարձյալ կարող է մոտենալ Աստծուն: Յուրաքանչյուր ոք թող կատարի այն շնորհի առաքինությունները, որոնք Աստված դրել է նրա վրա, ավելին, թող լինի բարեպաշտ և մարդասեր, այնժամ կփրկվի: Դրան հակառակ, եթե որևէ մեկն առանձնանա անապատում, բայց հետ չկանգնի չար գործերից կամ չարակամությունից, անկասկած, կկործանվի»:

### ՀԱՎԱՏԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ մարտիրոս Թեոփորոսն իր եղբայր սուրբ Թեոփանոսի հետ սրբապատկերներին խոնարհվելու համար բազում տառապանքներից հետո դատապարտվեց նոր, դեռ չլսված մի մահա-

պատժի. նրանց դեմքերին շիկացած երկաթով պիտի խարանեին հայհոյական բառեր: Այնժամ պաշտոնյան, որին հանձնարարված էր այդ գործը, սուրբ տառապալներին ասաց. «Միայն մեկ անգամ մեզ հետ (այսինքն հերետիկոսների հետ, նրանց տաճարում՝ նվերներով, հերետիկոսական արարողակարգով) հաղորդվեցեք, և ես ձեզ թույլ կտամ գնալ՝ ուր ցանկանաք»:

Այս լսելով՝ երանելի Թեոփորոսը ծիծաղեց և ասաց. «Քո ասածը նույնն է, թե մեկն ինձ ասի՝ ես ոչինչ չեմ ուզում քեզնից, թող միայն մի անգամ կտրեմ գլուխդ, հետո գնա՛ ուր կուզես: Մեծ բարեգործություն ես խոստանում մեզ: Վստահ եղիր, որ մեզ ուղիղ դավանությունից խախտելը նույնքան դժվար է, որքան փոխել տեղերը երկինքի ու երկրի»:

Սրանից հետո սուրբ հայրերը հանգիստ սրտով կրեցին տանջանքը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ուղղակի մեջբերումը թարգմանչի)

Գրքում ներկայացված պատումների մի մասը սրբակենցաղ անձանց մասին է, ովքեր «սուրբ» են հռչակված Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից: Դաս առնելով նրանց վարքից՝ հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նրանց «սուրբ» չի կոչում:

1 «Երկինք ու երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» /Մատթ. 24:35/:

2 Հակոբոս Առաքյալի թղթի համապատասխան համարներից մեջբերումն ավելի ամբողջական ենք կատարել, քան բնագրում է /թարգմանիչ/:

3 Խոսքը սլավոնական գրերի գյուտի հեղինակ Կիրիլի եղբայր Մեֆոդիի մասին է:

Հնում երկու Բաբելոն կար. մեկը Խալդեոսում, ուր կառավարում էր Նաբոլգոդոնոսորը, իսկ մյուսը, որ ավելի փոքր էր, կառուցվել էր ավելի ուշ Եգիպտոսում մեծ Բաբելոնից եկած գաղթականների կողմից:

4 «Ապա թե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա Նրան չի պատկանում /Հռոմ. 8: 9/ (թարգմ.):